

6103

6104

6105

6106

6107

4. Ambur 1912

9(497)

U-62

48.

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
ԸՆԴԱՐՁԱԿ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՊԱԼՔԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ



Կ Ա Ջ Մ Ե Ց
ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

1002
36899



Բ. ԼՍՏՈՐ

Կ. ՊՈԼԻՍ
ՑՊԱԿԻՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՋՈՒՄԱՆ
1913

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԸՆԴԱՐՁԱԿ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՊԱԼՔԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

ԳԼՈՒԽ Է.

ԱՆՀՆԱՐԻՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ



ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ
Օ. ԱՐՁԱՒՄԱՆ
№ 152

Հետաքրքրական է անշուշտ գիտնալ թէ ցեղերու այդ պայքարին մէջ որ Եւրոպական Թուրքիան տակն ու վրայ կ'ընէր անընդհատ, ի՞նչ էր Թուրքերուն դերը: Յոյն, Պուլկար, Սերպ, Ուլան, Ալպանացի իրարու ձեռքէ խելու կ'աշխատէին Թրակիան, Մակեդոնիան և Ալպանիան, առանց իսկ նկատողութեան առնելու թէ անոնք իրենց օրինաւոր տէրը ունին, տէր մը՝ որուն իրաւունքն ալ պզտիկ բան չէր, մանաւանդ բաղդատմամբ իրենց աւելի կամ նուազ խախուտ պատմական իրաւունքներուն: Թուրքը սուրի, աշխարհակալութեան իրաւունքը ունէր այդ երկիրներուն վրայ. անոր սարերն ու դաշտերը ուրիշներու արիւնով ներկելէ առաջ, բազմիցս իր սեփական արիւնով ոռոգած էր. իր մեծագոյն Սուլթաններէն մէկը, նշանաւոր ռազմավարներ և անհամար զինուոր արժած էին անոնք իրեն: Յետոյ այդ երկիրները իր ձեռքն էին, ինք կը սնտեսէր զանոնք, և իր իրաւունքը անոնց վրայ՝ նուիրագործուած էր նաև բազմաթիւ միջազգային դաշնագիրներով: Բոլոր ասոնց սակայն կարեւորութիւն տուող չկար. առանց Թուրք պետութեան մը գոյութիւնը, առանց մանաւանդ այդ երկիրներուն մէջ Թուրք վարչութեան, Թուրք պաշտօնատարներու, ու նաև Թուրք բանակներու ներկայութիւնը նկատի առնելու, իւրաքանչիւր ցեղ կ'աշխատէր իրեն համար սեփականատէրի իրաւունք մը ստեղծել ո՛չ թէ ուղղակի Թուրքին դէմ, այլ ուրիշ ցեղի մը կամ ուրիշ ցեղերու դէմ, որոնք նոյն իրաւունքը իրենց համար հաստատել կ'ուզէին, դարձեալ առանց բուն տէրը, Թուրքը նկատողութեան

առնելու : Ամէն բանի նկատմամբ իրարու հիմնովին ներհակ համոզումներ
 ունեցող այդ ցեղերը մէկ կէտի մը մասին բոլորովին համաձայն կը դառ-
 նային միշտ , և այդ կէտն ալ՝ վիճելի երկիրներուն վրայ Թուրքերու ի-
 բաւունքին բացարձակ ժխտումն էր . իրարու արիւն խմող Յոյնն ալ ,
 Պուլկարն ալ , Սերպն ալ , Ռուսիան ալ համակարծիք էին այդ մասին :
 Իրենց անկախութեան ճանաչումէն ասդին՝ վարժուած էին այդ երկիր-
 ները ո՛չ թէ հաստատուն ստացուածք , այլ լոկ ժամանակաւոր աւանդ-
 նկատելու Թուրքին ձեռքին մէջ . և արդէն ստիժ ունեցանք բացատրելու
 թէ ինչ հիմքերու կը յենուր այս համոզումը : Սրբ անկախ Պուլկարիա մը
 գոյութիւնն ունէր , ուրեմն ինչո՞ւ անկէ՝ դուրս գտնուող Պուլկարներն ու
 պուլկարական հողը անոր մաս չղանային . այսպէս նաև Պալքանեան
 միւս պետութեանց համար : Այս յաւակնութեան կռուանը ազգայնու-
 թեանց սկզբունքն էր , և Սան-Սթէֆանօի Դաշնագրէն վերջ , Պէրլինի
 Վեհաժողովն ալ հանդիսաւորապէս նուիրագործած էր այդ սկզբունքը ,
 ինչ որ բոլորովին կը սրէր Պալքանեան Պետութեանց ակտորժակը , և օրի-
 նական հիմ մը կ'ընծայէր իրենց յաւակնութեան :

Առաջին ակնարկով՝ թէ՛ այս յաւակնութիւնը և թէ՛ անոր նուիրա-
 գործումը տէրութեանց կողմէ՝ զարմանալի պիտի երևայ անշուշտ : Ինչո՞ւ
 Թուրքիոյ պատկանող երկիր մը՝ պարզապէս Պուլկար բնակիչ ունեցած
 ըլլալուն համար՝ Պուլկարիոյ տրուի , կամ Սերպ բնակիչ ունեցած ըլլալուն
 համար Սերպիոյ յանձնուի : Պատասխանը սակայն շատ պարզ է , և կը
 բաւէ անոր տեղեկանալ՝ համոզուելու համար թէ եղածին մէջ ոչինչ կայ
 զարմանալի : Սերպ ժողովուրդ ունեցող երկիր մը Սերպիոյ , կամ Պուլկար
 ժողովուրդ ունեցող երկիր մը Պուլկարիոյ յանձնուելու սկզբունքը կը նուիր-
 ագործուէր ճիշդ այն պատճառով որով առանձին Սերպիական Պետու-
 թիւն մը , առանձին Պուլկարական Պետութիւն մը կազմուեցան : Յունաս-
 տան , Ռուսիա , Սերպիա , Գարատաղ , Պուլկարիա հետզհետէ ազա-
 տագրուած էին անոր համար որ Թուրքիա չէր կրցած բարեկարգ ու հաս-
 տատ վարչութեամբ մը տիրապետել անոնց վրայ : Իր կառավարելու յոռի
 դրութիւնը , և այն բռնութիւնն ու ծայրայեղութիւնները որոնցմով կը
 ջանար տեւականացնել անբնական տիրապետութիւն մը , վերջ ի վերջոյ
 ծնունդ տուած էին ըմբոստութիւններու և միջազգային կնճռոտութեանց ,
 որոնց յարուցած փոթորիկներուն մէջ տակաւ տիրական պէտք մը դար-
 ձած էր դժգոհ , և իրաւամբ դժգոհ ազգերու ազատագրումը : Բնական
 է տէրութեանց այս տրամադրութիւնը սոսկ մարդասիրութեան արդիւնք
 չէր , կար նաև իրենց սեփական շահուն տեսակէտը , բայց ինչ պէտք պատ-
 ճառները . էականը այն է որ դժգոհներու ազատագրութեան սկզբունքը
 ընդունուած էր իրենց կողմէ : Թուրքիա յաջողած էր այդ ըմբոստութիւն-
 ները խեղդել , որքան ատեն որ իր ոյժը կը զօրէր զսպելու ո՛չ թէ ըմբոստ
 ժողովուրդները , զորս միշտ կրնար ճզմել կրունկի հարուածով մը , այլ
 անոնց պաշտպանութիւնը ստանձնելու տրամադիր տէրութիւնները . իր
 ոյժին չներած ատեններն ալ դիւանագիտական զէնքերով աշխատած էր
 նոյն արդիւնքը ձեռք բերելու , կամ շահակից տէրութիւններու փոխա-

դարձ նախանձը գրգռելով , և կամ անոնցմէ մէկուն ու միւսին բերանը
 պատառ մը բան նետելով : Յորմէ հետէ կորսնցուցած էր իր զինուորական



Սերպ Նեպոլեոնի Թուրքերը Բաղադեղու արտառնելու մը ետին

գերակշռութիւնը եւ որոպայի մէջ , Թուրքիա առաւելապէս այս վերջին
 եղանակով կը յաջողէր տէր մնալ իր եւրոպական ստացուածքներուն : Սը-
 բեմն այդ եղանակն ալ անգոր կը մնար , ինչպէս բանակը , և անա մաս

մը բան կը թուէր կ'երթար. այս կերպով գոյութիւն առած էին Պալքանեան Պետութիւնները: Բայց անոնց կազմութենէն վերջն ալ դեռ թուրքը Եւրոպայի մէջ էր. բանակին չկրցածը դիւանագիտութեան, կամ դիւանագիտութեան չկրցածը բանակին ընել տալով, յաջողած էր իրեն պահել բաւական տարածուն երկիրներ և չկորսնցնել եւրոպական պետութեան իր հանգամանքը: Արդիւնքը սակայն չէր կրնար ջնջել դժգոհ տարրերը ազատագրելու սկզբունքը որ անխախտ կը մնար բոլոր այդ իրադարձութեանց մէջ. քանի՛ գոյութիւն ունէր անոր ծնունդ տուող պատճառը, — թրքական վարչութեան յոռութիւնը, — ոչինչ կրնար այդ սկզբունքը



Սթարա Զակորա՝ ուր էն առաջ հաստատուեցաւ Պուլկարներու ընդհ. բանակետը

քանդել. որ մը չէ որ մը թուրքը դարձեալ միանգամայն թէ՛ իր բանակով և թէ՛ իր դիւանագիտութեամբ անզօր պիտի մնար, ու նորէն մաս մը բան պիտի խլուէր իրմէ. այս կերպով է որ Պուլկարիա՝ իր ազատագրութենէն վերջ տիրացաւ նախ Արևելեան Բուսնիկին, յետոյ անկախութեան: Քանի՛ կար դժգոհները ազատագրելու սկզբունքը, Պալքանեան Պետութիւնները պիտի լրտեսէին այն օրը՝ ուր թուրքը նորէն բանակով ու դիւանագիտութեամբ պիտի անճրկէր և կարելի պիտի ըլլար նոր հողեր կորզել անկէ. ատոր համար՝ պէտք էր առաջուց գետին հարթել, և անճիշդ այդ նպատակին կը ձգտէին իրենց կախները թուրքիոյ եւրոպական ստացուածքներուն մէջ. իսկ թուրքը նկատի չէին առնել՝ որովհետեւ խնդրոյ առարկայ երկիրներուն կորուստը ճակատագրական էր անոր համար. երբեք չպիտի կրնար բարեկարգել զանոնք, և առանց բարեկարգ վարչութեան՝ անոնք իրենը չէին, աւանդներ էին լոկ:

Ինչո՞ւ սակայն թուրքը չէր կրնար բարեկարգել ո՛չ միայն այդ երկիրները, այլ ընդհանուր Օսմ. Կայսրութիւնը, որովհետեւ իր ասիական ստացուածքներն ալ, բաղդատմամբ եւրոպականներուն, լաւագոյն դրու-

թեան մը մէջ չէին, ընդհակառակը: Թուրքիոյ պատմութեան ամէնէն հետաքրքրական և ապշեցուցիչ հարցերէն մէկն է ասիկա. Կայ դար մը որ բարեկարգութիւնը պետական անհրաժեշտութիւն մը հռչակուած է որ թուրքիոյ համար, և թուրքը շատ ու շատ առիթներ ունեցած է համոզուելու, խորապէս համոզուելու թէ բարեկարգութիւնը գոյութեան բացարձակ պայման է իրեն համար. և սակայն, մէկ քանի ձեռնարկները զորս ըրած է այդ նպատակով, միշտ անյաջողութեան մատնուած են. Սէ-լիմ Գ. ի Մահմուտ Բ. ի, Ապտիւլ Մէճիտի, յետոյ Ապտիւլ Համիտի օրով կատարուած յաջողական փորձերը, և անոնցմէ ետքն ալ՝ վերջին ժէօն-թիւրք յեղափոխութիւնը գրեթէ սաղմնային վիճակի մէջ մեռած են, առանց ո՛ր և է դրական արդիւնք տալու. ո՛չ միայն չեն կրցած քանդել այն հիմնական յոռի կարգերը որոնք հպատակ ժողովուրդներու դժգոհութեան և ընդվզումին պատճառ կը դառնային, այլ ընդհակառակը զանոնք ալ աւելի ամրացուցած են. պարզ խօսքով՝ աւելի չարիք պատճառած են քան բարիք: Ինչո՞ւ այս անյաջողութիւնները, ինչո՞ւ մանաւանդ այս անկարողութիւնը. որովհետեւ ամէնէն բարեացակամ ականատեսն անգամ, այդ յաջողական փորձերուն տուած ժխտական արդիւնքին հանդէպ, չը պիտի վարանի հետեւցնելու թէ անյաջողութեանց միակ, բացարձակ պատճառը անկարողութիւնն է: Իրաւ ալ ուրիշ բացատրութիւն անհնարին կը թուի այս զարմանալի իրողութեան. Եւ սակայն՝ անկարողութիւնը պէտք չէ բոլորովին անընդունակութիւն մեկնել այստեղ. թուրքը ո՛չ թէ չէր կրնար կամ չի կրնար բարեկարգել, այլ բարեկարգութիւնը կարելի չէր ու կարելի ալ չէ իրեն համար: Պետութիւն մը, ցեղ մը, ժողովուրդ մը, ամէն բան կրնան ընել. երէկուան խեղճ ու կրակ Պուլկար գեղջուկները քառօրդ դարու մէջ էսպէս արդիական պետութիւն մը կազմեցին. վեց երկար դարերու փառքով ու մեծութեամբ շքուած Օսմ. Կայսրութիւնը նոյնպէս կրնար արդիական պետութիւն մը դառնալ, մանաւանդ բարեկարգութիւնը իրեն համար գոյութեան պայման ըլլալը հասկնալէն վերջ. դեռ երէկ՝ ժէօն-թիւրքերն ալ կրնային ասիկա ընել. չեղաւ՝ որովհետեւ կարելի չէր: Կայսրութեան ներքին կազմակերպութիւնը, դարաւոր անխախտ դրութիւնը, բնակչութեան այլազանութիւնը, կրօնքներու տարբերութիւնը, պատմական աւանդութիւններ ու պատճառներ, տիրող տարրի մը գոյութիւնը, այդ տարրին իրաւունքը՝ ամէն գնով գերակշիռ մնալու միւս բոլոր հպատակեցուցած ժողովուրդներուն վրայ, և ասիկա՝ հակառակ իր թուական նուազութեան ու իմացական ստորադասութեան, բոլոր ասոնք, և ասոնց հետ համեմատաբար անկարելորդ ուրիշ պատճառներ՝ անկարելի կը դարձնէին կատարուած փորձերը. չէ՞ որ բարեկարգութեան հիմը հաւասարութիւնն է. ճիշտ այդ հաւասարութիւնն էր որ անհնարին կը դառնար, ու երբեք չպիտի կրնայ իրականալ, քանի՛ գոյութիւն պիտի ունենայ կրօնքի տարբերութիւնը, մանաւանդ տիրող կրօնքին տարամբոթութիւնը. յետոյ՝ միշտ տիրող կրօնքէն անբաժան պիտի մնայ տիրող տարրը, Միլլեթը Հաֆիւնէն, և ատ ալ նոյնքան զօրեղ արգելք մըն է հաւասարութեան հաստատման դէմ: Կը յիշուի անշուշտ թէ դեռ Սահմանա-

դրութեան մեղրալուսնի օրերուն՝ այնքան հրապուրիչ սկզբունքներու անունով երդուընցող ժէճն - Թուրքերն իսկ չվարանեցան հռչակելու թէ «Թուրքը պէտք է ըլլայ և պիտի ըլլայ գերիշխող տարրը Թուրքիոյ



Թուրք զինուորին հրաժեշտը իր ընտանիքին

մէջ, որովհետեւ այս երկիրը Թուրքերուն երկիրն է. անոր կառավարութեան գոյնը Թուրք և մահմէտական պէտք է ըլլայ» (Թանին, 1908 Նոկտ.) Մեղադրեցին զիրենք ու միշտ պիտի մեղադրեն՝ Սահմանադրա-

կան վարչութեան մը մէջ այս հիմնովին հակասահմանադրական դաւանանքը հռչակելուն համար, բայց պահ մը խնդիրը քննենք անկախ մտքով և առանց նախապաշարման, տեսնենք թէ կարելի՞ էր այդ դաւա-




Պուլկար զինուորին հրաժեշտը իր ընտանիքին

նանքէն խուսափիլ: Ոչ ոք անշուշտ կրնայ ուրանալ Թուրքերուն կատարած զերը Թուրքիոյ մէջ. վրանաքնակ ու վաչկատուն ժողովուրդով մը ահագին կայսրութիւն մը հաստատողը և ապշեցուցիչ աշխարհա-

կարութիւններ ընողը իրենք են. իրենց գրաւած ափ մը հողն անգամ իրենց արիւնով ներկած են. երկար դարեր իրենց լաւագոյն զաւակները զո՞ն տուեր են այս Կայսրութիւնը հիմնելու համար. իրենք, սոսկ իրենք, ամբողջ հինգ դար իրենց սարսափին տակ պահեր են ո՛չ միայն ազգ մը, երկու ազգ, երեք ազգ, այլ բովանդակ Եւրոպան. ցամաքի վրայ գերակշռութիւնը խելոյ վերջ՝ կորզեր են նաև ծովու վրայ գերակշռութիւնը. այս անհնարին գործը զլուխ հանող ժողովուրդը իրաւունք ունի անշուշտ եթէ ո՛չ արապետող տարր մը, գոնէ ամէնէն նպաստաւորեալ տարրերուն հաւասար դիրք մը գրաւելու Կայսրութեան մը մէջ զոր ինք իր արիւնով հաստատեր և իր արիւնով պահպաներ է ամբողջ դարեր: Արդ, եթէ իրական հաւասարութիւն մը գործադրութեան դրուի այս երկրին մէջ, Թուրք տարրը ոչ միայն ամէնէն նպաստաւորեալ տարրերուն հաւասար չափի կրնայ դառնալ, այլ պիտի մնայ շատ ետ, թերեւս ամէնէն ստորագասներուն կարգը: Իր թուական ոյժը երկրին մէջ՝ մեծ բան չէ. եօթը միլիոն միայն՝ 24 միլիոնի վրայ. սկար է մանաւանդ իր խմացական ոյժը. իր յայտնութենէն ի վեր՝ երկար դարերու ընթացքին՝ մշտակայ. գրեթէ առօրեայ պատերազմներու մէջ շարունակ վրայ տուած է իր արու զաւակները և ատեն չէ ունեցած կուլիւն զատ ուրիշ բանով զբաղելու. ոչ կրցած է բազմանալ, ոչ ալ յաջողած է զարգանալ. — երկու առաւելութիւններ՝ զորս խաղող կենցաղը միայն կրնար իրեն պարգեւել: Հաւասարութեան գրութեան մը մէջ՝ իր թիւին նուազութիւնը իրեն առջեւ պիտի փակէ երկրին վարչութեան գրեթէ բոլոր ճամբաները. և իր խմացական ոյժն ալ չպիտի կրնայ իրեն օղնել՝ թիւին զլացածը իրեն ընծայելու համար. միւս կողմէ՝ արհեստ, վաճառականութիւն, նոյն իսկ քիչ շատ մանուածասպատ առեւտուրներ իրեն համար չեն. միւս խելացի, զարգացեալ, ընդունակ ազգերը, նոյն իսկ անոնք որոնք թիւով շատ ու շատ պղտիկ են իրմէ, սոսկ իրենց խմացական յատկութեանց չնորհիւ շուտով պիտի զլեն անցնին զինքը՝ երբ անհաւասարութեան արգելիչ պատճառները վերնան: Աչքի առջեւ բերէք Թուրքիոյ բոլոր ոչ-Թուրք ժողովուրդները, քրիստոնէայ կամ իսլամ, անոնց ընդունակութիւններն ու զարգացման աստիճանը, աչքի առջեւ բերէք նաև Թուրքերուն յետամնացութիւնը ամէն ասպարէզի մէջ, և այն ատեն շուտով պիտի հասկնաք թէ հաւասարութեան սկզբունքը որքան աղէտալի պիտի ըլլայ Թուրք տարրին: Թիւն ու միտքը ամէն կողմէ պիտի ճգմեն զինքը և գերի պիտի դառնայ երկրի մը մէջ զոր ինք հիմնած է գերմարդկային ճիգերով ու զոհողութիւններով: Եթէ բարեկարգութիւնը գոյութեան պայման էր Թուրքերուն համար, գոյութեան պայման էր նաև խուսափումը հաւասարութեան դրութենէն, առանց որուն կարելի չէ բարեկարգութիւն: Ժէօն-Թուրքերը նոր չէ որ այս խռովիչ երկուութեան առջեւ կը գտնուէին. իրենց կուսակցութեան հիմնադիրը՝ Միտհատ փաշա, նոյնպէս այդ կընծաւոտ հանգոյցը գտած էր իր ճամբուն վրայ. ինք որ «Թուրքիան Թուրքերուն» դաւանանքին անդրանիկ դրօշակիրներէն էր, միանգամայն թէ

երկիրը և թէ Թուրք տարրը փրկելու ապերախտ ճիգերուն մէջ՝ չէր կրնար բարեկարգութիւնը ընդունիլ իր հաւասարութեան սկզբունքով. չէր ալ կրնար անկէ հրաժարիլ՝ երկրին սպառնացող արտաքին միջամտու-



Նշեն պահեստներու խանդավառ ցոյցերը Աթէնքի մէջ

թեանց և հաւանական հողային կորուստներու դէմ ուրիշ փանասէ մը չունենալով. ճարահատ՝ հիմը դրաւ կեղծիքի դրութեան մը՝ որ երկրին դժգոհ տարրերը պիտի օրօրէր շողշողուն բառերով կամ ձեւական կարգերով ու հաստատութիւններով, և որ ամէն բան պիտի խոստանար առանց ոչինչ տալու. արտաքուստ թոյլատու, ներքնապէս բռնակալ այդ

դրութիւնը անթափանցիկ վարագոյր մը պիտի ըլլար՝ ծածկելու համար պետութեան բուն ձգտումը՝ Թուրք տարրին զերակշռութիւնը ի վնաս միւս բոլոր տարրերուն ապահովելու տենչը, և ասիկա՝ հաւասարութեան անունով։ Պէտք կա՞յ ըսելու թէ 1908ին յարութիւն առած Ժէօն-Թուրքերը՝ Միտհատ վաչայէն երևտուն տարի վերջ՝ ճիշդ ու ճիշդ այդ կեղծիքի դրութիւնը գործադրեցին։ Իրենց հաստատած հաւասարութիւնն ալ պարզապէս Թուրք տարրին զերակշռութիւնը ամրապնդելու միջոց մըն էր գործնականին մէջ. և արդէն, եթէ իրական հաւասարութիւն մը հաստատել ուզէին ալ, կրօնքը չուտով պիտի խորտակէր իրենց ճիգերը։ Ահա թէ ինչո՞ւ բարեկարգութիւնը կատարելի չէր ըլլար, հակառակ անոր որ Թուրքիա համոզուած էր թէ իր գոյութիւնը ատկէ կախուած է։ Եթէ բարեկարգութիւն գործադրէր՝ Թուրք տարրը վրայ պիտի երթար ապահով կերպով, իսկ եթէ չբարեկարգէր՝ Թուրքիան վրայ պիտի երթար հաւանական կերպով։ Երկու չարիքներէն նախընտրելին «հաւանական»ն էր անշուշտ, և ատ է որ ընտրուեցաւ, ասոր համար է որ վրայ զնաց Եւրոպական Թուրքիան։ Եթէ նոյն դրութիւնը տէէ նաև Ասիական Թուրքիոյ մէջ, կարելի չէ որ հետեւանքը տարբեր ըլլայ, մանաւանդ որ այնտեղ ալ գոյութիւն ունին այն միևնոյն պայմանները որոնք Եւրոպական Թուրքիոյ կորուստը հնարաւոր դարձուցին ու ղիւրացուցին, — այսինքն ցեղերու վէճ, հողային խնդիր, յոռի վարչութիւն, առանձնաշորհեալ ու կեղեքիչ տարրեր, և մեծ տէրութեանց մրցակցութիւն։



Նեքոլա Գարատաղի



ԳԼՈՒԽ Ը.

ԹՈՒՐԿԵՐԸ ՊԱԼԻՄԱՆԵԱՆ ԹԵՐԱԿՂՉԻՆ ՄԷՋ

Մանօթացանք արդէն թէ առաջին Թուրք ցեղերը Պալքանեան Թերակղզին մտան թ. դարուն։ Անգլիանիկ հորթա մը հաստատուեցաւ վարտարի եղերքը և առաւ «Վարտարիօթ» անունը. յետոյ եկան Ուզերը, աւելի ետքը Բայինաքները, և անոնցմէ վերջ ալ Քոմանները։ Երբ ԺԴ և ՓԵ դարերուն Օսմանցի Թուրքերը Պալքանեան Թերակղզին ժամանեցին, շատ հաւանականարար զիրենք կանխող ցեղակիցներուն հետքը չգտանքնաւ. անոք մահմէտական չէին և Քրիստոնէութիւնը անսահման առաւելութիւններ ունէր այն տեսակ մը կռապաշտութեան վրայ զոր կը դաւառնէին. Իւզանդիոյ հողեւոր իշխանութիւնը շուտով յաջողած էր Սըթոտօթիւնը ընդունիլ տալ անոնց։ Հէլլէնացման անդրանիկ քայլն էր ասիկա։ Յանկուցիչ էր մանաւանդ բիւզանդական քաղաքակրթութիւնը. և Թուրքերը՝ կրօնքով նոյնանալէ վերջ, նոյնացան նաև բարքերով, և աւելի ետքը՝ լեզուով ալ։ Քոմաններէն շատեր՝ բիւզանդական անուններով բարձրացած են մինչև Ծերակոյտի անդամակցութեան, ինչպէս Հայեր, միշտ բիւզանդական անուններով, բարձրացած էին մինչև կայսրութեան։ Թէ՛ այդ ծերակուտականները և թէ՛ այս կայսրերը հէլլէնացած Թուրքեր ու Հայեր են, աւելի Հէլլէն քան Թուրք կամ Հայ. Թուրքերն ու մենք լոկ արենակցութեան իրաւունքը ունինք անոնց վրայ. անոնց դաստիարակութիւնը, գործունէութեան ասպարէզը, յաջողութեան պայմանները, լեզուն, բարքերը, վերջապէս ամէն բան Հէլլէնութեանն է։ Այսպէս ուրեմն, Պալքանեան Թերակղզին հաստատուած անդրանիկ Թուրք ցեղերը՝ Հէլլէն տարրին ձուլուած և նոյն իսկ իրենց ծագումը մոռցած ըլլալով, ոչ մէկ օժանդակութիւն կրնային ընծայած ըլլալ իրենցմէ վերջը եկող Անատոլուցի Թուրքերուն, զորս Գարատաղի Աճլար

սկսան զինուորական ասպարէզն ալ բանալ անոնց առջեւ . երկրին վարչական կազմակերպութեան մէջ անոնց աշխատակցութեան բարիքը տեսնելով ու գնահատելով , մտածեցին նոյն բարիքով օժտել նաև զինուորական կազմակերպութիւնը : Այդ սկզբունքին ուղղակի արդիւնքն է Եէնիչէրիներու կազմութիւնը . Հայեր , Հէլլէններ , Սերպեր ու Պուլկարներ , նոյնքան տիրական տարր մըն էին անոր մէջ , որքան Թուրքերը և Փոքր Ասիոյ միւս վաչկատուն ցեղերը որոնք անոնց միացած էին :



ՊՈՒԿԱՐ ԶՕՐԱՎԱՐ ՄԱՐԲՕՒԷՅ
Հրամանատար Արքայական անձնապահ
հեծելազօրքին

կանոնաւորէին , հերձուածներու հանդէպ անտարբերութիւն ցոյց կու տային , ճամբաներու ապահովութիւնը կը հաստատէին , վաճառականութեան համար կը բանային բարգաւաճումի երկար հեռանկար մը» : Այս կերպով շարունակուեցաւ իրենց տիրապետութիւնը մինչև Ֆաթիհ , մինչև Պոլսոյ առումը , և իրենց կառավարութեան այս պարզ , թոյլատու , նոյն իսկ անուշ եղանակն էր պատճառ որ Բիւզանդիոնի պաշարման միջոցին՝ մայրաքաղաքը շրջապատող և գէշ աղէկ Հէլլէնականութեան ցանցին մէջ ինկած ժողովուրդներէն ոչ ոք պաշարուողներուն օգնութեան փութաց : Սոսկ Թուրքին սուրը չէր որ զանոնք կասեցուց , այլ մանաւանդ Թուրքին կառավարական դրութիւնը , անսահման կերպով գերազանց քան

Մեսնիկիին արդիւնքն էր ասրկա : «Թուրքերու՝ խրդմարտանքին ճշմարիտ վարիչները , կը գրէ Տիգրան Երկաթ , Դարձող Տէրվիչներն էին : Մեսնիկի ճկուն բարոյականը թոյլատրեց անոնց՝ ժողովուրդներու և կրօնքներու լափիւրիներով մը մէջ շարժիլ անյայտի զարմանալի ճարտարութեամբ ու ընտրողութեամբ մը որ մեզի ապշութիւն կը պատճառէ՝ երբ քննելու ելլենք մեր օրերու Թուրքը ներկայացնող զինուորը : Քրիստոնեաները ո՛չ միայն օգտակարապէս գործածուեցան իրենց ընդունակութեանց համեմատ՝ ցամաքային ու ծովային զինուորութեան մէջ , այլ նաև քաղաքները վայելեցին կարգ մը ակնածանքներ որոնք անցեալին վրայ ոչ մէկ ցաւ զգալու պատճառ թողուցին : Նորեկ տիրապետողները տուրքը կը

բիւզանդականը : Ֆաթիհէն վերջ՝ նոյն բանը . — «Կայսերական իշխանութեան փոխանցումը Բալէօլօկներէն Օսմաններու ձեռքը՝ չեղաւ այն թիրազէպքը , անակնկալ յեղաշրջումը , զոր դպրոցներու մէջ մեզի կը սորվեցընեն : Այդպէսով՝ ո՛չ ցեղ մը ուրիշ ցեղի մը յաղթեց , ոչ ալ նոր կրօնք



ՊՈՒԿԱՐ ԶՕՐԱՎԱՐ ՏԻՄԹՐԻԷՅ ՈՐ ՔՐԸՔ ՔԻԼԻՍԷՆ ԳՐԱԻԵՅ

մը ուրիշ կրօնք մը ընկճեց : Կ . Պոլսոյ պաշարման միջոցին՝ Մէհմէտի Մեծ Եպարքոսը Յոյն մըն էր . անոր ընտրեալ զինուորները քրիստոնեայ Եէնիչէրիներ էին , ու քաղաքին առումը անիկա կը պարտէր Երոպացիի մը , Տանիցի Օրպանի , որ Մէհմէտի հաշտոյն ժամանակին ամէնէն խոշոր թընդանօթները թափեց : Իրաւ է որ Մէհմէտ մտաւ Այա Սօֆիայի մզկիթին մէջ՝ զոր Խաչակիրները ախոռի մը վերածեր էին , ու անկարող եղաւ արգելք ըլլալ իր բանակին՝ որ երեք օր անընդհատ աւարի չտար մայրաքաղաք մը , զոր քրիստոնեայ զինուորները՝ արձանները խորտակելով՝ կրակի

մատնած էին և պալատները հրդեհելով յափշտակեր էին բոլոր ոսկին ու դրամը: Ժամանակին պատերազմներուն յատուկ այս ծայրայեղութիւններէն չենք կրնար հետևեցնել թէ Մէհմէտ մոլեռանդ մը եղաւ. անիկա երբեք չունեցաւ Իսլամութիւնը տարածելու մտածում մը. իր աշխարհակալութիւնը լոկ քաղաքական եղաւ, ու երբ զայն աւարտեց, չղիմեց ոչ Գահիրէի Խալիֆին, ոչ ալ Մէքքէի Շէրիֆին նուիրագործման: Ան Գոնիայի Դարձողներու Մեծաւորէն (Չէլէպի) խնդրեց իշխանական փոխանձումը Յոյն Վեհապետութեան, որուն Թուրքերը կը ցանկային Փոքր Ասիա մտնելնէն ի վեր: Մէհմէտ իր դրօշներուն նշանը ըրաւ Բիւզանդիոն քաղքին խորհրդանշանը եղող Անահիտի Մահիլը և իր դիմապատկերովը դրամ կտրեց՝ «Մեհմէտ Կայսր Յունաց» նշանաբանով:»

Իսլամ և քրիստոնեայ տարբերու համահաւասար իրաւունքով մասնակցութիւնը պետական գործերու տնտեսութեան՝ որ Ֆաթիհի և իր նախորդներուն կողմէ նուիրագործուեցաւ, նոյն ինքն Օսմանցիութեան սկզբունքն էր զոր մօտաւորապէս հինգ դար ետք ժէօն-Թիւրքերը երկիցս պիտի հռչակէին, ի դուր զայն գործադրելու աշխատելով: Եթէ խորը փրնտունք՝ վաղընջուց Թուրքերու յաջողութեան ինչպէս նաև մեր օրերու ժէօն-Թիւրքերու անյաջողութեան միակ պատճառը կրօնքի հարցն է: Ֆաթիհ և իր նախորդները՝ Մէվլանա Չէլալէտտինի Մեհմէդիին լայնախոհ ու թոյլատու սկզբունքներէն ներշնչուած, կրօնքի խտիր չէին դնել պետութեան օգտակար մարդոց ու դրութեանց ընտրողութեան մէջ. պետական օգտին առջև՝ կրօնքի տեսակէտը կը մնար երկրորդական. իրենց տիրապետութիւնը աւելի նախընտրելի էր ուրեմն քան նոյն ինքն թիւզանդական տիրապետութիւնը որ անպայման հէլլէնացման կը ձգտէր, բոլոր հպատակ ժողովուրդներուն Սրթոտոքս կրօնքը պարտադրելու աշխատելով: Ազգութեանց իրաւունքները, զորս այն ատեն մի միայն կրօնքը կը մարմնացնէր, աւելի անխաթար կը մնային Թուրքերուն քան Յոյներուն օրով: Ասոր համար է որ յաջողեցան: Իսկ ժէօն-Թիւրքերուն փորձերը անյաջողութեան մատնուեցան, որովհետև կրօնքի, և անոր հետ սերտօրէն կապուած Թրքութեան տեսակէտներուն առաջնութիւն տուին միւս բոլոր նկատումներուն վրայ. միակ իրողութիւն մը կը բաւէ իրենց անյաջողութիւնը բացատրելու համար.— հաւասարութիւնը, եղբայրութիւնը, խղճի ու մտքի ազատութիւնը ապահովելու նպատակով գումարուած Օսմ. Խորհրդարանին ժէօն-Թիւրք մեծամասնութիւնը, հանդիսաւոր նիստի մը մէջ չվարանեցաւ խոշոր վարկ մը քուէարկելու... Իսլամութեան տարածումը, այսինքն ոչ-իսլամ տարրերը իսլամացնելու գործը քաջալերելու համար: Այս տեսակ մտածում մը ոչ Ֆաթիհի, ոչ ալ իր նախորդներուն մտքէն անցաւ երբեք, անանկ ատեն մը մանաւանդ ուր ամէն դիւրութիւն ունէին ատոր համար:

Նոյն պետական իմաստութեան արդիւնքն էր նաև հպատակեցուած ժողովուրդներու ներքին վարչական կազմակերպութեանց պահպանումը: Երբոր Ֆաթիհ Պոլիս մտաւ, տիրող կարգերէն ոչ մէկը չըջեց. չզպաւ նոյն իսկ Յոյն Իշխանապետութեանց, որոնք երկար ատեն յարատեւեցին. յե-

տոյ իր պաշտօնին մէջ վերահաստատեց Յոյն Պատրիարքը, նոյն իսկ աւելի լի լայն իրաւասութիւններ տալով անոր. և որովհետև Հայեր կը գտնուէին իր բանակին մէջ, ու լաւ գաղափար մը կազմած էր մեր ցեղին ընդունակութեանց մասին, Յոյն Պատրիարքութեան կողքին հաստատեց նաև Հայ Պատրիարքութիւն մը, նոյնքան լայն իրաւասութիւններով: Այդ իրաւասութիւնները, դարերու ընթացքին ո՛չ միայն չսահմանափակուեցան այլ աւելի ընդարձակուեցան նոր պահանջումներու ու նոր պայմաններու բերմունքով: Մինչև յիսունական թուականները Պոլսոյ Հայ Պատրիարքարանը գրեթէ փոխարքայական իրաւունքներ ունէր իր հօտին վրայ. ինք կը



Գ Ե Ղ Ա Յ Ի Ն Ե Ր Ո Ի Ժ Ա Մ Ա Ն Ո Ի Մ Ը
Տեսարան մը պուլկարական զօրահանութենէն

նայէր Հայոց դատերը, ինք իր բարապաններուն միջոցաւ ձերբակալել ու պատժել կու տար զանոնք, և յանցաւորները,— շատ հեղ նոյն իսկ պահքերնին՝ աւրողները,— ինք կը բանտարկէր Ս. Փրկչի հատաստութեան կամ եկեղեցիներու յարակից բանտախուցերու մէջ. յետոյ՝ աւելի ետքը՝ ինք զբաքննութեան կ'ենթարկէր Հայ թերթերն ու տպարանները, և Կաթոզիկութեան ու Բողոքականութեան պայքարներուն առթիւ, շատ հեղ իբր անկախ տարր մը պետութեան մէջ՝ ուղղակի ինք կը մարտնչէր օտար տէրութեանց դեպքաններուն դէմ, և համաձայնութիւններ կը կնքէր անոնց հետ: Ազգային Սահմանադրութեան մը անհրաժեշտ դառնալը մեր ազգին մէջ՝ Պատրիարքարանին այս գրեթէ բացարձակ իքնավարութեամբ միայն կրնայ մեկնուիլ. և այդ Սահմանադրութեան նուիրագործումը իբր պե-

տական օրէնք, ուրիշ ամէն բանէ աւելի լաւ կրնայ ապացուցանել Հայ ժողովուրդին, ինչպէս բոլոր ժողովուրդներուն, ներքին-վարչական անկախութիւնը Օսմ. կայսրութեան մէջ: Ահա այս իմաստուն դրութեամբ



Պէլկրատ, Մայրաքաղաք Սերպիոյ

Թուրքերը կրցան իրենց իշխանութիւնը հաստատել տարակրօն ցեղերու և երկիրներու վրայ, և փոխանակ թշնամութեան՝ աջակցութիւն գտնել անոնց մէջ:

Սակայն ժամանակ անցնելով ձէլալէտտինի Մեակեվին՝ որուն արդիւնքն էր այդ քաղաքական իմաստութիւնը, տեղի տուաւ միւս Նուիրական Գրքին առջև. ահագին Իսլամ աշխարհ մը կը գտնուէր անոր ազդեցութեան ենթակայ. նոր կազմակերպուած, ամէն կողմէ քրիստոնեայ տարրերէ շրջապատուած, մանաւանդ Եւրոպական տէրութեանց ու Հռոմի Պապերուն սպառնալիքին ենթակայ Թուրք Պետութիւնը անսահման շահունէր այդ Իսլամ աշխարհին հետ սերտ յարաբերութեան մէջ մնալով: Քրիստոնեայ Եւրոպային համախումբ ոյժին դէմ որ իր գոյութեան կը սպառնար, Իսլամութեան ցրուուն հատուածներէն համախումբ ոյժ մը գոյացնելը պետական անհրաժեշտութիւն մը դարձաւ Թուրքիոյ համար. Համախումբութեան նախնական ձևն էր ասիկա. և արդիւնքն էր աւելի պաշտպանողական քան յարձակողական մտածման մը: Ինական է այդ Իսլամ իմբռնութեան անհրաժեշտ կապը սոսկ Գուրանը կրնար ըլլալ. ահա թէ ինչո՞ւ անոր ազդեցութիւնը համապարփակ դարձաւ նաև Թուրքիոյ Պետական կազմին մէջ: Յետոյ, միշտ նոյն իսլամական համախումբման անհրաժեշտ ծրագիրը իրականացնելու համար, Թուրք Սուլթաններ ապշեցուցիչ աշխարհակալութիւններով հպատակեցուցին Մահմէտական աշխարհին ամենամեծ մասը, մասնաւորապէս Եգիպտոսը որ ուղղափառ Մահմետականութեան երկրորդ Հռոմն էր դարձած իր նշանաւոր կրօնական հիմնարկութիւններով ու Մէտրէսէներով: Խալիֆայութեան միացումը սուլթանական դահուուն, պսակումը եղաւ այս քաղաքականութեան, և Թուրքերը որոնք

սակաւաթիւ մասնիկ մըն էին Իսլամ աշխարհին մէջ, դարձան անոր ամէնէն գերակշիռ տարրը:

Եւ սակայն՝ նախնի պետական ըմբռնումը շրջուեցաւ: Իսլամ խումբակցութեան միացման կապը դարձած Մատեանը չունէր Մեակեվինի թոյլատու լայնախոհութիւնը: Աններող ու տարամերժ եղան անոր քարոզիչները: Նոր կրօնուսոյցներու կարեւորագոյն խումբը Թուրքիա ժամանեց Գահիրէէն, ուր գոյութիւն ունեցող կրօնական կազմակերպութիւնները անխնայ հալածանքի մը առարկայ դարձուցած էին Քրիստոնէութիւնը: այդ ոգին ընկերացաւ կրօնուսոյցներուն, և տակաւ կրօնքի տեսակէտը սկսաւ աւագագոյն տեղը բռնել պետական կազմին մէջ: Ատոր բնական հետեւանքն էին կրօնական խտրութիւնը, և ոչ-Իսլամ տարրերը իսլամացնելու դրութիւնը: Քիչ առ քիչ՝ ինչ որ իսլամ չէր՝ հեռու պահուեցաւ երկրին վարչութենէն. եթէ պետական անհրաժեշտութիւնը ստիպէր ալ ոչ-Իսլամի մը իմաստութեան ապաւինելու, անիկա երբեք չէր կրնար շքուիլ Իսլամներու առանձնաշնորհումը եղող պաշտօններով կամ աստիճաններով: պաշտօնը անուանապէս Իսլամի մը կը յանձնուէր միշտ, իսկ ինք որ բուն գործը կատարողը, այսինքն պաշտօնը վարողն էր, շատ շատ խորհրդականի կամ նոյնքան անորոշ ուրիշ անուանման մը տակ անհետ կը մնար: Գաղէզ Ամիրան՝ իր ատենուան Եպարքոսներուն ստանձնածէն անհունապէս աւելի ծանր պատասխանատուութիւններ շալկեց յաճախ, եւ անսահման ծառայութիւն մատուց Օսմ. Գահուն: Բայց որովհետեւ չունէր պետական տիտղոս մը որուն միջոցաւ իր անունը կապուած մնար կատարած գործերուն, իր դերը կը մնայ անյայտ և Թուրք պատմագէտներ ինք-



Պէլկրատի Աղեքսանդր հրապարակը

զինքնուն իրաւունք կուտան նոյն իսկ անոր գոյութիւնը անգիտանալու: Հաստատուեցան տակաւին տարազներու տարբերութիւն և առօրեայ կենսալին յատուկ զանազանութիւններ՝ իսլամ և ոչ-Իսլամ տարրերու միջեւ:

վերջինները չէին կրնար ձի նստիլ՝ առանց ասոր համար Կայս. հրովարտակ մը ունենալու. յետոյ չէին կրնար անցնիլ կարգ մը թաղերէ: Էրզրու մի մէջ մինչեւ այսօր գոյութիւն ունի «Կեալուր պողան» թաղը՝ ուր ծնած է նախորդ Սպարքոս Քիւլիւկ Սախտ փաշա, եւ ուրկէ, ինչպէս կը հաւաստեն, դարերէ ի վեր ոչ մէկ քրիստոնեայ կրցած է անցնիլ: Ինսական է կրօնական իրերու մէջ մանաւանդ կը շեշտուէր այս զանազանութիւնը. Քրիստոնեաները նոյնիսկ զանգահարութեան իրաւունքէ զրկուեցան դարերով: Ոչ-իսլամ տարրերու առջեւ փակուեցաւ նաև զինուորական ասպարէզը. Նէնիչէրիներու խումբն անգամ որ Քրիստոնեայ ժողովուրդներով գոյութիւն առած ու տեւած էր, դարձաւ իսլամական զօրախումբ: Որչա՛փ հեռու ենք Մեսնիկիին և Մէվլանա Ճէլպէտփինի ու իր աշակերտներուն քարոզած մարդկայնական սկզբունքներէն: Այս խտրութեանց անխուսափելի հետեւանքը պիտի ըլլար անշուշտ փոխադարձ անսիրելութիւն մը պետութեան իսլամ և ոչ-իսլամ ժողովուրդներուն միջեւ, և այդ անսիրելութենէն պիտի ծնէին կարգ մը վտանգաւոր վարդապետութիւններ՝ ինչպէս Տիրոյ սարրի և հպասակեցուած սարրի տեսակէտը, ոչ-իսլամները սոսկ կաթնաու կովեր նկատելու և անոնց աշխատութեան արդիւնքը զանազան կամայական եղանակներով կորզելու վարժութիւնը, ինչպէս նաև զանոնք արհամարհելու, անարգելու և անոնց վրայ կեանքի ու ինչքի բռնարարման տրաքոնեան իրաւունքին հաստատումը: Ատկէ ասդին կը սկսի Թուրք վարչութեան յոռութիւնը որ այլևս անդարմանելի, գրեթէ ճակատագրական պիտի դառնար:

Այսպէս անա՛ կ'ունենանք երկու որոշ պետական դրութիւններ. առաջինը, — կրօնական քոյրսուրքեան շրջան, — կը պարզէ եւրոպական հողին վրայ աշխարհակալուած տարակրօն երկիրներու մէջ Թուրքերուն ապահով հաստատութեան գաղտնիքը, և երկրորդը, — կրօնական անկերողութեան շրջան, — կը բացատրէ այն պատճառները՝ որոնք հետզհետէ դժգոհացուցին ոչ-իսլամ տարրերը, և պարբերական բայց էապէս միևնոյն շարժառիթներէն ծնած ու միևնոյն պայմաններուն մէջ կրկնուած իրադարձութիւններով այդ երկիրները մաս առ մաս անջատեցին Օսմ. Կայսրութենէն:

Անշուշտ դիւրին գործ չեղաւ ասիկա: Կրօնական աններողութեան շրջանը մտնելէն շատ վերջը՝ Թուրքը տակաւին բաւական զօրաւոր էր իր կամքը պարտադրելու համար թէ՛ Կայսրութեան հպատակներուն և թէ՛ օտար տէրութեանց: Հակառակ ամէն բանի, Թուրք կառավարութիւնը ապահով էր իր տարակրօն ժողովուրդներուն վրայ. որքան ատեն որ իր զօրութիւնը կը մնար յաղթական օտար տէրութեանց դէմ, բոլոր Քրիստոնեաները հանգարտ կը կենային. սարսափը կը խեղդէր իրենց մէջ արթնցող ամէն տեսակ ցանկութիւն կամ ազատագրութեան ըզձանք: Օտարին դէմ անզօր մնալէն վերջն է որ ինքզինքը դժուարին կացութեան մը մէջ գտաւ մասնաւորաբար Եւրոպայի հողին վրայ. իր անպարտելիութեան հաւատքը խախտած էր. հպատակեցուած ժողովուրդները, սկսեալ Յոյներէն, հետզհետէ ազատագրութեան մը կարելիութեան հաւատացին, և յաղ-

թական օտարը, երբեմն իր շահերը ապահովելու և յաճախ ալ Թուրքիան միշտ աւելի տկարացնելով անոր կողոպուտը իւրացնելու մտածութեամբ, քաջալերեց ու հովանաւորեց անոնց խլրտումները: Ահաւոր վաղորդայնի մը, — այսօրուան դէպքերուն, — նախանշանը եղող այս փորձանաւոր կացութենէն ճողոպրելու համար Թուրքիա երկու ճամբայ ունէր իր առջեւ, մէկը ապահով ճամբայ մը, բարեկարգութեան ուղղութիւնը, միւսը



ԳԱՀԱԺԱՌԱՆԳԻ ԻՇԽԱՆ ԵՈՒՍՈՒՅ ԻԶԶԷՏՏԻՆ

վտանգաւոր ճամբայ մը, բռնութեան ուղղութիւնը: Նախորդ գլխուն մէջ երկարօրէն բացատրեցինք թէ բարեկարգութիւնը կարելի չէր, և թէ բարեկարգութեան անուենով կատարուած մէկ քանի փորձերը սոսկ բառերու կամ բնաւ չգործադրուելու սահմանուած խոստումներու խաբուսիկ շարժումներ էին: Կը մնար ուրեմն բռնութեան ճամբան, և Թուրքիոյ ժամանակակից պատմութիւնը մէջտեղն է՝ ապացուցանելու համար թէ Մանուտ Բ. ի օրէն սկսեալ, — յունական անդրանիկ ապստամբութենէն ասդին — Օսմ. կառավարութիւնը իր սահմաններուն մէջ գոյութիւն առած հիմնաւոր դժգոհութիւնները և զանոնք արտայայտող խլրտումները բառնալու համար բռնական միջոցներուն նախապատուութիւն տուաւ. Բիոսի ջարդերը 1822ին, Քիւրտիսթանի ջարդերը նոյն ատենները, Լիբանանի ջարդերը 1860ին, Սերպիոյ ջարդերը 1862ին, Պուլկարիոյ և Հէրսէքի ջար-

դերը 1876ին, Հայկական ջարդերը 1896ին, կրէտական ջարդերը 1897ին, յետոյ՝ մակեդոնական ջարդերը 1904ին՝ ուրիշ փաստի պէտք չեն թողուր այդ մասին. և դեռ այս ջարդերը խոշոր գիծերն են կիրարկուած բռնական միջոցներուն. ի՛նչ անասելի հայաձանքներու, կեղեքումներու և ճնշումներու զարնուրագին պատմութիւններ կը խտացնեն իրենց մէջ այդ եղերական թուականները:

Անբաւական միանգամայն ամէն կողմը բռնութեան այդ դրութիւնը կիրարկելու, պետութիւնը ծնունդ տուաւ նաև առանձնաշնորհեալ տարրերու, որոնք բնական պահապաններու դերը պիտի խաղային Կայսրութեան խռոված կամ խռովելու տրամադիր նահանգներուն մէջ, անխնայ կեղեքումներու դրութեամբ մը ցրիւ ցրիւ ընելով, տկարացնելով կամ սոսկումի տակ պահելով ըմբոսա ժողովուրդները: Տէրութեան ընծայուած այդ «աշակցութեան» փոխարէն, առանձնաշնորհեալ տարրերը պիտի ունենային թալանի, հարստահարութեան, բռնագրաւման, առեւանգութեան, նոյն իսկ սպանութեան իրաւունք մը վերոյիշեալ ժողովուրդներուն վրայ: Այս ծառայութեան յատկացուած էին մասնաւորաբար երկու ցեղեր՝ Ալպանացիք Եւրոպական Թուրքիոյ, և Քիւրտերը Ասիական Թուրքիոյ մէջ: Կային տակաւին ուրիշ ցեղեր ալ, ինչպէս Չէրքէսներն ու մէկ քանի իսլամ ժողովուրդներ, բայց առաւելագէս Քիւրտն ու Ալպանացին Դրան ձեռքը գործիք կը դառնային՝ դժգոհ տարրերու խլրտումները ջախջախելու և երկրին մէջ գոյացնելու համար սարսափի անդորութիւն մը, Համիտեան համբաւաւոր «Ասայիշ պէր քէմալ տըր»ը:

Ինչպէս առիթ ունեցանք ըսելու, այդ երկու ցեղերը մեծ տարբերութիւն չունէին իրարմէ. երկուքն ալ զէնքի հետ կը մեծնային, և աւազակութիւնը իրենց համար ասպարէզ մը ըլլալուն՝ լաւ ուղմիկներ էին: Քիւրտ մայրը հացը ծառի մը բարձր ճիւղերուն վրայ կը զետեղէր, և անօթութենէն լացող տղուն ձեռքը հրացան մը տալով կը տանէր այդ ծառին տակ, ցոյց կուտար հացը ու կ'ըսէր. «Քանի որ անօթի ես, անաքեղի հրացան, անա նաև հաց. զա՛րկ, վար ձգէ ու կեր»: Անդին՝ Շարճաղի սարերուն կատարը՝ Ալպանացի մայրը ժայռի մը ձերպին կամ մացառներէ գոյացած բնական թաքստոցներու մէջ կը պահէր սղոց հացը, և երբ անոնք գային ու անօթի ըլլալնին պոռային, «Գացէ՛ք գտէ՛ք, հացը պահուած է», կ'ըսէր, անոնց մօտ սրելու համար որսի հոտառութիւնը որ վաղը միւս օր՝ երբ քիչ շատ մեծնալով քրիստոնեայ զիւղերը թալլելու պիտի ելլէին, իրենց լաւագոյն առաջնորդը պիտի ըլլար: Տղաքը կը մեծնային անվախ, և Կայսրութեան արեւմտեան ու արեւելեան սահմաններուն վրայ, իրարմէ այնքան հեռաւորութեան մէջ, նոյն անկախութեան հաւատքը նոյն ապերասան յանդգնութեամբ կ'օժտէր զանոնք: Կուստուկալ, պաշտօնեայ, ոստիկան՝ անոնց աչքին նշանակութիւն չունէին. Ալպանացիին ու Քիւրտին համար հաւասարագէս՝ բուն Փաշան հրացանն էր և բուն վէզիրն ալ սուրը: Կեանքի համանման պայմաններ՝ միևնոյն ընդունակութեանց տէր դարձուցած էին զիրենք, և այդ ընդունակութեանց մէջ զէնքի գործածութեան վարժութենէն անմիջապէս ետք կուգար գողու-

թիւնը որ գայն կը լրացնէր: Երբ տակաւին վիտին օսմ. հող էր, ծրանսացի ճանապարհորդ մը՝ Կիյեօմ Լըժան՝ կ'այցելէ տեղւոյն կուսակալ



Փուլկարոսի առաջնորդները թիւրքերու մը կտրիմէն առջեւ

Րասիմ փաշայի որ բարեհամբոյր մարդու արդար համբաւ մը կը վայելէր. Լըժան պատած էր ամբողջ Անատոլըն, մասնաւորաբար

քրդական չըջանալները, և կ'ուզէր ճանչնալ նաև Ալպանացի ժողովուրդը: Այս մտքով կարգ մը հարցումներ կ'ուղղէ կուսակալին, որ առանց ուղղակի պատասխան մը տալու, կը հարցնէ իր կարգին թէ ի՞նչ բան մանաւանդ աչքին դարկաւ Քիւրտ ժողովուրդին մէջ: — «Գողութեան մէջ ցոյց տուած ճարտարութիւննին».— կը պատասխանէ Ֆրանսացի ճամբորդը: Այն ատեն՝ Րասիմ փաշա զինքը կ'ապահովցնէ թէ նոյն ճարտարութիւնը, աւելի կատարեալ ձեւով մը, պիտի գտնէ նաև Ալպանացւոց քով: Լըժան չուզեր հաւատալ. ինչ որ տեսած էր Քիւրտութանի մէջ՝ անհաւատարելի երեցած էր իրեն: Փաշան սակայն դիւրաւ կը համոզէ զինքը, պատմելով հետեւեալ մանրագէպը զոր Ֆրանսացին նոյնութեամբ մէջ բերած է իր ճամբորդութեան յիշատակներուն շարքին.— «Անգամ մը կ'ըսէ, Րասիմ փաշա, Պարսից Շահերէն մէկը մեր դեսպանին հետ վէճի կը բռնուի Պարսկաստանի և Թուրքիոյ գերազանցութեան մասին, և ի վերջոյ՝ իր սեփական երկրին առաւելութեան իրր ապացոյց՝ կ'ըսէ թէ Պարսկաստանի մէջ կը գտնուին աշխարհի էն նշանաւոր գողերը, Քիւրտերը, որոնք կրնան նոյն իսկ Սուլթանին ապարօշին վրայի թանկագին քարերը գողնալ հանդիսաւոր ընդունելութեան մը միջոցին, բոլոր ներկաներուն և Սուլթանին ալ աչքին տակ: Այն ատեն՝ Քիւրտերը ամբողջովին Պարսից իշխանութեան տակ էին: Դեսպանը կը փութայ իրողութիւնը ի-հացնել Սուլթանին, և խնդիրը կ'ելլէ մինչև Տիվանը, որուն անդամակցող փաշաները, իրենց անձնասիրութեան մէջ վերաւորուած, կ'որոշեն Շահին զրկել գող մը այնքան՝ ճարտիկ որ նոյն իսկ այդ համբաւաւոր Քիւրտերը տուրքակիր դնէ: Ընդհանուրին կարծիքը այն կ'ըլլայ որ այդ աստիճան կատարելագործեալ աւազակ մը լոկ Ալպանիան կրնայ ընծայել. և ահա զիր մը կը փութացնեն Տրինի եզերքները բնակող ամէնէն ազդեցիկ Ալպանացի պետին, կը յայտնեն իրողութիւնը, չմոռնալով աւելցնել թէ երկրին պատիւը իր զրկելիք մարդէն կախուած է: Պէյը իսկոյն նիհար Ալպանացի մը ճամբայ կը հանէ դէպի Պոլիս, անոր տուած նամակին մէջ յայտնելով թէ խնդրուած տեսակէն լաւագոյն մէկը չունի այդ միջոցին և թէ ի նարկին՝ երբ անիկա պարտուի կատարուելիք մրցման մէջ՝ պատրաստ է ինք անձամբ գալու: Ալպանացին շուտով կը զրկեն Պարսկաստան և ի ներկայութեան Շահին, Օսմ. դեսպանին ու բոլոր երեւելիներուն, մրցումը կը սկսի: Քիւրտը որ պիտի մրցէր Ալպանացիին հետ, կը յայտնէ թէ ծառէ մը վեր շուլուելով՝ թուխսի նստած է գարծիւի մը տակէն հաւկիթները պիտի գողնայ՝ առանց արծիւին զգացնելու: Ու գործը խօսքին միացնելով, Քիւրտը կը հանէ հագուստները, միայն վարտիք մը կը պահէ վրան, կը շուլուի ծառն ի վեր, և արծիւին տակի հաւկիթները կը գողնայ ա՛յն աստիճան ճարտարութեամբ որ անիկա չի հասկնար եղածը: Բայց մինչդեռ յաղթանակին հրճուանքով լեցուած՝ ծառէն վար կը սահէր, զարմացմամբ կը տեսնէ որ հանդիսականները, փոխանակ սքանչացման աղաղակներու՝ ծաղրանքով ու քրքիչներով կ'ընդունին զինքը: Վար իջնելէն վերջ միայն կը հասկնայ պատճառը: Այն միջոցին ուր ինք արծիւին տակի հաւկիթները գողնալու զբաղած էր, Ալ-

պանացին՝ ծառն ի վեր իրեն հետեւելով, գողցած թացուցած էր իր մերկութիւնը ծածկող միակ վարտիքը: Ու Րասիմ փաշա կը յարէ՝ հեգնութեան գերագոյն շեշտով մը. «Այսպէս ահա Ալպանացին այդ օրը փրկեց երկրին պատիւը»:

Վիտինի կուսակալը, գերազանցապէս նեխի մարդ, կրնայ կատակի համար պատմած ըլլալ այս մանրավէպը. բայց վերջապէս անուրանալի



ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ԷԼԷՕՆՕՐԱ ԹԱԳՈՒՀԻՆ

բան է թէ երկու ցեղերն ալ անհաւատարելի կը մնան աւազակութեան մէջ: Պետութիւնը՝ իր գտած աշակցութեան փոխարէն զանոնք սանձարձակ և ամէն հակակշռէ ազատ պահելով հանդերձ՝ թերեւս չէր ուզեր որ մղուին տարապայման ծայրայեղութեանց, որոնք կրնային փորձանքներ բանալ երկրին գլխուն՝ օտար միջամտութեանց առիթներ ստեղծելով: Բայց այդ դրութեան մէջ միջին ճամբայ չէր կրնար ըլլալ. կամ բացարձակ զսպում, և կամ բացարձակ սանձարձակութիւն. կարելի չէ գողին համար գողութեան չափ կամ աւարառութեան սահման որոշել. այն որ գողնալու արտօնութիւն ունի, կը գողնայ ինչ որ կարելի է վերցնել նոյնը նաև սպանութեանց մասին, որոշ ժամանակներու մէջ ծագած տաքնայ-

ներու ընթացքին վերէն եկած սպանութեան արտօնութիւնը՝ այդ տագնապներուն անցնելէն վերջ եթէ ետ ալ առնուէր, նորէն սպանութեանց չըջանը չէր փակուեր. մէկ անգամ անպատիժ սպանութեան յորդորելը նշանակէր մշտակայ ոճրագործներ ստեղծել. և հերուան սպանութեան յորդոր կարգացած իշխանու-

թիւնը չէր կրնար մէկ սրէն միւսը պատիժ սահմանել տարբեր ոճրի մը համար. յետոյ՝ ինչպէ՞ս պատժել այդ մարդիկը, որոնց միշտ պէտք կրնար ծագիլ. զորս դարձեալ սպանութեան մղելու առիթներ ապահով կերպով պիտի յայտնուէին. եթէ օտար պահանջու մներու և սպառնալիքներու վրայ, պատիժը անհրաժեշտ ալ դառնար, ձեռակալն պատիժ մը պիտի ըլլար. բանտին մէկ դռնէն մտնողը՝ ապահով կերպով դուրս պիտի ելլէր միւս դռնէն. որովհետեւ զանոնք խրաչեցնել ո՛ր և է իրական պատժով կը նշանակէր միանգամ ընդ միշտ զրկուիլ անոնց աջակցութենէն: Այս անհրաժեշտութիւնն էր պատճառ որ Մուսա պէյ, նոյնիսկ շոնդալից դատէ մը և իր ոճիրներուն հաստատուելէն վերջ, անպատիժ մնաց:



ՊՈՒԿԱՐ ԶՕՐԱՎԱՐ ՍԱՐԱՅՅՕՎ

Թուրքիոյ պետական մարդիկը այդ ցեղերը իրենց առանձնաշնորհմանց տէր պահելու համար ուրիշ պատճառ մըն ալ ունէին. անոնց հաւատարմութիւնը Օսմ. Գահուն՝ լոկ շահու տեսակէտի մը արդիւնքն էր. երբ այդ շահը դադրէր, անոնք իսկոյն կրնային ուրիշ կողմ շահ փնտռելու ելլել, և ո՛ր կողմ ալ որ անցնէին, Թուրքիա իրեն դէմ պիտի զանէր զանոնք: Պատմութիւնը լաւագոյն վկան է ասոր. Ալպանացին ու Քիւրտը շատ հեղմարտնչած են Օսմ. կառավարութեան դէմ, որ միշտ ծանր զոհողութիւններով միայն յաջողած է զանոնք իր Մականին տակ պահել: Կրկնակի շահ կար ուրեմն զանոնք սիրաչափուն մէջ. պետութիւնը թէ՛ անոնց հաւատարմութիւնը կ'ապահովէր, և թէ՛ մանաւանդ աչալուրջ ու ապահով պահպաններու հոգ չէ թէ անողորմ հսկողութեան կ'ենթարկէր իր Քրիստոնեայ հպատակները, Կայսրութեան մէկ ծայրէն միւսը:

Հարկաւ իմաստուն դրութիւն մը չէր ասիկա: Թուրք տարրը իր ոյժերէն վեր աշխարհակալութիւններ կատարած էր, և այդ ահագին Կայս-

րութիւնը կառավարելու համար ընտրած էր ամէնէն անյարմար եղանակը, այսինքն բացարձակ կեդրոնացման սխիթէմը, ամէն իշխանութիւն իր ձեռքը պահելով. եթէ իր թուական ոյժը համեմատութեան դնենք գրաւած երկրին տարածութեան հետ, դիւրաւ պիտի համոզուէնք թէ կարելի էր այդքան պզտիկ թուով մը այդ աստիճան ընդարձակ Կայսրութիւն մը կառավարել՝ կեդրոնացման դրութեամբ: Աւ դարձեալ այդ համեմատական բաղդատութիւնը մեզի պիտի յայտնէ թէ ինչո՞ւ Կայսրութեան շատ մասերուն վրայ, ինչպէս Արաբիա, Միջագետք, Սուրիա, Եգիպտոս, Ալպանիա, քրդական շրջանակները, և այլն, իր տիրապետութիւնը միշտ աւելի անուանական քան իրական եղած է և անոնք իրարու ետեւէ իր ձեռքէն ելած կամ ելլելու վրայ են: Զարմանալի չէ ուրեմն որ այդ անհարին գործը, — բացարձակ կեդրոնացմամբ իրենց ոյժէն վեր տիրապետութիւն մը յաջողցնելու ապերախտ աշխատութիւնը, — զլուխ հանելու համար ստիպուած ըլլան ընտրելու անողորմ բռնակալութիւն մը, և կարգ մը անբնական ու ապօրէն միջոցներ, որոնցմէ մէկն ալ ահա առանձնաշնորհալ ցեղերու գոյութիւն տա-



ՊՈՒԿԱՐ ԶՕՐԱՎԱՐ ՌԱՏԻԱՆՕՅ


լերնին է: Այդ երկուքն ալ սակայն ուղղակի կործանման տանող միջոցներ էին լոկ. անոնց հետեւանքն էին Եւրոպական Թուրքիոյ նախորդ հողային կորուստները, որոնք Դանուբի եզերքներէն մինչեւ Պալքանները իջեցուցին Կայսրութեան սահմանները, ինչպէս տեսանք Սան Սթէֆանօի և Պէրլինի դաշնագրիներուն արդիւնքը ներկայացուցած ատեննիս: Դարձեալ անոնց հետեւանքովն է որ մասնակի կորուստներէ վերջ՝ ամբողջովին կը կորսուի Եւրոպական Թուրքիան: Անշուշտ աւելորդ է ըսել որ նոյն դրութիւնը անխուսափելի կերպով նոյն հետեւանքը կրնայ ունենալ նաև Ասիական Թուրքիոյ մէջ:

Ինչպէս Ասիոյ մէջ, Եւրոպական Թուրքիոյ մէջ ալ ցաւը ռոսկ կառավարելու անբնական կամ ապօրինի միջոցներէն չէր. բնական և օրինաւոր միջոցներն ալ էապէս նոյնն էին, հոգ չէ թէ տարբեր անունով մը, տարբեր մարդոց կողմէ և պաշտօնական ձեւի մը տակ կատարուէին: Կու-

սակալէն սկսեալ մինչև յետին պաշտօնեան՝ յաճախ Գիւրտէն ու Ալպանացիէն չէին զանազանուէր. կառավարելը՝ ընդհանրապէս ուտելու հարց էր իրենց համար. և նոր բան չէ ասիկա Թուրքիոյ մէջ: Հին ատեններն ալ կառավարելը միշտ ուտելու հարց էր. նախնական դրութիւնը որուն մէջ կը մնան մինչև այսօր Թուրքիոյ գրեթէ բոլոր նահանգները, լաւագոյն ապացոյցն է թէ անոնց մէջ դարերէ ի վեր գտնուել են կառավարիչներ, բայց երբեք կառավարութիւն գոյութիւն չէ ունեցեր. կառավարելու կոչուողը սոսկ ուտելու նայեր է, միւս հոգերը ձգելով իր յաջորդին, բայց յաջորդը նոյն բանը ըրեր է, միշտ իրմէ ետքինին ձգելով ուտելու հարցէն զատ ամէն պարտականութիւն. և այսպէս, գրեթէ ամէնքն ալ կերեր են մշտապէս, և նահանգները մնացեր են առանց կառավարութեան, կամ այն տեսակ կառավարութեամբ մը որուն միակ, անյեղի և բացարձակ ուղղութիւնն ու նպատակը միշտ այդ ուտելու հարցը եղած է:

Մեղադրելի՞ են իրօք այդ մարդիկը. պիտի երկմտինք այս մասին պատասխան տալու, եթէ երբեք անկախ մտքով քննենք անոնց դրութիւնը, թէ՛ հին ժամանակներու և թէ՛ հերուան բռնակալութեան միջոցին: Հին ատենները՝ կուսակալութիւնները կը տրուէին աճուրդով. փաշա մը, կամ համեմատաբար աւելի ստորադաս պաշտօնեայ մը գին կու տար զոր օրինակ էր դրուած նահանգին համար. «գին տալ» այստեղ կը նշանակէ այն հարկը զոր իւրաքանչիւր տարի պիտի զրկէր Դրան, զոր օրինակ 100,000 քսակ (հեւե). եթէ աճուրդը իր վրայ մնար, այդ պաշտօնատարը չէր կրնար իր գնած նահանգը մեկնիլ, մինչև որ Պոլսոյ մէջ երաշխաւոր մը ցոյց չտար. և այդ երանելի՞ ատեններուն՝ գրեթէ միակ ընդունելի երաշխաւորները Պոլիս հաստատուած Հայ սարաֆներն էին. փաշան կ'իյնար մէջտեղ, մէկ սարաֆէն միւսին կ'երթար. իւրաքանչիւրին պայմանները կը քննէր, կը սակարկէր, ու վերջապէս կը յաջողէր անոնցմէ մէկուն հետ համաձայնիլ: Սարաֆը կառավարութեան կը յայտարարէր թէ երաշխաւոր է, և փաշան կը տիրանար նահանգին՝ որոշուած չըջանի մը համար: Սակայն նորէն չէր կրնար մեկնիլ, գոնէ մինակը. այլեւս գործ չունէր կառավարութեան հետ, բայց սարաֆը կար, և ան երբեք կուսակալը ճամբայ չէր հաներ, մինչև որ անոր չընկերացնէր իրեն վստահելի մարդ մը, գրեթէ միշտ Հայ. այս վերջինը՝ տեսակ մը ելմտական լիազօր էր որուն ձեռքէն պէտք է անցնէր կուսակալութեան բովանդակ ելեմուտքը. ինք կը հաւաքէր սուրբերը, ինք կը հսկէր ծախքերուն, ինք կը գանձէր մասնաւորաբար կաշառքները. իսկ անդին՝ կուսակալը կ'ուտէր, կը խմէր, քէյֆին կը նայէր՝ անհոգ, անտարբեր, իր պաշտօնին սոսկ արարողական պահանջումները գործադրելով, և միջամտելով ա՛յն ատեն միայն երբ ելմտական լիազօրը դժուարութեան կը բաղխէր. աւելորդ է անշուշտ ըսել թէ այդ միջամտութիւնը միշտ ի նպաստ անոր տեղի կ'ունենար: Տարին լրանալուն, յաճախ անկէ առաջ ալ, կառավարութիւնը Պոլիս սարաֆէն կը գանձէր կուսակալին աճուրդով ստանձնած տուրքը. ասդին՝ ելմտական լիազօրն ալ, տարեվերջին այդ տուրքը, ինչպէս նաև պայմանուած շահը

կը զրկէր սարաֆին, վար կը դնէր նաև իր բաժինը, ու մնացածը հաւատարմաբար կը յանձնէր կուսակալին. յետոյ նոր տետրակ կը բանային յաջորդ տարուան համար: կառավարութեան շահը կրկնակի էր այս դրութեան մէջ. ո՛չ միայն նահանգներու հասոյթները կանոնաւորութեամբ կը ստանար, այլ նաև կ'ապահովուէր թէ կայսրութեան նոյն իսկ հեռաւոր նա-



Գարտառաղի պատերազմից ետոյն մտանակցեցան նաև այն ճեղքները, որոնք 1876ին կուսակալութիւնը կ'ուտէր Կառավարութեան հարկը գաշտը


հանգներուն մէջ ո՛ր և է կուսակալ տէրութեան դէմ թշնամութիւն չնկնէր. եթէ այդ տեսակ բան մը ըլլար, ելմտական լիազօրը իսկոյն իմաց կուտար սարաֆին, — որ երաշխաւոր էր նաև իր անձով, — ու կը բաւէր որ սարաֆը յայտարարէ թէ այլեւս չի կրնար երաշխաւորել, կուսակալը անմիջապէս պաշտօնանկ կ'ըլլար: Բայց պետութեան այս օգտին դէմ որքա՛ն մեծ էր ժողովուրդին տուժածը. ելմտական լիազօրը՝ թէ պետական անհազին հարկը, թէ կուսակալին անձնական շահը, թէ սարաֆին

միջնորդէքը և թէ իր բաժինը ապահովելու համար զարհուրելի կեղեքումներու և հարստահարութեանց կ'ենթարկէր խեղճ ժողովուրդը. որո՛ւ պիտի բողոքէին. փաշայի՛ն. բայց փաշան նոյնպէս շահակից էր եղածին: Մեզի համար շատ տխուր հարկ մըն է հաստատել թէ հարիւրաւոր տարիներ Հայաստանի թշուառ ժողովուրդը ո՛չ թէ ուղղակի թուրք պետութեան կամ պաշտօնատարներուն, այլ Պոլիս հաստատուած հայազգի «Աստուածավախ!» սարաֆի ամիրաներուն և անոնց կողմէ կուսակալներուն մօտ կարգուած նոյնպէս հայազգի ելմտական յիազօրներուն անողորմ կեղեքումներուն զոհուած է: Մենք սովորաբար թուրքը կը մեղադրենք, բայց այս երկրին մէջ մեր գլխուն եկած գրեթէ բոլոր փորձանքերուն խորը Հայը անպատճառ իր դերը ունի:

Վարչական նոր դրութիւնը որ ասոր յաջորդեց, հակառակ եւրոպական մէթոտներէ օրինակուած ըլլալուն, չկրցաւ փոխել այդ տխուր վիճակը: Վերջած էր կուսակալութիւնները աճուրդով վարձելու սովորութիւնը. դադրած էր նաև հայ սարաֆին միջամտութիւնը՝ իր երաշխաւորութեամբ ու ելմտական հակակշռով. կուսակալները ուղղակի Բ. Դուռը կ'անուանէր. բայց իրականութեան մէջ՝ նոյն աճուրդի դրութիւնը կը յարատեւէր նորէն՝ հոգ չէ թէ տարբեր անունով և տարբեր պայմաններով. թուրք նախարարները՝ պաշտօնական աճուրդին տեղ հաստատած էին անպաշտօն աճուրդը, — կաշառքը. կուսակալ ա՛յն միայն կրնար երթալ, որ ամէնէն սուելի կը վճարէր նախարարին. գումարը պզտիկ բան չէր. կուսակալը՝ թէ՛ ատիկա վճարելու և թէ իր սեփական շահը ապահովելու համար միշտ երբեմնի կեղեքումները ի գործ կը դնէր իր պաշտօնավարած նահանգին մէջ. տարբերութիւնը սա էր միայն որ հայազգի ելմտական յիազօրը չկար այլևս. կուսակալը ուղղակի ինք կը գործէր, իր հարստահարութեանց գործիք գարձներով նահանգին բովանդակ վարչական կազմը, յաճախ նաև զինուորականը: Միշտ նոյն ուտելու հարցը ուրեմն, և իրական շինարար ու արդիւնաբերող կառավարութեան պակասը:

Այս դրութիւնը իր յուսկոյն աստիճանին հասած էր համիտեան բռնակալութեան շրջանին, ու Եւրոպական թուրքիա նոյնքան Լնթակայ էր այդ կեղեքմանց, որքան Կայսրութեան միւս մասերը: Պ. Վիքթօր Պէռար որ շատ մօտէն ուսումնասիրած է Մակեդոնիան ու թուրքիոյ բոլոր եւրոպական ստացուածքները, ահա թէ ինչպէ՛ս կը նկարագրէ անոնց կուսակալներուն գործունէութիւնը. — «...Կուսակալը իր պաշտօնը կը պարտի ո՛չ թէ անհատական արժանիքներուն, այլ նախարարի մը, պալատականի մը կամ փաշայի մը յանձնարարութեան: Սովորութիւն է որ իւրաքանչիւր ամսու գլխուն՝ իր երախտագիտութեան մասին հընչուն ապացոյց մը ընծայէ իր պաշտպանին: Եւ սակայն՝ իր ամսականը մեծ բան չէ, ան ալ եթէ ստանայ, որովհետև ընդհանրապէս անվճար կը մնայ: Որպէս զի կարենայ ապրիլ ու նոյն ատեն անխախտ ու տեւական պահել իր պաշտպանին բարեացակամութիւնը, կուսակալը ստիպուած է ուտել, — կարելի եղած ճարտարութեամբ չարաչար գործածել իր բացարձակ

իշխանութիւնը: Թուրքիոյ մէջ՝ ուտելու արուեստը երեք գլխով կարելի է սահմանել, — ճամբաներու շինութիւն, արդարութեան բաշխում, տասանորդի գանձում»: Ինչ որ կ'ենթադրէ թէ կուսակալը զեղծում կը գործէր ճամբաներու շինութեան առթիւ՝ ծախքերը չափազանց մեծ ցոյց տա-



Սերալ ձիաւորներու հետագօտիչ խումբ մը


լով, կամ արդարութիւն բաշխած ատենը՝ առաւելագոյն չափով ցնծացողին ապահովելով իրաւունքը, և կամ տասանորդի գանձման միջոցին՝ ա՛մէն տեսակ կարելի և անկարելի կեղեքումներ ի գործ դնելով: Սակայն յաճախ կը պատահէր որ ճամբայ շինելու բախտը զլացուէր կուսակալի մը:

երբեմն այ՛ օտար հիւպատոսներու ներկայութիւնը, կամ Յոյն ու Պուլկար առաջնորդներու պոռչտուքը արգելք կ'ըլլային արդարութեան ըստ հաճոյս բախումին. յետոյ՝ տեղացի ազգեցիկ Իսլամ պէյեր և աղաներ շատ անգամ անհնարին կը դարձնէին տասանորդի գանձման զեղծումները. խեղճ կուսակալը չէր կրնար ուսել, և ինքն իսկ անօթի ըլլալուն՝ չէր կրնար կշտացնել նաև իր պաշտպանը: Մրցակիցներ շուտով զինքը կը տապալէին և իրեն կը յաջորդէին: «Յիսուն կուսակախներ կ'անցնին կ'երթան այսպէս, կը յարէ Պ. Պէօար. իրենց անունը երբեմն կը մնայ տեղական զրոյցներու և երգերու մէջ, երբ նշանաւոր կը հանդիսանան ազուր ոճիրով մը կամ փառաւոր կրծօնով մը. բայց հեռանալնէն վերջ ուրիշ ոչինչ կը յիշեցնէ իրենց պաշտօնավարութեան շրջանը»:

Կարելի չէ ըսել թէ բոլոր կուսակալները, Կայսրութեան բոլոր նահանգներուն մէջ այսպէս էին. յաճախ իրապէս պարկեշտ ու լուսամիտ մարդիկ այ կը բաժրանային կուսակալութեան, անդիտակ ուսելու արուեստին, կամ անհաշտ կաշառքի դրութեան հետ. բայց հակառակ անոր որ ուսող չէին, նորէն չէին կրնար կառավարողներ ըլլալ. իրենց բովանդակ բարիկամեցողութիւնը կը խորտակուէր զիրենք չրջապատող տարրերու և հաստատութեանց անպարտելի չկամութեան դէմ. նահանգային պաշտօնէ-ութիւնը՝ վերէն մինչև վար՝ ուսողներու աստիճանական օղակաշարք մըն էր. կուսակալը կրնար ուսելու աստիճանի չունենալ. բայց ասիկա պատճառ մը չէր որ իրմէ ստորագաները իրենց աստիճանը խեղդէին. որպէս զի կարենան ուսել անարգել, ամէն միջոց կը գործադրէին պարկեշտ պաշտօնատարը հեռացնելու համար, և գրեթէ միշտ յաջողութեամբ կը պսակուէին իրենց ջանքերը. եթէ յաջորդին աստիճանը նոյնպէս տեղը չըլլար, միևնոյն մեքենայութիւնները կը կրկնուէին՝ միևնոյն արդիւնքին յանգելու համար, մինչև որ վերջապէս փառաւոր աստիճանի տէր, ուսելու և միւս ուսողներուն այ կերցնելու տրամադիր կուսակալ մը յայտնուէր: Երբ ասիկա էր տիրող դրութիւնը Կայսրութեան բոլոր նահանգներուն մէջ ընդհանրապէս և մասնաւորապէս այ եւրոպական նահանգներուն մէջ, այլ ևս ինչո՞ւ զարմանալ թէ Եւրոպական տէրութիւնները տակաւ ընդունեն են այդ յուրի դրութեան տակ տուայտող Քրիստոնեայ տարրերը ազատագրելու սկզբունքը և Կայսրութեան սահմանները հետզհետէ սկսեւ են ընկերկիլ: Զմուռնանք յայտնելու որ ժէօն-թիւրք վարչութեան վերջին շրջանին այլ այդ կործանարար դրութիւնը հիմնական բարեփոխութեան մը չենթարկուեցաւ, և առիթ դարձաւ ներկայ պատերազմին, իրր հետեանք ունենալով միևնոյն ճակատագրական արդիւնքը, — Կայսրութեան սահմաններուն ընկրկումը, այս անգամ մինչև Պոլսոյ դռները, ինչ որ Թուրքիան վերջնականապէս կը մերկայցնէ Եւրոպական տէրութեան հանգամանքէն:

Կառավարական այդ յուրի ու անտանելի եղանակը կը ծանրանար նաև Եւրոպական Թուրքիոյ Իսլամ բնակչութեան վրայ, բայց, ինչպէս Ահաջ տօլըի մէջ, այստեղ այ Իսլամը միշտ ննարը կը գտնէր այդ դրութեան բովանդակ անպատեհութիւնը իր Քրիստոնեայ դրացիին բեռցնելու, և համեմատաբար երջանիկ կեանք մը ապրելու: Դատարանները, դատիկանք


Պոլսոյ արևմտեան շրջանները և Պոլսոյ արևմտեան շրջանները գտնուող Պոլսոյ արևմտեան շրջանները և Պոլսոյ արևմտեան շրջանները



ները, բովանդակ պաշտօնէութիւնը միշտ իր կողմը կը տաչէին երբ Քրիստոնեայի հետ խնդիր կ'ունենար, և ասիկա՝ ընդհանրապէս առանց կաշառքի: Յետոյ՝ բաղդատմամբ Քրիստոնեային՝ Իսլամը կը վայելէր ուրիշ շատ մը առանձնաշնորհումներ. կրնար ըստ հաճոյս երթեկեկի և տէր մնալ իր աշխատութեան արդիւնքին. ասոնցմէ զատ՝ անապահովութեան սարսափէն զերծ էր և վախ չունէր թէ իր տունը տեղը կրնան թալլուիլ. մանաւանդ որ յաճախ ինք էր միւսները թալլողը:

Հակառակ այս առաւելութիւններուն՝ Իսլամ բնակչութիւնը շատ մեծ տեղ չէր բռներ Եւրոպական Թուրքիոյ, մասնաւորաբար Մակեդոնիոյ մէջ. ինչպէս որ երբեմնի Սուլթաններուն յաղթական արշաւանքները յաջորդաբար ահագին թուով Թուրքեր փոխադրած էին Կայսրութեան այդ մասերուն վրայ, այնպէս այ ժամանակակից Սուլթաններու պարտութիւնները յաջորդաբար ահագին թուով Թուրքեր բռնադատած էին Ասիա նահանջելու, կամ իջնելու շատ վար, մինչև Թրակիոյ արեւելեան սահմանները՝ մայրաքաղաքին չուրջը Թրքութեան պատուար մը գոյացնելու համար: Ներկայ պատերազմին՝ այս վերջին պատուարն այ մեծագոյն մասամբ նահանջեց Պոլիս, և անցաւ Ասիա, իր նախահայրերուն մեկնակէտը, առանց աչքը ետին մնալու, ինչպէս իր նախահայրերն այ Եւրոպա անցած էին առանց աչքերնին Ասիոյ վրայ ձգելու. ո՛չ անոնց թողածը հայրենիք մըն էր, ոչ այ այսօրուաններուն թողածը, այլ լոկ բնակավայր մը: «Ուր իրիկուն՝ այնտեղ նաև առաւօտ», կ'ըսէ թրքական սուածը. և Թուրքը էապէս այս սուածին մարմնացումն է, չարմատանար ո՛ր և է տեղ, և ամէն տեղ կրնայ բնակիլ: Իր պաշտօնատուններուն և առհասարակ քիչ շատ աչքի զարնով ամէն բնակարանի և ապարանքներու Գոնախ անունը կուտայ, և այդ բառը երբեմնի Թուրքերը կ'ըմբռնէին «հանգրուան»ի իմաստով. վաչկատուն ցեղ մը ըլլալով, բոլոր հասած տեղերնին կը պահէին տեսակ մը անկայունութիւն, և շէնցնելու, կեանքի պայմանները դիւրացնելու չկամութիւն, որ աւելի առժամանակեայ հիւրերու, քան իսկական սեփականատէրերու երևոյթը կու տար իրենց: Զարմանալի առհաւուրեամբ մը դեռ մինչև այսօր չեն հաժարած եղէգէ գրչէն, ձեռքի վրայ գրելու սովորութենէն ու Տիպիքէն (գօտիին անցուելիք կաղամար), որոնք էապէս թափառիկ ցեղ մը ժառանգութիւններն են. երբեմնի Թուրքերը միշտ տեղափոխուելու, միշտ քաղելու ստիպուած ըլլալով՝ դիւրութիւն չունէին ուղած ատեննին գրասեղան, նստարան կամ գիրի կաղամած ձարելու. ստիպուած՝ այդ պէտքերուն հայթայթումը յարմարուցած էին իրենց կեանքի պայմաններուն. ձամբուն վրայ միշտ կրնային գտնել եղէգնուտներ և անոնցմէ գրիչ տաչել. գրասեղանի պէտք չունէին՝ քանի որ ձախ ձեռքերնին կար, իսկ Տիպիքն ալ միշտ մէջքերնին էր, զէնքերուն առնթեր. դիտելի է որ մելանին մէջ շիֆ դնելու սովորութիւնն ալ պարզապէս այդ մշտերը կենցաղին արդիւնքն է. քալած, վաղած կամ կռուած ատեննին, մեկանը անպատճառ պիտի թափէր. շիֆը այդ անպատենութիւնը կը բառնար. սովորութիւնը մնացեր է մինչև այսօր, և հիմակուան Թուրքերը՝ առհաւակաւ մեքենականութեամբ մը շիֆ կը դնեն նաև հաստատուն, թափելու վտան-

գէն բոլորովին զերծ կաղամարներու մէջ: Այսպէս ահա վաղընջուց Թուրքերու մշտակայ տեղափոխութեանց ընթացքին՝ գրելու պահանջը արգելք մը չէր ըլլար քաղելուն: Իսկ այսօրուանները եթէ թօթափած ըլլային իրենց թափառիկ նախահայրերուն հոգին, տարակոյս չկայ որ վաղուց հրաժարած պիտի ըլլային նաև այդ սովորութիւններէն: Եւրոպայի հողին վրայ հաստատուած Թուրքերէն շատեր Անատոյցի զինուորներ էին, որոնք իրենց ծառայութեան շրջանը լրացնելէ վերջ՝ չէին ուղած հեռանալ, հակառակ անոր որ անդին՝ իննեց ծննդավայրը եզոզ Ասիոյ անկիւնին մէջ՝ ընտանիք և հողեր ունէին: Ուրիշ կարեւոր մաս մը կազմուած էր և շա-



Սօֆիայի արքայական պալատը

րունակ կը կազմուէր Մուհաճիքներէ, որոնք քիչ շատ շրջուցիչ խոստման մը կամ վարձատրութեան մը փոխարէն, ամենայն դիւրութեամբ և առանց կարօտի կը ձգէին իրենց պապենական հողերն ու շէնքերը և կը հետեւէին զիրենք համոզող խորհրդատուներուն: Թուրքը միշտ նոյնն էր ուրեմն:

Այս եկուոր տարրերն ու Եւրոպական Թուրքիոյ աշխարհակալութենէն ստղին տեւող Թուրքերը հաստատուած էին մասնաւորաբար Մակեդոնիոյ մէջ. Երբեմնի աշխարհակալները սոսկ հարթ ու ջրոզող հողերուն վրայ կանգնած էին իրենց օճախը, լեռնոտ վայրերը, բացի ռազմական դիրքերէն, ձգելով Քրիստոնեաներուն. նոյն վայրերուն մէջ կը գտնուէր դեռ երէկ Մակեդոնիոյ Թուրք բնակչութիւնը: Վարտարի և Սթրուժայի մէջտեղ՝ անիկա կաղամած էր երկար դիմ մը, որ հիւսիսի կողմէն մինչև վէլէս ու պղտիկ ընդհատուածով մը մինչև Սքիւպ կը բարձրանար և հարաւի կողմէն ալ կ'իջնէր մինչև Կալքիտեան Թերակղզին (Տե՛ս քարտէս, էջ 163). արևմտեան կողմը՝ քանի մը Թուրք գիւղեր ցրուած էին մինչև Մանասթըրի մօտերը. բաւական տարածուն Թուրք բնակչութիւն մը կը

գտնուէր նաև յունական սահմանագլուխին մօտ, Օսթրովո լիճին և Վիսթրիցա գետին միջև նոյնքան խիտ զանգուած մըն ալ հաստատուած էր արեւելքի կողմը, Գալայայի շուրջը՝ ուրկէ կը միանար Թրակիոյ Թուրք գաղութներուն: Այս Թուրքերը որոնք ամբողջովին ուղղափառ Իսլամ են, դժուար թէ Թուրք կառավարութեան քաշուելէն վերջ իրենց հերուան ստրուկներուն հպատակութիւնը ընդունին և մնան եւրոպական հողին վրայ. ուր որ պիտի հաստատուի նոր հանգրուանը, նոր զօնաբլ, իրենք ալ հոն պիտի փութան:

Եւ արդէն՝ դժուար թէ Եւրոպական Թուրքիոյ Քրիստոնեաներուն մէջ, քրիստոնեայ կառավարութեան մը հաստատումէն վերջ, կարենան մնալ մանաւանդ Թուրք հողատէր պէյերը, որոնք աւելի ատելութեան առարկաներ էին քան Թուրք պաշտօնատարներն ու զօրքերը: Իրենց լուծը պետական լուծէն անհունապէս աւելի ծանր էր, և քրիստոնեայ բնակչութեանց մէջ մշտափառ մնացող ըմբոստութիւնները ո՛չ թէ լոկ քաղաքական կամ կրօնական ազատագրութեան մը, այլ մանաւանդ ընկերային ազատագրութեան մը տիրական, անդիմադրելի տենչանքին արդիւնքն էին: Մանաւորաբար Մակեդոնիոյ մէջ Թուրքը կ'ատէին իրր տիրող տարր, իրր Մանսէտական, բայց կ'ատէին մանաւանդ իրր հողատէր, աւատապետ: Կարդալով Մակեդոնիոյ հողային դրութեան մասին զըրուածները, մեր միտքը կ'իյնայ ճիշդ ու ճիշդ Հայաստանի հայ գեղջուկներուն վիճակը Թուրք կամ քիւրտ հողատէրերու աւատական տիրապետութեան տակ: Նոյն ճորտութեան, մարապայութեան դրութիւնը կայսրութեան արեւելեան, ինչպէս արեւմտեան սահմաններուն վրայ: Մակեդոնիոյ հողերուն լաւագոյն մասը, գրեթէ աշխարհակալութեան թուակաշէն ի վեր, իսլամ պէյերու կը պատկանէին, ու կը կաղմէին ընդարձակ չիֆթլիկներ՝ զորս պուլկար վարձակալներ կը մշակէին: Սեփականատէրը սակայն, կառավարութեան հետ ունեցած յարաբերութեանց չնորհիւ, միշտ ինք կը ստանձնէր տասանորդի վարձակալութիւնը, ինչ որ իրեն դիւրութիւն կ'ընծայէր ուղածին պէս կեղեքելու և հարստահարելու իր չիֆթլիկը մշակող հողագործը. որպէսզի զայն իր հողին վրայ աշխատցնէ, ինք փոխ կուտար անոր պէտք եղած դրամը, և անգամ մը որ հողագործը պարտքի տակ ինկաւ, այլևս բանը բուրդ էր, որովհետեւ ստիպուած էր 20% յաճախ նաև 40% տոկոս վճարել. կուտար, կուտար, բայց պարտքը միշտ պարտք կը մնար. կային թէեւ Երկրագործական Գրամատուեններ, բայց սոսկ պէյերը և կամ մէկ քանի հաղուազիւտ բարեկեցիկ Քրիստոնեաներ կրնային օգտուիլ անոնցմէ:

Վարձակալը տակաւին ստիպուած էր ճկիլ շարք մը պարտաւորութեանց տակ, զորս Պ. Տրակիանօֆ կը թուէ իր «Մակեդոնիա և բարենորոգումները» գրքին մէջ. — Ա. Պէյին հունձքի բաժինը վարձակալը պարտաւոր էր փոխադրել անոր ուղած տեղը. ընդհանրապէս 80—100 քիլօմէթր տեղ, մօտաւորապէս երկու օրուան ճամբայ հեռուն տանիլ պէտք կ'ըլլար: Բ. Մշակութեան բոլոր գործիքներն ու անասունները վարձակալը պէտք է հողար. միայն սերմնացուն կուտար պէյը: Գ. Իւրաքանչիւր

վարձակալ պարտաւոր էր տարին չորս կառք վառելափայտ հայթայթել պէյին: Դ. Դարձեալ իւրաքանչիւր վարձակալ ամէն տարի տասը օր անկառեա պէտք էր աշխատէր պէյին պատկանող ուրիշ հողի մը վրայ: Ե. Պէյին ազօրիքին տնտեսութիւնը և բոլոր աշխատութիւնները վարձակալը պէտք է ստանձնէր, իր հացին համար անհրաժեշտ ցորենը ձրիաբար աղալու արտօնութեան փոխարէն: Զ. Գօրուճին՝ պէյին կեղեքմանց զլխաւոր գործիքը՝ իր ամսականը վարձակալներէն պէտք է ստանար: Է. Տասանորդի ամբողջ տուրքը վարձակալը պէտք է հատուցանէր լոկ իր բաժինէն, պէյին բաժինը անվթար պահելով: — Կեղեքման եղանակները ասոնցմով չէին լրանար, Երրոր բերքը հասնէր, գիւղացին ստիպուած էր չամ-




Գարատաղի կիները հաց կը բերեն կուռէն դարձող իրենց ամուսիններուն

բարել զայն, մինչեւ որ հողատէրը գալով՝ թէ պետական տասանորդը և թէ իր սեփականատէրի բաժինը ստանար. հողագործը իրեն ինկած բաժնին ալ տէրը չէր. ստիպուած էր զայն ծախել հողատէրին որ ընդհանրապէս արմտիքի վաճառականութեամբ կը զբաղէր. այդ գնումը սակայն հունձքէն անմիջապէս վերջ տեղի չէր ունենար. հողատէրը կը սպասէր, կը սպասէր, մինչեւ որ բերքը փախու կամ աւրուելու վտանգին ենթարկուէր, և ահա այն ատեն կու գար գնելու, տարապայման կերպով վար գնով մը. ու խեղճ հողագործը ստիպուած էր այդ գինը ընդունելու, որովհետեւ եթէ քիչ մը վարանելու ըլլար, բերքը պիտի աւրուէր և ոչինչ պիտի արժէր:

Հայաստանի համբաւաւոր Միւլթէղիմներուն ստեղծած դրութիւնն ալ ճիշտ ու ճիշտ աս չէր ինքնին: Հանգիստութեան դեռ ուրիշ շատ եզրեր կարելի է գտնել Հայ և Մակեդոնացի գեղջուկին վիճակուած զարհուրելի կենցաղին մէջ. Հայաստանի Միւլթէղիմները զարթոյններով կը ժամակնէին գիւղերը և մինչև իրենց մեկնումը, դիւղացիին հաշուին կ'ուտէին կը խմէին, շատ հեղ անոր կիսն ու աղջիկը կը բռնաբարէին և սեփ ըլլալէ առաջ ալ չէին ամչնար սիշ ֆիւրասի առնելու: Մակեդոնիոյ Թուրք


հողատէրը նոյնպէս ալպանացի զօրուհիով մը կ'երթար գիւղերը. Ալպանացին զինուած էր, կատակ չունէր. գեղջուկը ան ալ պիտի օպրեցներ, և անոր ալ ճիշ խրատի պիտի տար: Մեծ բան՝ եթէ կնոջն ու աղջիկներուն չդպած մեկնէին: Գիւղացին եթէ չկերցներ՝ չիտկէ չիտակ փորձանքի կը հանդիպէր. եթէ կերցներ՝ փորձանքը նոյնպէս անպակաս կ'ըլար



Գարատաղցուց թնդանօթները՝ Թարապօշի ամրութեանց դէմ (Նուիրած է Ռուսիա)

գլխէն: «Հրամայուցած կերակուրդ ուտելու համար ակուաներս մաշեցուցի, կ'ըսէր պէյը, տո՛ւր ուրեմն անոնց վարձքը»: Ոչինչ կրնար շրջել այս անանուն դրութիւնը. կուսակալէն սկսեալ յետին պաշտօնեան նոյն բանը կ'ընէին տարբեր անուններով. ինչո՞ւ վերջ տային սովորութիւն մը ուրկէ էն առաջ իրենք կը նպաստաւորուէին: Մէկ մարդ միայն յաջողած էր՝ հող չէ թէ ժամանակաւոր կերպով, վերցնել այդ դրութիւնը, Պէն-

տէրի Հիւսէին աղա փաշան, Մանուտ Բ.ի այն Եպարքոսը որ Եէնիչէ-րիներու ջնջման հրովարտակը գործադրած էր: Ապտիւլ Մէճիտ, հազիւ գահ բարձրացած, զայն կուսակալ կարգած էր Պուլկարիոյ, որ խռովութեան մէջ էր՝ կառավարական պաշտօնեաներու և առ հասարակ Իսլամներու անտանելի կեղեքմանց պատճառաւ: Հիւսէին աղա փաշա, բռունցքի



Գարատաղցուց թնդանօթները՝ Թարապօշի ամրութեանց դէմ (Նուիրած է Ռուսիա)

տէր, մանաւանդ զօրեղ բռունցքի տէր մարդ, չուտով սկսած էր կարգ կանոնը վերահաստատելու աշխատիլ, բայց մինչ մէկ կողմը կարգի կը դնէր, ուրիշ կողմ մը կը խանգարուէր, մէկ դին զբաղած ատենը միւս դին տակն ու վրայ կ'ըլար: Շնորհիւ իր կամակոր և յարատեւող բնաւորութեան, կրցած էր սակայն բաւական բարեկարգ վիճակ մը հաստատել, վերցնելով Իսլամներուն և պաշտօնատարներուն կեղեքումները նուիրագործող գրեթէ



ԳԼՈՒԽ Թ.

ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ

Մակեդոնիոյ և Թրակիոյ Պուլկարներուն գրութիւնը բնական է ուշ կամ կանուխ պիտի վրդովէր իրենց ազատագրուած ցեղակիցները. և արդէն՝ կարելի չէր որ անտարբեր մնային, որովհետեւ թուրք պաշտօնատարներու և ընդհանրապէս խոյամ տարրին հարստահարութեանց ու կեղեքումներուն հետեւանքով, Մակեդոնիոյ զեղջուկները մաս առ մաս հետզհետէ սահմանը անցնելով Պուլկարիա կը լեցուէին: Քաջալերուած 1885ի յեղափոխութեան յաջողութենէն որ Արեւելեան Բուժէլիի ազատագրութեան յանգած էր. տակաւ սկսաւ մարմին առնել յեղափոխական նոր կազմակերպութիւն մը՝ Արեւելեան Բուժէլիի մէջ կատարուած շարժումը Մակեդոնիոյ մէջ ալ կրկնելու համար: Ուրիշ քաջալերութիւն մըն ալ՝ տէրութեանց կողմէ Արեւելեան Բուժէլիի Պուլկարիոյ կցման ճանաչումն էր. Պուլկարները կը յուսային նոյն հաւանութիւնը ձեռք բերել նաև Մակեդոնիոյ կցման համար, եթէ երբեք ապստամբութիւնը յաջողէր: Ամէն բան կախում ունէր ուրեմն յեղափոխական կազմակերպութենէն:

Այդ կազմակերպութեան հիմը դրաւ Սօֆիայի Օսմանցի Սլաւներու Համաժողովը՝ որ Թուրքիոյ մէջ մնացող Պուլկարներուն վիճակը բարելաւելու համար գումարուած էր, և որ 1893ին հաստատեց «Մակեդոնա-Ադրիանուպոլսական կազմակերպութիւն»ը: Էսպէս յեղափոխական, թէև չափաւոր հակումներով կազմուած մարմին մըն էր ասիկա, զոր պիտի վարէր «Արտաքին Քօմիթէ» մը. այս վերջինը պիտի ունենար վեց անդամներ որոնք տարին անգամ մը պիտի ընտրուէին զաղտնի քուէարկութեամբ, ընդհանուր անդամներու Համաժողովի մը կողմէ: Քօմիթէն ինք

կ'ընտրէր գործադիր և Համաժողովին պատասխանատու մարմին մը: Առաջին ընտրուած նախագահը եղաւ մակեդոնացի դաստիարակ մը՝ Թրայքօ Քիթամչէֆ: Մինչև 1899՝ այս կազմակերպութիւնը գրեթէ Սօֆիայի կառավարութեան թեւարկութեան տակ մնաց: Ֆէրայնանտ իշխանին զգոյշ, յամբընթաց, միայն ապահով արդիւնքներու համար երիտկացող քաղաքականութիւնը ազդեց նաև անոր անդամներուն վրայ, և զսպեց անոնց գործունէութեան թափը: Իշխանը՝ որ կազմակերպութեան վարչներէն շատ աւելի լաւ տեղեակ էր Եւրոպայի արամադրութիւններուն,



Էտիրնէ սղողուած

կանխահաս կը նկատէր ապստամբութիւնը, ուրիշ կերպ ըսելով՝ չէր ուզեր յաջողութիւնը չապահոված գործի ձեռնարկել: Եթէ երբեք իր գաղտնի հակառակութենէն ասդին բնաւ ձախողութեան չէ հանդիպած, պատճառը լոկ այս կանխահոգութիւնն է, ուրկէ չէ հրաժարած ո՛չ մէկ առթի մէջ: Մակեդոնացիք սակայն այդքան նուրբ հաշիւներէ և դիւանագիտաւ կան նկատումներէ բան չէին հասկնար. յետոյ իրականութիւնը կար որ զիրենք կը մղէր անհամբերութեան. թրքական և յունական բռնութիւնները միանգամայն կը ծանրանալին իրենց վրայ. կեանքը բոլորովին անտանելի դարձած էր, և այդ դժուարին վիճակը բարեկաւելու համար՝ ուրիշ միջոց չէր երևար իրենց աչքին՝ այլ միայն ապստամբութիւնը: Կազմակերպութեան դէմ դժգոհութիւնը սոսկ Մակեդոնիայէն չէր. բուն իսկ Պուլկարիոյ մէջ ալ դժգոհները շատ էին. յեղափոխութիւնը ամէնէն աւելի տարածուած էր բանակին՝ երիտասարդ սպաններուն մէջ, և այս վերջինները նոյնպէս անհամբեր էին վճռական գործողութեանց ճամբուն մէջ նետուելու: Իրենցմէ ամէնէն խանդավառը երիտասարդ տեղակալ մէջ նետուելու: Իրենցմէ ամէնէն համախոհները 1907 դեկտեմբերն էր, Պօրիս Սարաֆօֆը, զոր Սանտանսքիի համախոհները

(*) Կը հետեւինք Պ. Պ. Բինժնի, Պէռարի և Ֆրանսական «Դեղին Տետրակ»ներուն:

տեմբեր 13ին պիտի սպաննէին Սօֆիայի մէջ՝ «չափաւորութեան» ամբաստանութեամբ: 1907ի այդ «չափաւոր»ը սակայն, իննսունական թուականներուն ամէնէն ծայրայեղն էր. և բողոքող մը Բօմիթէին անշարժութեան դէմ: Սպաննու ազդեցութիւնը յաջողեցաւ վերջապէս խախտել ընդգրկուած խոհեմութեան գրութիւնը և Սարաֆօֆ՝ հրոսախուճի մը գլուխը անցած՝ թրքական հողը մանելով արշաւեց մինչև Մէլնիք սլաւոնական քաղաքը ու գրաւեց զայն. թէև մէկ քանի ժամուան տիրապետութենէ մը վերջ՝ ստիպուեցաւ թողուլ: Այս յանդգնութեան պատճառաւ իր ազդեցութիւնը մեծցաւ Կազմակերպութեան մէջ, ու շուտով ժողովրդական դէմք մը դարձաւ Պուլկարներուն, մանաւանդ Օսմանցի Պուլկարներուն աչքին. այդ ժողովրդականութիւնը հետզհետէ աւելի պիտի մեծնար իր ապագայ փառաւոր գործունէութեամբ:

1899էն ստղին՝ Սարաֆօֆի անմիջական թելադրութեանց տակ՝ բուրովին շեշտուեցաւ Կազմակերպութեան գաւազարական գործունէութիւնը. մասնաւորաբար յիշատակելի է սպանութիւնը Մակեդոնացի-Սերան յայտնի գործիչի մը, բրօքէտէօր Միխայիլանուի, որ երկու Պուլկար յեղափոխականներ թուրք կառավարութեան մասնաւոր ըլլալու ամբաստանութեամբ տէրօտի ենթարկուելով՝ Սարաֆօֆի մարդոց գնդակներուն տակ ինկուեցին ինքն սուժանական հողի վրայ, Պուլկարէ մէջ: Այս սպանութիւնը մեծ ազմուկ հանեց. Պուլկար կառավարութիւնը ակամայ ձերբակալեց Սարաֆօֆը, իբր թելադիր, բայց շուտով անպարտ արձակեց զայն: Միայն Սարաֆօֆ ստիպուեցաւ հրատարիկ «Արտաքին Կազմակերպութենէն» որուն վարիչ արձած էին բրօքէտէօր Միխայիլօվսքի և զօրավար Զօնչէֆ: Ասոնց չափաւորութենէն դժգոհ եղողներ Սարաֆօֆի հետեւեցան և կազմեցին առանձին խումբ մը, աւելի ծայրայեղ հակումներով:

Մինչև այն ատեն՝ Պուլկարից «Արտաքին Կազմակերպութեան» անշարժութենէն սրանեղած Մակեդոնացիք հաստատած էին «Ներքին Կազմակերպութիւն» մը որ հետզհետէ արձատ արձակեց բովանդակ Մակեդոնիոյ, ինչպէս նաև Էտիրնէի և Մանասթրի վիլայէթներուն մէջ. իր պետքը՝ կորովի և շատ ժողովրդական մարդ մըն էր, Տէլչէֆ հրոսակը, որ անընդհատ կը գործէր Սելանիկի, Էտիրնէի ու Մանասթրի նահանգներուն մէջ, ու չնորհիւ Պուլկար ժողովուրդին աջակցութեան, միշտ կը յաջողէր խոյս տալ զինքը ձերբակալելու համար կատարուած ամենախիստ հետապնդումներէ և հետազօտութիւններէ: Կազմակերպութիւնը Կեդրոնական Բօմիթէ մը ունէր Սելանիկի մէջ, որ կը վարէր յեղափոխութիւնը. Մակեդոնիան ու Թրակիան (Մանասթրի Սելանիկի և Էտիրնէի վիլայէթները) բաժնուած էին յեղափոխական ու թ սանձագներու. — Սելանիկ, Մանասթրը, Սկիւպ, Սէրէզ, Տրամա, Աթրումնիցա, Մէլնիք և Էտիրնէ: Իւրաքանչիւր սանձագ ունէր երկու յեղափոխական քաղանք. տեղական բուրը ենթաքօմիթէները անկախ էին բրօքականտի գործունէութեան մէջ, ապակեդրոնացման գրութեամբ. բայց ամէնքն ալ պարտաւոր էին պատուիրակ մը զրկել տարեկան ընդհանուր ժողովներուն: Ասկէ զատ, իւրաքանչիւր յեղափոխական սանձագի մէջ՝ երեք անդամէ բաղկացած քննիչ մը կը

հսկէր քաղանքու ենթաքօմիթէներուն դրամական գործառնութեանց վրայ, կը գործակցէր համաժողովի պատուիրակներու ընտրութեան, կ'օգնէր բանտարկեալներուն և կը լրտեսէր թուրք պաշտօնատարներու գործունէութիւնը: Այս «Ներքին Կազմակերպութիւն»ը իր դատարանները ունէր, տուրքի ենթարկած էր երեք նահանգներու բնակչութիւնը, կը դատէր ու տէնօրի կ'ենթարկէր ժլատները, իրեն ղրմակալողները, ինչպէս



ՊՈՒԼԿԱՐ ԶՕՐԱՎԱՐ ՏԻՐՅՅ

նաև մասնիչները: Սարաֆօֆ և իր համախոհները շուտով այս «Ներքին Կազմակերպութեան» հետ դաշնակցեցան, պատրաստելու համար ընդհանուր յեղափոխութիւնը որ 1902-3ին իր լրման պիտի հասնէր: Իսկ Միխայիլօվսքի-Զօնչէֆ վարչութեան ենթակայ «Արտաքին Կազմակերպութիւն»ը որ միշտ Սօֆիայի կառավարութեան թելադրութեանց կը հետեւէր ու կը մնար խոհեմութեան սահմաններուն մէջ, ընդհակառակը սկսաւ պայքարիլ «Ներքին Կազմակերպութեան» գործունէութեան դէմ: Իր մեծագոյն ձգտումն էր Եւրոպայի ուշադրութիւնը հրաւիրել Մակեդոնիոյ վրայ և տէրութեանց միջամտութեամբ հաստատ ու գործադրութիւնը երաշխաւորուած բարենորոգումներ ձեռք բերել Մակեդոնիոյ և Թրակիոյ համար: Եկաւ ժամանակ մը ուր Սարաֆօֆի խումբն ու «Արտաքին Կազմակերպութեան» խումբն

մակերպութիւն»ը զիմեցին եղբայրասպանութեան և սկսան իրար զարնել : 1902ի սկիզբները սակայն, «Արտաքին Կազմակերպութիւն»ը նոյնպէս ստիպուեցաւ յեղափոխական գործունէութեան մէջ ինտուել Մակեդոնիոյ հարցին լուծումը, թէեւ առանց թօթափելու ուղղակի Պուլկար կառավարութեանն թեկադրուած զգուշաւորութիւն մը որ դարձեալ «Ներքին Կազմակերպութեան» բողոքներուն տեղի տուաւ : Այս վերջինը, աւելի կորովով կը մասնակցէր շարժման, չնորհիւ իր բազմաթիւ ճիւղերուն և շրջուն մարմիններուն, որոնք ամէն կողմ զէնք կը բաժնէին, կարելի եղածին չափ ընդհանուր հանգամանք մը տալու համար ապստամբութեան : Մարտ 4ին՝ Մանասթրի Գրանսական հիւպատոս Պ. Շուպիէ կը գրէր իր կառավարութեան թէ ամէն կողմ գաղանարար կը խօսին գարնան պայթիլիք ապստամբութեան մը վրայ և թէ Քօմիթէները իրենց գործունէութիւնը կեդրոնացուցած են Մակեդոնիան շեղակի կտրող լեռնոտ և անտառախիտ գիծի մը երկայնքը, որուն վրայ կը գտնուին Շթիպ, Քէօքրիւլի, Բէրլէբէ, Քրուշէվօ, Մանասթրի և Քասթորիա : Միևնոյն ժամանակ, Պ. Շուպիէ կը ծանուցանէր թէ Յոյները ամէն ճիգ կը թափեն այս շարժումը խորտակելու համար, թէ կառավարութեան կը մատնեն պուլկար յեղափոխականները, և զէն ի ձեռին կը գործակցին թուրք զինուորներուն՝ պայթելու վրայ եղող ապստամբութիւնը անյաջողութեան մատնելու համար ոչինչ խնայելով : Իսկ Սերպերը չէզոքութիւն կը պահեն, և տրամադիր են ապստամբներուն աջակցելու, եթէ երբեք անոնց ձեռնարկած շարժումը յաջողելու յոյս ներշնչէ :

Գարնան յեղափոխութիւնը իրօք պայթեցաւ, հակառակթուրք կառավարութեան ձեռք առած խիստ միջոցներուն և սահմանազուխներուն վրայ կատարուած արթուն հսկողութեան : Հրոսախուժներ անցան անարգել, և ճշարիտ ճակատամարտներ մղեցին Օսմ. զինուորական ոյժերուն դէմ, ինչպէս յուլիս ամսուն Սկիւպի, Մանասթրի և Սթրուճայի վերին հովտին մէջ : Պուլկար կառավարութիւնը, այդ միջոցին փոխառութիւն մը կնքելու ստիպուած, ամէն ճիգ թափեց կանխահաս նկատուած այդ շարժումը կասեցնելու համար : «Արտաքին Կազմակերպութիւն»ը նորէն իր սպասողական աւանդութիւններուն վերադարձաւ, մինչդեռ Սարաֆօֆ և Սթանիշէֆ, ժամանակը պատեհ նկատելով որոշեցին աւելի կորովով ու հաստատակամութեամբ առաջ տանիլ ապստամբութիւնը : Շիրքայի տարեպարձը, սեպտեմբեր 18ին, առիթ մը դարցաւ նոր մղում տալու, հակառակ Մեծ Դուքս Նիքօլայի յորդորներուն, որ իրենց հիւրն էր և որ նոյնպէս կանխահաս կը նկատէր ապստամբութիւնը : 1902 հոկտեմբեր 15ին, Պոլսոյ ֆրանսական դեսպանը լուր կու տար իր կառավարութեան թէ Բէթրիչի, Մէլնիքի, Ճուճա Պալիայի ու Ռապօքի քաղաքներուն մէջ՝ տասնըեօթ գիւղերու բովանդակ արու բնակչութիւնը միացած է ապստամբներուն և Մակեդոնիոյ գոյներով, — կարմիր կանանչ, — դրօշ պարզած : Յեղափոխական կարեւոր ոյժեր որոնք գրաւած էին Մէլնիքի և Ճուճա Պալիայի միջև գտնուող Քրէզնոյի կիրճը, նախ Հանրային Պարտքի վարչութեան ներկայացուցիչը, տասանորդի հաւաքելի

մը և երեք ժանտարմաներ, յետոյ ամբողջ ջոկատ մը դօրք կը սպաննեն : 50 հոգինոց ուրիշ թուրք ջոկատ մը, միշտ Սթրուճայի հովտին մէջ, պաշարուելով անձնատուր կ'ըլլայ : յեղափոխականները անոնց զէնքերը օճազմամթերքը և կօշիկները առնելով աղատ կ'արձակեն :



Գարստաղի Նիքօլա թագաւորին թիկնապաճներէն մէկը

Այս յեղափոխական գործունէութեան միջոցին՝ թուրքիոյ «ձեռքերը աղբատ էին», և ձեռքերու աղատութիւնը կը հասկցուի անշուշտ թէ ինչ կը նշանակէ այստեղ : Այդ ձեռքերու աղատութեան կը պարտինք մենք հայկական ջարդերը : Մակեդոնիա նոյնպէս ջարդերու ուժիմին ենթարկուած էր : Թէ՛ այնտեղ և թէ՛ Հայաստանի մէջ շարժառիթը նոյնն էր, — ապստամբութեան զսպում : նոյնն էին նաև այն քաղաքական պայման-


ները՝ որոնք միանգամայն թէ՛ Մակեդոնիոյ և թէ՛ Հայաստանի մէջ «ազատ» թողած էին համարեան կառավարութեան ձեռքերը:

Այդ պայմանները լաւագոյն կերպով մը ըմբռնելու համար պէտք է ընկրկինք մինչեւ 1897 թուականը՝ մինչեւ աւստրուսուս համաձայնութեան կնքումը: Մենք պարզեցինք արդէն այն դարաւոր մրցակցութիւնը որ գոյութիւն ունէր այս երկու երկիրներուն միջեւ՝ Արեւելքի մասին. Գերման և Սլաւ տարրերու պայքարն էր զոր կը մարմնացնէին մէկն ու միւսը, իրարու ձեռքէ խելու աշխատելով Արեւելքի տիրապետութիւնը, որ իրենց պիտի սպանովէր նաև Միջերկրականի տիրապետութիւնը. այս երկու երկիրները մանաւանդ ամէնէն աւելի շահակից էին Արեւելքի իրազարձութեանց մէջ, և այդ փոխադարձ շահու տեսակէտը զիրենք քանի քանի հեղ մղած էր կնքելու ժամանակաւոր համաձայնութիւններ, որոնց ընթացքին կամ ձեռք ձեռքի գործած էին՝ Թուրքիոյ հողային ամբողջութիւնը, — սքաքու ֆուօն, — չրջելով, և կամ բացարձակ չէզոքութեամբ մը այդ սքաքու ֆուօն անխախտ պահելով: 1897ին կնքուած աւստրուսուս համաձայնութիւնը ահա ճիշդ այս վերջին նպատակը ունէր, արդիւնքը ըլլալով աւելի սպասողական քան գործօն քաղաքականութեան մը: Եթէ մտաբերենք ժամանակը և զայն յուզող հարցերը, առաջին ակնարկով անըմբռնելի պիտի երեւայ միանգամայն թէ՛ Աւստրիոյ և թէ՛ Ռուսիոյ այս կրաւորական չէզոքութիւնը Թուրքիոյ հանդէպ, որ այդ չրջանին՝ շահարեւ միջամտութիւններու դուռ բացող բաղձաթիւ առիթներ կ'ընծայէր իրենց ընչաքաղցութեան, — ինչպէս կրէտական ապստամբութիւնը, Մակեդոնիոյ խրատումները, Յոյն և Թուրք վէճը, և ասոնց ամէնուն հետ այ՛ հայկական ապստամբութիւնն ու ջարդերը: Բայց եթէ մտաբերենք նաև այդ միջոցին երկու երկիրներն ալ զբաղեցնող քաղաքական մտահոգութիւնները, դիւրաւ պիտի կրնանք ըմբռնել իրենց ձեռնթափութիւնը Արեւելքի գործերէն, միջամտութեան յարմարագոյն առթի մը մէջ:

Աւստրիոյ վարչապետ Կոմս Կոլուխովսքի՝ ստիպուած էր ներքին ծանր դժուարութեանց դէմ կիրարկել իր բովանդակ կորովն ու գործունէութիւնը. ցեղային վէճերը որոնք յանկարծ զարհուրագին թափ մը ստացած էին, անհնարին կը դարձնէին խորհրդարանական կեանքը. ճրգտուած մեծ էր մանաւանդ Վիեննայի և Պուտաբէշթի միջեւ. Հունգարացւոց պահանջումները վրդովազին վաղորդայնի մը երկիւղը կը ներշնչէին՝ անկարելի դարձնելով Աւստրոսուսուս համաձայնութեան վերանորոգումը: Կոմս Կոլուխովսքի՝ ինկած էր դժուարին կացութեան մը մէջ և ինք մանաւանդ կը փափաքէր սքաքու ֆուօն անխախտ պահելու Արեւելքի մէջ՝ որովհետեւ՝ տարբեր քաղաքականութեան մը պարագային՝ չպիտի կրնար անհրաժեշտ ուշադրութեամբ հետեւել դէպքերուն և ուրիշները, մանաւանդ Ռուսիա պիտի շահէին՝ իր ապահով կորուստին փոխարէն:

Բայց Ռուսիա նոյնպէս ստիպուած էր Արեւելքի մէջ իրերու գրութիւնը անխախտ պահել: Ժամանակէ մը ի վեր նոր ընթացք տուած էր իր քաղաքականութեան. Մերձաւոր Արեւելքը որ երբեմն իր պետական

մարդոց միակ մտահոգութեան առարկան էր, ինկած էր երկրորդական նշանակութեան մը մէջ, և անոր տեղ՝ ուս քաղաքականութեան բովանդակ մտահոգութիւնը կը կեդրոնանար Հեռաւոր Արեւելքին վրայ: 1878ի ձախողուածը Արեւելքի մէջ, յետոյ Պուլկարիոյ հակառուս քաղաքականութեան բերմունքով Բեթէրսպուրկի կրած հիասթափութիւնը անշուշտ մեծ դեր խաղացած են ուս քաղաքականութեան այս փոփոխութեան



Սաւառնակը Օսմ, Բանակին մէջ

մէջ: Ինչ որ ալ ըլլայ բուն պատճառը, խնդիրը հոն է որ այդ փոփոխութեան ամէնէն առաջ և ամէնէն աւելի մենք տուեցինք: 1897ի աւստրուսուս համաձայնութիւնը դատակնիք մըն էր մեր ցեղին համար. մասամբ աւելի կամ նուազ հիմնաւոր քաջալերութեանց և յոյսերութեամբ, մասամբ ալ թուրք բռնակալութեան զարհուրանքին, մանաւանդ Մուսա պէյի դատին դառն հիասթափութեան պատճառաւ առաջ եկած ապստամբական շարժումը ամէն կարելի, նոյնիսկ վայրագ միջոցներով խեղդելու հնարաւորութիւնն էր զոր այդ համաձայնութիւնը կ'ընծայէր Ապտիւլ Համիտի, անոր ձեռքերը ազատ ձգելով: Այդ համաձայնութեան նախնական հիմերը դրուած էին 1896 օգոստոս 25ին, Վիեննայի Դանլիճին և Ռուսիոյ արտաքին գործոց տխրահոչակ նախարար Պ. Լոպանօֆի միջեւ. որպէսզի Արեւելքի սքաքու ֆուօն չխանդարուի, Սուլթանը ազատ պիտի մնար իր տան մէջ խաղաղութիւնը և անդորրութիւնը վերահաստատելու իր ըմբռնած կերպով: Պ. Լոպանօֆի ոչ այնքան Կրէտէն կամ Մակեդոնիան, որքան բուն իսկ Հայաստանը նկատի ունէր այս ոճրագործ սկզբունքը իրականացնելու աշխատած ատենը. այն միջոցին ուր ինք զբաղած էր Ծայրագոյն Արեւելքի մէջ, Մերձաւոր Արեւելքի կողմէն գլխաւոր վտանգը լոկ Հայաստանը կ'երեւար իր աչքին. չէր ուզեր «Ասիական Պուլկարիա» մը ունենալ Կովկասի կողքին, ապերախտ ինչպէս Եւրոպական Պուլկարիան, և աւելի վտանգաւոր անոր համար որ կրնար անջատողական շարժման մը մղել Կովկասի Հայերը: Յայտնի է թէ Պ. Լոպանօֆի այս տխուր քաղաքականութեան մէջ իրեն գործակից

ունեցաւ ուրիշ տիրահոչակ պետական անձնաւորութիւն մը, Ծը-
րանսայի արտաքին գործոց նախարար Պ. Հանօթօն, և ասոնց կրկին
ջանքերուն, ինչպէս նաև Աւստրիոյ հետ դեռ չկնքուած բայց ծրագրուած
համաձայնութեան հետեւեցան կրէտական ու հայկական ջարդերը 1897ին,
Ծրանց-Նոզէֆ կայսեր Բեթէրսպուրկ այցելութեան միջոցին կնքուեցաւ
բուն համաձայնութիւնը, որ Ռուսիան ու Աւստրիան իրարու նկատ-
մամբ ապահով և Համիտն ալ ազատ կը թողուր իր շարժումներուն
մէջ: Այս արտօնութեամբ Համիտ պարտութեան մատնեց Յունաստանը,
թէև ասոնց կռուսխնձորը՝ Կրէտէն ազատել կարենալու. յետոյ՝ յա-
ջողեցաւ ամենավայրագ զսպողական միջոցներով խեղդել Հայկական
Շարժումը, և ատով ալ չգոհանալով՝ շիտակ շիտակ Հայ տարրին ջնջման
աշխատեցաւ: Այդ միջոցին՝ Աւստրիա իր ներքին կնճռոտութիւնները
հարթելու զբաղած էր, և Ռուսիա ալ նետուած Մայրաքոյն Արևելքի քա-
ղաքականութեան մէջ ուր իր պատմութեան մեծագոյն պարտութիւնը
պիտի կրէր քիչ ետքը: Արևելքի մէջ՝ ասպարէզը բաց կը մնար ուրեմն Գեր-
մանիոյ «անտեսական» ծաւալման առջև, որովհետև Անդլիա ալ Թրանս-
վալի դժուարին պատերազմով զբաղած էր: Յայտնի է արդէն թէ Գեր-
մանները ինչ ճարտարութեամբ օգտուեցան այդ գործելու ազատութենէն,
Թուրքիայէն կորզելով անտեսական շահաբեր առանձնաշնորհումներ, մաս-
նաւորաբար Պաղտատի երկաթուղիին մենաշնորհը որ Փոքր Ասիոյ ամէնէն
յուռթի մասերը՝ մինչև Պարսից Մոցին սահմանները՝ Գերման շահաստան-
ներու պիտի վերածէր: Գիտենք տակաւին թէ ատոր համար ո՛չ մէկ նկա-
տումի առջև կասեցան և թէ Վիլհէլմ Բ., ո՛չ միայն Համիտը քաջալե-
րեց Հայկական հալածանքներուն առթիւ՝ պատուոյ սուրի նուէրով մը որ
սրբագործումն էր կատարուած անանուն ջարդերուն, այլ նաև իր Բրիտ-
տոնեայ Վեհապետի հանգամանքը ոսնակոխ ընելով ինք իր ձեռքով պատկ
դրաւ Բրիտտոնէութեան վառարանին ազատագրութեան համար Երուսաղէմ
արշաւած Սաչակիրներուն մեծագոյն Իսլամ թշնամիին գերեզմանին վրայ:

Երբ պայթեցաւ 1902ի Պուլկարական Յեղափոխութիւնը, Եւրոպական
Թուրքիոյ մասին ուրիշ կարգադրութիւն չէր եղած տէրութեանց կողմէ:
Աւստրիա և Ռուսիա, իրր անմիջական շահակիրներ՝ իրենց ոստիկանի հան-
գամանքը կը պահէին դարձեալ, միշտ կրաւորական չէզոքութեամբ մը
եղաշխարհորելով սրաքու բռնօճ՝ 1897ի համաձայնութեան հիման վրայ: Բայց
այդ քաղաքականութեան անբաւականութիւնը շատ յայտնի կ'երևար, և
վաղուց զգալի դարձած էր նոր միջոցներու պէտքը: Մակեդոնիոյ ապրա-
տամբութիւնը մինակը կը բաւէր արդէն այդ նոր միջոցներուն անմիջա-
կան անհրաժեշտութիւնը զգացնելու համար: Ծրանսա՝ բարենորոգմանց
կողմն էր. իր ներկայացուցիչները, թէ՛ Պոլսոյ և թէ՛ Եւրոպական Թուր-
քիոյ մէջ՝ անընդհատ կը տեղեկագրէին թէ Օսմ. կառավարութիւնը՝ հա-
կառակ իր խոստումներուն և վայելած ազատութեան՝ ոչինչ չըջած էր իր
Եւրոպական ստացուածքներուն մէջ արմատացած յուր կարգերէն: 1897ի
Աւստրաւոուս համաձայնութեամբ իրեն տրուած ազատութիւնն ալ ուրիշ
բանի չէր գործածած, այլ միայն քիչ մը աւելի տրաքոնեան ու անողորմ

կերպով խստացնելու զսպողական միջոցները, Հայաստանի մէջ իրականա-
ցուցածը յաջողցնելու համար նաև Մակեդոնիոյ մէջ: Պ. Պապի Պոլսոյ



«Թուրքիոյ և Պապի Պոլսոյ հարաբերութիւնը»

Ծրանսական գործակատարը, կը հաստատէր թէ այդ բռնական եղանակը
ոչ մէկ յաջողութիւն գտած է: Ապստամբութիւնը, — «ամէնէն լուրջ շար-
ժումը որ տեղի ունեցած էր. 1876—77ի պատերազմին անցքերէն ասդին», —


կը ծաւալէր՝ հակառակ զայն զսպելու համար կիրարկուած վայրագութեան: «Ոչ մէկ արտաքին օժանդակութիւն կար, կը գրէր Պ. Պասթ, Պուլկար Իշխանապետութիւնը բռնադատուած էր ձեռքերը ծալած մնալու, նոյն իսկ Մակեդոնական Բօսնիայէն բաժնուած էր ինք իր մէջ. ամէն բան ցոյց կու տար թէ ապստամբները շուտով պիտի ընկճուին: Բայց իմաստուններուն կանխատեսութիւնը ճիշդ չէր: Ո՛չ միայն հրոսախուժները չջնջուեցան Թուրքերուն կողմէ և իրենց պետերով անվթար կը մնան, այլ իրենց մտած բոլոր տեղերը կը հանդիպին ժողովուրդին համակրութեան և անկէ օժանդակութիւն կը գտնեն»: Իսկ Սերանիկի ֆրանսական հիւպատոսը, Պ. Աթէկ, ապստամբութիւնը կ'արգարացնէր՝ նկարագրելով Մակեդոնիոյ հողային յուսի գրութիւնը, տասանորդի գանձման կեղեքումները և ուրիշ հարստահարութիւններ, աւելցնելով որ անհրաժեշտ է լաւագոյն գրութեամբ մը վերակազմել ստիկանութիւնն ու դատարանները և բառնալ տասանորդի վարձակալութեան (միլիթիաֆիմուքեան) գրութիւնը, որ զեղծումները կը զիւրացնէր: Մինչդեռ Ֆրանսա իր ներկայացուցիչներուն տեղեկութեանց վրայ՝ բարենորոգումներուն պէտքը կը հաշակէր Մակեդոնիոյ համար, և այդ մտքով զիմուներ կ'ընէր Էնթուսիստները, Անգլիա Թրանսվալի աշխարհակալութիւնը լրացուցած էր և շատ ալ տրամադիր կ'երեւար գործօն դեր մը ստանձնելու Արեւելքի մէջ. Ռուսիոյ յառաջդիմութիւնը դէպի Հեռաւոր Արեւելք՝ զինքը կը վրդովէր. այդ յառաջդիմութեան մէջ նոյնպէս վտանգ կար իր հնդկական ստացուածքին համար, և դեռ Ճարնի ձեռքով Ռուսական արշաւը խորտակելու գիւտը, — ժամանակակից զիւանագիտութեան գլուխ-գործոցը, — չէր բրած, մերձաւոր Արեւելքի գործերը խառնշտակելով՝ կը յուսար Ռուսիոյ ուշադրութիւնը հեռացնել Հեռաւոր Արեւելքէն. այս պատճառաւ, ինք ալ ոյժ տուաւ ֆրանսական ձեռնարկին որ կը ձգտէր թօթափել 1897ի Աւստրիական համաձայնութեան կիրարկած չէզոքութեան քաղաքականութիւնը, և անոր տեղ հաստատել միջամտութեան քաղաքականութիւն մը, առանց որուն անկարելի պիտի ըլլար Սուլթանէն կորզել իրական բարենորոգումներ:

Այս անգլիաֆրանսական պահանջման հիմ կը դառնար ո՛չ միայն Մակեդոնիոյ ապստամբ վիճակը, այլ մանաւանդ մակեդոնական խառնակութեանց բերմունքով՝ Պուլկարութուրք պատերազմի մը սպառնալիքը: «Նոյեմբերի (1902) սկիզբէն ի վեր, կը գրէր Սօֆիայի ֆրանսական ներկայացուցիչը, Մակեդոնիոյ մէջ գործող հրոսախուժները Պուլկարիա կը վերադառնան. առաջին ձիւները իջած են, ծածկելով լեռներու անցքերը և հրոսակներէն կորզելով իրենց սովորական ապաստանները: Պուլկար կառավարութիւնը զինաթափ կ'ընէ հրոսախուժները և անոնց պետերը կը բանտարկէ մէկ քանի օր. բայց ժողովուրդը խանդավառութեամբ կը շրջապատէ թէ՛ հրոսակները և թէ՛ պետերը, զանոնք կը ծափահարէ ու կը կերակրէ: Մակեդոնական ծագում ունեցող Պուլկար սպաները՝ որոնց թիւը հազարի կը հասնի, կը մտածեն խմբովին հրաժարիլ, չեն ուզեր զէնքը ձեռքերնին անգործ մնալ՝ երբ անդին իրենց մերձաւորներուն կեանքը վտանգի մէջ է: Մակեդոնիայէն փախչող եկողներու թիւը շատ մեծ է:

Ռուսական դեսպանը՝ Պ. Պախալովսկի, ինծի յայտնեց ձիւնայէի Ռուս հիւպատոսին կողմէ Տուպնիցայի և Բէօսթէնտիլի կողմը կատարուած քըննութեան մը արդիւնքը, որ ցոյց կու տայ թէ աւելի քան 600 անլեւաս անձեր՝ ձերուներ, կիներ ու տղաք՝ կը փախչէին Թուրքին առջեւէն: Ամէն օր հարիւրներով կ'անցնին Պուլկարիա, և Պ. Պախալովսկի կը հաւաստէ թէ ամիսը չլրացած՝ անոնց թիւը 1000ը պիտի անցնի: Իր կարծիքով՝ պէտք է բարեկարգութեանց ծրագիր մը մշակել և անոր նկատմամբ տէրութեանց նետ համաձայնել վերջ՝ Թուրքերը ստիպել որ զայն գործադրեն»: Այսպէս ահա բարեկարգութեանց անհրաժեշտութիւնը զգալի կը դառնար անխուսափելի կերպով: Զիւննալը սկսելուն պէս՝ Պուլկար հրոսակները նորէն սահմանները պիտի անցնէին՝ ձեռք ձեռքի տալու համար Մակեդոնիոյ «Ներքին Կազմակերպութեան» նետ: Մնդիր էր նոյն իսկ թէ Պուլկարիոյ իշխանը պիտի կրնար աւելի երկար զիմադրել հանրային կարծիքին, որ Մակեդոնիոյ զարնուրանքը բառնարու համար պատրաստվէ զաւարտելու միջոց չէր տեսնէր. վախ կար նոյն իսկ որ ներքին յեղափոխութիւն մը առաջ գայ Պուլկարիոյ մէջ: Բայց կար հաստատուած կարգ մը զոր կարելի չէր շրջել. Տէրութիւնները՝ 1897ի համաձայնութեան առթիւ՝ Թրքական իրերու կարգադրութիւնը յանձնած էին Ռուսիոյ և Աւրստրալիոյ, Սքաքու խօսն չխանգարելու պայմանաւ. խօսքը անոնց կ'իջարարուէր, Թուրքիա կանխեց զանոնք, և 1902 Դեկտ. 1ին, դեռ անոնք քայլ մը չառած, մասնաւոր «Հրահանգներ»ով ընդհանուր-քննիչ մը կարգեց Մակեդոնիոյ համար, անոր օժանդակ տալով երկու Յանձնախումբեր, որոնցմէ մէկը պիտի գործէր տեղին վրայ, նախագահութեամբ ընդհանուր-քննիչին, «ուսումնասիրելու համար Մակեդոնիոյ անհրաժեշտ եզոք բարեփոխութիւնները», և միւսն ալ պիտի մնար Բ. Գրան մէջ, «Մակեդոնիոյ Յանձնախումբին առաջարկութիւնները քննելու համար»: Ետ հաւանականաբար Աւստրիա և Գերմանիա Գրան խորհրդատուները եղած էին այս որոշման մէջ: Համիտ՝ Գերմանիոյ միջնորդութեան շնորհիւ իր կողմը շահած էր Աւստրիան, որ միջամտելու կոչուած երկու տէրութիւններէն մէկն էր և զոր ձեռք անցնելով՝ առաջուց ջուրը ձգած կ'ըլլար նաև Ռուսական միջամտութիւնը որ Աւստրիոյ համամտութեամբ պէտք է կատարուէր: Երկու շարաթ կտքը, դեկտեմբեր 15ին՝ Գերմանիա կը ստանար իր «միջնորդչէքը», Պաղտատի երկաթուղին մեռնաշնորհը նուիրագործող վերջնական ձեւմանը:

«Կայ մէթոտ մը, կ'ըսէ Պ. Բինօն, զոր թուրք պետական մարդիկը իսկոյն կը փութան ընդգրկել՝ երբ համոզում կը գոյացնեն թէ Եւրոպա պիտի ստիպուի զիրենք բռնադատելու որ գործադրեն իրենց յանձնառութիւնները. այն ատեն՝ կ'աճապարեն ինքնաբերաբար հրատարակել կարգ մը ազուր կանոններ և կամ մէկ քանի լաւ օրէնքներ, զորս բնաւ չեն գործադրեր երբ Եւրոպա այդքանով գոհ երեւայ»: Ընդհանուր-քննիչ մը և երկու Յանձնախումբերու ընտրութիւնը պարզապէս կրկնութիւնն էր այդ խաղին որ բազմիցս կիրարկուած է նաև Հայոց համար, ու կը կիրարկուի ալ տակաւին: Մակեդոնիոյ համար նշանակուած ընդհանուր-

քննիչը նոյն ինքն Հիւսէին Հիլմի փաշան էր, Միտիլիցի համեստ ընտանիքի մը զաւակը, ծնած 1856ին նոյն կղզին, և կանուխէն մշտած էլգաֆի նախարարութեան մէջ, ուրկէ անցած էր ներքին գործոց պաշտօնատունը: Իսմասկոսի շրջանակին մէջ պաշտօնի կոչուելով, ունեցած էր փայլուն գործունէութիւն մը, յետոյ կառավարիչ կարգուած էր Եէմէնի և այնտեղ հիմը դրած էր կեդրոնացման քաղաքականութեան որ արարական ապստամբութեանց շրջանը պիտի բանար և որուն առաջին զօնը՝ քիչ էր մնացած որ ինք ըլլայ: Եէմէնէն դարձին՝ մարմնին մէջ կը բերէր բէվոյլէրի գնտակ մը զոր մոլեռանդ Արար մը



Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Շ Է Ն Ք Մ Ը

Սթարա Զահորայի Պուլիար ընդհ. Սպայակոյտը այս շէնքին մէջէն վարեց պատերազմը (Տեսնել ներկայ պրակին կցուած յաւելուածը)

տեղաւորած էր և զոր կարելի չէր եղած հանել: Հիլմի փաշա, որ 1902ի յեղափոխութեան յաջողութեան մեծագոյն նպաստը պիտի բերէր՝ Սրիւնոտ Սուլթանը գիմադրութեան փորձութենէն ետ կեցնելով, այդ մահափորձին պատճառաւ մանաւանդ արժանացած էր Համիտի վստահութեան և Մակեդոնիա զրկուած էր՝ երեք վիլայէթներու (Էտիրնէ, Սելանիկ, Մանասթըր) ընդհանուր-քննիչի պաշտօնով: Իր ժամանումը Մակեդոնիա, ինչպէս նաև կրկին Յանձնախումբերու հաստատութիւնը ոչ մէկ գոհացում կրցան հայթայթել զժողո՛ս տարրերուն: Իրեն արուած «Հրահանգներուն» մէջ արդէն զրական բարենորոգման ձգտող ոչինչ գործութիւն ունէր, բացի Բրիտոնեաներու ոստիկանութեան մասնակցութեան սկզբունքէն: Յուսադրիչ չէին նաև ընդհանուր-քննիչին յայտարարութիւնները. — «Կը խղճան Բրիտոնեաներու վիճակին վրայ, և ապահովաբար իրաւունք ունին, կ'ըսէր, բայց ո՞վ կը խորհի խեղճ



Պուլկար Սպայակոյաը Սթարա-Չակիրայի մեծ-բանակեղան մէջ, քարտեզը պարզած կը հետեւի պատերազմական գործողութեանց

Պալանեան Պատերազմ. — Յունիստան Թիւ 3. — Տպագր. Օ. Մ. Բզուման

Թուրք գիւղացիին վրայ որ կը տառապի առանց ճիկ մը հանելու, առանց մրմուռալու. անիկա կը թողու իր սիրական արտերը, իր ընտանիքը, իր գիւղը՝ երկար ամիսներ իրր զինուոր ծառայելու, երկաթուղիները պահպանելու, հրոսախումբերը հալածելու և Սուլթանին հնազանդելու համար:



Ճէրտինանտ Թագաւոր և գահաժառանգ Պօրիս իշխան Չաթալճայի առջեւ

Ասիկա Մակեդոնիոյ կործանումն է պարզապէս: Զէնքի տակ պահուած այս 90,000 մարդիկը լոկ կը ծախսեն, ոչինչ կրնան արտադրել, եթէ խռովութիւնները չըլլային, տարին 10,000ական տղայ աւելի կրնային ծնիլ, և ատոնց ամէնքն ալ Սուլթանին հաւատարիմ հպատակներ պիտի ըլլային: Ի՞նչ կ'ուզէ Եւրոպա. բարենորոգումներ, լա՛ւ, բայց թող նախ մեզի միջոց ընծայէ զանոնք գործադրելու, երկար վարանումներէ և չարչարա-

գին բանակցութիւններէ վերջ միայն ընդունեցաւ 3/0 Յ յաւելում մը մաքս սատուրքին վրայ, որ պիտի գործածուի բարենորոգմանց ծախքերուն: Վերջապէս կարելի չէ պահանջել որ Թուրքիա բոլորովին ինքզինքը կործանէ երեք վիլայէթներ նպաստաւորելու և ապստամբութիւնը մրցանակով մը քաջալերելու համար»:

Հիլմի փաշա Գեկտ, Ցին ժամանած էր Սելանիկ, իր պաշտօնը ստանձնելու համար: Ծարաթ մը վերջ, 15ին, Պոլսոյ Ֆրանսական գործակատար Պ. Պասթ կը գրէր թէ իր ստացած տեղեկութեանց համաձայն՝ զորս միւս դեսպանատուներն ալ կը հաստատէին, ոստիկաններու և զինուորներու բռնութիւնները բոլորովին սաստկացած էին: «Ձոկատներ կը շրջին երկրին մէկ ծայրէն միւսը՝ դէնքերը հաւաքելու պատրուակով. խուզարկութեանց ընթացքին Մակեդոնացւոց բնակարանը կը մնան և առիթէն օգտուելով զանոնք կը թալեն...: Սելանիկ-Մանասթըրը երկաթուղիին պաշտօնեաները, հաղիւ իրենց վարձքը ստացած, կանոնաւորապէս կը կողոպտուին երկաթուղիին պահպանութեան յատկացուած զինուորներուն կողմէ»: Պ. Պասթ կը յարէր թէ Մակեդոնացւոց գաղթը դէպի Պուլկարիա՝ կը շարունակուի վրդովիչ համեմատութեամբ, թէ Պուլկարիա չպիտի կրնայ զսպել հանրային կարծիքը և թէ շատ ծանր հետեւանքներ պիտի ծագին: Պ. Տէլքասէ որ Ֆրանսայի արտաքին գործերը կը վարէր այդ միջոցին, նոր դիմում մը ըրաւ Բեթէրսպուրկ, ու համողեց Չարը որ Աւստրիոյ հետ համախորհուրդ՝ աւելի վճռական միջոցներ ձեռք առնեն: Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Կոմս Լամսորֆ ճամբայ ելաւ Վիեննա երթալու, բայց անկէ առաջ հանդիպեցաւ Սօֆիա և Պէրկատ, Պուլկար ու Սերպ կառավարութիւնները ստիպելու համար որ վերջ տան յեղափոխական շարժման: Երկու կառավարութիւններն ալ հնազանդեցան: Պ. Տանէֆ, պուլկար նախարարապետը, զինաթափ ըրաւ հրոսախուժները, անոնց պետերը բանտարկեց կամ երկրէն վտարեց, և սահմանադրութեն ամէն կողմը պահակներ դրաւ հրոսախուժներու անցքը արգելելու համար: Չափաւոր ու ծայրայեղ՝ հաւասարապէս զսպուեցան և արգարութեան յանձնուեցան երկու ուղղութեան պետերը, ինչպէս Միխայլովսքի, Չօնչէֆ, Սթանիչէֆ, գնդապետ Եանքօֆ, և այլն: Քիչ ետքը, 1903 Փետրուար 21ին, Աւստրիա և Ռուսիա՝ 1897ի համաձայնութեան հիման վրայ ծրագիր մը պատրաստելով ներկայացուցին Իրան: Չափաւոր ու միանգամայն անբաւական ծրագիր, որուն գլխաւոր տրամադրութեանց համաձայն՝ ընդհանուր քննիչը պիտի շարունակէր իր պաշտօնը և ետ չպիտի կանչուէր առանց տէրութեանց հաւանութեան. ընդհանուր-քննիչը իրաւունք պիտի ունենար զինուորական ոյժը իր յարմար դատած կերպով գործածելու, առանց Պալատին խորհուրդէ հարցնելու. կուսակալները իր հրամանին պիտի ենթարկուէին. ոստիկանութիւնը կազմակերպելու համար «օտար մասնագէտներ» պիտի բերուէին. քրիստոնեայ բնակչութեան թուին համեմատ. այս վերջինն բազմաթիւ եղած տեղերը գործնիները քրիստոնեայ պիտի ըլլային: Ծրագիրը իւրաքանչիւր վիլայէթի կուտար ելմտական անկախութիւն Օսմ. Պանքային հակակշռին

տակ, բարեփոխման կ'ենթարկէր տասանորդի դրութիւնն ու գանձման եղանակը, և մասնաւորաբար Օսմ. կառավարութիւնը կը հրաւիրէր «անյապաղ ձեռք առնել այն բոլոր միջոցները որոնցմով կարելի պիտի ըլլար վերջ տալ Արնաութներու ոճիրներուն»: Մատուցուելէն չորս օր ետք՝ Բ. Դուռը հաւանեցաւ այս ծրագրին, և ապրիլ 2ին հրատարակութեան յանձնեց զայն՝ «Ռումէլի նահանգին վերաբերեալ Յաւելուածական Հրահանգներ» անունով:

Մակեդոնացիք անտարբերութեամբ ողջունեցին այս յաւելուածները, ինչպէս անտարբերութեամբ ընդունած էին արդէն Հիլմի փաշայի տրուած հրահանգները: Ո՛չ միայն անբաւական էին անոնք իրերու վիճակը քիչ շատ տանելի դարձնելու համար, այլ ոչինչ կ'ապահովցնէր թէ Համիտի կառավարութիւնը անկեղծօրէն պիտի աշխատի զանոնք գործադրելու: Սակայն ինչ որ իրենք անբաւական կը նկատէին, չափազանց թոյլատու երևցաւ Ալպանացւոց: Քրիստոնեաներու տրուած այդ «առանձնաշնորհումները», մասնաւորապէս Ալպանացի տարրին ոճիրները ամէն գնով բառնալու տրամադրութիւնը որ մաս կը կազմէր Յաւելուածական Հրահանգներուն, առաջ բերին ըմբոստական շարժում մը: Ալպանացիք՝ ծրագրին գործադրութիւնը արգելելու համար համախմբուեցան Իբէքի և Տիաքովալի մէջ, և սկսան ջարդել քրիստոնեայ Սերպերը: Բարենորոգման Ֆէրմաններու և սկսան հետեւանքն էր ասիկա. այդպէս եղած էր միշտ Կրէտէի մէջ. հաղիւ Քրիստոնեաներուն քիչ շատ կեանքի անդորրութիւն խոստացող Ֆէրման մը կարդացուած, Իսլամները միշտ ոտքի ելլելով ջարդով արգելած էին անոր գործադրութիւնը: Դիտելի է որ նոյն բանը ըրին նաև Քիւրտէի Հայաստանի մէջ, Մայիսեան Ծրագրին հրատարակութենէն վերջ, և այսօր ալ, Հայկական նահանգներուն դրութիւնը բարեկաւելու համար մէջտեղ դրուած իւրաքանչիւր ծրագրի կը պատասխանեն քրդական ջարդաբոյր սպառնալիքներ:

Ալպանացիք աւելի առաջ գացին: Իբէքէն ու Տիաքովայէն իջան Միթրովիցա, ճամբան իրենց միացնելով մոլեռանդ Թուրքերու խուժեր, և քաղաքը պաշարեցին՝ 4000 հոգիի բազմութեամբ: Հարկ եղաւ թնդանօթ գործածել իրենց դէմ: Ըմբոստութեան ծաւալման պատճառը Օսմ. կառավարութիւնն էր. փոխանակ առաջուց զսպողական միջոցներ ձեռք առնելու, բանակցութեան մտած էր Ալպանացւոց հետ, ինչ որ բոլորովին քաջալերութիւն մը եղած էր այս վերջիններուն համար: Օգոստոս Տի իրիկունը յանկարծ լուր հասաւ Պոլիս թէ ըմբոստներուն միացած Ալպանացի ժանտարմա մը ընկողմէր սպաններ է Մանասթըրի Ռուսական հիւպատոսը: Մեծ իրարանցում Պալատին մէջ. Եպարքոսը իսկոյն փութաց Պէօթիւքտէրէ՝ Ռուսոց դեսպանատունը՝ Պ. Չինովիչէվէն ներողութիւն խնդրելու. յաջորդ օրը՝ նոյն դիմումը կատարեց նաև Համիտի դաւակներէն իշխան Ահմէտ էֆէնտի: Մանասթըրի Վալին նախ պաշտօնանկ եղաւ, յետոյ աքսորուեցաւ Ֆիզան. կուսակալութեան բոլոր զինուորական պաշտօնատարները զրկուեցան իրենց աստիճանէն. Համիտ նախ 200,000, յետոյ 400,000 Քրանք հատուցում ընել ուղեց հիւպատոսին այլիին, որ ստա-

կայն մերժեց արհամարհանքով : Հինգ օր վերջ՝ ոճրագործն ու իր մեղ-
սակիցներէն մէկը կախաղան հանուեցան : Համիտ՝ զոհացում մը աւելի
տուած ըլլալու համար Ռուս կառավարութեան , արտօնեց ժամանակին մա-
մուլը որ արձանագրէ ոճրագործին տրուած պատիժը :



Ա. Պ Տ Ո Ւ Լ Լ Ա Հ Փ Ա Շ Ա

Արեւելեան (Թրակիոյ) բանակին հրամանատարը որ ետ կանչուեցաւ
առաջին պարտութիւններէն վերջ

Պուլկարները՝ այլպանական ըմբոստութեան պատասխանեցին ընդհա-
նուր ապստամբութեան երկրորդ և աւելի տարածուն փորձով մը . 1903ի
բովանդակ ամառը՝ Մակեդոնիա ու նաև Ազրիանուպոլսոյ նահանգը՝

մասնաւորաբար ծովեզերեայ մասը , կատարեալ պատերազմի դաշտ մը
դարձած էին . — «Նրբեք ապստամբական շարժումը այս աստիճան գոր-
ծունէութիւն երեւան չէր բերած , երբեք այսքան բազմաթիւ ապստամբ-
ներ ասպարէզ չէին իջած , կը գրէր Պոլսոյ Ֆրանսական դեսպան Պ . Քօնս-
թան Օգոստոս 11ին . լաւատեղեակ մարդիկ կը հաւատեն թէ աւելի քան
30,000 հոգի են ապստամբները » : Անոնց ամէնքն ալ լաւ գինուած էին և
հակառակ բազմաթիւ զինուորներու ներկայութեան , կարելի չէր ըլլար
զանոնք զսպել : Քրուչէվօ գիւղը ամբողջ շարաթ մը և աւելի ապստամբ-
ներուն ձեռքը մնացած էր , հակառակ զանոնք պաշարող զինուորներու
կատաղութեան : Մանասթրէն մինչև Քըրք Քիլիսէ կրակի մէջ էր . ապրո-
տամբները յաճախ կարեւոր կորուստներ կուտային , բայց իրենց թիւը
միշտ կը բազմանար : Ետման բուն թելադիրը Պօրիս Սարաֆօֆն էր որ
անձամբ հերոսական կռիւ մը կը մղէր սահմանագլուխին երկայնքը և զոր
թուրքերը ի գուր կը հետապնդէին . հրոսակները լոկ թուրքերու կամ թըր-
քական հաստատութեանց դէմ չէին յարձակեր . Ապրիլ 28ին՝ Պուլկար յե-
ղափոխական մը պոմպա դրած էր Սելանիկի նաւահանգիստը գտնուող
կուսաջախի շոգենաւին մէջ և զայն մասամբ օդը հանած . օր մը ետքը
քաղքին կազի մթերանոցն ու մեծագոյն խողովակը օդը կ'ելլէին և առաջ
եկած մթութենէն օգտուող յեղափոխականներ դարձեալ պոմպայով կը
քանդէին Օսմ . պանքայի մասնաճիւղը , ինչպէս նաև Գերմանական քիւ-
պը , որուն մէջ մեռան բազմաթիւ Զուիցերիացիներ , Գերմաններ , Աւրս-
տրիացիներ . մեռնողներէն մէկն ալ Գերման հիւպատոսարանին գործակա-
տարն էր . փախած ատեննին՝ յեղափոխականները պոմպաներ նետեցին ո՛չ
միայն թուրք զինուորներուն , այլ նաև Գերման վարժարանին վրայ :

Հրոսակներու գործունէութեան սաստկացման հետ կը մեծնար նաև
պուլկարեւթուրք պատերազմի մը հաւանականութիւնը . Պուլկարիա ան-
պատրաստ չէր . իր սահմաններուն վրայ համախմբուած թըրքական ոյժերը
զինքը ստիպած էին պատերազմի պատրաստութիւն տեսնելու : Մախարա-
թութիւնը այլևս Պ . Տանէֆի ձեռքը չէր . հանրային կարծիքին ճնշումին
առջև տեղի տուած էր նաև Պ . Տանէֆի զգուշաւոր ու սպասողական քա-
ղաքականութիւնը , և իշխանութեան գլուխ անցած էին Սթամպուլօֆեան-
ները (Բէթրօֆ-Բէթքօֆ դահլիճը) որոնք Մակեդոնացուց ի նպաստ աւելի
ազդու գործողութեանց կողմն էին : Բայց տէրութեանց տրամադրութիւն-
ները աւելի նպաստաւոր էին թուրքիոյ , և Համիտ պահ մը սկսած էր հա-
ւատալ թէ իր «Ղազի»ութիւնը նոր փայլ մը պիտի ստանայ մէկ օրէն
միւսը . որովհետև ինք ալ պատերազմը անխուսափելի կը նկատէր և կը
կարծէր Պուլկար բանակին յաղթել այն միւսնոյն դիւրութեամբ որով
1897ին խորտակած էր Յունական բանակը :

Հիւսէին Հիլմի փաշա՝ Պալատին ու Եւրոպայի ակնկալութեանց մէջ-
տեղ մնացած՝ անգործ կը կենար , չկարենալով առաջքը առնել թէ՛ ապրս-
տամբական շարժումին և թէ՛ կիրարկուած զսպողական միջոցներուն : Ու-
րիշ վտանգ մը կը գոյացնէր Այլպանացի տարրին ըմբոստութիւնը . Համիտ
չէր ուզեր զսպողական միջոցներով դժգոհ թողուլ զայն , Պոլսոյ մէջ իր

անձին պահպանութիւնը Ալպանացի պահակախումբին յանձնած ըլլալով, և այդ չկամութիւնը կատարեալ քաջայերուծութիւն մը կ'ըլլար ըմբոստնե-
րուն: Օգոստոսի կիսուն՝ Մանասթըրի մէջ վախ կար որ հիւպատոսներու
ընդհանուր ջարդ մը տեղի պիտի ունենայ, ինչպէս 1877ին եղած էր Սե-



ՊՈՒԿԱՐ ԶՕՐԱՎԱՐ ՌԱԶՈ-ԲԷԹՐՅՈՅ

համոզուած թէ Մակեդոնիոյ խաղաղացման համար շատ անբաւարար
կան է աւստրիացի համաձայնութիւնը՝ իր կրակորական զիրքով:
Անգլիա և Ֆրանսա աւելի խիստ միջոցներ ձեռք առնելու կողմն էին:
Էտուար թագաւոր մայիսին այցելած էր Բարիզ. Ֆրանսայի արտա-
քին գործոց նախարարը Տէլքասէն էր միշտ, ծանօթ իր անգլիականէր հա-
կումներով. Սիրալիը Համաձայնութեան հիմերն է որ կը դրուէին Լոնտոնի
և Բարիզի մէջ, ու երկու գահիճները, մասնաւորաբար Արեւելքի գոր-
ծերուն նկատմամբ, նոյն հայեացքները ունէին: Ռուսիոյ մէջ ալ Անգլիոյ
ի նպատակ շարժում մը գոյութիւն ունէր այդ միջոցին, և շարժման գլու-
խը կը գտնուէր նոյն ինքն Պ. Վիթէն, որուն հաւանական կը թուէր
անկրօնուս մերձեցում մը: Համաձայն Բարիզի և Լոնտոնի դաշինքներուն
մտադրութեան, ինք ալ կը խորհէր անոնց գործակցել Սելանիկի առջեւ
տեղի ունենալիք նաւային ցոյցով մը Սուլթանը ստիպելու համար որ բա-
րենորդումները գործադրելու լրջագոյն եղանակ մը ձեռք առնէ: Զարբ-
ըջապատողները սակայն Մայրաքոյն Արեւելքի մէջ Անգլիոյ հետ մաքա-

ւելու փախաքող ըլլալով, բնական է հաշտ աչքով չպիտի դիտէին Անկր-
ոնուս մերձեցման ծրագիրը. յետոյ՝ Տանէֆի ուսաստէր դաշինքին անկումը
Պուլկարիոյ մէջ և հակառուս Սթամպուլօֆեաններու իշխանութեան գլուխ
անցնելը՝ պատճառներ էին որ Ռուսիա չուզէ Պուլկարիոյ հացին իւզ
քսել: Օգոստոս 20ին՝ Պ. Վիթէ պաշտօնանկ ըլլալով, յաղթանակը մնաց
Անգլիոյ անհամակիր կուսակցութեան, և Ռուսիա մերժեց Աւստրիայէն
զատ ուրիշ գործակցից առնել Մակեդոնիոյ խնդրին կարգադրութեան մէջ,
յայտնելով որ խաղաղացումը անկարելի կը դառնար ո՛չ այնքան թուր-
քերուն, որքան Պուլկարներուն պատճառաւ: Անգլիա և Ֆրանսա այդ
կարծիքէն չէին: Պ. Տէլքասէ կը հաւատար որ առանց եւրոպական հա-
կալիչի ոչ մէկ բարենորոգում պիտի գործադրուի. խաղաղութեան
վերահաստատման միակ պայմանը այդ հակակշիռն էր իրեն համար: Նոյն
կարծիքը, քիչ մը աւելի արմատական կերպով, կը յայտնէր նաև Անգ-
լիա, և էտուար է. Վիեննա այցելած ըլլալով, զգացուցած էր թէ այլևս
կարելի չպիտի ըլլայ երբեմնի տրամադրութիւնները պահել աւստրիացուս
համաձայնութեան անբաւարար ծրագրին նկատմամբ:

Վախ կար ուրեմն որ եւրոպական նոր համաձայնութիւն մը գոյանայ
ի վնաս թուրքիոյ: Վտանգը մեծ էր անոր համար մանաւանդ որ ամբողջ
այդ 1903 տարուան ընթացքին, միանգամայն թէ՛ Անգլիոյ, թէ՛ Ֆրանս-
այի և թէ՛ Իտալիոյ մէջ շունդայից միթիւններ գումարուած էին ի նպաստ
Մակեդոնիոյ և Հայաստանի, որուն նոր ջարդեր ու հալածանքներ դարձ-
եալ տխուր այժմէութիւն մը սուած էին: Իննսուտնական թուականներու
հակաթուրք շարժումն է որ կը կրկնուէր. հանրային կարծիքը նորէն
լեցուած էր թուրքիոյ դէմ. Հայուն ու Մակեդոնացիին անունով Արիւ-
նոտ Սուլթանին դէմ դատախազ կը կանգնէին շատ ականաւոր անձնա-
ւորութիւններ: Բ. Դուռը, ինչպէս միշտ, ինք ընդ առաջ գնաց դէպքե-
րուն. Եւրոպայի կողմէ դեռ իրեն ստիպում չեղած, ինք ջանաց աւելորդ
դարձնել ու է արտաքին ճնշում, ուղղակի բանակցութեան մասնելով
Սօֆիայի հետ: Հաւատարիմ իր աւանդութեանց, այս անգամ ալ առատ
խոստումներով կատարեց այդ դիմումը. նախ ընդհանուր ներում կը խոս-
տանար Մակեդոնիոյ բոլոր յեղափոխականներուն, յետոյ Քրիստոնեաներու
մասնակցութիւն Մակեդոնիոյ վարչութեան, խառն ուստիկանութիւն,
գաղութներու և եկեղեցիներու ազատութիւն, ու նաև կազմութիւն Յանձ-
նաժողովի մը, որուն կէսը թուրքերէ և կէսն ալ էկզարքին կողմէ նշա-
նակուած ու Սուլթանէն վաւերացուած Պուլկարներէ պիտի բաղկանար,
և որ բարենորոգմանց գործադրութեան պիտի հսկէր: Պուլկարիա չհաւատաց
այս խոստումներուն, և Սեպտ. 23ին պայման դրաւ որ թուրքիա
նախապէս դադրեցնէ Մակեդոնիոյ ջարդերը, իր ծախքով իրենց հայրենիքը
վերադարձնէ Պուլկարիա ապաստանած Մակեդոնացիները, վերջ տայ զօ-
րահանութեան և ետ քաշէ սահմանագլուխին վրայ համախմբած ոյժերը.
ասոնց փոխարէն՝ Պուլկարիա ալ կը խոստանար ետ առնել պահեստիներու
զօրակոչին հրամանագիրը: Քիչ ետքը Բ. Դուռը աւելի առաջ գնաց
Աւստրիոյ և Ռուսիոյ դեսպաններուն խոստանալով ընդհանուր-քննիչին


օժանդակ կարգել ո՛չ թէ լոկ թուրքերէ և Պուլկարներէ, այլ մէկ Պուլկարէ, մէկ Յոյնէ, մէկ Ուլա՛հէ, մէկ Սերպէ և մէկ թուրքէ բաղկացած Յանձնաժողով մը որ նոյնպէս բարեկարգութեանց գործադրութեան պիտի հսկէր: Բ. Թուրք շատ լաւ գիտէր թէ իրարու թշնամի զանազան տարրերէ բաղկացած այդ Յանձնաժողովին անդամները երբեք չպիտի կրնան համաձայնիլ իրարու հետ, և բարենորոգմանց գործադրութիւնը էն առաջ իրենք անկարելի պիտի դարձնեն:

Կը հասնինք Միւրձթէկի տեսակցութեան, ուր Կոմս Կոլուխովսքի և Կոմս Լամատորֆի նոր ու աւելի գործնական միջոցներ ձեռք պիտի առնէին Մակեդոնիոյ մասին: Տեսակցութիւնը տեղի պիտի ունենար 1903 Հոկտ. 2ին: Դեռ ուռւ և աւստրիացի նախարարները իրարու չհանգիպած, Անգլիական կառավարութիւնը Վիեննայի իր դեսպանին կ'ուզէր կարգ մը թելադրութիւններ, փափոք յայտնելով որ տեսակցութեան ընթացքին կազմուելիք ծրագրին հիմ գտնանան անոնք: Եթէ ո՛չ սպառնալից, գոնէ բաւական խիստ ոճով մը եղած էին այդ գրասօր թելադրութիւնները, որոնց համամիտ էր նաև Բուարիա: — «Մեր կարծիքով, կ'ըսէր Անգլիական կառավարութիւնը, ո՛չ մէկ ծրագիր պիտի կրնայ գոհացուցիչ արդիւնքներ տալ, որքան ասան որ անոր գործադրութիւնը յանձնուի բոլորովին թուրք կառավարութեան ենթակայ և օտար հակահաւէ բացարձակապէս զերծ թուրք կառավարչի մը»: Յետոյ, Լոնտոնի Դահլիճը կը թելադրէր անուանել քրիստոնեայ կառավարիչ մը որ բնաւ կապ չունենար ո՛չ Պալքանեան Պետութեանց ոչ ալ Պէրլինի Դաշնագիրը ստորագրող Տէրութեանց հետ, և կամ՝ թուրք կառավարիչ մը անուանել, անոր գործակից կարգելով եւրոպացիներ՝ որոնց անուանուած Անգլիա սիրով կը թողուր Ռուսիոյ և Աւստրիոյ: Ասոնցմէ զամ՝ Անգլիա կը թելադրէր բաւարար թուով եւրոպացի սպաներ և ենթասպաներ անուանել՝ ոստիկանութիւնը վերակազմելու համար, Մակեդոնիայէն ետ քաշել անկարգապահ զօրքերը, աւստրիական և ռուսական վեցական սպաներ ընկերացնել Մակեդոնիոյ մէջ գործող Օսմ. ոյփերուն, որպէս զի կարելի ըլլայ հսկել ասոնց արարքներուն վրայ, և դրամական օգնութիւն ընծայել խռովութեանց պատճառաւ աղքատացած ժողովուրդներուն:

Հասկնալու համար թէ ի՞նչ դեր խաղացին անգլիական կառավարութեան այս թելադրութիւնները, կ'արժէ զանոնք բաղդատել Միւրձթէկի ծրագրին գլխաւոր տրամադրութեանց հետ, զորս կը ներկայացնենք այստեղ, հետեւելով Պ. Բինսոնի ամփոփման. —

Ա. — Հիմի փաշայի գործակից տալ Աւստրիացի և Ռուս քաղաքային գործակալներ, որոնք ամէն տեղ պիտի նկատին ընդհանուր-կառավարչին, անոր ուշադրութիւնը պիտի հրաւիրեն քրիստոնեայ ժողովուրդներու պէտքերուն վրայ, պիտի մասնանշեն տեղական իշխանութեանց զեղծումները, Պոլսոյ դեսպաններուն այդ մասին ընելիք յանձնարարութիւնները պիտի հաղորդեն և երկրին մէջ անցած դարձածը պիտի տեղեկագրեն իրենց կառավարութեան: Վերոյիշեալ գործակալներուն օգնական անուանել քարտուղարներ ու թարգմաններ, որոնք անոնց հրամանները պիտի

գործադրեն, և արտօնուած պիտի ըլլան այդ նպատակով քննական պատշաճ կատարելու Մակեդոնիոյ շրջանակներուն մէջ, հարցափորձելու քրիստոնե-



Մակեդոնացի Պուլկարները կ'առաջնորդէին տուրկալու շեռտաօստիկները:

այ գիւղէ ու բնակչութիւնը և հսկելու տեղական իշխանութեանց վրայ: Քաղաքային գործակալներուն պաշտօնաշրջանը պիտի տեւէ երկու տարի:

Բ.—Ոստիկանութեան վերակազմութեան հոգը յանձնել եւրոպացի զօրավարի մը որ «Օսմ. կառավարութեան ծառայութեան պիտի մտնէ» : Ինչպէս նաև եւրոպացի սպաներու , որոնք իրենց յատկացուած շրջանակ- նակներուն մէջ պիտի գործեն իբր ուսուցիչ և կազմակերպիչ , և պիտի հսկեն ո՛չ միայն ոստիկաններուն , այլ նաև զինուորներուն վրայ :

Գ.—Երկրին մէջ անդորրութիւնը վերահաստատուելուն պէս , Թուրք կառավարչէն պահանջել որ փոփոխութեան ենթարկել վարչական շրջանակ- ներու հողային սահմանազօնմանը , որպէսզի Մակեդոնիոյ զանազան ժողովուրդները աւելի կանոնաւոր խմբաւորման մը առարկայ դառնան :

Դ.—Վերակազմել վարչական և դատական հաստատութիւնները , Քրիստոնեաներու առջեւ բաց պահելով զանոնք , և տեղական ինքնավար- ութիւնը աւելի շեշտել :

Ե.—Գլխաւոր կեդրոններու մէջ՝ հաւասար թուով թէ՛ քրիստոնեայ և թէ՛ իսլամ անդամներէ բաղկացած Յանձնաժողովներ կազմել՝ քննելու համար խռովութեանց միջոցին գործուած քաղաքական և ուրիշ կորզի ոճիրները , այդ Յանձնաժողովներուն պիտի մասնակցին աւստրիական և ուսական հիւպատոսները :

Զ.—Հասուցում կամ նպաստ տալ խռովութեանց պատճառաւ վնաս- ուած Քրիստոնեաներու :

Է.—Մէկ տարուան համար տուրքէ դերծ կացուցանել Թուրքերու կողմէ հրկիզուած գիւղերու բնակիչները :

Ը.—Անմիջապէս գործադրել փետրուար ամսուն խոստացուած բա- րենորդումները (Յաւելուածական Հրահանգները զորս պարզեցինք արդէն) :

Թ.—Արձակել տալ իրաւիչները (Բ. կարգի պահեստիները) և այլևս բնաւ չկազմել Պաշը-Պօզուքներու խումբեր :

Այսպէս ուրեմն՝ Միւրձթէկի աւստրեւուս ծրագիրը էապէս անգլիա- կան թեկադրութեանց վրայ հաստատուած համաձայնութիւն մըն էր : Հա- միտ , ինչպէս կը գուշակուի , մերժեց ընդունիլ այդ ծրագրին միանգամայն բոլոր յօդուածները , առարկելով թէ անոնք իր վեհապետական իրաւունք- ները կը վտանգեն . կ'առարկէր տակաւին թէ Հիլմի փաշայի «զմայլելի» գործունէութիւնը պէտք չէ թողած անոր արամադրութեանց կարեւոր մասին , և իբր ապացոյց կը յիշատակէր թէ Հիլմի փաշա աւելի քան հա- զար անարժան պաշտօնեաներ արտաքսած է : Ռուսիոյ և Աւստրիոյ Պոլսոյ դեսպանները նոյնքան համոզուած չէին երեւար սակայն Հիլմի փաշայի «զմայլելի» գործունէութեան մասին . շուտով Բ. Գրան զգացուցին թէ Միւրձթէկի ծրագիրը գործադրել չուզելով , Օսմ. կառավարութիւնը պատճառ պիտի դառնայ որ տէրութիւնները Մակեդոնիան Քրիստոնեայ կառավարչի մը ենթարկելու մղուին : Այս հեռանկարը Համիտի խելքը գլուխը բերաւ . սկզբունքով ընդունեց վերոյիշեալ ինը յօդուածները , ա- նոնց մանրամասնութեանց մասին բանակցելու ազատութիւնը վերապահե- լով , բայց Ռուսիոյ և Աւստրիոյ դեսպանները սոսկ ծրագրին ընդունելու- թիւնը նկատի առին , և առանց նոր բանակցութեանց մտնելու՝ անուանե- ցին երկու քաղաքային գործակալները որոնք Հիլմի փաշայի պիտի աջակ-

ցէին(*) : Համիտ , առանց յուսահատելու , առարկութիւններ յարոյց անեց պաշտօնին բնոյթին նկատմամբ . հազիւ համաձայնութեան մը եկած էին և ա- հանոր առարկութիւններ ոստիկանութեան հրամանատարին նկատմամբ : Սուր- թեանը կ'ուզէր Գերման զօրավարի մը յանձնել ոստիկանութեան վերակազմու- թեան գործը . տէրութիւնները Իտալացի մը նշանակեցին , զօրավար Տէ- ճիօրճիսը(**) , որ 1904 Փետրուար 2ին Պոլիս հասաւ հինգ ոստիկանական մարզիչներով : Դուռը՝ աւերող երկու քուկէս ամիս զայն խաղցուց Պոլ-



ԳԱՐԱՏԱՂԻ ԵՆԲՈՒՆԻՆԵՐԸ
Եօթանասուն տարեկան բայց միշտ զինուոր

սոյ մէջ , մինչեւ Մակեդոնիա անցնիլը : Անկէ ետք՝ կարգը եկաւ անոր հրա- մանին տակ գործերու սահմանուած օտար սպաներուն : Բ. Դուռը ա՛յն աստիճան առաջ տարաւ իր չկամութիւնը որ նոյն իսկ խնդիր ըրաւ սպաներու տարազը և գլխանոցը . ոմանք Ֆէս դրին , ոմանք ճիւղերը սպաներու յատուկ ասքրական գարիազ , և 1904ի գարնան վերջապէս կրցան պաշտօնի ձեռնարկել՝ իրենց յատկացուած շրջանակներուն մէջ . Աւստրիացի սպաները հաստատուեցան Սկիւպ , Իտալացիք Մանասթըր , Ռուսերը Սելանիկ , Ֆրանսացիք Սէրէզ և Անգլիացիք ալ Տրամա : Միայն Գերմանիա չուզեց շրջանակ մըն ալ իրեն համար ընտրել . և որպէս զի տէ- րութեանց ներդաշնակութիւնը չկանգարէ , միակ սպայ մը զրկեց ո՛չ իբր քննիչ , այլ իբր անօրէն Սելանիկի ոստիկանական վարժարանին :

(*) Դիտումը կը հետեւինք այս իրադարձութեանց , որովհետեւ կարելի է նոյն պայմաններուն ենթարկուի նաև Հայաստանը : Մակեդոնիոյ մէջ եղածը աչքի առջև ունենալով , աւելի հեշտիւ կրնանք ըմբռնել թէ այդ կարգադրութիւնները իրօք է՛նչ բարեք կրնան ընծայել մեր երկրին : Արդէն Հայկական Խորհրդի վերաբարձման առա- ջին օրերուն՝ Հիւսէին Հիլմի փաշա համանման միջոցներ առաջարկեց Հայաստանի բա- րեկարգութեան համար :

(**) Զօրավար Տէճիօրճիս մեռաւ 1908 Մարտ 13ին . անոր յաջորդը՝ զօրավար տէ Բօպիլան՝ նոյնպէս իտալացի էր :

Մակեդոնիոյ մէջ՝ ուրիշ դժուարութիւններ: Ռուսեւճարոնական պատերազմը վրայ հասած ըլլալով, Ռուսիա իր բովանդակ ուշադրութիւնը կեդրոնացուցած էր Հեռուոր Արեւելքի վրայ. Մարոքի կնճիռն ալ կը գրաւեցնէր միանգամայն թէ՛ մրանսան, թէ՛ Անգլիան և թէ՛ Գերմանիան: Բ. Դուռը այս միջազգային տագնապներէն օգտուեցաւ՝ օտար գործակալներու և սպաներու միջամտութիւնը անուանական դարձնելու համար Մակեդոնիոյ մէջ: Միւս կողմէ՝ չգործադրեց իր սեփական խոստումները. ո՛չ ընդհանուր ներում հռչակեց, ո՛չ դրամական նպաստ տուաւ միասուած գիւղացիներուն, և փոխանակ ընդլայնելու՝ բոլորովին սեղանց առևտրական և կրթական ազատութիւնը: Յարաբերութիւնները դարձեալ ձգտեցան Պոլսոյ ու Սօֆիայի միջև, ու տէրութիւնները նորէն թուրքեպուլկար պատերազմի մը սպասանալիքին առջև գտան ինքզինքնին: Գրեթէ բոլորն ալ ամէն գնով խաղաղութիւնը պահպանելու հարկին մէջ ըլլալով, ճնշում բանեցուցին Դրան վրայ և զայն ստիպեցին Պուլկարիոյ հետ կնքելու մարտ 26ի (Հ. Տ.) համաձայնութիւնը որով Պուլկարիա կը խոստանար հրոսամբերու կազմութիւնը արգիլել, պատժել Պուլկարիա ապստամբ հրոսախումբերը, և արգիլել պայթուցիկ կամ թունաւոր նիւթերու մուտքը թուրքիոյ մէջ. իսկ թուրքիա յանձնառու կ'ըլլար Աւստրիոյ, Ռուսիոյ և իմ համաձայնութեամբ որչափ քարեկորուցումները գործադրելու, ընդհանուր ներում չնորհելու բոլոր քաղաքական յանցաւորներուն, բացի պոմպա կամ տինամիթ գործածելու համար դատապարտուածներէն. ասկէ զատ, Պուլկարիա փախած Մակեդոնացիներուն պիտի օգնէր որպէս զի երկիր վերադարձին կարենան վերաշինել իրենց քանդուած կամ հրկիզուած բնակարանները և պիտի վերադարձնէր անոնց հողերը:

Բազմիցս խոստացուած ու բնաւ չգործադրուած այս բարենորոգումները անգամ մըն ալ թուղթի վրայ մնացին: Աւստրիացի և ռուս քաղաքային գործակալները չէին կրնար միջամտել վարչութեան. Հիլմի փաշայի շուքն էին պարզապէս, ամէն տեղ անոր կը հետեւէին հաւատարմութեամբ, առանց ուրիշ բան ընել կարենալու. սոսկ երկրին կացութեան մասին իրենց կառավարութեանց տեղեկագիրներ կը մատուցանէին, և ասոնց մէջ ոչինչ կար յուսադրիչ: Ոստիկանութեան կազմակերպութիւնն ալ մեծ արդիւնք չէր տար. Զօրավար Տէճիօրճիս՝ դարձած էր «Տէճիօրճիս փաշա». տիտղոսին հետ թրքացած էր նաև պաշտօնը, որ հակառակ ամէն բանի՝ Դրան անմիջական ազդեցութեան ենթակայ կը մնար, փաշային շարժելու ազատութիւնը կ'սպառնար, և անոր ձեռք առած կարգադրութիւնները անկացնելով՝ Ապստամբութիւնն ու թուրք զինուորներու ճայրայեղութիւնները վերսկսան ամենաբուռն կերպով. Յունիս 4ին՝ պուլկար հրոսակներ կէվկէլի կայարանին մէջ օդը կը հանեն կառախուճի մը: Յուլիս 2ին՝ ընդհարում կիւմէնճի մէջ՝ պուլկարներու և թուրք զինուորներու միջև. առաջիններուն արձակած պոմպաներէն 30 տուներ կ'այրին: Համանման ընդհարումներ բովանդակ Մանասթըրի նահանգին մէջ. նոյն օրը՝ վեց Քովիթեճիներ հարուստ վաճառական մը բռնելով կը քաշքշեն մինչեւ իր տան մառանը և 50 ոսկի կը պահանջեն. թուրք կառավարութիւնը՝ իմանա-

լով՝ կը պաշարէ տունը, բայց Քովիթեճիները կը փախին դրացի տուներ. թուրք զինուորները, խուզարկութեան պատրուակով կը թալին բազմաթիւ տուններ՝ յետոյ զանոնք կրակի կուտան: Կառավարութիւնը կէվկէլի կառախուճը օդը հանող հրոսակը կախած ըլլալով, իր ընկերները վրէժ լուծելու համար Յուլիս 10ին երկաթուղին օդը կը հանեն չորս զանազան տեղերէ:

Այսպէս ուրեմն՝ Մակեդոնիոյ բարեկարգութեան հարցը անցած էր առաջին շրջանէ մը ուր Ռուսիա և Աւստրիա մինակնին ոստիկանի դեր մը ստանձնած էին թուրքիոյ վրայ, հետեւելով սպասողական ու կրաւորական քաղաքականութեան մը որ ոչ միայն արդիւնք չէր տուած, այլ ընդհակառակը չարիքի աղբիւր մը դարձած էր: Ապարդիւն կը մնար նաև երկրորդ շրջանը, անգլիական թելադրութեանց ու պահանջմանց համաձայն կազմուած Միւրձթէկի ծրագրին շրջանը, որուն ընթացքին Ռուսիա և Աւստրիա դարձեալ կը պահէին իրենց անմիջական իրաւարարի դերը, քիչ մը սուելի գործօն ու խոստապահանջ քաղաքականութեամբ. այս շրջանը՝ նոյնպէս աւելի չարիք կը յարուցանէր քան բարիք, եթէ ոչ ծրագրին անբաւականութեան. գոնէ այն յոռի դրութեան պատճառաւ որով Բ. Դուռը կը գործադրէր զայն: Երկու շրջաններու անյաջողութեան հետեւանքը եղաւ նոր ուղղութիւն մը, այս անգամ՝ տէրութեանց համախումբ գործակցութեամբ. սակայն ամուր համաձայնութիւն մը չկար իրենց միջև. հազիւ թէ կրնային քօղարկել զիրենք բաժնոց տարակարծութիւններ. Համիտի դիւային հանձարը արդէն միշտ կը յաջողէր զանոնք իրարմէ անջատել և անոնց ջանքերը իրարմով չէզոքացնել: Այդ նոր ուղղութիւնը պիտի յանդէպ Բէվայի տեսակցութեան և թուրքիոյ ճակատագիրը պիտի շրջէր:



Կայսերազուն Իշխան
ձէՄ.Ա.Լ.ԷՏՏԻՆ ԷՖԷՆՏԻ
Հարիւրապետ Օսմ. բանակին մէջ



ԳԼՈՒԽ Ժ.

ԳԷՊԻ ՐԷՎԱԼԻ ՏԵՍԱԿՅՈՒԹԻՒՆԸ




Մակեդոնիոյ մէջ ապրող ցեղերու մասին խօսած ատեննիս բացատրեցինք թէ՛ այն պատճառները որոնք առիթ կը դառնային անոնց հակամարտութեան և թէ՛ այն շահը՝ զոր Բ. Դուռը կը կարծէր ունենալ՝ այդ ցեղերը մշտապէս իրարու հետ խռով պահելով: Գիտենք արդէն թէ՛ անոնք ի՞նչ ահաւոր պայմաններով առաջ կը տանէին իրենց մրցակցութիւնը. ոչ բռնութիւնը, ո՛չ հալածանքը, ո՛չ նոյնիսկ սպանութիւնը չէին խրոչեցնէր զիրենք՝ իրենց յաւակնութիւնները ի վնաս ուրիշ ցեղի մը արժեցնելու համար: Միւրձթէկի ծրագիրը ո՛չ միայն չէր կրնար այս վէճերը բառնալ, այլ ընդհակառակը՝ իր երրորդ յօդուածով բոլորովին կը նպաստէր անոնց վերարժարման: Ըստ այդ յօդուածին՝ Բ. Դուռը Մակեդոնիոյ վարչական շրջանակներուն սահմանագծումները պիտի բարեփոխէր՝ երկրին խաղաղելէն անմիջապէս վերջ՝ որպէս զի կարելի ըլլայ զանազան ազգութեանց աւելի կանոնաւոր խմբաւորում մը գոյացնել անոնց մէջ: Մօտալուտ կարգադրութեան առթիւ կարելի եղածին չափ ընդարձակ ազդեցութեան շրջանակներ ապահովելու համար՝ Յոյն, Պուլկար, Սերպ, Ռուսէն մէջտեղ ինկան, իրարու ձեռքէ յափշտակելով գոյութիւն ունեցող եկեղեցիներն ու դպրոցները, անոնց ստացուածքները, իրար բեզբաւելով, շատ հեղ կանոնաւոր ձեւատամարտներ մղելով իրարու դէմ: Սպանութիւնը այլևս բնական բան մը դարձաւ Մակեդոնիոյ մէջ: Թուրքը զոր իրենց ամէնուն մեկանց թշնամին կը դաւանէին, բարեկամներու պաշտպաններու լաւագոյնը կը դառնար՝ երբ կը յուսային անոր աջակցութեամբ ընկճել իրենց մրցակից քրիստոնեայ տարրը: Բնական է այս խառնակութեան մէջ կարելի չէր բարենորոգման խօսք ընել, և Համիտի ուղածն ալ ատ էր. այս պատճառաւ՝ ո՛չ միայն արդելք չդարձաւ եղբայ-

րասպան կռիւներուն, այլ ընդհակառակը ամէն հնարաւոր միջոցները ի գործ դրաւ՝ զանոնք բոլորովին դողափու համար:

Հարկ չկայ ուր ծանրանանք այդ արիւնշալի վէճերուն վրայ. արդէն բաւարար տեղեկութիւններ տուինք անոնց մասին նախորդ Գլուխներուն մէջ: Այդ վէճերը սակայն սկսած էին վրդովել տէրութիւնները: Անգլիա և Ֆրանսա քանիցս Դրան դիտողութիւն ըրին թէ՛ տեղական իշխանութիւնները սխիթեմաթիք անտարբերութիւն մը ցոյց կուտան անոնց նկատմամբ, ինչ որ քաղաքավար կերպով մը հասկցնել էր թէ Օսմ. Կառավարութիւնը աւելի անոնց տեսլուն քան դադրելուն մէջ կը փնտռէ իր շահը: Ճամբան սակայն սխալ էր: Բ. Դուռը՝ ինչպէս միշտ՝ անմիջական օգուտը միայն նկատի կ'առնէր, առանց վաղորդայնին վրայ մտածելու: Քաղաքական հեռատեսութեան հետ գործ չունէր. ամէն օրուան իր հոգը: Իր շահախնդիր անտարբերութիւնը Մակեդոնիոյ եղբայրասպան կռիւներուն նկատմամբ, ինչպէս նաև բերենորոգմանց գործադրութեան մասին ցոյց տուած չկամութիւնը պատճառ դարձան որ աւելի խիստ քաղաքական հոսանք մը գոյանայ իրեն դէմ: Լորտ Լանստաուն որ Միւրձթէկի ծրագրին կնքման առթիւ ծանօթ թելադրութիւնները ըրած էր 1903 հոկտեմբերին, մօտաւորապէս տասնընկիւս ամիս վերջ՝ 1905 դեկտեմբերին կը գրէր Վիեննայի և Բեթէրսպուրկի Անգլիական դեսպաններուն թէ՛ անհրաժեշտաբար պէտք է ճնշում բանեցնել Թուրքիոյ վրայ, ձեռք բերելու համար աւելի լուրջ բարենորոգումներ Մակեդոնիոյ մասին, մասնաւորաբար դատական և ելմտական կազմակերպութեանց մէջ: 1905 յունուար 11ին՝ Բարիզի Անգլիական դեսպանին ուղղուած նամակ մը նոյն անհրաժեշտութիւնը կը շեշտէր աւելի բացորոշ կերպով մը. «Իրերու տխուր դրութիւնը (Մակեդոնիոյ մէջ) կարելի չպիտի ըլլայ անհետացնել. կը գրէր Լորտ Լանստաուն, մինչև որ արտաքին ճնշում չբանեցուի Դրան վրայ»: Ու կը յարէր թէ՛ Անգլիական Կառավարութեան կարծիքով՝ այդ ճնշումը պէտք է կատարուի ոչ թէ՛ լոկ անմիջական շահակից երկու տէրութեանց՝ Ռուսիոյ և Աւստրիոյ կողմէ, այլ Պէրլինի Դաշնագիրը ստորագրող բոլոր տէրութեանց համախումբ գործակցութեամբ: Վեց օր ետքը, Աւստրիոյ և Ռուսիոյ Պոլսոյ դեսպանները, Անգլիոյ կողմէ կատարուելիք դիմումը կանխելով, ծանուցագիր մը տուին Դրան, պահանջելով կարգ մը ելմտական բարենորոգումներ Մակեդոնիոյ մասին, զորս մանրամասնած էին ծանուցագրին կցուած կանոնագրութեամբ մը: Այս ծանուցագիրը առիթ դարձաւ ամենասուր միջազգային տագնապի մը, դէմ առ դէմ հանելով աւստրուոս տեսակէտն ու անգլիական տեսակէտը, որուն պիտի մնար յաղթանակը:

Աւստրիական և Ռուսական կառավարութիւնները կը յայտարարէին թէ՛ իրենք ըլլալով անմիջական «շահակից տէրութիւնները», Դրան ելմտական բարենորոգումներ առաջարկելու իրաւունքը իրենց միայն կը վերաբերի, և թէ՛ իրենց այս իրաւունքը նուիրագործուած է Միւրձթէկի ծրագրով, որուն հաւանած են միւս մեծ տէրութիւնները: Լորտ Լանստաուն սակայն այդ իրաւունքը կը ժխտէր, առարկելով թէ՛ միւս մեծ տէրութիւնները Արեւելքի մասին նոյնքան «շահակից» են, որքան Ռու-

սիա եւ Աւստրիա, հետեւաբար համահաւասար իրաւունք ունին ելմտա-
կան բարենորոգմանց առաջարկութեան և գործադրութեան մասնակցելու:
Բնական է Բ. Դուռը անհաղորդ չէր մնար այս վէճերուն, իրեն համար
անընդունելի էր ո՛չ միայն անգլիական տեսակէտը, այլ նաև Յունուար
17ի աւստրիական ծանուցագիրը՝ որ Մակեդոնիոյ մէջ ելմտական բարե-
նորոգումներու պահանջը կը դնէր: Այն յայտով թէ՛ տէրութեանց անհա-
մաձայնութենէն օգտուելով կը յաջողի ջուրը ձգել աւստրիական ծրու-



ԷՏՐՈՒԹԻ ՏԵՍՍԻՍՆԵՐԷՆ
Մարիցա գետին կամուրջը

զիրը, փութաց ելմտական բարենորոգման պայմանագրութիւն մը կնքել
ուղղակի Օսմ. Պանքային հետ, լոկ իր նախաձեռնութեամբ: Այդ պայ-
մանագրութիւնը որ Մարա Յին հաղորդուեցաւ եւրոպական դահլիճնե-
րուն՝ ո՛չ շահակից տէրութեանց հաւանութեան, ոչ ալ անոնց հակակշիւն
պէտք կը տեսնէր: Գերմանիա իսկոյն հաւանութիւն յայտնեց Դրան
ծրագրին: Իր հաշուով՝ անշուշտ կը կարծէր բարեկամական աջակցու-
թիւն մը ընծայած ըլլալ Օսմ. Կառավարութեան. սակայն այդ հաւանու-
թեան արդիւնքը բոլորովին հակառակը եղաւ: Պոլսոյ ֆրանսական դես-
պան Պ. Քոնսթան, անկէ օգտուելով առաջարկեց միւս դեսպաններուն
լքել Յունուար 17ի աւստրիական ծրագիրը և անոր տեղ գործադրել Դրան
ու Օսմանեան Պանքային միջև կնքուած պայմանագրութիւնը «որ
արդէն Գերմանիոյ հաւանութեան արժանացած էր», անոր կցե-
լով յաւելուածական տրամադրութիւն մը, որուն համաձայն Մակեդոնիոյ
ելմտական դրութեան վրայ հակակշիւ ի գործ պիտի դրուէր ոչ թէ լոկ
Աւստրիոյ և Ռուսիոյ, այլ վեց «շահակից» տէրութեանց կողմէ: Պ. Քոնս-
թան՝ այս դիւանագիտական ճարտարութեամբ ո՛չ միայն գոհացու-

կուտար Անգլիոյ՝ որուն տեսակէտը ընդունած էր նաև Իտալիա, այլ նաև
Գերմանիան ակամայ կը մտցնէր եւրոպական համաձայնութեան մէջ,
ընդդէմ Թուրքիոյ: Ռուս Կառավարութիւնը ընդունեց խնդրին այս կերպ
լուծումը, և հաւանութիւնը ձեռք բերաւ նաև Վիեննայի դահլիճին: Հա-
մաձայնութիւնը շուտով ստորագրուեցաւ և Մայիս 9ին, վեց մեծ տէրու-



Օտար զինուորական կցորդները Օսմ. բանակին շարժումներուն կը հետեւին

թեանց դեսպանները զայն ներկայացուցին Դրան: Դիւրին չէր սակայն
Համիտի կառավարութիւնը հաճեցնել այդ ծրագիրը ընդունելու: Բ.
Դուռը ոչ լոկ սկզբունքին հաւանութիւն յայտնեց, անշուշտ օտար դըր-
դումներէ քաջալերուելով: Յունիս 24ին՝ տէրութիւնները նոր ծանուցագիր
մը տուին՝ որուն Յունիս 10ին միայն պատասխանեց բացարձակ մերժու-

մով մը, այն հիման վրայ թէ երմտական պատուիրակներու անուանումը Օսմ. կառավարութեան գերիշխանութիւնը կ'ոչնչացնէ: Տէրութիւնները, այլ ևս առանց Գրան չկամութեան անսարու, անուանեցին չորս երմտական պատուիրակները, գերմանացի մը, անգլիացի մը, իտալացի մը և ֆրանսացի մը, որոնք աւստրիացի և ռուս քաղաքային գործակալներուն և Հիլմի փաշայի պիտի օժանդակէին: Այս անուանումը յաջորդաբար տեղի տուաւ նոր մերժումներու՝ Գրան կողմէ, և նոր Ծանուցադրերու՝ տէրութեանց կողմէ, մինչև որ այս վերջինները՝ Աւստրիոյ և Ռուսիոյ հետ համախորհուրդ՝ որոշեցին նաւային ցոյցով մը հարկադրել Սուլթանը: Վերջին պահուն՝ Գերմանիա մերժեց ցոյցին մասնակցիլ, բայց որովհետև ուրիշ ճար չկար, միւս հինգ տէրութեանց զրահուորները համախմբուեցան Պիրէոն, աւստրիացի դեր-ձովակալ Բիթթէրի վերին հրամանատարութեամբ, և Հոկտեմբեր 7ին Միտիլիի մաքսատունը, նամակատունը և հեռագրատունը գրաւելով, ուղղուեցան Լէսպոս: Համիտ, Գերմանիոյ խորհուրդներուն վրայ, զիջեցաւ, պայմանաւ որ երմտական պատուիրակները երկու տարուան համար պաշտօնի կոչուին, Թուրք մը գտնուի իրենց պաշտօնակից՝ և փոխանակ «պատուիրակ»ի «խորհրդական» կոչուին: Օսմ. գերիշխանութեան անուանական պահպանումը երաշխաւորող մանրամասնութիւններ, որոնց դէմ առարկութիւն չյարուցին տէրութիւնները, քանի որ Սուլթանը կ'ընդունէր իրենց պահանջումը: Երմտական «խորհրդական»-ները 1905 Դեկտեմբեր 23ին ձեռնարկեցին իրենց պաշտօնին: Մինչև այն ատեն՝ Գուռը երկու տարուան համար երկարաձգած էր թէ՛ ընդհանուր քննիչ Հիլմի փաշայի, թէ՛ Տէճիօրճիս փաշայի, թէ՛ ոստիկանութեան քննիչ եւրոպացի սպաներու և թէ՛ ընդհանուր-քննիչին օժանդակելու կոչուած աւստրիացի և ռուս քաղաքային: քննիչներու պաշտօնները:

Բարեկարգութեանց գործը ուրեմն լաւ ճամբու մէջ էր. բաղդատմամբ Միւրձթէկի ծրագրին՝ առնուած էին շատ կարեւոր քայլեր, որոնցմով դիւրին պիտի ըլլար հաստատուն խաղաղութիւն մը գոյացնել Մակեդոնիոյ մէջ, մանաւանդ որ, տարիէ մը ի վեր եթէ ո՛չ կասած, գոնէ բաւական մեղմացած էր պուլկար յեղափոխական կազմակերպութեանց գործունէութիւնը: Ապստամբական շարժումը չափազանց յիւստած էր Մակեդոնիոյ ընկիներուն. բռնի դրամահաւաքումը, հրոսակները հիւրընկալելու ստիպումը և այլ պատճառաւ հալածանքներու, բանտարկութեան, նոյն իսկ սպանութեան ենթարկուելու փորձանքը, և ասոնց կարգէն ուրիշ պատճառներ՝ տեսակ մը հակահոսանք ստեղծած էին Մակեդոնիոյ ժողովուրդներուն մէջ՝ ընդդէմ հրոսախումբերուն: Թէ՛ այս հակահոսանքը, և թէ՛ մանաւանդ Թուրք կառավարութեան քաջալերութեամբ, գրեթէ անոր հաշուին գործող Սերպ և Յոյն չէթէներու հալածանքը, չափաւորութեան, զգուշաւորութեան մղած էին պուլկար յեղափոխականները: Ուրիշ պատճառ մըն ալ ունէին ասոր համար. երբեմնի աղղեցիկ, յանդուգն ու խանդավառ պետերէն շատերը յաջորդաբար կամ բռնուած էին և կամ հերոսաբար ինկած էին ընդհարումներու միջոցին: 1907ին՝ անոնցմէ քիչեր միայն ազատ կը մնային: Տամէ Մարթինօֆ որ Բոսովայի վիլայէ-

թին մէջ կը գործէր, երեւան հանուած էր Սկիւպի մէջ ու ոստիկանութեան կողմէ պաշարուելով ապաստանած էր զինքը հիւրընկալած տան մասանը. ոստիկաններու հրաւերին վրայ վերջապէս հաւանած էր անձնատուր ըլլալ, բայց ո՛չ թէ Թուրք ոստիկաններուն, այլ ֆրանսական հիւպատոսին ու աւստրիացի ոստիկանական սպայի մը: հիւպատոսը բացակայ ըլլալով՝ Թարգմանը և աւստրիացի սպան գացած էին իր ապաստանած տունը. այնտեղ Մարթինօֆ զանոնք ընդունած էր պոմպայով մը, որ սակայն վնաս չէր պատճառած և ոստիկանները ձերբակալած էին զինքը: Գուռ մանովայի հրոսախումբին վոյվօտան՝ Պօպէֆ՝ սպաննուած էր 1906 Մարտին: Պուլկար նախկին սպայ Բօմթանթինօֆ, որ Քէօրրիլիի հրոսախումբին վոյվօտան էր, ուրիշ երկու պետերու հետ ինկած էր Սերպ հրոսախումբի մը հետ կատարուած ընդհարման մը մէջ: Վարտարի շրջանակին և պուլկարական սահմանազխտուն միջև գործող Վասիլի վոյվօտան ծանրապէս վիրաւորուած էր Թուրքերուն դէմ կռուած ատենը: Այս վերջինները ձեռք անցուցած էին Քօչանայի վոյվօտան՝ Խրիսթօ Պուլկարիաթան: Պուլկարները աւելի ծանր կորուստ մը ունեցած էին 1906 Դեկտեմբեր 23ին. «Ներքին կազմակերպութեան» կեդրոնական Բօմիթէին նախագահ Տամիան կրուէֆ, ամէնէն ժողովրդական ու կորովի վոյվօտան, սպաննուած էր Օսմանիէ քաղային Ռուսինէ գիւղին մէջ՝ Թուրք զինուորներու դէմ կռուած ատենը: Իր մահը ծանր հարուած մը եղած էր յեղափոխական շարժման համար: Տարի մը վերջ՝ 1907 Դեկտեմբերին՝ այդ հարուածը պիտի երկրորդուէր Պօրիս Սարաֆօֆի և Կարվանօֆի սպանութեամբ: Այս անգամ ո՛չ Թուրքերն էին սպաննողները, ոչ ալ Յոյները կամ Սերպերը. Սարաֆօֆ զո՛հ կ'երթար եղբայրասպան կռուի մը, ուրկէ դժբախտաբար զերծ չկրցաւ մնալ նաև մեր յեղափոխական շարժումը: Իր մահը՝ զոր Սէրէզի շրջակաները գործող ուրիշ նշանաւոր հրոսապետ մը՝ Սանտանսքի՝ վճռած ու գործադրել տուած էր, քիչ մը աւելի կը տկարացնէր յեղափոխական շարժումը: Այս տկարացումէն կարելի էր անշուշտ օգտուիլ և բոլորովին վերջ տալ շարժման, ո՛չ թէ՛ բռնական միջոցներով որոնք մեծ արդիւնք մը չէին տուած մինչև այն ատեն, այլ գործադրելով այն բարենորոգման ծրագրերը զորս Գուռը կամայ ակամայ ընդունած էր յաջորդաբար, և որոնք



ՊՈՒԼԿԱՐ ԶՕՐԱՎԱՐ ԲԱՐԻՒՔՅԱ

թուղթի վրայ կը մնային նաև 1905ի տազնապէն վերջն ալ: Համիտի կառավարութիւնը ո՛չ միայն չէր գործադրեր զանոնք, այլ ինք մանաւանդ կը նպաստէր խռովութեանց տեականացման, վառ պահելով Մակեդոնիոյ մէջ գոյութիւն ունեցող ցեղային վէճերը, և պարագաներուն ուտեղին համեմատ անոնցմէ մէկուն ոյժ տալով ընդդէմ ուրիշի մը: Իր մէթոտը պարզեցինք արդէն. Յոյն տարրին փոքրամասնութիւն եղած տեղը կը քաջալերէր Յոյները. Սերպ տարրին փոքրամասնութիւն եղած տեղը կը քաջալերէր Սերպերը. Ուլահ տարրին փոքրամասնութիւն եղած տեղերն ալ ղուր զանոնք, նոյն խակ երբ ոճիր գործած ըլլային, կը բաւէր որ ճիշտ իր վիճակ ուղած տարրին պատկանէր վիստուողը: Այսպէսով տեղ մը Յոյնը կը պաշտպանէր Պուլկար սպաննել տալու համար. ուրիշ տեղ մը Ուլահը կը պաշտպանէր Յոյն սպաննել տալու համար. Սերպերը՝ պուլկարական շրջանակներու մէջ աղաա էին Պուլկար սպաննելու, բայց բուն սերպիական շրջանակներու մէջ ալ նոյն աղատութիւնը Ալպանացիք կը վայելէին՝ Սերպ սպաննելու համար:


Եւ բոլոր այս բռնութեանց ու ոճիրներու ընթացքին՝ Տէճիօրճիա փաշա, իրեն օժանդակելու կոչուած եւրոպացի սպանները և այս վերջիններուն կողմէ բնաւ չմարդուող ոստիկանները գրեթէ թեւերին ծալած կը կենային. կամ այն է որ իրօք չէին կրնար ոճրագործները ձեռք անցընել, և կամ Դուռը խկոյն արձակել կու տար զանոնք: 1906ի վերջերը՝ փաշան ու կազմակերպիչ սպանները՝ իրենց տարեկան ընդհանուր գումարման մէջ ցաւով կը հաստատէին թէ Թուրք քաղաքային կամ զինուորական պաշտօնատարներու սխիթեմաթիք ընդդիմութեան պատճառաւ, կարելի չէր եղած գրեթէ ոչ մէկ բարենորոգում գործադրել: Ոստիկանութիւն, ելեմուտք ու վարչութիւն՝ լաւ կառավարութիւն: ունենալու համար անհրաժեշտ եղող ճիւղերէն երեքը, եւրոպայի գործակալներու հսկողութեան ենթարկուած էին, ու դարձեալ արդիւնքը այն էր՝ ինչ որ էր անոնց չգրտնուած ատենը: Գաղանիքը պարզ է. եւրոպացի գործակալներ կային, բայց որոշ չէր թէ իսկապէս ի՞նչ հանգամանքով պաշտօնի կոչուած են. տէրութիւնները անհամաձայն էին այդ մասին, անանկ որ յայտնի չէր ըլլար թէ անոնք լոկ հսկելու և տեղեկագրելու պաշտօն ունին, թէ կրնան նաև հրամայել, գործել: Եւ Համիտ, տէրութեանց անհամաձայնութենէն օգտուելով, իրերը այնպէս բերել կուտար որ միանգամայն թէ՛ քաղաքական, թէ՛ ելմտական և թէ՛ ոստիկանական գործակալներն ու սպանները չէին կրնար գործօն դեր մը ստանձնել, այլ կը մնային կրաւորական զիտողներ և տեղեկագրողներ:

Ոստիկանութեան կազմակերպիչներէն վերջ, իրենց անդորութիւնը խոստովանեցան նաև ելմտական պատուիրակները: Տուրքերու գանձումը անկարելի կ'ըլլար կանոնաւորել. Ալպանացիք կը մերժէին կարգ մը տուրքեր վճարել և զէն ի ձեռին կը դիմադրէին հարկահաւաքներուն, որոնցմէ յամառներն ալ կը սպաննէին: Պատուիրակներու բողոքին վրայ, Համիտ թէև կը հրամայէր որ ընդդիմացողները բանտ նետեն, բայց արդէն իսկ

երևոյթները փրկելու համար տրուած այդ հրամանը երբեք չէր գործադրուեր. վստահ թէ անպատիժ պիտի մնան՝ Ալպանացիք կ'ամբանային իրենց աշտարակներուն մէջ, և այլ ևս ոչ ոք կը համարձակէր իրենց դպչիլ:

Ողբալի բան մըն էր մանաւանդ Մակեդոնիոյ դատական կազմակերպութիւնը: Արդարութենէն անուն մը միայն կար. դատաւորները օրէնքին չէին հնազանդեր այնքան, որքան Համիտի նկատումներուն. մրցակից ցեղերու դէմ կիրարկուած դրութեան հետեւանքով՝ տեղ մը ոճրագործը ազատ կ'արձակուէր և ուրիշ տեղ մը անմեղ մը իբր յանցապարտ կը դատապարտուէր: Կաշաքի դրութիւնը դարձած էր տիրող կարգ. և ասոր մէջ յանցանքի մեծագոյն բաժինը դատաւորներունը չէր. անոնցմէ շատեր ակամայ կ'ապականէին, որովհետև ո՛չ միայն անբաւական ամսականներ ունէին, այլ այդ ամսականներն ալ չէին կրնար կանոնաւորապէս ստանալ: Պէտք կար ուրիշն դատական բարենորոգմանց, և այդ պէտքը վաղուց զգացուած էր արդէն: 1904ի վերջերը՝ Լորտ Լանստաուն Դրան դրուած ծանուցագրով մը շեշտած էր զայն, մատը դնելով բուն վէրքին վրայ. — «Ստիպողարար անհրաժեշտ կը դառնայ բարեփոխել նաև արդարութեան վարչութիւնը, կ'ըսէր: Ամսականներու պատշաճ քանակութիւնն ու կանոնաւոր վճարումը նոյնքան անտեղիտալի պահանջ է դատական կազմակերպութեան, որքան բանակին և ոստիկանութեան համար: Սելանիկի վիլայէթին մէջ՝ դատաւորները իրենց ամսականներուն կէսը միայն ստացած են այս տարի, չեն կրնար ապրիլ եթէ անխոստովանելի միջոցներով չաւելցնեն իրենց եկամուտը»: Եւ Լորտ Լանստաուն կ'առաջարկէր դատական քննիչներ կարգել թէ՛ այդ վճարման հարցը բարեփոխելու և թէ՛ զեղծանողներու վտարմամբ դատական կազմը մաքրագործելու համար: 1907ին՝ Անգլիա դարձեալ նոյն պահանջը դրաւ, այս անգամ եւրոպական տէրութեանց: Միւրձթէկի ծրագրէն ասդին՝ Անգլիա գերակշիռ դերը կը խաղար եւրոպական տէրութեանց մէջ՝ որոնք կամայ ակամայ ինքզինքնին գործակից դարձուցած էին Աւստրիոյ և Ռուսիոյ: Զարմանալի չէր ուրեմն այս առաջարկին իր մէ գալը: Էտուար է. 1 07 Օգոստոս 18ին Իշլի մէջ Աւրստրիոյ կայսեր հետ տեսակցելով, — ինչպէս որ մը առաջ տեսակցած էր Գերմանիոյ կայսեր հետ՝ վիլհելմ շահեօէի մէջ և վեց օր ետքն ալ՝ Մարիէնապատի մէջ պիտի տեսակցէր Ֆրանսայի նախարարապետ Պ. Բլէմանսօի հետ, — հիմը դրած էր Դրան վրայ ըլլալիք նոր ճնշումի մը օրուն առանցքը այս անգամ Մակեդոնիոյ դատական բարենորոգմանց հարցը պիտի ըլլար: Անգլիա չէր ուզեր եւրոպական համաձայնութենէն անջատուիլ: Օգոստոս մէկին՝ Անգլիական Խորհրդարանին մէջ դիտել տուած էին թէ ազատական դահլիճը այնքան շահագրգռութիւն ցոյց չի տար Մակեդոնիոյ դահլիճը, մասին՝ որքան կը շահագրգռուէր նախորդ պահպանողական դահլիճը, և Սըր Էտուար Կրէյ ստիպուած էր յայտարարել թէ որքան ալ որ «Անգլիա իրեն համար պատուոյ խնդիր մը դարձուցած է Մակեդոնիոյ հարցը», կրկին կը փափաքի միւս մեծ տէրութեանց հետ համախորհուրդ գործել, բարենորոգմանց գործադրութիւնը ապահովելու համար բոլոր կարելի ճիւղը չխնայելով: Կը հաստատէր նոյն ատեն թէ նախորդ տարի, ինչպէս

անկէ առաջ ալ, ո՛չ մէկ մեծ տէրութիւն Անգլիոյ չափ ջանադիր եղած էր այդ նպատակը իրականացնելու: Եւ սակայն, ո՛չ Անգլիոյ այս մշտարթուն



Մերպիտի Բէթմար Յարկաւորը և սերտ Սպարկոյտը պատեղապարհի վրայ

գործունէութիւնը, ոչ ալ միւս տէրութեանց աշխատակցութիւնը չէին կրցած քանդել Աւստրալուս համաձայնութիւնը Արեւելքի մասին, և

«անմիջական կերպով շահակից» այդ երկու երկիրներուն կը մնար դարձեալ տէրութեանց համամտութեամբ ձեռք առնուելիք միջոցներուն նախաձեռնութեան իրաւունքը:

Այդպէս եղաւ նաև Մակեդոնիոյ դատական բարենորոգմանց խնդրին համար: Անոնց պէտքը Ֆրանսա և Անգլիա չեշտած էին ամէնէն առաջ. էտուար է. անձնապէս աշխատած էր այդ բարենորոգմանց սկզբունքը ընդունել տալու միանգամայն բոլոր տէրութեանց, բայց ոչ Անգլիա, ոչ ալ միւս մեծ տէրութիւնները ուզեցին Աւստրիայէն և Ռուսիայէն խլել նախաձեռնութիւնը. ծրագրեր անոնք պիտի պատրաստէին և իրենց հաւանութեան ենթարկելէ վերջ պիտի ներկայացնէին Դրան: Եւ անհրաժեշտ էր փութալ այդ ձեռնարկը իրականացնելու, որովհետև Մակեդոնիոյ դրութիւնը ո՛չ միայն բարելաւած չէր վերջին բարենորոգումներէն ի վեր, այլ ընդհակառակը հետզհետէ աւելի վրդովիչ կը դառնար:

1907 Օգոստոսին, մինչդեռ Վիեննա և Բեթէրսպուրկ դատական բարենորոգմանց ծրագրեր կը մշակէին, Հիլմի փաշայի կողմէ պատրաստուած վիճակագրութիւն մը կը յայտնէր թէ 1906 մարտէն մինչև 1907 յունիս՝ Օսմ. զինուորները 133 ընդհարում ունեցած էին զանազան ազգերու պատկանող հրոսախումբերու հետ, և թէ 548 թուրք զինուորներ ինկած էին այդ ընդհարմանց մէջ (*): Հիլմի փաշա՝ սոսկ հրոսակներու և Օսմ. զինուորներու միջև մղուած կռիւնները արձանագրած էր. իր վիճակագրութիւնը սակայն՝ դարձուրելի հանգամանք մը պիտի ստանար՝ եթէ անոր մէջ յիշատակած ըլլար նաև անհատական ոճիրներն ու յափրշտակութիւնները, և զանազան ցեղերու հրոսախումբերուն կողմէ իրարու դէմ մղուած կռիւնները, որովհետև այդ տասնըվեց ամիսներու ընթացքին, Յոյներն ու Պուլկարները, Ուլաններն ու Յոյները, Սերպերն ու Պուլկարները, Ալպանացիներն ու Սերպերը երեք չէին դադրած իրար ջարդելէ՝ եւրոպացի ոստիկանական հրամանատարին և սպաներուն, ինչպէս նաև Հիլմի փաշայի ու իրեն զօանդակող միւս եւրոպացի պաշտօնատարներուն քիթին տակ:

Մի միայն 1907 տարուան իրերասպանութեանց վրայ գաղափար մը տալու համար, այստեղ կը յիշատակենք հետեւեալ մէկ քանի դէպքերը. — Յուլիս 23ին՝ բազմաթիւ Պուլկար հրոսախումբ մը Մանսիլ գիւղը մտնելով կրակի կուտայ (Թօ ևա Բօսթանթիմու անուն ծերունիի մը բնակարանը. ծերուկը և իր կինը կ'այրին իրենց տան մէջ. հրոսախումբը՝ չմեկնած, կը սպաննէ ուրիշ Յոյն մը և կը վիրաւորէ երեք Յոյներ ալ, որոնցմէ մէկը կին: Զորս օր վերջ՝ ուրիշ Պուլկար հրոսախումբ մը՝ կը յարձակի Սէլինօ յունարնակ գիւղին վրայ, կը սպաննէ երկու Յոյներ՝ անոնց դէմքը անձանաչելի դարձնելով. յաջորդ օրը, նոյն խումբը կ'աւելանգէ Նիքիաու անունով Յոյն մը, ողջ ողջ անոր մորթը կը գերծէ, աշուրները

(*) Պուլկարներուն հետ՝ 74 ընդհարում, որոնց միջոցին թուրքերէն մեռած էին 291 զինուոր, Յոյներուն հետ 46 ընդհարում, որոնց միջոցին թուրքերէն մեռած էին 218 զինուոր, Սերպերու հետ 13 ընդհարում, որոնց միջոցին թուրքերէն մեռած էին 39 զինուոր:

կը հանէ, լեզուն կը կարէ և ի վերջոյ կտոր կտոր ընելով կը սպաննէ։ Օգոստոս Չին՝ դարձեալ Պուլկար հրոսախուժմբ մը Ծլօրինայի ճամբուն վրայ կը սպաննէ վեց Յոյներ՝ նոյնպէս զարհուրելի չարչարանքներ տալէ վերջ։ Օգոստոս 3-4ի գիշերը Պուլկարներուն զո՛հ կ'երթան ուրիշ չորս Յոյներ, որոնցմէ մէկը քահանայ։ Յոյները անպատասխան չեն թողուր այս ծայրայեղութիւնները։ Մակեդոնիոյ քսանըհինգ Մէտրապոլիաներէն և հինգ ևս պիսկոպոսներէն տասը (Աւրէզի, Մանասթըրի, Գարաֆէրիայի, Տրամայի, Քասթօրիայի, Սթրուժիցայի, Կրէվէնայի, Ծլօրինայի, Էլասոնայի և Քիթրօսի առաջնորդները) յայտնաբար կը քաջալերեն Յոյն հրոսախուժները և զանոնք կը մղեն սպանութեան Պուլկարներու և Ուլաներու դէմ։ Յունական հրոսախուժ մը, մօտաւորապէս 60 հոգի, կը յարձակի Սելանիկէն չորս քիլօմէթր միայն հեռուն գանուող կղմնարի գործարանի մը վրայ ուր սովորաբար 300ի մօտ Պուլկարներ կ'աշխատէին. առաջին հիւղակին մէջ յանկարծակիի կուգան ինը գործաւորներ. անոնցմէ մէկը միայն կը յաջողի փախչիլ. Յոյները կը սպաննեն միւս ութը, որոնցմէ երկուքը պատանիներ, և ամէնքն ալ կ'անդամահատեն։ Օգոստոս Չին Մանասթըրի զինեպան էսնաֆին պետը՝ Բէթրօ Քրիսթօֆանուն Պուլկար մը՝ օրցերեկով կը սպաննուի քաղքին շուկային մէջ, Յոյն հրոսակի մը կողմէ։ Սէրէզի մէջ՝ Յոյներու կողմէ Պուլկարներու սպանութիւնը բնական իրերու կարգը անցած է, և Պուլկարներ ծագող խրաքանչիւր առտու կը հարցնեն անձկութեամբ թէ արդեօք իրենցմէ ո՞վ պիտի իյնայ նոյն օրը։ Թուրքերը նոյնպէս հրոսախուժներ կը կազմեն, առաւելապէս Պուլկարներու տանձգութեանց դէմ մաքառելու համար, և իրենք ալ կը սկսին սպանութեանց։ Քաջալերուած Կառալարութեան թոյլաուութենէն, կանոնաւոր «Պուլկարասպան» թուրք Քօմիթէներ կը կազմակերպուին։ Իրէզպայի Քօմիթէն՝ այդ օգոստոս ամսուն ընթացքին չրջաբերականով մը կ'ազդարարէ քաղային թուրք բնակչութեան, որպէս զի ճամբաներուն վրայ բնաւ չընկերանան Պուլկարներու անոնց դէմ կատարուելիք յարձակումներու միջոցին իրենք ալ զո՛հ չերթալու համար։ Նոյն Իրէզպայի Քօմիթէին հրոսապետներէն մէկը, Բաջօ պէյ, Օգոստոս 5ին կը յարձակի Կուրպինովօ և Ռայցա գիւղերուն վրայ ու բազմաթիւ Պուլկարներ կը սպաննէ։

Ոստիկանութեան Ծրանսացի մարզիչ գնդապետ Վէրար, նոյն տարուան վերջերը կը յայտարարէր հետևեալը. — «Պաշտօնակիցներս և ես՝ առանց կարենալ արգիլելու՝ հանդիսատես կ'ըլլանք այս եղբայրասպան կրօնուն որ գոյութիւն ունի Պատրիարքարանի ենթակայ Օրթոտօքսներուն և էկզարքարանի ենթակայ Օրթոտօքսներուն միջև։ Մեր անկողմնակալութեան յենդով, ի դուր իմաստուն խորհուրդներ կու տանք իրենց։ Այս պահուս՝ ընդհանուր վախճեթքա մըն է ամէն կողմ. սպանութիւն մը առեթի կ'ընդունի ուրիշ սպանութեան մը. յափշտակութիւն մը իրեն պատասխան կ'ընդունի ուրիշ յափշտակութիւն մը. հրկիզման մը վրէժը կը լուծուի հրկիզմամբ։ Իմ թելադրութեանս վրայ, եւրօպացի ոստիկանական մարզիչները սկսան խրաքանչիւր ամիս իրարու միջև փոխանակել իրենց շրջանակին մէջ կատարուած ոճիրներուն ցանկը. անա թէ ի՞նչ էր նոյնմբեր

ամսուն հաշիւը. աւստրօ-հունգար շրջանակին մէջ (Սկիւպի վիլայէթ) 64 սպաննուած, որոնց մէջ 52 Պուլկար, 5 Սերպ, 7 թուրք. Իտալական շրջանակին մէջ (Մանասթըրի վիլայէթ) 56 սպաննուած, որոնց մէջ 34



Պուլկար պահուողներու կողմէն՝ Սարդիայի հովտին մէջ

Պուլկար, 7 Յոյն, 3 Սերպ և 12 թուրք. Ռուսական շրջանակին մէջ (Սելանիկի վիլայէթ) 45 սպաննուած, որոնց մէջ 36 Պուլկար, 4 Յոյն, 5 թուրք. Ծրանսական շրջանակին մէջ (Սելանիկի վիլայէթ) 46 սպաննուած,

որոնց մէջ 20 Պուլկար, 9 Յոյն, 17 Թուրք, միակ ամսուան մը միջոցին ընդամէնը 211 քաղաքական կամ կրօնային սպանութիւն, որոնց զո՛ս գացած են 142 Պուլկարներ, 41 Թուրքեր, 20 Յոյներ և 8 Սերպեր» :

Մենք յայտնեցինք արդէն թէ այս եղբայրասպան վէճերուն բուն պատճառը Միւրձթէկի ծրագրին երրորդ յօդուածն էր: Վիեննայի և Բեթէրսպոլսի զանգիւնները, հասկնալով իրենց ներուան սխալը, Մակեդոնիոյ դատական բարենորոգմանց ծրագիրը պատրաստած ատեննին, կը խորհէին նաև այդ սխալը դարմանել: Սեպտեմբերին՝ մինչդեռ վերսիշեալ ծրագիրը միւս մեծ տէրութեանց հաւանութեան ենթարկուած էր՝ Սուլթանին մատուցուելու համար, երկու տէրութիւնները իրենց Մակեդոնիոյ ներկայացուցիչներուն ինչպէս նաև տէրութեանց ուղղուած շրջաբերակներով մը կը յայտնէին թէ Մակեդոնիոյ մէջ թէ՛ Պուլկար և թէ՛ Սերպ կամ Յոյն յեղափոխական քօմիթէներու և հրոսախուժներու գէն ի ձեռին գործունէութիւնը: Ինչպէս նաև բռնի դաւանափոխութիւնները որոնց կ'ենթարկեն բնակչութեան այս կամ այն մասը, արդիւնքն են Միւրձթէկի ծրագրին երրորդ յօդուածին տրուած սխալ մեկնութեան մը որ դժբախտաբար շատ սարածուած է: Երջաբերականը կը յիշատակէր յօդուածը նոյնութեամբ, և կը յայտարարէր թէ յեղափոխական քօմիթէները Օսմ. կառավարութեան դէմ մաքառելէ ետ կենալով և այս ցեղային կոիւնտներուն յանձնուելով, կը յուսան իրենց պատկանած ազգութեան համար կարելի եղածին չափ տարածուն շրջանակներ ստեղծել, այն հաւատքով թէ Մակեդոնիոյ վարչական բաժանմանց նոր սահմանագծումները գորս կը պահանջէ վերսիշեալ երրորդ յօդուածը, իրենց ձեռք բերած արդիւնքին հիման վրայ տեղի պիտի ունենան: Մինչդեռ, կը յարէր Երջաբերականը, այդ արդիւնքը արուեստական բան մըն է, քանի որ իրենց ազգութեան պատկանող շրջանակներու ընդլայնուող տեղի կ'ունենայ ո՛չ թէ բնակչութեան ազատ կամքով և ընտրողութեամբ, այլ բռնութեամբ ու արհաւիրքով: Քիչ ետքը, Աւստրիա և Ռուսիա՝ այդ սխալհասկացողութիւնը բառնալու համար՝ երոպական զանգիւններուն ուղղուած Յիշատակագրով մը հետեւեալ մեկնութիւնը կուտային Միւրձթէկի ծրագրին երրորդ յօդուածին. «ինչորոյ առարկայ երրորդ յօդուածը չի նշանակեր թէ երկու տէրութիւնները մտադիր են Մակեդոնիոյ մէջ ազգային շրջանակներու ստեղծումը յանձնարարել: Աւստրիա և Ռուսիա երբեք այս տեսակ նպատակ մը չեն ունեցած: Երբոր ատենը դայ, Դրան պիտի յանձնարարեն միայն երկրորդական բարեփոխումներ՝ երկրին սահմանագծմանց մէջ, զանազան շրջանակներու վարչութիւնը աւելի դիւրացնելու և արդիւնաւոր դարձնելու համար»: Միւս կողմէ, Մակեդոնիոյ մէջ հրոսախուժներու գործունէութիւնը չլատելու համար, Երջաբերականը կ'ըսէր թէ այդ փոփոխութեանց պիտի ձեռնարկուէր այն ատեն միայն, երբ երկիրը բոլորովին խաղաղած ըլլար և հրոսախուժներն ալ ամբողջովին անհետացած ըլլային. կը յայտնէր տակաւին թէ այդ փոփոխութեանց ընթացքին բնաւ նկատի չպիտի առնուին հրոսախուժներու սպանալիքին տակ կատարուած դաւանափոխութիւնները: Միևնոյն ատեն՝ երկու տէրութիւնները միանգամայն թէ՛


Պէլկրատի, թէ՛ Սօֆիայի և թէ՛ Աթէնքի կառավարութեանց ուղղուած խիստ ազդարարութիւններով կը պահանջէին չվրդովել Մակեդոնիոյ խաղաղութիւնը:

Թէ՛ այդ ազդարարութիւնը և թէ՛ վերոյիշեալ Երջաբերականն ու Յիշատակագիրը իրենց ազդեցութիւնը ունեցան հրոսախուժներուն վրայ, և տակաւ առ տակաւ սկսաւ թուլնալ անոնց գործունէութիւնը: Պահը յարմար էր ուրեմն՝ Մակեդոնիոյ դատական բարենորոգմանց ձեռնարկելու համար: Աւստրիա ու Սերպիոյ ծրագիրը յանձնուած էր տէրութեանց Պոլսոյ դեսմար: Աւստրիա ու Սերպիոյ յանձնուած էր տէրութեանց Պոլսոյ դեսմար: Երան՝ անմիջական գործադրութիւնը պահանջելով: Բայց մինչդեռ անոնք կը խորհրդակցէին, Համիտ՝ արթուն ինչպէս միշտ՝ ձեռք անցուցած էր կը խորհրդակցէր, ապահովարար Գերմանիոյ միջոցաւ (*), և տաժրագրին մէկ օրինակը, ապահովարար Գերմանիոյ միջոցաւ մեթոկա ին դեսպանները համաձայնութեան մը չեկած, իր սովորական մեթոտով սկսաւ գանոնք բաժնել իրարմէ: Գործը դժուար չէր իրեն պէս վարպետի մը համար, որ շատ լաւ գիտէր թէ երոպական դեսպաններուն աչքին Թուրքիոյ ժողովուրդներուն երջանկութեան պահանջը ընդհանրապէս ո՛չ թէ մարդասիրութեան արդիւնք էր. այլ իրենց սեփական երկրին պէս ո՛չ թէ մարդասիրութեան արդիւնք էր. այլ իրենց սեփական երկրին շահերուն ծաւալման միջոց մը: 1907 Օգոստոսին, Պոլսոյ դեսպաններէն երեքը մանաւանդ, Ֆրանսականը, Իտալականը և գերմանականը՝ առեւտրական գործակալներու յատուկ ուղղութեան մը յանձնուած էին: Համիտ սկսաւ կիրարկել պղտիկ պատառներ նետելով մեծ պատառները ապահոսելու իր սիրական մէթոտը, զոր կը դատապարտեն ընդհանրապէս: Եթէ սակայն 1908էն ասդին վրայ գացածները աչքի առջև բերուին, անկարելի է չխոստովանիլ թէ Թուրքիոյ համար ճակատագրական եղով ծանօթ կառավարելու եղանակին մէջ՝ կարծուածին չափ արհամարհելի չէր այդ մէթոտը. որ հին-թիւրք պետական ըմբռնումն է էպպէս, և որուն ի գուր վերադառնալ փորձեց Մուխթար փաշայի զանգիւնը, պատերազմին յայտարարութենէն մէկ երկու օր առաջ Պէրլինի Դաշնագրին բնաւ չգործադրուած էր, և ժաշիրը յօդուածին յարութիւն տալով: Գործը գործէն անցած էր, և ժամանակ չկար խաղը յաջողցնելու:

Համիտ՝ կանուխէն ծրագրին օրինակը ձեռք անցուցած ըլլալով, ուղաձիւն չափ ժամանակ ունեցաւ այդ մեթոտը կիրարկելու: Երբագիրը դեսպաններու խորհրդակցութեան ենթարկուած էր 1908 Օգոստոսի սկիզբէն, և Դրան պիտի մատուցուէր Հոկտեմբերի ընթացքին. մինչև այն ատեն Իտալիոյ Անսալտօ նաւային գործարանին հետ կնքեց պայմանագրութիւն մը, որուն համաձայն Գ. կարգի յաժանաւ մը պիտի չինուէր Թուրքիոյ հաշուին « 350,000 անգլ. ոսկիի արժէքով, յետոյ՝ Ֆրանսական դեսպանին բերանը նետեց մէկ քանի հանքային մեղաշորհներ, անկասաբար Օսմ. Պանքային հետ կնքուած փոխառութենէ մը որ ուղղակի Ֆրանսական դրամագլուխը կը նպաստուորէր. Գերմանիա նոյնպէս անմասն չը

(*) Իտալական մամուլը յայտնաբար ամբաստանեց Գերման կառավարութիւնը թէ ինք յանձնած է Երբագրին օրինակը, և ֆեոյնիշէ Զարրունկի մէկ հերքումը չկրցաւ թրուել այս մասին գոյացած կասկածը:

մնաց. երեք ձեռնարկ մանաւանդ այդ օրերուն կը գրապեցնէր իր Պոլսոյ դեսպանը. - Գարաքէօյի կամուրջին շինութիւնը, Գօնիալի գաշտին ճախճախուսաներուն ցածքեցումը և Անատօլի երկաթուղիի մնացորդին ընդլայնումը. երեք ձեռնարկներն ալ պիտի յաջողին յաջորդաբար: Աւերտրիա ալ իր բաժինը կը պահանջէր. Արեւելեան երկաթուղիներու աւստրիական Ընկերութիւնը անհամաձայնութեան մէջ էր ՍսԷ կառա-



Պատերազմի յայտարարութեան սպառնալից ընթացքումը Սօֆիայի փողոցներուն մէջ


վարութեան հետ և ի դուր կ'աշխատէր իրաւարարութեան մը յանձնել վէճը: Սուլթանը, աւստրիական դեսպանին գիմուսներուն վրայ, խոստացաւ գոհացում տալ Ընկերութեան (քիչ ետքը իրօք պիտի բռնէր խոստումը) և Աւստրիան ալ տոսրակը դրաւ: Երբ չարչարողին խորհրդակցութիւններէ վերջ դեսպանները նստեցան ծրագրին վերջնական խմբագրութեամբ գրադելու, տեսնուեցաւ որ ամէնքն ալ համաձայն էին թէեւ բայց բացի ուսուսական և անգլիական դեսպաններէն, միւսները տրամադիր չէին երեւար աճապարելու: Համիտ անոնց բերանը մաս մը բան նետած էր արդէն. դեռ ուրիշ ակնկալութիւններ ալ ունէին անշուշտ և անոնց հաշիւն ալ կարգադրելու համար էր որ նպատակաւոր և Համիտը վրդովելու ձգտող լուրեր Եւրոպայի շրջանը կ'ընէին: Հոկտեմբեր 21ին Պոլսէն զրկուած հեռագիր մը կը ծանուցանէր. «Դեսպանները գումարուեցան ուսուսական դեսպանատունը և Պ. Զինովիէվի հետ խորհրդակցեցան Մակեդոնիոյ դատական բարենորոգմանց ծրագրին յօդուածներուն նկատմամբ: Բոլոր տէրութիւնները համամիտ են նշանակելու դատական

քննիչներ, բայց անոնց պաշտօնին մանրամասնութիւնները դեռ երկար խորհրդակցութեանց առարկայ պիտի դառնան: Այս միջոցին կատարեալ համամտութիւն կը տիրէ երկու դեսպաններուն (ուսուսական և աւստրիական) միջեւ, հակառակ Իրան ակնկալութեանց, որ կը յուսար իր դիմադրութիւնը յաջողցնել տէրութեանց անհամաձայնութեամբ»: Բոլոր ասոնք սակայն նոր առաւելութիւններ ձեռք բերելու համար դարձնուած խաղեր էին, ինչպէս յայտնաբար ըսած էր անգլիական դեսպանը՝ ֆրանսական դեսպանին, ծրագրին խորհրդակցութեանց միջոցին անոր ցոյց տուած դանդաղութիւնը զուտ շահամուտութեան վերագրելով:

Ճիշտ այդ ատենները (1907 Հոկտեմբեր), Մակեդոնիոյ մէջ պաշտօնավարող եւրոպացի սպաները, իրենց տարեկան գումարման տեղեկագրով Համիտէն նոր պատաններ փրցնելու միջոց մըն ալ հայթայթեցին դեսպաններուն: Եւրոպացի սպաները մէկը միւսէն անհերքելի բազմաթիւ փաստերով կը հաստատէին թէ տեղական իշխանութեանց յայտնի չկափաստերով կը հաստատէին անկարելի կ'ըլլայ բարետուր դարձնել Մակեդոնիոյ մութեան պատճառաւ՝ անկարելի կ'ըլլայ բարետուր դարձնել Մակեդոնիոյ ոստիկանական կազմակերպութիւնը: Տեղեկագիրը կը յայտնէր թէ քանի որ արիւնաւորութէր ոստիկանութեան գործունէութիւնը, այնքան աւելի կը մեծնային տեղական իշխանութեանց յարուցած դժուարութիւնները: «Բանի մը ամսէ ի վեր, կ'ըսէր, կը Հանան քանդել ինչ որ այնքան չորչարագին մը դժուարութիւններով կարելի եղած էր գոյացնել»: Տեղեկագիրը մասնաւորաբար կը ծանրանար զինուորներու գործած ծայրայեղութեանց վրայ, յայտնելով թէ անոնք լոկ ժողովուրդը չէին խոշտանգեր, այլ կը ձեռնէին նաև ոստիկանները, կրք այս վերջինները արգելք դառնային իրենց ապօրինութեանց: Յետոյ կ'առաջարկէր աւելի հիմնական և երաշխաւորուած բարենորոգումներ գործադրել, և ոստիկանութիւնը անկախ դարձնել ընդհանուր-քննիչէն «որ միշտ ամենամեծ յամաուրութեամբ կը հակառակէր օտար սպաներու կազմակերպիչ գործունէութեան»: Յաւր լոկ ոստիկանութեանէն չէր: Զինուորները եթէ ծայրայեղութեան կը մղուէին՝ պատճառը այն էր որ անօթի էին, ամսական չէին ստանար: Գողաքային պաշտօնեաները նոյնպէս ամսականի երես տեսած չունէին, և ստիպուած՝ կաշառակերութեան ապաւինած էին իրենց ապրուստի հարցը լուծելու համար: Որպէս զի թեան ապաւինած էին իրենց ապրուստի հարցը լուծելու համար: Որպէս զի Բարեկարգութիւնը իրականանար Մակեդոնիոյ մէջ, տէրութիւնները հարաւորապէս 12, պայմանաւ որ այդ յաւելուածական հասցիքին 75ը յատուկաւ Մակեդոնիոյ պէտքերուն: Դուռը սակայն, միշտ դրամի կարօտ, կացուի Մակեդոնիոյ պէտքերուն: Դուռը սակայն, միշտ դրամի կարօտ, չէր բռներ այս խոստումը. ատկէ պիւտճէի մշտակայ բաց մը որ բոլորովին կը կաշկանդէր Հիւմի փաշան և իր գործակիցները:

Երբ դեսպանները այս տխուր վիճակը Դրան ներկայացնելով պահանջեցին որ քիչ մը աւելի բարեկամեցողութիւն դնէ բարենորոգմանց գործադրութեան մէջ, Համիտ սկսաւ կիրարկել իրեն յատուկ ուրիշ մեթոտ մը. Պոլսոյ դեսպաններուն մէջ՝ անյողդողդ կը մնային միայն ուսուսական և անգլիական դեսպանները. Համիտ, անոնց ուշադրութիւնը Մակեդոնիայէն հեռացնելու համար, զինուոր անցուց պարսկական սահմանագլխէն:

Ուրմիայի վիճելի շրջանակին մէջ և դուռ բացաւ նոր խնդրի մը որ պակ մը Մակեդոնիան պիտի մուցնէր իրօք: Անգլիա և Ռուսիա օգոստոս ամս



Մեր պղնձուորներուն անդորրի պահը ընդհարումէ մը վերջ

սուն կնքած էին իրենց ասիական համաձայնութիւնը և Պարսկաստանը հաւասարապէս կը շահագրգռէր զիրենք: Միեւնոյն ատեն՝ Համիտ Քիւլ

տերը գործածեց միանգամայն թէ՛ Միջագետքի և թէ՛ Հայաստանի մէջ: Ուր մասնակի ջարդեր կատարուեցան, իբր թէ Հայ յեղափոխականներ հալածելու, բայց էպպէս անգլուստ վտանգը Մակեդոնիայէն Փոքր-Ասիա փոխադրելու և այնտեղ անոր հետ խաղալու համար: Բայց չուտով կասեցուց շարժումը, երբ գերմանական և իտալական դեսպանները «մտերմարար» խորհուրդ տուին Դրեն ճշմիայն կարգ կանոնը վերահաստատելու, այլ նաև կարգ մը բարենորոգումներ գործադրելու Հայկական վեց նահանգներուն մէջ, «առաջը առնելու համար տէրութեանց միջամտութեան որ անխուսափելի կրնայ դառնալ եթէ կացութիւնը այդ կողմերը ներկայ ծանրակշիռ վիճակին մէջ յարատեւ» (*):

Բոլոր ատենք սակայն չէին կրնար արգիլել դատական բարենորոգմանց աւարտուած ծրագրին մատուցումը որ տեղի ունեցաւ հոկտեմբերին: Դեսպանները վերջ ի վերջոյ համաձայնութեան եկած էին անոր խմբագրութեան մասին, բայց Համիտ խաղեր շատ ունէր իր տոպրակին մէջ: Այս անգամ դարձեալ իրեն յատուկ մեթոտի մը դիմեց, դատական բարենորոգմանց ծրագրին ղէմ հանելով ուրիշ ծրագիր մը, անհունապէս աւելի խոստմնաւատ՝ քան տէրութեանց մատուցածը: Ինչ հարկ դատական բարենորոգումներու, երբ ինք յանձնառու կ'ըլլար ընդհանուր, համադրական բարենորոգումներ գործադրել Մակեդոնիոյ մէկ ծայրէն միւսը, ու նաև բովանդակ Եւրոպական Թուրքիոյ մէջ. տէրութեանց կը մնար վճարող իր խոստման և սպասել արգիւնքին: Ոչ մէկ տէրութիւն անշուշտ կը հաւատար թէ այդ խոստումը կրնայ երբեք գործադրութեան դրուիլ: Հայաստանի օրինակը դեռ չէր մուսուսած. Համիտ ճիշդ այդ անուշիկ եղանակով... բարեջարդած էր մեր վեց նահանգները: Եւ սակայն, գոնէ չորսը տէրութիւններէն, շահ ունէին դատական բարենորոգմանց ձգձգման մէջ. կրնային նոր բան մը փրցնել: Այս պատճառաւ, որոշեցին խորհրդակցութեան ենթարկել Դրան հակառակարկը:

Տակաւին իրենց խորհրդակցութիւնը չէր աւարտած, երբ Համիտ նոր և աւելի դժուարալոյծ խնդիր մը հանեց մէջտեղ. առարկելով թէ Միւրձ-թէկի ծրագիրը հիմնովին գործադրուած է և թէ իր խոստացած բարենորոգմանց իրականացման համար այլ ևս պէտք չկայ օտար գործակալներու և սպաներու, պահանջեց որ անոնք ետ կանչուին. չէ՞ որ անոնք ժամանակաւորապէս պաշտօնի կոչուած էին, և իրենց երկամեայ պաշտօնավարութեան շրջանը որ նորոգուած էր 1906ին, կը լրանար 1908 Մարտ ամսուն: Երկրագործական և հանքերու նախարար Սէյիմ փաշա Մէլիհամէ՛ այս տեսակէտը Եւրոպական դաշիւճներուն առջև արժեցնելու պաշտօնով ճամբայ ելաւ Պոլսէն: Այլևս կարելի չէր դատական բարենորոգմանց մասին խօսիլ, երբ Պոլսէն իսկ բարենորոգումները երաշխաւորելիք եւրոպացի պաշտօնատարներու գոյութեան հարցը կը վտանգուէր: Եւ անա նոր խորհրդակցութեանց ու նաև նոր վէճերու աղբիւր մը միանգամայն թէ՛ Պոլսոյ դեսպաններուն և թէ՛ Եւրոպայի դաշիւճներուն համար: Համիտի յարուցած

(*) Բրո Արևիկա, 1907 նոյեմբեր:

առարկութիւնը սոսկ ձեւական բան մըն էր, տեղի պիտի տար մէկ օրէն միւսը, բայց վերջապէս անցնող իւրաքանչիւր օր քիչ մը աւելի կը յապաղեցնէր դատական բարենորոգմանց գործը և քիչ մը աւելի ժամանակ կ'ուսնենար զայն վերջնականապէս ջուրը ձգող միջոց մը փնտռելու: Աէ-



ՊՈՐՁԱՆԱԻՐ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Երկաթուղիներու ցանցը ռուսական և աւստրիական սահմաններէն դէպի ռուսա- նական, պուրկարական, սերպիական և գարատաղեան սահմանները

իմ փաշա Մէլիամէի վիեննայէն ղրկած տեղեկութիւնները բոլորովին կը յուսադրէին զինքը. «սակարկութիւնը» յաջողելու վրայ էր, և անոր հիմը ո՛չ այնքան իրապէս եւրոպացի պաշտօնատարներու հեռացումը, որքան դատական քննիչներու և բարենորոգմանց մերժումն էր: Երբ Սէլիմ փաշա անցաւ Հռոմ, ուր գտնուած միջոցին Պոլսոյ մէջ պիտի պայթէր 1908 Յուլիսի Յեղափոխութիւնը, Համիտ այլևս Աւստրիայէն վախու- բան

չունէր: Միւս պետութիւնները նոյնպէս մէյմէկ նկատուձով, — տարակոյս չկայ որ շահու նկատուձով — թուլցուցած էին դատական բարենորոգմանց



Կառավարանի կողմից իսպառ պատերազմի գաղտնի վրտա, սերպ վիթաւորի մը շուքիքը

մասին իրենց ցոյց սուլած պահանջկոտութիւնը: Փոխադարձաբար՝ Համիտ ալ տակաւ կը թուլցնէր Մակեդոնիոյ մէջ գործող եւրոպացի պաշտօնատարներու մասին յարուցած ընդդիմութիւնը, և տրամադիր կ'երեւար

անոնց պաշտօնավարութեան շրջանը երկարաձգելու: Չինքը, հետեւաբար նաև Թուրքիոյ քաղաքականութիւնը ուղղողը այդ միջոցին Պ. Մարչալին էր, Գերմանիոյ Պոլսոյ դեսպանը: Ան մանաւանդ միջնորդի դեր մը կը խաղար Եւրոպայի դահլիճներուն մօտ, ու կը վարէր Պոլսոյ դեսպաններուն գործունէութիւնը, — բնական է ինք այ գերմանական շահերը ապահովելով: Քիչ տալ՝ շատը փրկելու համար. ասիկա անխախտելի պետական սկզբունքն էր միշտ Համիտի աչքին, և ճիշդ այդ խաղն էր որ կը խաղար Պ. Մարչալի միջոցաւ: 1908 մարտ 13ին, վերջապէս տեղի տուաւ, յանձն առնելով Մակեդոնիոյ մէջ գործող բոլոր եւրոպացի պաշտօնատարներուն, թէ՛ քաղաքային գործակալներուն, թէ՛ ոստիկանական մարզիչներուն և թէ՛ ելմտական քննիչներուն պաշտօնը երկարաձգել ո՛չ միայն երկու տարուան նոր շրջանով մը, այլ այնքան ժամանակ որքան որ պիտի տեւէր մաքսային տուրքի 3/0 յաւելումը, այսինքն մինչեւ 12 յուլիս 1914: Այս զիջումը ըրած ատենը՝ Պ. Մարչալէն ամէն ապահովութիւն ստացած էր թէ դատական բարենորոգմանց, մանաւանդ դատական քըննիչներու խնդիր չպիտի յարուցանեն տէրութիւնները:



ՀԻԻՍԷԻՆ ՀԻԼՄԻ ՓԱՇԱ



ԳԼՈՒԽ ԺԱ.

ՅՈՒԼԻՍԵԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻԻՆԸ



Մինչեւ Համիտի տեղի տալը (1908 մարտ 13), «բան մը փոխուած էր Եւրոպայի մէջ» . Աւստրիոյ արտաքին գործոց նախարար Պաուսն տ'էրէնթալ՝ 1908 Յունուար 27ին հունգարական պատուիրակութեան արտաքին գործոց յանձնաժողովին առջեւ արտասանած ճառով՝ կը քանդէր աւստրիւսուս համաձայնութիւնը Արեւելքի մասին, և ցոյց կուտար այն նոր ճամբան որուն մէջ պիտի մտնէր Աւստրիա, և իրեն հետ ալ այդ նոր ուղղութեան բուն թելադիրը՝ Գերմանիան: — «Հաւատարիմ մեր պալքանեան քաղաքականութեան, կ'ըսէր Պ. տ'էրէնթալ, մենք չենք ուզեր հողային աշխարհակալութիւն մը ընել: Պալքաններուն մէջ մենք քաղաքակրթական և տնտեսական դեր մը միայն ունինք, և մեր այդ դերը կարելոր է անոր համար մանաւանդ որ Պալքանեան երկիրները նշանակելի զարգացման թուականի մը նախօրեակին մէջ կը գտնուին: Միջազետքի և Փոքր Ասիոյ բացումը տնտեսական կեանքին առջեւ՝ միշտ դերման նախաձեռնող ոգիին մէկ մեծագործութիւնը պիտի նկատուի: Ուրիշ քաղաքակիրթ մեծ տէրութիւններ՝ նոյնքան եռանդով կ'աշխատին Օսմ. կայսրութեան մէջ նոր տնտեսական աղբիւրներ ստեղծելու: Բոլոր այս ձեռնարկները որոնք մեծ մասամբ նոր և շատ կարելոր երկաթուղիներու շինութեան մէջ կը կայանան, — խնդիր չէ թէ այդ երկաթուղիները արեւմուտքէն արեւելք կամ արեւելքէն արեւմուտք ուղղուին, — մեծ նպատակի մը կը ձգտին, այսինքն՝ տնտեսական բարիքներու հսկայ փոխանակութիւն մը ստեղծել Արեւմուտքի և Արեւելքի միջև, Պոլսոյ և Նեղուցներուն ճամբով: Տարակոյս չկայ որ կ. Պոլսէն անդին գտնուող երկիրները այս տեսակէտով մեծ կարելորութիւն մը ունենալու կոչուած

են: Բայց մենք այ՛ Պօսնայի գրաւմամբ՝ Պալքանեան տէրութիւն մըն ենք. մեր պարտականութիւնն ու նպատակը պէտք է ըլլայ ուրեմն լաւ մը որոշել ժամանակի նշանները և անոնցմէ օգտուիլ: Ասիկա կ'ըսեմ՝ երկաթուղիներու քաղաքականութիւն մը նախատեսելով»:

Եւ ահա ճիշտ այդ նոր քաղաքականութիւնն էր զոր յանկարծ երեւան կը բերէր Պ. տ'Էրէնթալ, և որուն քով այրեւս նշանակութենէ կ'իյնար բարեկարգութեանց քաղաքականութիւնը: Բացատրենք նախ թէ ինչ էր իր երկաթուղիներու քաղաքականութիւնը: Հաստատելէ ետք այն բարեքը զոր երկիրը քաղած էր դէպի Արեւելք իջնույ երկաթուղիի գիծերուն մինչեւ թրքական և սերպիական սահմանները երկարաձգուելէն, Պ. տ'Էրէնթալ կը յայտնէր թէ մտադիր է շարունակել այդ բարեաուր ուղղութիւնը. Պօսնայի գիծը միացնելով Արեւելան երկաթուղիներու Օսմ. գիծերուն: Պօսնայի գիծը կ'երկարէր մինչեւ Իւվաէ. իսկ Արեւելեան երկաթուղիներու Օսմ. գիծը՝ Պոլիս-Սելանիկ ճամբով՝ կը հասնէր մինչեւ Միթրովիցա: Այս երկու ճայրագոյն կէտերը՝ Իւվաէն ու Միթրովիցան իրար միացնելու համար՝ երկաթուղիի գիծ մը պէտք էր անցընել Նովի Բազարի Սանճագէն: «Երբոր պօսնիական գիծը Օսմ. գիծերուն միանայ, կ'ըսէր Պ. տ'Էրէնթալ, մեր վաճառականութիւնը Սէրայէվօն (Պօսնա) պիտի ուղղուի շիտակ եզեւական և անկէ այ՛ Միջերկրական. միւս կողմէ՛ յոյս կայ որ քիչ ատենէն միանան նաև թրքական և յունական գիծերը՝ ինչ որ ուղղակի հաղորդակցութեան մէջ պիտի դնէ Վիեննան, Պուտաբէշթը, Սէրայէվօն, Աթէնքն ու Պիրէսը, և պիտի կազմէ ամէնէն ուղիղ ճամբան կեդրոնական եւրոպայի և եգիպտոսի ու Հնդկաստանի միջև»՝ Այսպէս ուրեմն՝ անտեսական աշխարհակարութեան ծրագիր մը կը պարզէր Պ. տ'Էրէնթալ Յունուար 27ի իր ճառով, յայտնելով թէ Պոլսոյ աւըստրիական դեսպանը ոգի ի յուն կ'աշխատի Իւվաէ-Միթրովիցա գիծին արտօնութիւնը ձեռք բերելու (*): Տեսակ մը «խաղաղ թափանցում» էր ուրեմն Աւստրիոյ հետապնդած նպատակը և Պ. տ'Էրէնթալ հաւանական կը նկատէր անոր իրականացումը, որովհետև Այճէզիրասի Դեսպանախորհուրդը դեռ նոր նոր «խաղաղ թափանցում» օրինաւորութիւնը հռչակած էր Փրանսայի հաշուին՝ Մարտի համար: Եւ արդէն՝ Պէրլինի Դաշնագրով նախատեսուած ու նուիրագործուած էր Աւստրիոյ առած այս քայլը. — «Պօսնայի և Հէրսէքի նահանգները, կ'ըսէ Դաշնագրին 25րդ յօդուածը, պիտի գրաւուին ու կառավարուին Աւստրիոյ-Հունգարիոյ կողմէ: Աւստրո-Հունգար կառավարութիւնը չուզելով ստանձնել նաև վարչութիւնը Նովի Բազարի Սանճագին որ Սերպիոյ և Գարատաղի մէջտեղէն դէպի հարաւ-արեւելք՝ մինչև Միթրովիցա կ'երկարի, Օսմ. վարչութիւնը պիտի շարունակէ անոր մէջ: Եւ սակայն, քաղաքական նոր կացութեան պահպանումը, ինչպէս նաև հաղորդակցութեան միջոցներու ազատութիւնն ու ապահովութիւնը երաշխաւորելու համար, Աւստրիա-Հունգարիա իրեն կը վերապահէ Պօսնայի նախկին նահանգին այդ մասին բովանդակ տարածութեան վրայ զինուոր պահելու և զինուորական ու առեւտրական ճամբա-

(*) Յունուար 30ին՝ Համիտ պիտի տար շինութիւնը արտօնող իրատէն:

ներ շինելու իրաւունքը, որուն մանրամասնութիւնները՝ որոշելու մէջ ազատ են Աւստրիոյ-Հունգարիոյ և Թուրքիոյ կառավարութիւնները»: Գերման ոգին՝ զոր Պիզմարքի պէս հանձար մը կը մարմնաւորէր, 1878ին հարթած էր ուրեմն դէպի Սելանիկ մղումը ապահովող ճամբան. Իւվաէ որ մեկնակէտը պիտի ըլլար նոր գիծին՝ 160 քիլօմէթր հեռաւորութեամբ մը միայն բաժնուած էր Միթրովիցայէն. ուրիշ կը սկսի Արեւելեան եր-



Հանգիստի պահու մը միջոցին

կաթուղիներու Օսմ. գիծը, որուն դրամագլուխին տէր և վարիչները Աւստրիացիներ ու Գերմաններ են: Միթրովիցայէն անդին՝ Արեւելեան երկաթուղիներու այդ գիծը կ'անցնի Բոսովայի պատմական դաշտէն ու Շար Տաղի կիրճերէն, կ'իջնէ Սկիւպ՝ ուր կը միանայ Նիշի ճամբով Պէլկրատէն երկարող գծին ու կ'իջնէ դէպի Վարտարի ափերը, մինչև Սելանիկ: Ինչպէս կը տեսնուի, Պ. տ'Էրէնթալի հետապնդած երկաթուղիներու քաղաքականութիւնը ուրիշ բան չէր, այլ նոյնինքն Գերման տարրին աւանդական քաղաքականութիւնը, — «Մղում դէպի Արեւելք», — ուրիշ կերպ ըսելով՝

Համապուրկը Սեյանիկի միացնող քաղաքական-տնտեսական ճամբու մը ապահովութիւնը, և եթէ կարելի լլլար՝ իւրացուի. Եգէական և անկէ ալ Միջերկրական իջնելու համար (*): Այս մասին Համիտի հետ բանակցութեան մանելով՝ Պ. տ'Էրէնթալ երեսուն տարի առաջ Պէրլինի Դաշնագրով նուիրագործուած իր իրաւունքէն կ'օգտուէր: Եւ Համիտ որ այդ երեսուն տարիներու ընթացքին ամէն կարելի միջոցներով աշխատած էր Նօվի Բազարի Սանճագը Աւստրիոյ ճանկէն դերծ պահելու, եթէ 1903ին այսպէս հլու թեամբ կը հպատակէր Աւստրիոյ նկատուիներուն՝ պարզապէս Մակեդոնիոյ դատական բարենորոգմանց ու քննիչներու հարցը ջուրը ձգել տալու համար էր. միշտ պղտիկ պատաններով մեծ պատանները փրկելու քաղաքականութիւնը՝ իր Շարայեան օխորժակի տէր և մշտապէս անկուշտ դրաղիներուն մէջ:

Տնտեսական ծաւալման պատրուակը՝ որուն կը յենուր Պ. տ'Էրէնթալի ճառը, անշուշտ կը ծածկէր նաև քաղաքական նպատակներ, նոյն իսկ երկրակալութեան յոյսեր: Ուղղալ թափանցումը ինքնին աշխարհակալութեան միջոց մը, աւելի ճիշդը՝ աշխարհակալութեան զանազան ձևերէն մէկն է. Անգլիա Հնդկաստանի և Եգիպտոսի մէջ, Ֆրանսա Ալճերիոյ, Թունուզի և Մարօքի մէջ, Ռուսիա Թուրքեսթանի, Մանչուրիոյ և Մոնկոլիայի մէջ, — մի միայն այս մէկ քանի օրինակները յիշենք, — այդ կերպով տեղաւորուած են. և երկաթուղին է աշխարհակալութեան այդ եղանակին ամենաապահով միջոցը: Երկաթուղին իրեն հետ առաջ կը տանի տնտեսական շահերը, որոնք նոյնացած են քաղաքական շահերուն հետ, անո՞ց ապահովութեան պատրուակ կը դառնան և անոնց իրականացումը կը դիրացնեն: Պ. տ'Էրէնթալի առաջ բերած տնտեսական նկատուիներն ալ իրր մեկնութիւն Աւստրիոյ բռնած նոր քաղաքականութեան, բնական է չէին կրնար ծածկել այն քաղաքական նկատուիները զորս Աւստրիա կը յուսար յաջողցնել այդ նոր ուղղութեամբ, որուն յանձնուած էր գահաժառանգ Ֆրանց-Ֆէրտինանտ Արհիդուքսին և զայն շրջապատող երիտասարդ ու տաքարիւն զինուորականներու ուղղակի ազդեցութեան տակ: Նոր չէր այդ քաղաքականութիւնը. գահաժառանգն ու իր գաղափարակիցները անոր հիմերը դրած էին 1902ին, երբ անկլեճարոնական դաշնագրին կրնուած ջուրը Ռուսիոյ դիրքը դժուարացուցած էր Մայրագոյն Արեւելքի մէջ, ձարոնի հետ պատերազմը հաւանական դարձնելով, Աւստրիոյ-Հունգարիոյ ներքին տագնապները միայն անկարելի դարձուցած էին այդ քաղաքականութեան կիրարկումը: Պ. տ'Էրէնթալ որ 1909ին պաշտօնի կոչուած

(*) Նոր երկաթուղին Աւստրիան անկախ կը դարձնէր նաև Հունգարիայէն, Արեւելքի տիրապետութեան ձգտումին մէջ. Աւստրիա Արեւելքի հետ կը հաղորդակցի Պոլտաբէշթի ճամբով, և Սեյանիկ հասնելու համար ցամաքէն ուրիշ ճամբայ չունի՝ այլ միայն Պոլտաբէշթ - Պէրլին - Նիշ գիծը: Իւվաէ-Միթրովիցա գիծին շինութիւնը զինքը կը փրկէր միանգամայն թէ Հունգարիոյ և թէ Սերպիոյ կարօտ մտաւու հարկէն: Ու եթէ օր մը Հունգարիա անջատուէր իրմէ, ատկա ուղղակի վնաս մը չպիտի բերէր դէպի Արեւելք եր յառաջխաղացութեան, քանի որ Պոնայէն Միթրովիցա երկաթուղի գիծին շնորհիւ աւելի ուղիղ ու կարճ ճամբայ մը ապահոված պիտի ըլլար լանիկ ու Եգէական իջնելու համար:

էր, հակառակ անոր որ ջերմ կուսակից մըն էր գահաժառանգին գաղափարներուն, չկրցաւ անմիջապէս յանձնուիլ նոր ուղղութեան, որովհետև ներքին տագնապները չէին դադրած տակաւին: Բայց 1907 տարուան ընթացքին՝ միանգամայն թէ՛ ներքին և թէ՛ արտաքին դժուարութիւնները թագքին՝ միանգամայն թէ՛ արտաքին արտասանած էր Յունուար ծածկելու պատճառ չկար. և Պ. տ'Էրէնթալ արտասանած էր Յունուար 27ի ճառը որ իր սպասածէն անհունապէս աւելի մեծ ազմուկ պիտի յարուցանէր, մասնաւորաբար Իեթէրսպուրկի և Հոնտոնի մէջ:

Նոր քաղաքականութիւնը որուն պիտի հետեւէր Պ. տ'Էրէնթալ, Արեւելքի տիրապետութեան կը ձգտէր ո՛չ միայն երկաթուղիներով, այլ մանաւանդ Մակեդոնիոյ մէջ սարսափի, արհաւիրքի ու ջարդելու դրութեան յաւերժացմամբ: Այլևս կարելի չէր Աւստրիան հաճեցնել բարենորոգման քաղաքականութեան, որուն գէշ աղէկ կը հետեւէր 1897ի ըրգման քաղաքականութեան, որուն համաձայնութենէն ի վեր: Համիտի հաճոյ երեւալու պատաւստրեւուս համաձայնութենէն ի վեր: Կրնալու թուրքիոյ մէջ կիրարկուելիք ո՛ր և է համար հաւանէր իսկ Եւրոպական Թուրքիոյ մէջ կիրարկուելիք ո՛ր և է բարենորոգման ձեռնարկի, տարակոյս չկայ որ ձեռքի տակէ ոչինչ պիտի խնայէր այդ ձեռնարկը անյաջողութեան մասնելու համար: Մնաց որ՝ Եւրոպական Թուրքիոյ մէջ յոռի ու խռով դրութիւն մը անսահման կերպով կը նպաստէր իր նոր քաղաքականութեան, մինչդեռ ընդհակառակը խաղաղ ու բարեկարգ վիճակ մը մեծագոյն խոչնդոտը պիտի դառնար անոր յաջողութեան դէմ. Արեւելքի Սքարու Բոսնի անխախտ պահպանումը որ հիմն էր 1897ի աւստրեւուս համաձայնութեան ու անոր հետեւող բարենորոգման բոլոր ծրագիրներուն ու ձեռնարկներուն, Աւստրիոյ համար ուրիշ բան չէր. այլ միայն յարատեւութիւնը մէկ կողմէ համիտեան ջարդերու, բռնութեանց և հարստահարութեանց դրութեան, ու միւս կողմէ ալ ալպանական ըմբոստութեանց, Քրիստոնեաներու ապստամբութեան, ցեղերու եղբայրասպան կռիւներուն, վերջապէս Եւրոպական Թուրքիան հրդեհող բովանդակ ղուլումին ու արհաւիրքին: Թուրքն ու Քրիստոնեաները՝ այդ տխուր դրութեան մէջ անընդհատ իրար պիտի տկարացնէին, և երկու կողմերուն քով ալ դիմադրութեան կարողութիւնն ու կորովը պիտի սպառէր. և երբ հնչէր Հապսպուրկներու ժամը, թիւնն ու կորովը պիտի սպառէր. և երբ հնչէր Հապսպուրկներու ժամը, երբ արտաքին նպաստաւոր պայմաններ ոտնձգութեան, գրաւման ճամբան բանային Աւստրիոյ առջեւ, ո՛չ Թուրքերը պիտի կրնային իր ճամբան փակել, ոչ ալ նոյնքան հիւժած և ուժասպառ Քրիստոնեաները: Այլևս երկու ուղղութիւն կը գոյանար Մակեդոնիոյ համար. մէկ մը Մակեդոնիան շփոթ պահելու և լոկ անուանական բարենորոգումներով գոհանալու այս

(*) 1907 Մարտ ամսուն գահաժառանգ Ֆրանց-Ֆէրտինանտ Արհիդուքսը խորհրդաւոր ճամբորդութիւն մը ըրաւ Պէրլին. մասնաւոր երկարօրէն խօսեցաւ վիճելի կայսեր կողմէ Արհիդուքսին հանդէպ ցոյց տրուած արտակարգ մտերմութեան մասին, առանց սակայն այցելութեան նպատակին նկատմամբ ոչինչ արձանագրելու: Մայիսին Պէրլին կ'այցելէր նաև Պ. տ'Էրէնթալ որ քիչ ետքը Տէգլիօի մէջ տեսակցութիւն մը պիտի ունենար Իտալիոյ արտաքին գործոց նախարարին հետ:

աւստրիական ուղղութիւնը, որուն համամիտ էր Գերմանիա, մէյ մըն ալ Մակեդոնիան ներքնապէս խաղաղ և բարենորոգումներն ալ դրական դարձնելու ուղղութիւնը, որուն կուսակից էին Անգլիա, Ռուսիա ու Ֆրանսա: Իսկ Իտալիա՝ պարագաներուն համեմատ ու պայմանաւոր կերպով, կրնար յարիլ մէկ կամ միւս կողմին: Ահա այս կացութեան կ'ենթարկուէր Մակեդոնիա՝ 1908 յունուար 27ին՝ երբ Պ. տ'Էրէնթալ կ'արտասանէր իր համբաւաւոր ճառը:

Ճիշտ այդ միջոցին ոուս քաղաքականութիւնը ինքնամիտփման շրջանի մը մէջ մտած էր: Մայրաքոյն Արեւելքի մէջ դեռ նոր



Մայրերը և զուր կը սպասեն իրենց զաւակներուն

նոր կրած ծայրագոյն պարտութեան բնական հետեւանքն էր ատիկա՝ Հեռաւոր ուստաններու մէջ կատարուած արկածախնդրութիւնները որոնք Մուքոէնի և Չուշիմայի աղէտներուն պիտի յանգէին, հանրային համակրութեան առարկայ չէին դարձած երբեք. Մանչուրիան ու Քորէան Ռուս ժողովուրդին սրտին չէին խօսեր. այդ էր պատճառը որ մինչդեռ պարտութիւնները իրարու կը յաջորդէին, փոխանակ հայրենասիրական պարթկուծով մը գահուն ոյժ տալու և զայն ամրապնդելու, ընդհակառակը անոր դէմ դաւած էր, ոյժ տալով յեղափոխական շարժման: Ռուս կառավարութիւնը շարժումը դապած էր, բայց ժողովուրդին վստահութիւնն ու աջակցութիւնը ապահովելու պէտքը ուրիշ ամէն ատենէ աւելի տիրական կը մնար: Պէտք էր զայն յանկուցանել նոր քաղաքականութեամբ մը և ան շուտով ամուր յենակ մը պիտի դառնար ներքին և արտաքին ձախողութեաներու պատճառաւ խախտած գահուն: Եւ լաւագոյն քաղաքականութիւնը որուն Ռուսիա կրնար հետեւիլ՝ այդ արդիւնքը ձեռք բերելու համար, իր պատմական աւանդութեանց վերադարձն էր, — Հեռաւոր Արեւելքին տեղ Մերձաւոր Արեւելքը: Աւստրիոյ հետ կնքած համաձայն



- *** x հին սահմանները
 - - - - - նոր " "
 - ▬ երկաթուղի
 - գետ
 - ▨ Պուլկարիա
 - ▩ Սերպիա
 - ▧ Յունաստան
 - ▨ Սեւ լճը
- Ծանոթ. — Սպիտակ ձգուած տողերը վիճելի կետերն են.

Ի՞նչ ՀԱՇՈՒՈՎ ձԱՄԲԱՅ ԵՒ ԱՆ ԵՐ ԳԱՆՔԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻԿՆԵՐԸ
 Բաղդատեւ իրենց երբեմնի կայսրութեան քարտէսներուն հետ 185 (յուշական), էջ 147 (պուլկարական) և էջ 174 (սերպիական)

նութիւնը՝ որուն նպատակն էր Արեւելքի սրաքու խօտին պահպանումը, ուրիշ կերպ ըսելով՝ համիտեան բէժիմի բռնութեանց, սպանութեանց և հարստահարութեանց պահպանումը, այդ ինքնամիտիման օրերուն պարզապէս անարգանք մը կը թուէր իր դարաւոր աւանդութեանց դէմ: Սլաւ եղբայրներու ողբագին հայցումը և դառն զանգատները



Դանուբ-Ագրիական երկաթուղիի գիծը և Սև Լերան ու Սերպիոյ ազդեցութեան շրջանակները

որոնցմով Ռուսիան պատասխանատու կը բռնէին իրենց չարչարանքներուն, թրջական դարհուրանքին արձագանգները որոնք միշտ աւելի մահասարուռ ուժգնութեան կը հասնէին, անընդհատ կը խօսէին Ռուս ժողովուրդին սիրտը. որքան անձնագործութեամբ և անխառն յախտակութեամբ Չարին ու իր նախարարներուն ոյժ պիտի տար՝ եթէ երբեք Մայրագոյն Արեւելքի պատերազմը Մերձաւոր Արեւելքի մէջ մղուած ըլլար. 76ի տակաւին անմեռ յիշատակները միակ զանգուածի մը պէս ոտքի պիտի հանէին բովանդակ Ռուսիան. համայնը՝ բայց Համիտի բարբարոս բռնակալութեան տակ չարչրկուող եղբայրներու ազատագրու-


Թեան հեռանկարը պիտի յանկուցանէր նոյն իսկ ծայրայեղ տարրերը, և գահուն դէմ ծառայող ամէնէն անհաշտ յեղափոխականն իսկ, այդ խտ-
 ալին անունով պիտի գար գահուն ոյժ տալու: Ռուս պետական մարդիկը
 այս մտածմանց յանձնուած էին 1908ի սկիզբը, Մանչուրիոյ պարտու-
 թեանց վնասները դարմանելու աշխատած ատեննին:

Արդէն ուրիշ պատճառ մըն ալ ունէին իրենց ուշադրութիւնը դէպի
 Պալքանեան Թերակղզին դարձնելու համար: Յորմէ հետէ աւստրուս
 համաձայնութիւնը կը տեւէր, Ռուսիա քայլ առ քայլ կորսնցուցած էր
 այն ազդեցութիւնը զոր կը վայելէր երբեմն Թերակղզին մէջ. իր հիւպա-
 տոսները առաջ գրեթէ ամենայն ինչ էին այնտեղ, յաճախ աւելի ազդեցիկ
 քան բուն իսկ իշխող պետութեան պաշտօնատարները. այդ հողին վրայ
 ուր Ռուսերը այնքան յաղթանակներ տարած էին և որ իր մեծագոյն տա-
 րածութեամբ իրենց արիւնտով ուռզուած էր, հիմայ Աւստրիոյ ազդեցու-
 թիւնը գերակշիռ կը մնար. աւստրիական հիւպատոսները նոյնն էին
 այնտեղ, ինչ որ էին երբեմն ռուսական հիւպատոսները: Արքայու ֆուօի
 քաղաքականութիւնը ուրեմն լոկ Աւստրիոյ նպաստած էր, ի վնաս Ռու-
 սիոյ: Ռուս պետական մարդիկը այլևս աշխարհակալութեան նպատակներ
 չունէին Պալքաններուն մէջ. Ռուսիոյ ջանքերուն և զոհողութեանց չնոր-
 հիւ մարմին առած պղտիկ պետութիւններէն իւրաքանչիւրը ջերմիւ կապ-
 ուած էր իր սեփական անկախութեան, պատրաստ զայն պաշտպանելու
 ընդդէմ ամէն բանի. ընկուզել զանոնք Ռուսական կայսրութեան մէջ
 այլևս անհնարին բանդադուշանք մըն էր. բայց վերջապէս Ռուսիա կըր-
 նար և իրաւունք ունէր բարոյական առաւելագոյն ազդեցութիւնը իրեն
 ապահովելու իր հերուան երախտապարտներուն մէջ:

Ահա այս տեսակ ատեն մը կը հասնէր Պ. տ'Էրէնթալի ճառը, որ
 աւստրուսական համաձայնութեան անանկութեան յայտարարութիւնն էր
 ամէն բանէ առաջ: Ռուսիա նոյնպէս կը փափաքէր թօթափելու այդ
 կաշկանդիչ համաձայնութիւնը որ լոկ Աւստրիոյ շահերուն նպաստած էր
 մինչեւ այն ատեն: Առիթը սքանչելի էր: Երկաթուղիներու քաղաքակա-
 նութիւնը յաջողցնելու համար Աւստրիա Համիտի ձեռնտու ուղղու-
 թեան մը պիտի հետեւէր անշուշտ, ջուրը ձգելու աշխատելով բարե-
 նորոգմանց գործը, զոր Ռուսիա պիտի փութար ձեռք առնել՝ միանգա-
 մայն թէ՛ Պալքանեան պետութեանց և թէ՛ Եւրոպական Թուրքիոյ ժողո-
 վուրդներուն համակրութիւնը ապահովելով:

Եւ սակայն, Ռուսիա չկրցաւ. պէտք եղածին պէս օգտուիլ այդ աղ-
 ուոր առիթէն: Միջոց մը ընդհանուր շփոթութիւն մը տիրեց Բեթէրս-
 պուրկի քաղաքական շրջանակներուն մէջ. մամուլը մանաւանդ ահագին
 աղմուկ փրցուց, և աւստրուսական համաձայնութիւնը վերջնականապէս
 քանդուած հռչակեց, խզման բովանդակ պատասխանատուութիւնը բեռ-
 ցընելով Աւստրիոյ ուսերուն: Դժգոհութիւնը մեծ էր մանաւանդ պաշտօ-
 նական մարդոց մօտ, և նոյն իսկ Ձարը անձնապէս չէր ծածկեր իր տհա-
 ճութիւնը: Պ. տ'Էրէնթալի ճառէն երկու օր վերջ, Անգլիոյ էտուար
 թագաւորն ալ իր գահաճառովը կը շեշտէր աւստրուսական համաձայնու-

թեան վախճանը, յայտնելով թէ այլևս մեծ տէրութիւններու համախումբ
 գործակցութեամբ պիտի հետապնդուի բարենորոգմանց գործը, որ չի կըր-
 նար մոռացութեան տրուիլ ուրիշ ու է տեսակ քաղաքականութեան սի-
 , ոյն: Հարուածը ուղղակի Պ. տ'Էրէնթալի հռչակած երկաթուղիներու
 քաղաքականութեան դէմ ուղղուած էր: Այսպէս՝ փոթորիկը պայթեցաւ
 երկու կողմէն միանգամայն, թէ՛ Ռուսիայէն և թէ՛ Անգլիայէն, ու պահ
 մը ա՛յն աստիճան սաստկացաւ որ Պ. տ'Էրէնթալ լրջօրէն կը մտածէր
 տեղի տալ և հրաժարիլ: Աւստրիոյ գահաժառանգն ու իր երիտասարդ աշ-
 խատակիցները սակայն չուզեցին իրենց յաւակնութեանց ձեռնտու նախա-
 րարը ձեռքէ փախցնել. Պ. տ'Էրէնթալ մնաց, և նոր ճառով մը կէս բե-




ՍՕՖԻԱՅԻ ՏԵՍԱՐԱՆՆԵՐԷՆ

Պատերազմական նախարարութեան շէնքն ու Ազգ. Թատրոնը
 (Երեսուն տարի առաջ միայն աւերակներ կային այս հողին վրայ)

րան յայտնելէ ետքը թէ երկաթուղիներու քաղաքականութիւնը բարենո-
 րոգմանց քաղաքականութեան լքում չի նշանակեր, միւս տէրութիւնները
 ազատ հռչակեց իրենց ուզած եղանակով բարենորոգմանց գործը հետա-
 պընդելու: Եթէ այդ միջոցին Ռուսիա՝ Անգլիոյ հետ ձեռք ձեռքի տալով՝
 դրական գործունէութեան մը ձեռնարկէր Մակեդոնիոյ մէջ, տարակոյս
 չկայ որ անսահման արդիւնք ձեռք պիտի բերէր թէ՛ իր սեփական ազդե-
 ցութիւնը զօրացնելով, և թէ՛ մանաւանդ Մակեդոնիոյ մէջ աւելի տանելի
 կեանքի պայմաններ ստեղծելով: Պ. տ'Էրէնթալի ճառին յարուցած յու-
 ճումը որ կերպով մը ամօթահար թողած և շփոթութեան, հետեւաբար
 նաև դիմադրելու անկարողութեան դատապարտած էր Երբեակ Ձինակ-
 ցութիւնը, մեծապէս պիտի դիւրացնէր անգլուստ գործողութիւնը:

Բայց փոխանակ հետեւելու այդ ճամբուն որ մեծ առաւելութիւններ
 պիտի բերէր իրեն, կարծեց աւստրիական ծրագրին հակադէպ՝ երկաթու-
 ղիի քաղաքականութեան պատասխանելով դարձեալ երկաթուղիի քաղա-
 քականութեամբ մը: Աւստրիական երկաթուղին որ պիտի իջնէր Միթրովի-
 ցա, Սապէ գետէն դէպի Արշիպեղազոս ճամբան կը հետապնդէր. Ռուսիա

անոր դէմ հանեց Գանուբ գետէն դէպի Աղբիական երկարելիք երկաթուղիի ծրագիր մը . գերմանական «Մղում դէպի Արեւելք»-ին կը պատասխանէր սլաւական «Մղում դէպի Արեւմուտք»ը . միշտ նոյն յաւերժական գերմանո-սլաւ հակամարտութիւնը : Ռուսիոյ ծրագրած երկաթուղին՝



Պալքաններու երկաթուղիներն ու ծրագրուած երկաթուղին գիծերը

ամէնէն կարճ ճամբան պիտի դառնար իր հարաւային նահանգներուն և Աղբիականի միջեւ , և իրեն հետ՝ Ռուսիոյ ու Սերպիոյ միջոցաւ՝ հաղորդակցութեան մէջ պիտի պահէր սլաւ ժողովուրդները : Սերպիա մասնաւոր կերպով մը կը շահագրգռուէր այդ ծրագրին , որովհետեւ նոր շինուելիք երկաթուղին՝ իր արտածմանց առջեւ բանալով ծովու ճամբան


դինքը վերջնականապէս պիտի ազատէր Աւստրիոյ տնտեսական թեւարկութենէն :

Ճիշտ այն պահուն ուր Աւստրիա ճարտարագէտներ կը զրկէր Իւվաէ - Միթրովիցա գիծին ճամբաները ուսումնասիրելու , Ռուսիա և Սերպիա Բ. Գոնէն խնդրեցին Գանուբ - Աղբիականի մենաշնորհը : Գիծը Գանուբի վրայէն ուղղակի հաղորդակցութեան մտնելով Գրաեովայի ուսումնական գիծին հետ , պիտի սկսէր Բատուեվացէն , ուրկէ մինչեւ Նէկոթին արդէն շինուած երկաթուղի կար : Նէկոթինէն պիտի իջնէր Նիշ , որուն կապուած են Արեւելեան Երկաթուղիներու Պոլիս - Սօֆիա և Սելանիկ - Սկիւպ գիծերը : Նիշէն գիծը պիտի հակէր դէպի հարաւ , թրքական սահմանագլուխը , պիտի ուղղուէր Բրիշթինա , և Գոսովայէն անցնելով՝ Ֆէրիզովիքի մէջ պիտի կտրէր Սելանիկ - Միթրովիցա երկաթուղին . անկէ անդին՝ Բրիզդէնա - Ալպանիայ ճամբով՝ պիտի հասնէր Աղբիական . յանգման կէտը չէր որոշուած . նախ կը մտածէին որ Սեւ Լերան Անթիվարի նաւահանգիստը ըլլայ , բայց այդ միջոցին Անթիվարի դեռ չէր ազատած աւստրիական թեւարկութենէն զոր Սեւ Լեռ վերջնականապէս պիտի թօթափէր Պօսնա - Հէրսէքի կցման առթիւ . կը խորհէին նաև Գանուբ - Աղբիականը յանգեցնել Սէն - Ժան տի Մէտուայի ալպանական նաւահանգիստը , որ սակայն մեծ շոգենաւերու մերձեցման չէր կրնար յարձարիլ . ահագին ծախքի պէտք կար այնտեղ մեծ նաւահանգիստ մը ստեղծելու համար . յարմարագոյնը՝ ալպանական միւս նաւահանգիստն էր , Տուրացօն (Տեւ քարտէս էջ 209) :

Այս ծրագիրը դժգոհ կը թողուր Գարատաղն ու Պուլկարիան : Առաջինը ջերմապէս կը բաղձար որ Գանուբ - Աղբիականը անցնի Գարատաղեան հողէն և յանգի Անթիվարի . որովհետեւ Գարատաղ զօրկ էր երկաթուղիէ ու շինուելիք բոլոր գիծերը , թէ՛ Գանուբ - Աղբիականը , թէ՛ Իւվաէ - Միթրովիցան , և թէ՛ Աւստրիոյ կողմէ ծրագրուած ուրիշ գիծ մը որ Տալմացիոյ եղբքները քերելով՝ Քասթէլնուօլօն և Սբիցայէն պիտի իջնէր մինչեւ Անթիվարի , իր չորս կողմէն պիտի անցնէին առանց իրեն ո՛ր և է օգուտ բերելու : Իսկ Պուլկարիա դժգոհ էր անոր համար որ Ռուսիոյ Գանուբ - Աղբիականեան ծրագիրը Պալքաններու վաճառականութեան կեդրոն կը դարձնէր Սերպիոյ Նիշ քաղաքը , մինչդեռ Պուլկար պետական մարդիկը կը փափաքէին Գանուբ - Աղբիականը Վիտին - Սօֆիա գծով մտցնել թրքական հողը և յանգեցնել Աղբիականի մէկ նաւահանգիստին , ինչ որ Պալքաններու վաճառականութեան կեդրոն պիտի դարձնէր Սօֆիան : Պուլկարները , գործնական մարդիկ ըլլալով , Գանուբ - Աղբիականին խօսքը չէին ընէր . կը հասկնային անշուշտ որ դրական ձեւաւարկ մը չէ ու չպիտի իրականանայ , և ճիշդ այն պահուն ուր Սերպիա և Ռուսիա կ'աշխատէին Սուլթանէն փրցնել այդ գիծին մենաշնորհը , ինք ալ արտօնութիւն կը խնդրէր Բէօսթէնտիլ յանգող իր երկաթուղիի գիծը՝ Քուսմանուվայի ճամբով Սկիւպ երկարելու , որով պուլկարական ապրանքները հեշտիւ պիտի կրնային Սելանիկ իջնել , և կամ Աղբիական ուղղուիլ երբ Սելանիկ - Աղբիական գիծ մը շինուէր : Երկու պարագային ալ՝ Պուլկարիա

ուղղակի հաղորդակցութեան պիտի մտնէր Միջերկրականի հետ, կամ Արշիպեղազոսի և կամ Աղբիականի ճամբով, ինչ որ մեծապէս պիտի նըպաստէր իր վաճառականութեան:

Նոյն ատենները Համիտի բարեհաճութեան ներկայացուած էին ուրիշ երկու ծրագիրներ ալ(*): Անոնցմէ մէկը կը միտէր Արեւելեան Երկաթուղիներու աւստրո-գերման Ընկերութեան կողմէ շահագործուող Սելանիկ-Մանասթըր երկաթուղին Օլբրիտայի ճամբով երկարել մինչեւ Աղբիական:



Փուրք գինուորները գարանի մասձ Թարաթօշի կողերուն վրայ

այդ ճամբան պիտի սկսէր Աղբիականի շրջաօդոյն նաւահանգիստէն, Ավոնայէն (Վալոնա) և Վոուլիցայի հովտէն բարձրանալով ու Վիսթրիցայէն իջնելով պիտի յանգէր կամ Բարաֆէրիա (Վէրիա), այսինքն Սելանիկ-Մանասթըր գիծին վրայ, և կամ ուղղակի Սելանիկ այս կերպով՝ Պոլիս ցամաքի ճամբայ մը պիտի ունենար մինչեւ Աղբիական: Յոյները նոյնպէս

(*) Բոլոր այս երկաթուղիի ծրագիրներուն մանրամասնութիւնները տեսնել ներկայ պրակով հրատարակուած երկու քարտէսներուն մէջ, էջ 289 և 292:

կը բաղձային իրենց Հարիտայի գիծը կապել Սելանիկի՝ անցնելով Սէրֆիլէի ներքնամասերէն:

Համիտ՝ այս բոլոր խնդրարկուներէն պաշարուած, ոչ մէկը կը յուսահատեցնէր, առանց ոչ մէկուն գոհացում տալու: Խորամանկ մարդը որ կար իր մէջ՝ դիւրաւ կը հասկնար թէ տնտեսական բարգաւաճման նպատակներով ներկայացուած այդ երկաթուղիի ծրագիրները առաւելապէս քաղաքական բնոյթ ունէին. գիտէր նաև թէ այդ ծրագիրները իրար չէզոքացնելու սահմանուած ըլլալով, զանոնք ներկայացնող երկիրները միշտ իրարու հետ երեսանց հաւան բայց ներքնապէս անհամաձայն պիտի գրտնուէին, և թէ այդ անհամաձայնութիւնը մեծապէս պիտի դիւրացնէր իր դիմադրութեան գործը: Եւ անա այսպէսով՝ Պ. տէրէնթալի ճառը հաստատած էր երկաթուղիներու քաղաքականութիւնը, որուն մէջ Աւստրիա իր ետեւէն պիտի քաշէր Պալքանեան պետութիւններն ու միւս տէրութիւններէն բոլոր անոնք որոնք շահեր ունէին Պալքաններու մէջ, դիւրին է մտաբերել թէ երկաթուղիներու հետապնդման ամբողջ այդ շրջանին՝ Մակեդոնիոյ բարենորոգմանց խօսքը չէր ըլլար:

Եւ սակայն, ամէնքն ալ բռնարար պիտի ստիպուէին դարձեալ այդ էական կէտին վրայ կեդրոնացնելու իրենց մտահոգութիւնը: Մակեդոնիոյ մէջ տիրող ախուր դրութիւնը բնաւ չէր բարեփոխուած, աւելի վատթարացում կար քան բարելաւում. յետոյ Անգլիա չէր յուսահատած բարենորոգմանց դատէն, և Լոնտոնի Պալքանեան Քոմիթէն միշտ ազատական դահիճին ուշադրութիւնը կեդրոնացած կը պահէր Մակեդոնիոյ վրայ: Մարտ 3ին՝ Սըր Էտուար Կրէյ որոշեց վերաբանալ ազդու գործողութեանց շրջանը և տէրութեանց ուղղեց շրջաբերական մը որով կ'առաջարկէր՝


Ա. — Մակեդոնական երեք վիլայէթներուն վրայ կարգել Օսմ. հպատակ իսլամ կամ քրիստոնեայ ընդհանուր - կառավարիչ մը, զոր Սուլթանը չկարենար պաշտօնանկ ընել՝ առանց տէրութեանց հաւանութեան:

Բ. — Սուլթանին արժանապատուութեան գոհացում տալու համար՝ Մակեդոնիոյ մէջ գործող քաղաքային գործակալները, ելմտական քննիչներն ու ոստիկանութեան հրամանատարին գործակից եւրոպացի սպաները նկատել թուրքիոյ ծառայութեան մէջ գտնուող պաշտօնեաներ:

Գ. — Ոստիկան - զինուորները բազմացնել, և փոխանակ զինուորներու՝ զանոնք գործածել հրոսախուժերու հետապնդութեան, մեկնելիք զինուորներուն տրուած թոշակէն վճարելով անոնց ամսականը:

Դ. — Զինուորներու հեռացման պատճառաւ առաջ գալիք ոյժի տըկարացումը հակալուելու համար՝ տէրութեանց երաշխաւորութեան ենթարկել Սուլթանին հողային ստացուածքներուն ամբողջութիւնն ու ներքին ապահովութիւնը:

Ինչպէս կը տեսնուի՝ դատական բարենորոգմանց խօսք չկար այս ծրագրին մէջ: Անգլիա համոզուած էր որ տէրութիւնները չպիտի յաջողին այդ մասին. բոլոր այն բարենորոգումները որոնց բռնադատած էին Սուլթանը՝ անոր լոկ քաղաքային իշխանութիւնը կը հարուածէին. բայց դատական բարենորոգումները չիտկէ չիտակ հարուած մըն էին անոր կրօնա-




Սերյալ օգնական զինուորային Մուսթաֆա Փաշա կը մտնեն, անկէ էտեղնէն պաշարող պուլկար բանակին միանալու համար

յին իշխանութեան դէմ, և Համիտ ոչ մէկ գնով պիտի ձկէր այդ հարուածին տակ, որքան ատեն որ Մակեդոնիա մաս կը կազմեր Թուրքիոյ ամբողջութեան: Համիտ Խալիֆա էր նոյն ատեն. Թուրքիոյ դատական հիմնարկութեանց առանցքը Շէրին էր. Շէրին ենթարկել Քրիստոնեաներու հակակշռին՝ կը նշանակէր ոտնակոխ ընել տալ կրօնքը, հետեւաբար նաև իր Խալիֆայի հանգամանքը, ինչ որ իրաւամբ վտանգաւոր կը նկատէր Համիտ: Անգլիա թերեւս հոգը չընէր և պնդէր դատական բարենորոգմանց ու քննիչներու տեսակէտին վրայ, եթէ միևնոյն վտանգը ուրկէ Համիտ կը վախնար, չսպառնար նաև իրեն: Միլիոնաւոր իսլամ հպատակներ ունէր Հնդկաստանի մէջ, և Համիտի հետապնդած համիսլամութեան քաղաքականութիւնը անոնց հետաքրքրութիւնը վառ կը պահէր թրքական իրերու նկատմամբ: Դիւրին է հետեւցնել թէ Անգլիոյ ձեռքով Թուրքիոյ մէջ իսլամ կրօնքին տրուած ծանր հարուած մը՝ արձագանգ պիտի գտնէր նաև Հնդկաստանի մէջ, անանկ ատեն մը մանաւանդ ուր Հիճազի երկաթուղին աւելի սերտ կապեր կը ստեղծէր Հնդկաստանի հեռաւոր իսլամներուն և Օսմ. Կայսրութեան միջեւ: Իր հնդկական ստացուածքներուն մէջ դժգոհութեան պատճառներ ստեղծած չլլալու համար, Անգլիա որքան ալ ջերմապէս փափաքուր դատախան բարենորոգմանց գործադրութեան, չէր ուզեր անոնց նախաձեռնութիւնը ստանձնել:

Բայց նորէն՝ Սուլթանին համար ընդունելի չէր կրնար ըլլալ իր ծրագիրը: Անոր մէջ չկար դատական բարենորոգմանց պահանջ, բայց ինչ որ կար՝ նոյնքան վտանգաւոր էր Համիտի համար: Տէրութեանց ենթակայ ընդհանուր կառավարչի մը նշանակումը շիտկէ շիտակ կը վտանգէր իր վեհապետական իրաւունքները. դարձեալ այդ իրաւունքներուն բռնաբարումն էր Եւրոպական Թուրքիոյ զինուորները նուազեցնելու պահանջը. տէրութիւն մը կը դադրի անշուշտ ինքնիշխան ըլլալէ, երբ օտար միջամտութեան մը առջեւ կը ստիպուի զինաթափ ըլլալ: Յետոյ՝ եթէ Թուրքիա իրօք զինուորները քաշէր իր եւրոպական ստացուածքներէն, տէրութեանց երաշխաւորութիւնը պիտի կրնար ու և է արտաքին ոտնձգութեան արգելք ըլլալ: Ծրագիրը չափազանց արմատական ու վտանգաւոր երեւցաւ նաև տէրութեանց, որոնք չուզեցին անոր գործադրութիւնը պահանջել: Անգլիա սեղի տուաւ դիւրութեամբ. իր նպատակը արդէն ոչ այնքան անպատճառ այդ ծրագիրը յաջողցնել, որքան նորէն սեղանի վրայ հանել էր Մակեդոնիոյ բարենորոգմանց ստիպողականութեան հարցը, զոր երկաթուղիներու քաղաքականութիւնը կը սպառնար մոռցնել:

Համիտ, Եւրոպական Տէրութեանց կողմէ անգլիական ծանուցագրին մերժումը հրճուանքով ողջունեց անշուշտ, բայց իր ուրախութիւնը չառ չքշեց: Մարտ 26ին նոր ծրագիր մը ելաւ մէջտեղ, այս անգամ Ռուսիոյ կողմէ, աւելի վտանգաւոր անոր համար մանաւանդ որ դարձեալ դատական բարենորոգմանց հարցը երեւան կը հանէր, հոգ չէ թէ ըստ երեւոյթին «տանելի» պայմաններու մէջ: Ծանուցագրի ձեռով Եւրոպական Դահլիճներուն հաւանութեան ներկայացուած այդ ծրագիրը՝ որուն բնագիրը երբեք հրատարակութեան չտրուեցաւ, տէրութեանց ենթակայ ընդ-

հանուր կառավարչի խնդիր չէր յարուցաներ. միայն, եթ տարուան պայ-
մանաժամով կ'երկարաձգէր Մակեդոնիոյ ընդհանուր-քննիչին պաշտօնը,
պահանջ դնելով որ Սուլթանը, առանց տէրութեանց հաճութեան, չկա-
րենայ զայն պաշտօնանկ ընել: Յետոյ, որպէս զի ընդհանուր-քննիչին



Պուլկարական բանակետը մը սահմանադրուող վրայ,
պատերազմի յայտարարութեան օրը

պաշտօնավարութիւնը արդիւնաւորուի, ուսական Մանուցագիրը կ'ա-
ռաջարկէր անոր իբր յինակ ստեղծել ամուր վարչական հաստատութիւն
մը, և կամ աւելի ճիշդը՝ բարեփոխել արդէն իսկ գտնուած միջազգային
եւմտական քննիչներու կազմը, անոր իրաւասութեան ենթարկելով հան-
րային կենցաղին բոլոր ճիւղաւորումները: Ինչպէս գիտենք արդէն՝ չորս
եւմտական քննիչներ միայն գոյութիւն ունէին Մակեդոնիոյ մէջ, Ֆրանս-
ացի մը, անգլիացի մը, գերման մը և իտալացի մը. իսկ Ռուսիա և
Աւստրիա կը պահէին քաղաքային գործակալներ, իբր օժանդակ ընդհա-

նուր-քննիչին. ուսական Մրագիրը այս վերջիններուն համազօր իրաւունք
կուտար վերոյիշեալ չորս եւմտական քննիչներուն, և այնուհետեւ վեց
Տէրութեանց ներկայացուցիչները համախումբ պիտի աշխատէին գործադ-
րելու այն՝ ինչ որ ի դիմաց միւս տէրութեանց գործող ուս և աւստրիացի
գործակալները չէին կրցած իրականացնել մինչեւ այն ժամանակ: Եթէ
Դուռը մերժէր հաւանիլ այս ծրագրին՝ եւմտական քննիչները, ուս և
աւստրիացի գործակալներուն հետ համախորհուրդ, անուանապէս պիտի
մտնէին Օսմ. ծառայութեան, և իրենց վստահուած գործը պիտի կատա-
րէին իբր Օսմ. կառավարութեան պաշտօնեայ: Եւմտական քննիչ-
ները, տէրութեանց կողմէ ընտրուած և Սուլթանէն վաւերացուած քրիս-
տոնեայ պաշտօնատարներու միջոցաւ պիտի հսկէին դատական վարչու-
թեան վրայ: Այս պաշտօնատարները իրենց անդեկագիրները պիտի մա-
տուցանէին ուղղակի եւմտական քննիչներուն, որ բացի վերը յիշատակ-
ուածներէն, ունէր նաև տեղական կառավարութեան վերաբերող ամէն
տեսակ կարգադրութիւններ ընելու իրաւունքը:

Այսպէս ուրեմն՝ Մարտ 26ի ուսական Մրագիրը վերջնականապէս
կը քանդէր 1897էն ասդին քաջընդու աւստրուսական համաձայնութիւնը, որ
բոլորովին ապարդիւն մնացած էր: Կը փոխէր նաև բարենորոգման գործին
ընդթիւ. այլևս դանազանութիւն չկար քաղաքային գործակալներուն և
եւմտական քննիչներուն միջև. ամէնքն ալ համազօր կը դառնային. միւս
կողմէ՝ Սուլթանին գերիշխանութեան տեսակէտը կը փրկուէր, քանի որ
վեց եւրոպացի գործակալները կը հաւանէին անուանապէս մտնել Օսմ.
ծառայութեան մէջ և թուրք պաշտօնատարի հանգամանքը առնել. թրք-
քական պիտակի տակ եւրոպական վարչութիւն ու բարենորոգումներ պի-
տի գործադրուէին. ընդհանուր քննիչն ալ, Դրան կողմէ նշանակուած ըլ-
լալով հանդերձ, էապէս Եւրոպական տէրութեանց մէկ ներկայացուցիչը
պիտի դառնար, քանի որ Սուլթանը, առանց այս վերջիններուն հաւա-
նութեան, չպիտի կրնար երբեք զայն ետ կանչել կամ պաշտօնանկ ընել:
Մանուցագիրը աւելի տարածուն հանգամանք կու տար նաև կիրարկուելիք
բարենորոգումներուն. կառավարական ամէն ճիւղ ենթակայ էր Եւրոպացի,
հոգ չէ թուրք պաշտօնատարի հանգամանքով գործող քննիչներուն. տա-
սանորդի գանձում, երկրագործութիւն, ճամբաներու և երկաթուղիներու
չինութիւն, ու նաև դատական վարչութիւնը իր բոլոր ճիւղերով՝ անոնց
հսկողութեան շրջանակին մէջ կը մտնէին: Ռուսական Մանուցագիրը՝ ու-
տիկանութիւնն ալ Եւրոպական հաստատութիւն մը կը դարձնէր, եւրո-
պացի ոստիկանական մարզիչներուն ուղղակի հրամանին ենթարկելով զայն.
ասոր մէջ ալ, Սուլթանին գերիշխանութեան տեսակէտը կը վտանգուէր
թէև, բայց ժանուցագիրը այդ վտանգը կ'անհետացնէր՝ առաջարկելով որ
ոստիկանական մարզիչներն ալ, եւմտական քննիչներուն պէս, Օսմ. ծա-
ռայութեան մտնեն: Մանուցագիրը կը ջանար ստեղծել նաև ուրիշ օգտա-
կար ոյժ մը՝ բարենորոգմանց ապահովութեան տեսակէտով, այսինքն՝ իւ-
րաքանչիւր գիւղի մէջ տեղական կամաւոր պահակախումբերու կազմու-
թիւնը. քանի որ կարելի չէր ըլլար զինաթափ ընել ժողովուրդը, որով ա-

մէն տեսակ յարձակումներ, յափշտակութիւններ և սպանութիւններ վերջ
չէին գտներ, ուրեմն պէտք էր ինքնապաշտպանութեան միջոց ընծայել
իւրաքանչիւր գիւղի, կամաւոր պահակախումբերու կազմութեամբ. այս
պահակախումբերը պիտի ընտրէին ու զինէին գիւղական իշխանութիւն-
ները, իրենց պատասխանատուութեան տակ, և ընդհարմանց միջոցին՝
բոլոր գիւղերու պահակախումբերը իրարու օգնութեան պիտի փութային:



Գարատաղի թագաւորը կը համբուրուի ճերուների պատերազմիկներուն հետ

Այս դրութեամբ, — զոր մենք ի զուր պահանջեցինք Հայաստանի համար,
— ժողովուրդը ինք իրմէ պիտի հայթայթէր իր ապահովութեան անհրա-
ժեշտ ոյժը:

Անգլիա էն առաջ հաւանութիւն յայտնեց այս Ծրագրին, քանի մը
մանր մունր փոփոխութիւններով. տէրութեանց ենթակայ ընդհանուր կա-
ռավարիչ մը կարգելու պահանջումէն կը հրաժարէր բոլորովին, բայց կ'ա-
ռաջարկէր որ ընհանուր քննիչը իրաւունք ունենայ Մակեդոնիոյ ելմտա-
ցոյցը ընդունելու՝ առանց Պոլսոյ հաւանութեան պէտք տեսնելու. ասկէ
զատ՝ կարենայ չըջուն զօրախումբեր պահել իր հրամանին տակ՝ ի հարկին,
ոստիկանութեան հրամանատարին հետ համախորհուրդ, զանոնք իր յար-
մար դատած կերպով գործածելու համար. դարձեալ՝ կարենայ անուանել
կամ պաշտօնանկ ընել բոլոր պաշտօնեաները, և անոնց հրահանգներ տալ
առանց Իրան կամ Պալատին հաւանութեան պէտք տեսնելու: Անգլիա
կ'առաջարկէր տակաւին որ Դուռը գոցէ Մակեդոնիոյ ելմտացոյցին բացը,
ինչպէս խոստացած էր արդէն՝ երբ տէրութիւնները հաւանած էին՝ մաք-
սային տուրքի 1/3 յաւելման. կը սպառնար նոյն ատեն որ եթէ Դուռը
չյարգէ այդ յանձնառութիւնը, ինք ալ փոխադարձաբար պիտի մերժէ վճար-
ելու 1/3 յաւելուածական տուրքը:

Անգլիայէն. վերջ՝ հաւանութիւն յայտնեց նաև Ֆրանսա. անձկու-
թեամբ կը սպասուէր մասնաւորաբար Պէրլինի դահլիճին որոշման, երբ
նախարարապետ Պ. Պիւլով ո՛չ միայն Գերմանիոյ, այլ նաև Աւստրիոյ և
Իտալիոյ հաւանութիւնը ապահովեց Ռուսական Ծրագրին: Հաւանութիւն
յայտնեցին նաև Պալքանեան Պետութիւնները, աւելի կամ նուազ կարևոր
դիտողութիւններով: Եւ անա Մակեդոնիոյ բարեկարգութեանց հարցը
դարձեալ կը մտնէր գործնական ճամբու մը մէջ. երկաթուղիներու քա-
ղաքականութիւնը որ պահ մը վտանգած էր գայն, կ'անցնէր երկրորդա-
կան գծի մը վրայ. Ռուսիա բարձիթողի ըրած էր իր Դանուբ-Ադրիականը,
և Աւստրիա ալ այնքան փութկոտ չէր երևար իր Իւվաէ-Միթրովիցա
գիծին շինութեան ձեռնարկելու: Սուրբ կէտ մը եթէ կար՝ այն ալ Սուլ-
թանին հաւանութեան հարցն էր, բայց Ապրիլ ճին Պէրլինէն քաշուած հե-
ռագիր մը, Ռուսական Ծրագրին նկատմամբ Երբեակ Զինակցութեան հա-
ւանութիւնը յայտնելէ վերջ, վստահօրէն կը յարէր թէ Սուլթանը նոյնպէս
տրամադիր է սկզբունքով ընդունելու այդ ծրագիրը. որ ամէն բանէ ա-
ռաջ կը միտէր իր վեհապետական իրաւունքները անվթար պահելու: Հա-
միտ իրապէս տրամադիր չէր երևար դիմադրելու. իր իւրաքանչիւր ընդ-
դիմութիւնը միշտ եւրոպական տէրութեան մը կամ երկու երեք տէրու-
թեանց յայտնի կամ թաքուն աջակցութեամբ միայն կրնար արդիւնք տալ,
և այդ աջակցութիւնները շատ սուղի կը նստէին իրեն: Ռուսական Ծրա-
գիրը՝ ներքնապէս Մակեդոնիոյ վարչութիւնը կը խլէր իրմէ. Սուլթանը
այլևս լոկ անուանական գերիշխանութիւն մը կը պահէր Մակեդոնիոյ վրայ,
բայց վերջապէս արտաքին երևոյթները լիովին փրկուած էին. եւրոպացի պաշ-
տօնատարները, Օսմ. ծառայութեան մտնելով, Թուրք պաշտօնեայի հան-
գամանքը պիտի ստանային, և անոնց ընելիք բոլոր կարգադրու-
թիւնները Թուրք կառավարութեան անունով պիտի ըլլային: Հաւանականա-
բար պիտի ընդունէր Ռուսական ծրագիրը, և այդ վստահութեամբ էր որ
Բեթէրսպուրկի ու Լոնտոնի դահլիճները՝ իրենց ծրագիրներուն հիման
վրայ վերջնական ծրագրի մը պատրաստութեան ձեռնարկած էին, ևրբ
նոր իրողութիւններ դարձեալ տակն ու վրայ ըրին տէրութեանց արեւել-
եան քաղաքականութիւնը:

1908 Ապրիլ 9ին՝ յանկարծ Ափրիկեան Տրիպոլսոյ խնդիր մը ելաւ
մէջտեղ. նոր չէր խնդիրը. իտալական ոտնձգութիւնները միշտ յամր բայց
սխթէմաթիք կերպով մը կը շարունակուէին այնտեղ. ճակատագրական,
անխուսափելի գրաւումը որուն գետին կը պատրաստէին այդ ոտնձգու-
թիւնները, լոկ ժամանակի խնդիր մըն էր, և 1908ի այդ օրերուն՝ երբ
Ֆրանսա հետզհետէ իր տիրապետութիւնը կը տարածէր Մարոքի մէջ, Ի-
տալիա կարծեց թէ վերջապէս հասած է ժամանակը: Խաղաղ թափանց-
ման դրութիւնը Մարոքը կը բանար Ֆրանսայի առջև. ինք ալ այդ դրու-
թիւնը կիրարկելու և ոտքը Տրիպոլսոյ հողը նետելու առիթ մը ստեղծել
ուզեց, բոլորովին տենդագին հանգամանք մը տալով բուն իսկ տեղին
մէջ հաստատուած իր գործակալներուն մեքենայութեանց: Իտալիա, այս
Քայլը առած միջոցին՝ բոլորովին ապահոված էր միւս տէրութեանց հա-



Պուլկարձները ձիերուն կ'աջակցին՝ իրենց խոշոր թնդալոթները փոխող բերլու համար

ւանութիւնը. Ֆրանսա՝ որ Միջերկրականի մէջ իր դրացին էր, գաղտնի պայմանագրութեամբ մը զինքը ազատ կը թողուր. Անգլիա նոյնպէս կանխաւ համաձայնած էր. իսկ Ռուսիա որ բնաւ այդ կողմերը գործ չունէր, բնական է իր լուծեալը պիտի ուզէր փոխարինել Մակեդոնիոյ մասին ներկայացուցած ծրագրին գաած ընդունելութիւնը Հռոմի դաշինին կողմէ:

Ինչ պիտի ընէր Համիտ այս նոր փորձանքին առջև. թերևս ինք ալ չէր գիտեր շիտկէ շիտակ, երբ յանկարծ իրեն թանկագին աջակցութիւն



Բէթրօ և Միրքօ իշխանները
երկուքն ալ զաւակ Գարատաղի Թագաւորին

մը եկաւ անանկ տեղէ մը որուն վրայ երբեք չպիտի մտածէր յոյս դնել: Այդ վտանգի օրերուն՝ Տրիպոլսոյ կուսակալն էր Թուրքիոյ ամէնէն պարկեշտ զինուորականներէն մէկը, Բէճիպ փաշան, այն որ Սահմանադրութեան հռչակումէն անմիջապէս վերջ պատերազմական նախարարութեան կոչուելով մեռաւ վաղաժամ կերպով: Այս մարդը փրկեց Տրիպոլիսը, և ասկէ ամէնէն աւելի զարմացողը Համիտը եղաւ: Բէճիպ փաշա զինքը չէր սիրեր. ինք ալ անոր վրայ գուրգուրալուն համար չէր որ այդ պաշտօնին կոչած էր զայն. Բէճիպ փաշա աքսորական մըն էր, քիչ մը աւելի բարեբախտ քան իր միւս երկու աստիճանակիցները՝ Նազըմ և Փուլատ փաշաները, որոնք Համիտի ամէնէն ստորին արբանեակներուն քմահաճոյքին ենթակայ կը մնային իրենց աքսորավայրերուն մէջ, մինչդեռ ինք, որքան ալ լրտեսներէ չըջապատուած, կուսակալի անունը, հանգամանքն ու շար-

ժելու համեմատական ազատութիւնը կը պահէր Տրիպոլսոյ մէջ, թէև առանց անկէ հեռանալ կարենալու: Օտարին մուտքը այնտեղ՝ իր ազատութիւնը պիտի ըլլար անշուշտ. Իտալացիք միայն կրնային զինքը փրկել Համիտի կաշկանդումէն: Սակայն Բէճիպ փաշա ժէօն-թիւրք էր, ոգելին յարած թուրքիոյ ամբողջութիւնը և այդ ամբողջութեան մէջ ալ թուրք տարրին ամենալայն գերազանցութիւնը պահպանելու գաղափարին. որ էսպէս ժէօն-թիւրք ուղղութիւնն է արդէն: Ջերմ ազգայնական՝ ինչպէս իր գաղափարակիցները, թուրք հողէն ու նաև թուրք պետական իրաւունքներէն մաս մը բանի զոհողութիւնն իսկ կ'ընդվզեցնէր զինքը: Ա-



ԷՏԻՐՆԷԻ ՏԵՍԱՐԱՆՆԵՐԷՆ
Թունճա դետին կամուրջը

նանկ ատեն մը՝ ուր Պոլսոյ մէջ Համիտ դեռ որոշում չէր տուած թէ ինչ պիտի ընէ Իտալացոց կողմէ յարուցուած այդ նոր փորձանքը հեռացնելու համար, Բէճիպ փաշա ինքնաբերաբար ցոյց տուաւ ճամբան, ամենաբուռն դիմադրութեամբ մը ծանրանալով Իտալական ոտնձգութեանց դէմ: Հռոմի դահլիճը որ դիմադրութիւնը աւելի Կոստանդնուպոլսէն քան Տրիպոլսէն կը սպասէր, յանկարծակիի եկաւ, ու տեսնելով որ Պոլիս ալ Բէճէպ փաշայի ազդանիշին հետեւելով անոր բռնական ընդդիմութեան կը միացնէ դիւանագիտական ընդդիմութիւնը, փութաց շարժման մէջ զնել իր նաւատորմիդ: Տասը օր վերջ՝ Գերման նախարարապետը Հռոմ կը հասնէր՝ Իտալիոյ ռազմական աւիւնը մեղմելու, մինչդեռ Պոլսոյ Գերման դեսպանն ալ Սուլթանէն կը ստանար Պաղատտի երկաթուղիին ամէնէն կենսական մասին՝ Տաւրոսի գիծին երաշխաւորութեան գումարը (20,000 Ֆրանք իւրաքանչիւր քիլոմէթրի), ինչ որ Գերմանիոյ համարձակութիւն կուտար կէս-պաշտօնապէս յայտարարելու թէ այլ ևս ոչ Ֆրանսական, ոչ ալ անգլիական դրամագլուխի պէտք ունի՝ գիծին շինութիւնը

աւարտելու համար, և հարկ չպիտի մնայ ուրիշ տեղերու մէջ զիջումներ ընել Անգլիոյ կամ Ֆրանսայի:

Համիտի այս զիջողութիւնը նոյն ատեն ազդարարութիւն մըն էր Անգլիոյ և Ռուսիոյ, որոնք այդ միջոցին Մակեդոնիոյ բարեկարգութեանց նոր ծրագիր մը պատրաստելու վրայ էին. Կարմիր Սուլթանը կ'ուզէր հանգիստ մնալ իր տան մէջ. անոնք որ իր հանգստութիւնը կ'ապահովէին, — ինչպէս Գերմանիա, — կրնային իր առատաձեռնութեանէն օգտուիլ, մինչդեռ անոնք որ իր հանգիստը կը վրդովէին, — ինչպէս Անգլիա և



Օտար թղթակիցներ կը հետեւին պուլկար բանակին գործողութեանց

Ռուսիա, — ուղղակի վնաս պիտի տեսնէին իրմէ: Գերմանիոյ եղած զիջողութիւնը ասիկա կ'ապացուցանէր: Լոնտոնի և Բեթէրսպուրկի դահլիճները չձածկեցին իրենց դժգոհութիւնը. Ֆրանսա նոյնպէս կը վնասուէր Գերմանիոյ եղած զիջողութեանէն, բայց այդ միջոցին ինք ալ էրէյլի ածուխի հանքերու խնդիր մը ունէր. նախընտրեց լուռ մնալ՝ որպէս զի չըխանգարէ այն ձեռնարկները, զորս Պ. Քօնսթան Պոլսոյ մէջ կ'ընէր էրէյլի խնդիրը կարգադրելու համար: Ինական է Ֆրանսա վերջէն պիտի փութար ընդունիլ Անգլիոյ ու Ռուսիոյ գործակցութեամբ պատրաստուած ծրագիրը, և այդ վստահութեամբ է որ Նիքօլա Չարն ու Էտուար Թագաւոր, Յունիս 10ին իրարու ժամադիր եղան Բէվալի մէջ: Երկու տէրութեանց արտաքին գործոց նախարարները՝ Պ. Իզվոլսքի և Սըր Հարտինկ, որոնք վեհապետներուն կ'ընկերանային, իրենց հետ բերած էին փոխադարձաբար պատրաստուած ծրագիրներ: Նոր ծրագիրը որ այդ տեսակցութեան արդիւնքը պիտի ըլլար, բնաւ հրատարակութեան չտրուեցաւ. բայց տարակոյս չկայ որ Մարտ 2ի անգլիական և Մարտ 2օի ռուսական ծրագիրներուն ոգուով պատրաստուած էր, շատ հաւանականաբար աւելի դրական հիմքերու վրայ: Տաս օր վերջ, Յունիս 20ին, Անգլիոյ արտաքին

գործոց նախարարութիւնը կէս պաշտօնապէս կը ծանուցանէր թէ Մակեդոնիոյ խաղաղեցման ձգտող անկոո-ռուս ծրագիրը շատ սրուշ, շատ մանրամասն է, և թէ պատրաստուած է Անգլիոյ ու Ռուսիոյ կողմէ նախապէս տէրութեանց ներկայացուած ծրագիրներուն լաւագոյն և յարմարագոյն արձանագրութեանց բաղակցութեամբ: Ջեկոյցը՝ յայտնելէ ետք թէ Մակեդոնիոյ մասին Յւրոպական Դեսպանախորհուրդ մը գումարելու նկատմամբ Անգլիոյ և Ռուսիոյ վերագրուած միտումը բոլորովին անհիմն է, կը յարէր թէ երկու կառավարութեանց գործակցութեամբ պատրաստուող ծրագիրը վերջնական ձև մը ընդունելուն պէս պիտի ներկայացուի միւս տէրութեանց հաւանութեան:

Ժամանակ չունեցան սակայն: Այդ միջոցին Մակեդոնիոյ Օսմ. բանակին մէջ յեղափոխական բրօքականտը իր գործը կը տեսնէր լռիկ, և ըմբոստութեան գաղափարը՝ սպաներէն սկսելով կը ծաւալէր մինչև զինուորական յետին խաւերը: Համիտեան Բէթիմին մեծագոյն զոհերէն էին նաև զինուորները, միշտ անվճար, միշտ գէշ հագուած, առանց կօշիկի, գրեթէ անօթի, և անվերջանալի տարիներ, գրեթէ ամբողջ կեանք մը դրօշի տակ մնալու բռնադատուած: Ժէօն-Թիւրքերը որոնք նոր շարժումին գլուխը կեցած էին, ամէնէն առաջ այդ դժգոհ տարրը ձեռք անցուցին: Իրենց ճիգերը յաջողութեամբ պսակուեցան ո՛չ միայն Րուսիոյ մէջ, այլ նաև Արեւելեան նահանգներուն ալ մէջ: Էրզրում ու անոր շրջակայ նահանգները հետզհետէ զինուորական լուրջ ըմբոստութեանց թատերավայրեր դարձան, և երբ Նիսիոյ պէյ, ու անկէ ետքը Էնվէր պէյ Րուսիոյ մէջ նոյնպէս ըմբոստութեան դրօշը պարզեցին հերոսաբար, ո՛չ միայն Րուսիոյ զինուորները, այլ նաև Համիտի կանխանգութեամբ Իզմիրէն Մակեդոնիոյ փութացուած Անատոլիոյ զինուորներն ալ մերժեցին զանոնք հետապնդել: Սպաները սքանչելապէս կը խաղային իրենց փրկարար դերը, պարզամիտ զինուորները համոզելով որ Սուլթանը երկիրը կը ծախէ. և իրենց համար շատ ալ դիւրին էր ասիկա ապացուցանելը: Մակեդոնիոյ մէկ ծայրէն միւսը փաստը մէջտեղն էր, ամէնուն տեսանելի, ամէնուն զգալի: Օսմ. կառավարութեան բոլոր ճիւղերուն գլուխը մէյմէկ եւրոպացի կը գտնուէին. ընդհանուր քննիչ, կուսակալ, քաղաքային, զինուորական ու նաև դատական պաշտօնատարները անոնց հսկողութեան ենթարկուած էին. ոստիկանութիւնը նոյնպէս եւրոպացի վարիչներու ձեռքն էր. ի՞նչ կը մնար ուրեմն Թուրք Իշխանութենէն. հազիւ անուն մը: Իրենք, Ժէօն-Թիւրքերը՝ նոյնպէս այդ օտար հակակշռին անախորժ, նուաստացուցիչ շփման պատճառաւ մղուած էին ըմբոստութեան. երկիրը իրօք կը ծախուէր. եղածը ծանրապէս կը խոցէր իրենց ազգայնական միտումներով զեղուն հոգին, և իրենք անձնապէս այդ ցաւը զգալուն համար էր որ կրցան զայն հեշտիւ ներարկել բովանդակ բանակին: Յաւը միայն Մակեդոնիայէն չէր գար. Ափրիկեան Տրիպոլիս նոյնպէս վտանգուած էր, և Բէճէպ փաշայի՝ զիմադրութիւնը կրնար տեղի տալ մէկ օրէն միւսը, ոչ միայն Իտալիոյ աւելի ազդու ու գործնական քայլերուն առջև, որքան նոյնինքն Համիտի հրամանով: Աւստրիոյ հետապնդած Իւվաէ-Միթրովիցա երկաթուղի՛

գիծն ալ իր կողմէ կը սպառնար աւստրիական տիրապետութիւնը տարածել մինչև Գոսովայի նահանգին կեդրոնը, Նօվի Բազարը ընկրուզելով: Միւս կողմէ՝ Գերմանները քայլ առ քայլ կ'արմատանային Անատոլի մէջ, Պաղտատի գիծին բովանդակ երկայնքին վրայ ընդլայնելով իրենց ազդեցութեան շրջանակը, որ կըրնար՝ ժամանակին հետ՝ տիրապետութեան շրջանակ մը դառնալ: Յետոյ, ճիշդ այդ ատենները տէրութիւնները իրենց զինուորները քաշած էին կրէտէն, որ այլևս անարգել պիտի կրնար միանալ Յունաստանի. ժամանակը յղի էր փոթորիկներով և այդ փոթորիկներէն թեթեւագոյնն իսկ անշուշտ կրնար նպաստել կրէտէի Յունաստանի կցման: Սամօսի համար ալ այդ վախը կար. Սօֆուլիս և իր հրամանին տակ գործող հրոսախումբը յայտնապէս Յունաստանի դրդումներուն կ'անսային, և իրենց հետապնդած նպատակն ու կրէտացուց ըզձանքները իրարմէ չէին տարբերել ընաւ:



ՊՈՒԼԿԱՐ ԶՕՐԱՎԱՐ ՔՕՎԱԶԷՅ


Բէվալի տեսակցութիւնը որ վրայ կը հասնէր, բոլորովին մեծցուց այս վտանգները, և բանակը մղեց ծանօթ ըմբոստութեանց, որոնց թատերավայր դարձան մասնաւորաբար Մանասթըր ուր՝ Նիսիոյ և Էնվէր պէյերը կը գործէին, ու Սելանիկ, ուր յուլիս 1—5 մինչդեռ մէկ կողմէ Համիտի լրտեսները գնդակահար կ'իյնային, միւս կողմէ ալ զինուորները զէնքերնին թողած, կը պահանջէին արձակուիլ: Համիտ, յուսահատ, փորձեց Ալպանացիները ձեռք առնել և անոնցմով խորտակել ըմբոստութիւնը: Իր պեկեկեկեաններէն մէկը, Շէմսի փաշա՝ Միթրովիցայի զօրաբաժնին հրամանատարը՝ այդ նպատակով Ալպանացիներու խոշոր բազմութիւն մը հաւաքեց Ֆէրիզովիքի մէջ, բայց Ժէօն-Թիւրք Քօմիթէին պատուիրակները կրցան համոզել Ալպանացիները թէ իրենց ձեռնարկած շարժումը երկիրը Յւրոպայի թեւարկութենէն ազատելու կը ձգտէր, ինչ որ մեծապէս նպաստաւոր էր նաև Ալպանիոյ ժողովուրդին: Արդիւնքը սա եղաւ որ Շէմսի փաշայի հաւաքած Ալպանացիները, փոխանակ ըմբոստներուն դէմ քայլու, անոնց միացան և սկսան Սահմանադրութիւն պահանջել: Միակ ազդեցիկ պետ մը՝ Իսա Պօլաթին՝ որ միշտ Համիտի շնորհներուն կ'արժանանար, զիմադրեց այդ օրերուն, ինչ որ հասկնալի կը դարձնէ այն խստութիւնը որով վերջէն Ժէօն-Թիւրքերը զինքը հալածեցին: Իր զիմադրութիւնը սակայն մնաց անօգուտ. նոյն ինքն Շէմսի

փաշա, զոր Քոմիթէն մահուան դատապարտած էր, քիչ ետքը կեանքովը տուժեց բռնակալին նկատմամբ ցոյց տուած հաւատարմութիւնը: «Ամէն բան կարելի է ընել սուկններով, բացի վրան նստելէն»: Համիտ սուկնի վրայ իյնալու վտանգին մէջն էր. զինուորները չէին ուզեր իրեն հնազանդիլ. ինչ որ ըմբոստներուն դէմ հանել կ'ուզէր, վախ կար որ իրեն դէմ դառնայ: Մակեդոնիոյ ընդհանուր-քննիչ Հիլմի փաշայի մէկ հեռագիրը՝ որ շարժումը անընկճելի ցոյց կուտար, վերջնականապէս համոզեց զինքը, և յուլիս 24ին (*) Սահմանադրութիւնը հռչակուեցաւ:

Եղածը ուրեմն լոկ ազատական յեղափոխութիւն մը չէր, այլ մանաւանդ Թուրք ազգայնական և հայրենասիրական յեղափոխութիւն մը. Բումէլիի ըմբոստութիւնները կ'ըլլային ո՛չ թէ Համիտի բռնակալութեան դարձուբանքը բառնալու, այլ երկրին մէջ հետզհետէ շեշտուող օտար ոտնձգութիւնները կասեցնելու և Օսմ. կայսրութեան ամբողջութիւնը պահպանելու համար: Յեղափոխութիւնը գլխաւորապէս զինուորական տարրին միջոցաւ կատարուեցաւ, և բոլոր այն զինուորականները որոնք շարժման մասնակցեցան՝ կը պատկանէին Մակեդոնիոյ Գ. զօրաբանակին, անոր որ ամէնէն աւելի կը զգար օտար ոտնձգութիւնները և անոնցմէ գալիք վտանգը. Օտարին խնամակալութեան ենթարկուած երեք վիլայէթները քայլ առ քայլ կը խուսէին թուրք հայրենիքէն: Բէվալի տեսակցութենէն ծնած ծրագիրը զոր մէկ օրէն միւսը կամայ ակամայ ընդունիլ պիտի տային Համիտի, անշուշտ բոլորովին պիտի ընդլայնէր այդ նուաստացուցիչ խնամակալութիւնը, մինչեւ որ քրիստոնեայ կառավարիչի մը նշանակումով երեք նահանգներն ալ վերջնականապէս անջատուէին Թուրքիայէն, կամ ինքնավար դառնալով և կամ Պալքանեան Պետութիւններուն միջև բաժնուելով: «Բանակը, կ'ըսէ Պ. Բինօն, ամէն կողմ օտարական կը գտնէր դէմը. Գերման սպաներ Սպայակոյտի վերին խորհուրդներուն մէջ, Իտալացի թիկնապահներ Սուլթանին մօտ, ամէն ազգէ պաշտօնատարներ երկրին Վարչութեան գրեթէ բոլոր ճիւղերուն գլուխը, ամէնքն ալ շուայօրէն վարձատրուած, անկախ և օժտուած այն տեսակ առաձնաշնորհումներով որոնցմէ զուրկ էին Սուլթանին հպատակները. բայց մասնաւորաբար Մակեդոնիոյ մէջ էր որ սպաները իրենց դէմը կը գտնէին հետզհետէ աւելի բազմացող օտարականներ. Ռուս և Աւստրիացի «քաղաքային գործակալներ», Անգլիացի, Ֆրանսացի, Գերման և Իտալացի «ելմտական խորհրդականներ», իւրաքանչիւրը իր քարտուղարներով ու թարգմաններով, «ոստիկանութեան հրամանատար» և «մարդիչ սպաներ»՝ ամբողջ բազմութիւն մը Եւրոպացի պաշտօնատարներու, որոնք Մակեդոնիոյ երեք վիլայէթներուն մէջ կը հսկէին կառավարութեան և բոլոր վարչութեանց վրայ: Աւստրիացի, Ռուս, Ֆրանսացի, Իտալացի և Անգլիացի սպաներ կը բանակէին Մակեդոնիոյ նոյն իսկ ամէնէն պզտիկ քաղաքներուն մէջ. Գերման հազարապետ մը կը վարէր Սելանիկի ոստիկանական վարժարանը. որքան ալ սահմանափակուած էր իրենց հեղինակութիւնը, դարձեալ

(*) Մինչեւ այստեղ յիշատակուած թուականները եւրոպական են:

իրաւունք ունէին հրամայելու Օսմանցի սպաներուն. և յետոյ՝ նեղացուցիչ վկաներ էին, որոնց ներկայութիւնը աստիճան մը աւելի կը սրէր Օսմ. բանակին տառապանքները՝ անոնց աւելցնելով իր ներքին տուայտանքը օտարին պարզուած տեսնելու նուաստութիւնը: Այս բոլոր «բարեկարգիչ» պաշտօնատարներու գոյութիւնը չէր բաւած երկիրը խաղաղեցնելու, ոչ ալ անոր մէջ կարգ կանոնը վերահաստատելու, բայց անոնց ներկայութիւնը ամենամեծ չափով կը վիրաւորէր ժէօն-թիւրքերու կասկածոտ հայրենասիրութիւնը. անոնք կ'ըսէին թէ Համիտի բացարձակապետութիւնը՝ ներք-



Կամաւորներու արձանագրութիւնը Պոլսոյ մէջ

նապէս բռնապետական, բայց տկար ու վեհերոտ է օտարներու դէմ, և եթէ կարգի չբերուի, քիչ ատենէն կտոր կտոր անոնց պիտի յանձն բովանդակ կայսրութիւնը»:

Յեղափոխութիւնը օտարատեսաց ալ էր ուրեմն, բայց ժէօն-թիւրքերը շատ լաւ գիտէին թէ առանց օտարներու աջակցութեան ոչինչ կրնան ընել, մանաւանդ որ միշտ պէտք պիտի ունենային օտար դրամագլուխի: Միայն թէ, կ'ուզէին տէր մնալ իրենց երկրին մէջ. «Թուրքիան Թուրքերուն»՝ ասիկա իրենց նշանաբանն էր, և այդ պայմանով միայն կ'ըմբռնէին իրենց հռչակած ազատութիւնը, դարձեալ անոր ենթարկելով օտարէն գալիք ամէն աջակցութիւն, ըլլայ նիւթական, ըլլայ բարոյական: Գիտենք արդէն որ Համիտի օրով կիսովին երկրէն բաժնուած և Թուրքիոյ անուանական գերիշխանութեան տակ օտար վարչութեան ենթարկուած երկիրներն անգամ կ'ուզէին ետ առնել, ո՛ւր մնաց տակաւին Օսմ.

Կայսրութեան մաս կազմող, հոգ չէ թէ վտանգուած երկիրները: Սկիզբները շատ չըջանալեցուցած թեամբ և զգուշաւորութեամբ յաջողեցան քողարկել իրենց անսիրելութիւնը օտար ոտնձգութեանց դէմ, բայց կարգ մը դէպքեր՝ ինչպէս Մակեդոնիոյ մէջ գործող եւրոպացի սպաներու և պաշտօնատարներու եղած «բարեկամական» ազդարարութիւններ՝ որպէս զի ձեռնթափ ըլլան իրենց պաշտօնէն, ինչպէս նաև օտար ձեռնարկութեանց օժանդակող Օսմանցիներու նկատմամբ բռնած անհաշտ ընթացքին յստակօրէն կ'ապացուցանէին ինչ որ ի զուր կը ճգնէին ծածկել(*): Արդէն քիչ ետքը Քեամիլ փաշայի դահլիճը իր ծրագրին մէջ պիտի յայտարարէր թէ «չահակից տէրութեանց հաւանութեամբ պիտի ջանայ ջնջել այն բացառիկ պայմանները զորս մէկ քանի երկիրներու հպատակները՝ կարգ մը հին դաշնագիրներու և վաղընջուց սովորութեանց բերմունքով՝ կը վայելեն թուրքիոյ մէջ, և որոնք կը հակառակին միջազգային իրաւանց ընդհանուր կանոններուն»: Գարիթիւլասիօններու ջնջման հարցն էր զոր Քեամիլ փաշա մէջտեղ կը դնէր, տարակոյս չկայ որ ուղղակի ժէօն-թիւրք Քօմիթէին ճնշման տակ:

Համիտի համակերպումը նոր Րէժիմին, դիւրաւ կը բացատրուի, քանի որ անիկա իր ալ փրկութիւնն էր. երկրին կարեւորագոյն մասերէն մէկը, Մակեդոնիան, անջատուելու վրայ էր, և ինք բացարձակապէս անզօր էր, չպիտի կրնար արգիլել: Իր «բարեկամները» նոյնքան սուղի կը նստէին իրեն, որքան իր թշնամիները. չէր գիտեր նոյն իսկ թէ որոնք աւելի միասակար կը դառնան, բարեկամները, թէ թշնամիները: Որքան ալ անանուն բռնակալութեան մը արհաւիրքին տակ ճնշած ըլլար իր ժողովուրդը, միշտ այն վախուն մէջն էր թէ Կայսրութեան ողորմուկ դրութիւնը և օտարին ատելի միջամտութեան պատճառաւ առաջ եկած թէեւ բարեկարգ բայց Իսլամութեան խոտելի պայմանները կրնան յարուցանել փոթորիկ մը որուն բովանդակ մոլուցքը լոկ իր վրայ պիտի կեդրոնանար: Յուլիանիան յեղափոխութիւնը ճիշդ այդ փոթորիկն էր էապէս, բայց իրեն չէր սպառնար. ժէօն-թիւրքերը իմաստութիւնը ունեցած էին իր անձը մեկուսացնելու, ամէն պատասխանատուութիւն բեռնելով զինքը շրջապատող խաւարիլլային վրայ. այդ ձգտումը ունէին նաև մամուլին անդրանիկ ազատաշունչ հրատարակութիւնները. մտածումը շատ խելօք էր անշուշտ. անակնկալ յաջողութեամբ մը պսակուած ժէօն-թիւրք շարժումը խոշոր ոյժի մը չէր յենուր. Համիտ կրնար դիմադրութեան փորձ մը ընել, և այդ փորձը յաջողցնելու համար տակաւին անսահման զօրութիւն կար իր ետին: Բայց տեսնելով որ միայն բարի կը մտածուի իր մասին,

(*) Սահմանադրութեան հռչակումէն տասերկու օր ետք, ժէօն-թիւրք սպաներ Սկիւպի և Սելանիկի մէջտեղումնքը կառախումբէ մը դուրս քաջըջեցին Մուղաֆֆէս փաշան որ աւստրիական Իւվաէ-Միթրովիցա երկաթուղին անցնելիք ճամբաները ուսումնասիրելու պաշտօնը ունէր: Սպաները՝ հայրենիքին դէմ դաւաճանութիւն մը կը նկատէին աւստրիական ազդեցութիւնը Կայսրութեան մէկ մասին մէջ ամրապնդելու կոչուած այդ երկաթուղին ընծայուած ամէն աջակցութիւն, և ատոր համար է որ թուրքով ծածկեցին Մուղաֆֆէս փաշայի դէմքը:

և կատարուած շարժումն ալ ամէն բանէ առաջ կը միտի զինքը փրկել այն անկ դրութենէն որուն մէջ ինկած էր Մակեդոնիոյ համար ստանձնած յանձնառութիւններով, թողուց որ ժէօն-թիւրքերը տեղաւորուին, և ընդգրկեց անոնց տեսակէտը թէ իրօք զինքը շրջապատողներուն խաբէութեանց զոհուած էր:

Յեղափոխութեան մեղրալուսնի շրջանին ոչ ոք այնքան ճիգ ըրաւ սահմանադրական երեւալու՝ որքան Համիտ:



Պուլկար պահեստի տիպարներ




ԳԼՈՒԽ ԺԲ.

ՆՈՐ ԲԷԺԻՄԸ

Յուլիսեան Յեղափոխութեան առաջին արդիւնքներէն մէկն ալ սա եղաւ որ տէրութիւնները ստիպուեցան ձեռք քաշել Մակեդոնիոյ բարենորոգմանց համար եղած ու ըլլալիք բոլոր ձեռնարկներէն: Արդէն լոկ Անգլիա և Ռուսիա այդ միջոցին լրջօրէն կը մտածէին բարենորոգմանց վրայ: միւսները՝ Թուրքիոյ զանազան կողմերը իրենց ունեցած շահերը մեծցնելու կամ շահու նոր միջոցներ ստեղծելու ետեւէ էին: Հիմայ Թուրքիոյ ճակատագրին տէրը կը փոխուէր. Համիտ կ'իյնար երկրորդական գիծի մը վրայ, և անոր բացարձակ իշխանութիւնը, հոգ չէ թէ Սահմանադրութեան անունով և սահմանադրական հաստատութեանց միջոցաւ, կ'անցնէր նոր տարրի մը ձեռքը, որուն «Քօմիթէ» անորոշ անունը կուտային, առանց անոր իսկական ոյժին, տոկունութեան ու նպատակներուն նկատմամբ ապահով տեղեկութիւն մը ունենալու: «Քօմիթէ»ն ամենայն ինչ էր այդ շրջափոխութեան օրերուն: Յայտնուած էր ու կը յարատեւէր խորհրդաւոր պարագաներու մէջ, ու ոչ ոք գիտեր թէ տէրութեան համար գրծուած բնական ճամբաներէն որո՞ւն պիտի հետեւի իրօք: Որովհետեւ՝ տրկարանալէն, իր արտաքին ազդեցութիւնը կորսնցնելէն ասդին, Թուրքիա՝ երբեք չէր յաջողած սեփական քաղաքականութիւն ունենալ. տէրութեանց հանդէպ՝ սոսկ կրաւորական դիրք մը կը պահէր, և պարագաներուն համեմատ կ'իյնար այն ուղղութեան գիրկը որ կը յաջողէր ամէնէն հարկադրիչը դառնալ Պոլսոյ մէջ: Այդ ուղղութիւնը երբեմն անգլիականն էր, երբեմն ֆրանսականը, երբեմն ռուսականը, ու վերջին ատեններն ալ գերմանականը: Եւրոպայի մէջ կատարուած քաղաքական շրջափոխութիւնները աւելի պարզ ձեւի մը վերածած էին զայն. եւրոպական աշխարհավարութիւնը յանձնուած էր երկու քաղաքական հոսանքներու, մէկը այն գործերեակ Զինակցութիւնը կը վարէր, և միւսն ալ այն գործերեակ համա-

ձայնութիւնը կ'ուղղէր: Տէրութիւնները վստահ էին թէ նոր Բէժիմը երբեք չպիտի կրնայ ներգործական դեր մը խաղալ, և թէ միշտ կրաւորական դիրքի մը մէջ պիտի մնայ իրենց հանդէպ. բայց չէին գիտեր թէ իրօք ո՞ր կողմը պիտի հակի: Ամէնքն ալ իրենց հաշուին ակնկալութիւններ ունէին անկէ. նոր ու շահաւէտ ձեռնարկներու հեռանկարը բոլորը մէկանց



Վեհ. Սուլթանը Սիրքէճիի մէջ ողջերթ կը մտնէ զինուորներուն


կը յանկուցանէր: Բնական է՝ այս յոյսերով և այդ անորոշութեան մէջ՝ չպիտի ուղէին բնաւ Մակեդոնիոյ խնդիրը խառնշտկել, երբ մանաւանդ նոր մարդիկը որոնք անակնկալ կերպով ձեռք անցուցած էին Թուրքիոյ կառավարութիւնը, ոչ միայն Մակեդոնիան, այլ բովանդակ կայսրութիւնը մէկ ծայրէն միւսը դրախտի վերածելու խոստումներ կը շուայլէին ամէն օր:

Մնաց որ, ինչպէս ամբողջ երկրին, այնպէս ալ Մակեդոնիոյ մէջ՝ Սահմանադրութեան վերահսակումը անսահման խանդավառութեամբ ուղ- ջունուած էր, և դեռ շարաթ մը առաջ իրար կոտորող կամ թուրք տարրին հետ զարնուող բազմազան ցեղերը իրենց հերուան ցաւերն ու ցնցերը, իրենց ասելութիւնն ու քէնը մոռցած, հաւատքով ու հրճուան- քով ծագած նոր արշալոյսը կ'ողջունէին: Անմոռանալի այլ օրերուն մէջ ուր երէկուան թշնամիները իրարու կը փարէին իրր եղբայր համբուրուե- լով, դժուար թէ ո՛ր և է տէրութիւն կարենար անոնց անունով բարենո- րոգման խօսք ընել՝ առանց ծիծաղելի դառնալու: Մակեդոնական եղե- րեղութիւնը, Պ. Բինօնի բացատրութեամբ, հովուերգութեան մը կը վերածուէր. ամէն կողմ համայր. գայերն ու աղուէսները գոմերը մտած, խառնիխուռն կ'եղբայրանային ոչխարներուն հետ: Բոլոր ցեղերու հրո- սախումբերը, իրենց կոիւններէն հրաժարելով, լեռներէն քաղաք կ'իջնէին. Սանտանսքի՝ Կօրիս Սարաֆօֆի տէնօրին՝ Բանկցայի հետ Սելանիկ իջած էր ծափահարութեանց մէջ: Մակեդոնիոյ տարագիր Պուլկարները խմու- վին կը դառնային իրենց չէները: Ալպանացիք երդում կ'ընէին թէ այլևս իրար չպիտի կոտորեն, արիւնի հաշիւը սպանութեամբ չպիտի կարգադրեն. իսկ Հիլմի փաշա, իր հալածած, հետապնդած հրոսակներուն ճառեր կը կարդար՝ համերաշխութիւն քարոզելով: Սելանիկի, Մանասթըրի, Ակիւ- պի մէջ, ինչպէս կը պատմէ ականատես մը (*), խանդավառութիւնը ան- նըկարագրելի էր: Փողոցներու երկայնքը կ'երեւային Պուլկարներու, Սերպերու և Յոյներու բազմամրոյս թափօրներ, որոնք իրարու հետ կ'եղբայրանային ազատութեան ընդհանուր և հրճուագին գինովութեան մը մէջ: Հանրային հրապաշակներու վրայ, քիւլեպներուն ու թատրոննե- րուն մէջ ամէն մարդ Մարսէյեհզը կ'երգէր առանց դադար առնելու: Ինչ որ տարիներու ջանքերն ու պայքարները չէին կրցած ձեռք բերել՝ Սահ- մանադրութիւն բառը մինակը կ'իրականացնէր: Տարակոյս չկայ որ Նոր Բէթիմը հիասթափութիւն մըն էր Պուլկարներուն և առ հասարակ ընդհա- նուր Սլաններուն համար, քանի որ կ'ողջնչացնէր իրենց ազատուած սղ- գակիցներուն միանալու յոյսը, բայց բոլորն ալ հանգիստի պէտք ունէին քիչ մը շունչ առնելու համար. քոմիթէներու գործունէութիւնը և քոմի- թէները հետապնդող զինուորներու բռնութիւններն ու հարստահարու- թիւնները, տարիներու ընթացքին հաւասարապէս հարուածած էին Մա- կեդոնացի գեղջուկները. մէկուն ու միւսին զարտուրանքը զանոնք բռնա- դատած էր տուն ու տեղը թողլով հեռանալու, և կամ դժօխային կեանքի պայմաններու ենթարկուելու: Նոր Բէթիմը որ արդարութիւնն ու հաւասա- րութիւնը պիտի ունենար իրր առանցք, անցեալին զուլումն ու վնասները դարմանելու ամէն վստահութիւն կը ներշնչէր. ասոր համար ջերմու կը փարէին անոր:

Յեղափոխական կազմակերպութիւններն ու հրոսակախումբերը նոյն- պէս յոգնած էին տարիներ տեւող իրերասպան կռիւներէն և իրենք ալ

(*) René Moulin: Force et faiblesse de la Jeune-Turquie.

առիթ մը կը փնտռէին շունչ առնելու համար: Էն առաջ Մակեդոնիոյ «Ներքին կազմակերպութիւն»ը յարեցաւ Նոր Բէթիմին. իր անդամներուն երկպառակութիւնները մէկ կողմէն, տուած զոհերը միւս կողմէն, բաւա- կան տկարացուցած էին զինքը. շուտով լքեց իր դաւադրական հանգա- մանքը և օրինաւոր կազմակերպութեան մը բնոյթը ստացաւ, յայտարա- րելով որ դարձեալ դաւադրական գործունէութեան պիտի ձեռնարկէ, եթէ երբեք Նոր Բէթիմը չպսակէ Պուլկար ժողովուրդին ակնկալութիւնները: Իր անարկու Քոմիթէիները խուճախ խուճախ իջան Սելանիկ, ազատութեան երգերով, և Սահմանադրութիւնը ողջունեցին զէն ի ձեռին. Ժէօն-Թիւրքերը



Գարատաղցի հետեւակազորքեր

արտօնեցին զանոնք որ իրենց զէնքերը յանձնեն «Ներքին կազմակերպու- թեան»: Սերպերը նոյնպէս զէնքերնին վար դրին. Ալպանացիք, իրենց ան- միջական թշնամիները, Սահմանադրութեան կուսակից կ'երեւային, ճիշտ ինչպէս Քիւրտերը Հայաստանի մէջ. եղբայրութեան ձեռք մեկնեցին ա- նոնց, ճիշտ ինչպէս մերիները համբուրուեցան Քիւրտերուն հետ: Միայն Յոյները, կարծելով որ կատարուած չըջափոխութիւնը վաղանցուկ բան մըն է ու պիտի զսպուի մէկ օրէն միւսը, շարունակեցին իրենց հրոսա- կային գործունէութիւնը. յուլիս 18ին՝ Բիպացի պուլկարական գիւղը քսանըհինգ զոհ մէկանց տուաւ անոնց: Բայց Ժէօն-Թիւրքերը յաջողեցան իրենց հասկցնել թէ իրօք բան մը փոխուած է թուրքիոյ մէջ, և թէ այլևս պէտք չէ յուսան թէ կառավարութիւնը կրնայ անպատիժ թողուլ կամ քաջալերել իրենց սպանութիւնները: Օգոստոս 4էն սկսեալ՝ բոլոր յոյն հրոսախումբերը հրաման ստացան ցրուելու. հրոսակները խուճախ խուճախ իջան Սելանիկ, և իրենց զէնքերը կառավարութեան յանձնելով անցան Յունաստան:

Ժէօն-Թիւրքերը այս խանդավառութիւնը սքանչելապէս շահագոր-

ծեցին, Մակեդոնիոյ մէջ հաստատուած եւրոպացի պաշտօնատարները քաղաքավարութեամբ ճամբու դնելու համար: Այլևս Համիտի, հետեւաբար նաև բունութեանց չըջանը վերջացած էր, և ազատութեան, վերանորոգման չըջանը որուն մէջ մտած էր Թուրքիա, այդ բացառիկ պաշտօնատարներուն և անոնց կիրարկած բացառիկ մէթոտներուն պէտք չէր թողուր: Իրենք ո՛չ միայն Մակեդոնիան, այլ բովանդակ Կայսրութիւնը պիտի բարեկարգէին, բայց ատոր համար պէտք էր որ նախ տէր մնային իրենց տան մէջ. և արդէն, բուն իսկ շահակից ժողովուրդները, իրենց խանդավառ ցոյցերով կ'ապացուցանէին թէ բացարձակ հաւատք ունին նոր Բէթիմին վրայ: Մակեդոնիոյ եւրոպացի պաշտօնատարները, իրենց



ՊԷԿԻՐԱՏԻ ՏԵՍԱՐԱՆՆԵՐԸ
Արքայական պալատին հրապարակը

կարգին, Սահմանադրութեան հռչակումէն ասդին շիտիեր մնացեր էին՝ դեռ որ մը առաջ իրարու վիզ պըրոզ, և ապահով կերպով որ մը վերջը դարձեալ իրարու վիզ պըրելու սահմանուած այդ ժողովուրդներուն համարուուիլը տեսնելով: Շատ չանցած՝ քաղաքային գործակալները, ոստիկանութեան մարդիչներն ու ելմտական քննիչները՝ իրենց թարգմաններով, քարտուղարներով ու հետեւորդներով թողուցին գացին: Ժէօն-Թիւրքերը՝ որոնք անոնց ներկայութեան պատճառաւ մանաւանդ փութացուցած էին իրենց շարժումը, զանոնք ճամբու դնելով կարծեցին անդրանիկ յաղթանակ մը տարած ըլլալ ընդդէմ եւրոպական ոտնձգութեանց, առանց մտածելու թէ ատով աւելի փորձանաւոր ոտնձգութեանց վտանգին կ'ենթարկէին Կայսրութեան եւրոպական ստացուածքները: — «Այն անդարմանելի սխալը, զոր 1908 Օգոստոսին իսկ գործեցին ժէօն-Թիւրքերը, կը գրէ Պ. Վիքթոր Պէռար, և որ ներկայ բոլոր աղէտներուն աղբիւրը եղաւ, մակեդոնական բարենորոգումներու ջնջումն էր: Եթէ ժէօն-Թիւրքերը 1908ի Մակեդոնիան ձգած ըլլային եւրոպական ոստիկանութեան հսկողութեան

ու նաև երաշխաւորութեան տակ, միջազգային քումիսէրներու հսկողութեան ու նաև պահպանութեան ներքև, 1912ի Մակեդոնիան փակուած կ'ըլլար Յունական, Սերպ և Պուլկար բանակներուն դէմ. Մակեդոնիան տակաւին Օսմանեան հող պիտի մնար այսօր: 1908 Օգոստոսին, Թուրքերու ճշմարիտ բարեկամները պաղատեցան այն ատենուան վարիչներուն որ պահեն բարենորոգումները, որպէս զի անոնք տան իրենց բոլոր արդիւնքը. յետոյ, Մակեդոնիոյ խաղաղեցումէն ետք, պահպանութեան և փրկութեան այդ կազմը փոխադրեն նախ Ալպանիա, յետոյ Թրակիա, և վերջապէս Հայաստան: Ժէօն-Թիւրքերը նախընտրեցին մտիկ ընել Վիեննայի և Բեթէրսպուրկի շողմութիւններուն: 1908ին, այդ միւսոյն Օգոստոսը դեռ չվերջացած, յեղափոխութենէն երեք չորս շաբաթ ետք, և չորս հինգ շաբաթ առաջ Պօսնա-Հէրսէքի կցումէն՝ որ այդ պահուն կը պատրաստուէր, Ռուսերն ու Աւստրիացիները փութացին առաջարկել իրենց քաղաքային գործակալներուն յետ կոչումը և բարենորոգումներու ջնջումը (*): — Այսուհետև ինչ պէտք կայ մեր խնամակալութեան, կ'ըսէին այդ երկու բարի ընկերները ժէօն-Թիւրքերուն. դարձեալ ձեր կտուցին մէջ առէք Մակեդոնիոյ ձեր պանիրը. դուք այլ ևս փոխած էք ձեր փետուրները. հիմայ դուք բաւական սլացք ունիք ձեր սեփական թևերով թռելու և ազատորէն մասնակցելու համար մեծ տէրութեանց ներդաշնակութեան: — Ժէօն-Թիւրքերը, հակառակ իրենց Ֆրանսական մշակոյթին, Լաֆօնթէն չէին կարդացած. այդ արբշիւ բառերուն վրայ՝ ուրախութեամբ լեցուեցան. հիմայ կը տեսնենք թէ ո՛ր ինկած է Մակեդոնիոյ պանիրը (**): »:

Տէրութիւնները՝ Մակեդոնիայէն իրենց պաշտօնատարները քաշելով յետին միտքեր ունէին անշուշտ, ինչպէս բացատրեցինք արդէն: Ատիկա չէր նշանակեր սակայն թէ անպայման վստահութեամբ լեցուած են նոր Բէթիմին նկատմամբ: Ռուսիա որ առաջիններէն մէկը եղած էր այդ մասին, պայմանաւոր կերպով միայն ետ կը կոչէր իր մարդիկը, ինչպէս ցոյց կուտայ 1908 [Յուլիս 25ին, իր գործակալները ետ կանչելէ առաջ, տէրութեանց ուղղած հետեւեալ շրջաբերականը որուն մէջ

(*) ԵԱՆ. ԷԵԶ. — Պ. Պէռար կը մոռնայ որ Ռուսիոյ և Աւստրիոյ այս առաջարկէն շատ առաջ՝ ժէօն-Թիւրքերը իրենք իրենցմէ զգացուցին Մակեդոնիոյ մէջ գործող եւրոպացի պաշտօնատարներուն թէ այլևս իրենց ծառայութեան հարկ չի մնար: Փաստը նոյն ինքն Պ. Բինօն կ'ընծայէ, իր հետեւեալ տողերով. — «Շատ տեղեր, մասնաւորապէս ռուսական շրջանակին մէջ (Սերանիկ) օտար սպաններուն ազդարարութիւն եղաւ (ժէօն-Թիւրքերու կողմէ), առանց սպառնալիքի, թէ խելացութիւն պիտի ընեն իրենց պաշտօնին չձեռնարկելով կամ անկէ հրաժարելով: Սէրէզի մէջ, ուր Ֆրանսացի գլխաւոր Պատման հաւաքած էր իր հրամանին ենթակայ բոլոր սպաները, ժէօն-Թիւրքերը ծափահարեցին զինքը, բայց նոյն ատեն յոյս յայտնեցին թէ այլևս իրենց ծառայութեանց պէտք չպիտի մնայ» (L'Europe et la Jeune-Turquie, էջ 61-62): Այս դէպքերը տեղի կ'ունենային յեղափոխութեան յաջողութենէն անմիջապէս վերջ, երբ տակաւին ո՛չ Աւստրիա, ոչ ալ Ռուսիա որոշած էին իրենց քաղաքային գործակալները ետ կանչել:

(**) «Pour les Peuples de l'Orient», 1913.


Պ. Իզվոլսքի մակեդոնական բարենորոգմանց պատմութիւնը ընկել վերջ, կը յարէք. — «Հետապնդելով բարենորոգմանց գործադրութիւնը, ո՛չ Ռուսիա, ոչ ալ միւս տէրութիւնները երբեք չեն ներշնչուած Թուրքիոյ դէմ թշնամական զգացման մը կամ Սուլթանին վեհապետական իրաւունքները սեղմելու գաղափարէն: Բայց փորձառութիւնը ապացուցած ըլլալով որ Օսմ. վարչութեան ներկայ անկազմակերպ վիճակին մէջ, որքան ատեն որ Թուրք Բէօիմը հիմնուած մնայ Թուրքիոյ ոչ-խլամ ժողովուրդներուն ստորադասութեան վրայ, ոչ մէկ զգալի բարեփոխում կտրելի է ակնկալել Բ. Դրան ջանքերէն, տէրութիւնները պէտք է ստիպողաբար պահանջեն որ Մակեդոնիոյ հարցը լուծուի ամենալայն ապակեղրոնացման, ինչպէս նաև դրական հակալուծի մը հաստատութեամբ: Յետոյ, եթէ մէկ կողմէ Թուրք Պետութեան ընդհանուր սահմանադրութիւնը, իբր անկախ պետութեան սահմանադրութիւն, ենթակայ չէ պետութեանց միջամտութեան, միւս կողմէ, այս վերջինները, միջազգային պայմանագրերու շնորհիւ անվիճելի իրաւունք ունին հսկելու որ լաւագոյն վարչութիւն մը հաստատուի Եւրոպական Թուրքիոյ նահանգներուն մէջ, որոնց համար մասնաւոր կազմակերպութիւն մը նախատեսուած չէր Պերլինի Դաշնագրով: Այս սահմաններուն մէջ պէտք է կատարուէր տէրութեանց գործողութիւնը և Կայս. կառավարութիւնը երբեք չէ մտածած իր կողմէ գլխի անցնիլ այդ սահմանները»: Պ. Իզվոլսքի, Թուրքիոյ մէջ կատարուած նոր շրջափոխութիւնը, — Սահմանադրութեան հռչակումը և անով նուիրագործուած հաւասարութեան, ինչպէս նաև հանրային իշխանութեանց կանոնաւոր կազմակերպութեան սկզբունքները, — յիշատակելով կ'աւելցնէք. — «Յայտնի է թէ այս սկզբունքներուն անթերի գործադրութիւնը կը ձգտի ապահովել մակեդոնացի ժողովուրդներու ճակատագիրը, տէրութեանց թերազրած տեսակէտներուն համաձայն: Ահա այս է որ Կայս. կառավարութիւնը կը փութայ ճանջնալ իր կարգին. հետեւաբար, պատրաստ է առայժմ ետ կենալ ամէն դիմումէ որ Թուրքիոյ կողմէ կրնայ նկատուիլ իբր անվստահութեան ցոյց, հանդէպ Սուլթանին և Օսմ. կառավարութեան կողմէ բարենորոգումներու իրականացման մասին ցոյց տրուած կամեցողութեան: Հետեւելով այս պարագային Անգլիոյ օրինակին՝ որ հրոսախումբերու գործողութեանց դադրելուն վրայ ետ կեցած է շրջուն զօրախումբերու կազմութեան վերաբերող իր ծրագիրը Դրան ներկայացնելու մտադրութենէն, Կայս. կառավարութիւնը իր կարգին առժամաբար ետ կը կենայ ներկայացնելէ բարենորոգմանց իր ծրագիրը, զոր դահլիճներուն կը ներկայացնէ սոսկ տեղեկութեան համար, որպէս զի ապագային կարելի ըլլայ անկէ օգտուիլ, եթէ դէպքերը ստիպեն տէրութիւնները որ իրենց նախնական մեթոտին վերադառնան: Որովհետև պէտք է լաւ ըմբռնել թէ Ռուսիոյ և միւս տէրութեանց ետ կենալը չի կրնար ոչ բացարձակ ըլլալ, ոչ ալ անպայման. դաշնագրիներով տէրութեանց ունեցած իրաւունքները կան ու կը մնան անայլայ: Ռուսիա ուշադրութեամբ պիտի հետևի այն ջանքերուն զորս Թուրքիա պիտի ընէ նոր Բէօիմը ապահովելու համար: Ոչ միայն ձեռնպահ պիտի մնայ, այլ նաև իր

ազդեցութիւնը պիտի գործածէ Պալքանեան Պետութեանց մօտ, որպէս զի անոր արգելք չըլլան: Բայց միւս կողմէ, հաւատարիմ իր քաղաքական աւանդութեանց, Կայս. կառավարութիւնը թէ՛ իր և թէ՛ միւս տէրութեանց բարենորոգիչ դերը վերջացած չպիտի նկատէ, մինչև որ Սուլթանին կողմէ ձեռնարկուած գործը Մակեդոնիոյ մէջ իրաց վիճակը բարեփոխէ, որով միայն վերջ պիտի գտնեն ինկապէս վտանգուած ընդհանուր խաղաղութեան բնական մտահոգութիւնները Պալքաններու մէջ: Մէկ խօսքով, Ռուսիա եթէ տեսնէ որ Թուրքիոյ Եւրոպական նահանգներուն կացութիւնը նախնական վիճակին մէջ կը մնայ, ինքզինքը պարտաւոր պիտի զգայ տէրութեանց յիշեցնելու թէ անհրաժեշտաբար պէտք է ամենավրճաւոր կերպով վերսկսին իրենց հաւաքական բարենորոգիչ գործողութեան, զոր հիմայ ընդհատած են»:

Տէրութիւնները հաւանութիւն յայտնեցին Ռուսիոյ վերապահումներուն, ընդունելով սա սկզբունքը թէ իրենց միջամտութեան իրաւունքը Մակեդոնիոյ մասին չի ջնջուած, այլ լոկ ժամանակաւորապէս ընդհատուած է, բարենորոգմանց անունով երզուրնցող նոր Բէօիմը ազատ ձգելու համար որ յարգէ իր յանձնառութիւնները: Այդ սկզբունքին հիման վրայ է որ ներկայ պատերազմին յայտարարութենէն քիչ առաջ, — թէեւ պէտք եղածէն շատ ու շատ ուշ, — տէրութիւնները միջամտեցին, Մակեդոնիոյ բարենորոգմանց հարցը նոյն իսկ բոլորովին արմատական կերպով մը վերաբարձելով. Ռուսիա ամէնէն աւելի փութկոտը եղաւ այդ մասին, կացութեան բովանդակ պատասխանատուութիւնը բեռնելով Օսմ. կառավարութեան վրայ, զոր կ'ամբաստանէր թէ չէ յարգած իր յանձնառութիւնները՝ Մակեդոնիոյ մէջ իրաց վիճակը բարեփոխելու մասին: Տարակոյս չկայ որ անհիմն չէր այս գանգատը, բայց տեսնենք թէ ինք, Ռուսիա, ինչպէ՞ս յարգեց վերոյիշեալ շրջաբերականին մէջ ստանձնած յանձնառութիւնը թէ իր ազդեցութիւնը պիտի գործածէ Պալքանեան Պետութեանց մօտ, որպէս զի արգելք չըլլան Թուրքիոյ կողմէ նոր Բէօիմը ապահովելու նպատակով ըլլալիք ջանքերուն:

Առաջին հարուածը նոր Բէօիմին դէմ՝ նոյն ինքն Պուլկարիա տուաւ, այդ շրջաբերականէն ճիշտ ու ճիշտ երկու ամիս վերջ բացարձակ անկախութիւն հռչակելով: Վստահ Ռուսիոյ աջակցութեան վրայ, և քաջալերուած Աւստրիայէն, որ Պուլկարիոյ բռնաբարել տալով Պերլինի Դաշնագիրը՝ Պօսնա-Հէրսէքի կցման գետինը կը հարթէր, Ֆէրտինանտ իշխան այցելեց Պրանց-Յօզէֆ կայսեր, որուն կողմէ արքայական պատիւներով ընդունուեցաւ Պուտարէշթի մէջ: Երկիր վերադարձին՝ անկախութեան հռչակումը որոշուած էր վերջնականապէս, կը պակսէր միայն առիթը, և ատ ալ ստեղծեց իր Պոլսոյ դեսպանը, Պ. Կէչօֆ (հիմայ նախարարապետ), որ Մեծ-Եպարքոսին կողմէ տրուած հացկերոյթի մը չհրաւիրուիլը պատճառ բռնելով առաւ քալեց Պոլսէն: Պուլկարիա ստիպուեցաւ բացատրութիւն պահանջել, և առաջ եկաւ դիւանագիտական տաղնապ մը, զոր երկաթուղիներու հարց մը բոլորովին կնճռոտեց: Պուլկարիոյ գլխերուն մէկ մասը (Արեւելեան Բուժէլի մէջ) Արեւելեան Երկաթուղիներու Ընկե-

րութիւնը կը շահագործէր, ատոր համար որոշ գումար մը վճարելով Թուրքիոյ . այս վճարումը կը մնար այն ատենէն երբ Արեւելեան Բումէլի Թուրքիոյ մաս կը կազմէր: Պուլկարները սակայն հաշտ չէին այս դրութեան հետ. Պուլկար երկրին մէջ թրքական միջնագետին մը կ'երեւար




« Զեռի թերթի վե՛ր . . . »

Թրքական գեղըն մը գրաւումը Պուլկարներու կողմէ

իրենց՝ երկաթուղիներու այդ թեւարկութիւնը: Ճիշտ այն միջոցին ուր Պուլկար կառավարութիւնը Պոլսէն բացատրութիւն կը պահանջէր Պ. Կէշօֆի միջադէպին նկատմամբ, նախախնամական երկաթուղիի գործադու մը ծագեցաւ Պուլկարիոյ մէջ, և կառավարութիւնը ստիպուեցաւ զինուոր-

ներու միջոցաւ ապահովել երկաթուղիի սպասարկութիւնը: Գործադու շուտով դադրեցաւ, բայց Պուլկար կառավարութիւնը մերժեց զինուորները քաշել, և երկաթուղին յանձնել Ընկերութեան պաշտօնեաներուն: Իր այս ընթացքը արդարացնելու համար կ'առարկէր թէ Ընկերութիւնը



ՌՈՒՍ ՕՂԱՆԱՒՈՐԴ ԲՈՐՈՑ

Որ էտիրնէն պաշարող պուլկար բանակին օժանդակեց պատերազմի սկզբնաւորութեան օրերուն

գոհացուցիչ կերպով մը չի կատարեր սպասարկութիւնը, և պէտք եղածին չափ կառախումբեր չի տրամադրեր: Միևնոյն ատեն, կ'առաջարկէր Դըրան հետ հաշտարար կերպով մը խնդիրը կարգադրել: Օսմ. կառավարութիւնը սակայն չուզեց համաձայնիլ, և Պէրլինի Դաշնագրին հիման վրայ գիմում ըրաւ տէրութեանց: Աւստրիա, Իտալիա, Գերմանիա և Անգլիա զիտողութիւններ ներկայացուցին Սօֆիայի դահլիճին. իսկ Ռուսիա, «Պալքանեան տէրութեանց մօտ իր ազդեցութիւնը կիրարկելու» լաւագոյն եղանակը

նկատեց ձեռնպահութիւնը: Չորս տէրութեանց դիտողութեան Պուլկարիա պատասխանեց Ծանուցագրով մը, որուն մէջ կը յայտնէր թէ երկաթուղիին իւրացումը կատարուած է ժողովուրդին պահանջմամբ, թէ ժողովուրդը պատրաստ է ամէն կերպով օժանդակելու կառավարութեան, որով անհնար է երկաթուղիին վերադարձումը. «Ժողովուրդը երբեք թոյլ չպիտի տայ ատիկա, կը յարէր ծանուցագիրը, և ոչ մէկ կառավարութիւն պիտի կրնայ ոյժ գործածել անոր դէմ»:

Սեպտեմբեր 22ին (5 հոկտ.), Պօսնա-Հէրսէքի տագնապին յայտնութենէն երեք օր առաջ, Ֆէրիմանտ իշխան աւելի վճռական քայլ մը առաւ, ինքզինքը հանդիսաւորապէս Ձար, և Պուլկարիան ալ անկախ թագաւորութիւն հռչակելով հին մայրաքաղաքին՝ Թիրնովօի մէջ, հետեւեալ յայտարարութեամբ.

Համաձայն մեր անմուսնալի ազատարարին, և մեզի ազգակից Ռուսական մեծ ազգին կամքին, և օգնութեամբ Ռուսմանիոյ թագաւորին հպատակ մեր բարեբարեկամներուն ու դրացիներուն, ինչպէս նաև Պուլկար հերոսներուն, 1878 փետրուար 18ին խորտակուեցան այն շղթաները որոնք դարերէ ի վեր կը կաշկանդէին Պուլկարիան, որ մեծ ու փառաւոր տէրութիւն մըն էր երբեմն Այդ թուականէն մինչեւ այսօր, երեսուն տարուան միջոցին, Պուլկար Ազգը՝ պահպանելով ազատութեան դատին աշխատողներուն յիշատակը, և ներշնչուելով անոնց աւանդութիւններէն, ինքն իսկ անդադար աշխատեցաւ իր գեղեցիկ երկրին յառաջդիմութիւնը ապահովելու թէ՛ իմ, և թէ՛ հանդուցեալ Այդքսանդր իշխանին օրով՝ անիկա դարձաւ այն տեսակ ժողովուրդ մը, որ իմացական ու անտեսական յառաջդիմութեան առաւելութիւններով օժտուած, կրնայ հաւասարութեան աստիճանին վրայ տեղ բռնել քաղաքակիրթ ժողովուրդներու ընտանիքին մէջ: Այդ ճամբուն մէջ մտնելէն վերջ, ոչինչ կրնար կասեցնել Պուլկարիոյ յառաջդիմութիւնները, ոչինչ կրնար արգելել իր յաջողութիւնը: Այս է ազգին փափաքը, այս է ազգին կամքը: Թող իր կամքը կատարուի Պուլկար ազգն ու իր պետը մէկ զգացում ու մէկ ըզմանք միայն կրնային ունենալ: Դործնակամապէս անկախ ըլլալով հանդերձ, Պուլկար ազգը իր բնական ու խաղաղ բարգաւաճման մէջ իրեն դէմ կը գտնէր կարգ մը ինքնախաբէութիւններ ու ձեւական սահմանաւորումներ, որոնք ցրտութիւն մը կը գոյացնէին թուրքիոյ և Պուլկարիոյ յարաբերութեանց մէջ: Ես ու Պուլկար Ազգը կը փափաքինք հրճուանքով սղջունել թուրքիոյ քաղաքական բարգաւաճումը: Պուլկարիա ու թուրքիա, ազատ և կատարելապէս անկախ իրարմէ, կրնան յարատեւել այն տեսակ սլայմաններու մէջ որոնք միջոց պիտի ընծային աւելի սերտ դարձնելու իրենց բարեկամական յարաբերութիւնները և ներքին խաղաղ բարգաւաճման նուիրուելու: Ազգային պահանջումները գոհացնելու և ազգին բաղձանքը պահելու նուիրական նպատակէն ներշնչուած, Ամենակարողին օգնութեամբ, 1885 Սեպտեմբեր 6 էն ի վեր միացեալ Պուլկարիան կը հռչակեմ անկախ թագաւորութիւն, ազգին հետ ես ալ հաստատապէս համոզուած եմ թէ այս գործողութիւնը Մեծ Տէրութեանց հաւանութեան առարկայ պիտի դառնայ:

Կեցցե՛ ազատ ու անկախ Պուլկարիան.

Կեցցե՛ Պուլկարական Ազգը:

ՖէրՏԻՄԱՆՏ

Թիրնովօ, 22 Սեպտեմբեր, 1908

Քասակերկաներոյ օտրի իմ գահակալութեան


Նոյն օրը, Պուլկարիոյ արտաքին գործոց նախարարը տէրութեանց կը հաղորդէր թագաւորութեան հռչակումը, մէկ կողմէ հասկցնելով որ Պուլկար Ազգը պատրաստ է զէն ի ձեռին պաշտպանելու իր անհերքելի

իրաւունքը, և միւս կողմէ ալ յայտնելով թէ հանդարտութեամբ պիտի սպասէ տէրութեանց որոշման: Բացի Բ. Գոնէն՝ ոչ մէկ տէրութիւն առարկութիւն ըրաւ: Ուրիշ մտահոգութիւն ունէին անոնք: Ինչպէս ըսինք արդէն, երեք օր առաջ՝ Աւստրիոյ Կայսրը եւրոպական տէրութեանց վեհապետներուն ուղղուած նամակով մը ծանուցած էր Պօսնա-Հէրսէքի վերջնական կցումը Աւստրիական Կայսրութեան: Վիեննայի Գահ-լիճը այս որոշումը փութացուցած էր անոր համար որ Պօսնայի աւելի քան 600,000 Իսլամները, անշուշտ արտաքին դրդումներու անսպով, կը պատրաստուէին երեսփոխան զրկելու Պոլսոյ մէջ բացուելիք Օսմ. Խորհրդարանը: Պէտք էր որոշ կացութիւն մը ստեղծել և խզել ամէն կապ որ երկու նահանգները, հոգ չէ թէ անուանապէս, կը միացնէր Օսմ. Կայսրութեան: Աւստրիական Կառավարութիւնը այս որոշմամբ կը քանդէր Արեւելքի սրբաբո խոսն, հետեւաբար նաև այն հաւասարակշռութիւնը զոր Պէրլինի փորձանաւոր դաշնագրէն ասդին՝ տէրութիւնները այնքան մեծ դժուարութիւններով կը յաջողէին պահպանել Արեւելքի մէջ: Բնական է առաջ պիտի գար ծանր տագնապ մը, որուն մէջ Աւստրիա իր դէմը պիտի գտնէր ոչ միայն թուրքիան, այլ նաև Երրեակ Համաձայնութիւնը, Սերպիան ու Գարատաղը, նոյն իսկ իր դաշնակիցը՝ Իտալիան: Եւրոպայի ընդհանուր համակրութեան մէջ գործի գլուխ անցած Ժէօն-Թիւրքերը շատ դառն գտան այդ հարուածը, և բողոքեցին Պէրլինի Գաշնագրին անուսնով, առանց կարեւորութիւն ընծայելու այն սիրաշահութեան փորձին, զոր Աւստրիա կ'ընէր իրենց հանդէպ, Պօսնա-Հէրսէքի կցման փոխարէն թուրքիոյ վերադարձնելով Նովի Բազարը: Ժէօն-Թիւրքերը իրենց բողոքը արժեցնելու համար ուրիշ յենակ մըն ալ ունէին: 1878 ին, երբ դեռ Պէրլինի Գաշնագիրը չէր ստորագրուած, թուրքիոյ պատուիրակներուն հետ կնքուած գաղտնի պայմանագրութեամբ մը Աւստրիա յանձն առած էր ընդ միշտ յարգել Սուլթանին գերիշխանութիւնը երկու նահանգներուն վրայ, Պէրլինի Գաշնագրով նուիրագործուելիք Աւստրիական զբաւումը նկատելով լոկ ժամանակաւոր կարգադրութիւն մը: Սերպիա և Գարատաղ աւելի բուռն կերպով բողոքեցին, որովհետեւ երկու նահանգներուն ընկալիչները մեծ մասամբ սերպ էին, և յետոյ, անոնց կցմամբ, քիչ մը աւելի մօտէն կ'իյնային Աւստրիական թաթին տակ, որ արդէն շատ ծանր կը ճնշէր իրենց վրայ: Երկար ատեն կար որ ամենամտերիմ յարաբերութիւններ կը մշակէին Պօսնա-Հէրսէքի իրենց ազգակիցներուն հետ. ստեղծուած էին չափազանց սերտ կապեր՝ երկու պետութեանց և անոնց միջեւ, մարմին առած էին ապագայի յոյսեր, այն հիման վրայ թէ ազգայնութեանց սկզբունքին անուսնով օր մը կարելի կը դառնայ երազուած միացումը: Աւստրիոյ որոշումը հիմէն և շատ ալ բիրտ ու անդարմանելի կերպով մը կը քանդէր այս յոյսերը: Ռուսիա և իրեն հետ ալ Անգլիա ու Ֆրանսա ոյժ տուին երկու պալքանեան պետութեանց բողոքներուն. Ռուսիոյ տեսակէտը պարզ էր, քանի որ Սլաւութեան դէմ ուղղուած հարուած մըն էր Պօսնա-Հէրսէքի կցումը. Սլաւ մեծ զանգուածի մը անջատումը Պալքանեան Պետութեանց ակնկալութիւններէն՝ կորուստ

մըն էր այն ազդեցութեան չըջանակէն զոր Ռուսիա կ'աշխատէր հաստատել Պալքաններու Սլաւ երկիրներուն և ժողովուրդներուն մէջ, գերման տարրին դէպի Արեւելք արշաւը կասեցնելու համար: Անգլիա համարման նկատումներ ունէր: Արեւելքի մէջ գերման ծաւալման դէմ մաքառելով՝ իր Հնդկական Կայսրութիւնը քիչ մը աւելի ապահոված կ'ըլլար: Իսկ Ֆրանսա որ ուղղակի շահակից չէր Պալքաններու մէջ, Ռուսիոյ ոյժ կուտար իր դաշնակցի պարտականութեան հաւատարիմ մնալու համար: Գալով Իտալիոյ, Ադրիականի հաւատարակչութեան պահպանման մէջ մեծ շահ ունէր անշուշտ, Պօսնա-Հէրսէքի կցմամբ, Աւստրիա կը խանգարէր նաև այդ հաւատարակչութիւնը: Թուրքիայէն աւելի անմիջական կերպով մը մնաստուղ երկու պալքանեան պետութիւնները՝ Գարատաղ և Սերպիա, իրեն կապուած էին խնամութեամբ: Սլաւոնիոյ մէկ մասին վրայ իր ունեցած ակնկալութեանները իրականացնելու համար այդ երկու պետութեանց բարեկամութեան պէտք ունէր. անոնց զօրացումը ուղղակի շահ մըն էր իրեն համար: Այս պատճառաւ ինք ալ ոյժ տուաւ անոնց բողոքներուն:

Ահա այս իրարու ներհակ շահերու պաշտպանութեան անունով ծագեցաւ 1908ի տագնապը զոր առաջ բերած էին Աւստրիա և Պուլկարիա, առաջինը Պօսնա-Հէրսէքի կցմամբ և վերջինն ալ Արեւելեան Երկաթուղիներու գրաւմամբ ու թագաւորութեան հռչակմամբ: Աւստրիոյ յարուցած հարցը լուծուեցաւ Երրեակ Զինակցութեան յաղթանակով: Գերմանիոյ կայսեր սպառնալից միջամտութիւնը ասպարէզը բաց թողուց իր դաշնակցին առջև. Ժէժն-Թիւրքերը, զէնի ձեռին իրենց իրաւունքը պաշտպանելու անկարող, միջոց մը յաղթականապէս մարտնչեցան տկարներու դէմքով, պոյքթով, և յաջողեցան գոնէ 54 միլիոն ֆրանքի գումար մը փրցնել Աւստրիայէն՝ երկու նահանգներուն փոխարէն: Սերպիա և Գարատաղ քիչ մնաց որ պատերազմի բռնուէին Աւստրիոյ հետ. առաջինը ստիպուեցաւ գոհանալ առևտրական դաշնագրի մը կնքմամբ որ իրեն կարգ մը տնտեսական առաւելութիւններ կ'ապահովէր, իսկ վերջինը, աւելի բախտաւոր, յաջողեցաւ վերջնականապէս Աւստրիոյ թեւարկութենէն ազատել իր Անթիվարի նաւահանգիստը: Աւստրիա այս զիջողութիւնը ըրած էր առաւելապէս Իտալիան գոհացնելու համար, բայց իտալական հանրաքին կարծիքը չուղեց ատով բաւականանալ. հակաւստրիական ծանր ցոյցներ տեղի ունեցան Հռոմի փողոցներուն և Խորհրդարանին մէջ, մամուլը վերաբարձեց Աւստրիոյ դէմ գոյութիւն ունեցող վաղընջուց անսիրելութիւնը, բայց ի վերջոյ՝ Ափրիկեան Տրիպոլտոյ մասին տրուած յոյսեր մեղմեցին Իտալիոյ դժգոհութիւնը: Ֆրանսա նոյնպէս ձայնը քաշած էր Մարոքի պատճառաւ. խաղաղ Եւրոպա մը պէտք էր իրեն՝ որպէս զի Ափրիկէի մէջ սկսած գործը առաջ տանի. այս մտքով՝ պայքարին լուծման համար ոչինչ խնայեց՝ առանց իր դաշնակցի պարտաւորութեանց դէմ դաւաճանելու: Ռուսիա ի դուր աշխատեցաւ Աւստրիոյ ձեռք բերած առաւելութիւնը հակակշռել Նեղուցները բանալ տալով. Անգլիա հակառակ էր ատոր. ստիպուած՝ համակերպեցաւ իր դիւանագիտական պարտութեան, զոր յաջորդ տարին պիտի դարմանէր Բոցտամի տեսակցութեամբ Գերմանիոյ

հետ կնքուած պայմանագրով, որ Փոքր Ասիոյ մէջ խոշոր առաւելութիւններ կ'ընծայէր իրեն, ի մնաս թուրքիոյ: Գերմանիա յանձն կ'առնէր Պարսկաստանի ուսական ազդեցութեան չըջանակէն հեռու պահել Պաղտատի երկաթուղին, ինչպէս նաև ո՛րևէ կերպով թուրքիոյ չաջակցի՝ երբ այս վերջինը փորձուէր երկաթուղի շինել դէպի ուսական սահմանները. այս պայմանագրով՝ թուրքիա միանգամ ընդմիջտ կը զրկուէր իր արեւել-



ԹՐԱԿԻՈՅ ՎԻՃԵԼԻ ՎԱՅՐԵՐԸ

Որոնք պատճառ դարձան երկրորդ պատերազմին

եան սահմաններուն պաշտպանութեան համար երկաթուղիի գիծեր հաստատելու միջոցներէն, մինչդեռ Ռուսիա ազատ կը մնար իր ուզած ուղղութեամբ նոր գիծեր շինելու, ինչ որ թուրքիոյ վրայ անազին ռազմական գերակշռութիւն մը կ'ապահովէր իրեն:

Պուլկարիա նոյնպէս յաղթանակով ելաւ իր յարուցած վէճէն: Տագնապի առաջին օրերուն, մինչդեռ Եւրոպա Պօսնա-Հէրսէքի կցման կնճուտութիւններով զբաղած էր, փութով սկսաւ անարկու զօրահանութեան մը, որուն նպատակը ո՛չ այնքան երկիրը պատերազմի մղել, որքան թուրքիան վախցնել էր: Պուլկարիա իր զարնուրելի բանակով կը սպառնար խոյանալ Էսիրնէի վրայ և ջախջախել Օսմ. բանակը զոր Յուլիսեան Յեղա-

փոխութիւնը, և անոր հետեւանքը եղող քաղաքական տարամիտութիւններ կազմալուծած էին մասամբ: Թուրքիա սակայն չհանրեկեցաւ այդ սպառնալիքէն: Ժէօն-Թիւրքերը, իրենց ազգայնական զգացմանց մէջ խոցուած, տասնըհինգ օրուան մէջ զինուորական շատ կարեւոր ոյժեր համախմբեցին Էտիհնէի և պուլկարական սահմանագլխուն միջեւ: Պուլկար ժողովուրդին ուզածն ալ ատ էր. ուզածաշունչ միթիւնկներ կը գումարուէին երկրին չորս կողմը, և քիչ մը ամէն Պուլկար կը կարծէր թէ վերջապէս հասած է երեսուն տարիէ ի վեր բղձացուած օրը, — Պէրլինի վեհաժողովին անիրաւութիւնը իրենց սեփական ձեռքով դարմանելու առիթը, որուն վրայ խորհելէ երբեք չէին դադրած և որուն համար պատրաստուած էին անդուլ աշխատութեամբ և անսահման զոհողութիւններով: Ֆէրտինանտ Իշխանը սակայն՝ աւելի յստակատես քան իր ժողովուրդը, չէր սիրեր առաջին քայլը չառած երկրորդ քայլը առնել. դեռ ժամանակ կար այդ օրուան. և յետոյ, ինչ պէտք արիւն թափելու խնդրի մը համար զոր խաղաղութեամբ կարգադրելու մէկէ աւելի միջոցներ կային: Հոկտեմբեր 16ին՝ հեռագիր մը ուղղելով Ֆրանսայի Հանրապետութեան Նախագահին, անոր միջամտութիւնը խնդրեց Թուրքիոյ հետ առկախ վէճը կարգադրելու համար. Իշխանը կը խոստանար դրամական հատուցմամբ մը փոխարինել Արեւելեան Երկաթուղիներու պուլկարական գիծերուն գրաւումը: Ֆրանսա սիրով միջնորդեց, և պուլկարեթուրք տազնապը կորսնցուց իր վտանգաւոր հանգամանքը. թէ՛ Պուլկարիա և թէ՛ Թուրքիա իրենց զօրահանութիւնը դադրեցուցին, և սկսան բանակցիլ՝ երկաթուղիներու փոխարինութեան գումարը որոշելու համար: Մինչև 1909ի սկիզբները դեռ չէին կրցած համաձայնիլ, և յոյս ալ չկար որ կը յաջողին իրարու խօսք հասկնալ. Թուրքիա չափազանց խոշոր գումար մը կը պահանջէր, Պուլկարիա կը մտածէր որ այդքան գումարով կրնայ պատերազմ մը ընել և աւելին ձեռք բերել. տազնապը կը մնար անոյժ. պատերազմի պահանջը գրեթէ ընդհանուր էր Պուլկարիոյ մէջ. դարձեալ զօրահանութեան սպառնալիք կ'ըլլար թէ մէկ և թէ միւս կողմէն. շատ հաւանակահարա՛ խնդրին կարգադրութիւնը զէնքի բախտին ձգուէր, երբ Փետրուար մէկին Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Պ. Իզվոլսքի հնարագիւտ եղանակով մը համաձայնեցուց երկու կողմերը. — 1876ի պատերազմէն ասդին՝ Ռուսիա պատերազմական տուգանքի պահանջ մը ունէր Թուրքիոյ վրայ. Պ. Իզվոլսքի առաջարկեց այդ պահանջին 125 միլիոն Ֆրանքէն հրաժարիլ, իբր փոխարինութիւն պուլկարական երկաթուղիներու գրաւման, պայմանաւ որ Պուլկարիոյ գրաւած երկաթուղիներուն փոխարժէքը Թուրքիա ինք իր յարմար դատած եղանակով հատուցանէ Արեւելեան Երկաթուղիներու Ընկերութեան: Այս կարգադրութեամբ՝ զոր երկու կողմերն ալ փութացին ընդունիլ, Պուլկարիա 125 միլիոն պարտական կը մնար Ռուսիոյ, որ սակայն զինքը ազատ կը թողուր ուզած ատենը և ուզած չափով վճարելու. իսկ Ռուսիա բոլորովին կ'ամրապնդէր իր ժողովրդականութիւնը Պալքաններու հզօրացոյն Ալաւ ժողովուրդին մէջ:


Պօսնա-Հէրսէքի կցումն ու Պուլկարիոյ թագաւորութեան յայտարարա-

րութիւնը թէև բարոյական ծանր հարուածներ էին Նոր Բէթիմին համար, բայց վերջապէս Թուրքիա աւելի շահով քան վնասով ելաւ այդ տագնապէն: Կայսրութիւնը կորսնցուց երկու նահանգներ, որոնք իրենը չէին արդէն երեսուն տարիէ ի վեր. միւս կողմէ, Պուլկարիա դրապէս անկախ էր վաղուց. Թագաւորութեան յայտարարումը լոկ անուանական նուիրագործումը եղաւ այդ անկախութեան զոր արդէն ոչ ոք, ոչ իսկ Թուրքիա կ'ուրանար: Մինչդեռ Ժէօն-Թիւրքերը, իրենց դիմադրութեամբ ու պոռչրտուքներով ձեռք բերին կարևոր գումարներ, անանկ ատեն մը մանաւանդ ուր դրամի անհրաժեշտութիւնը այնքան զգալի էր Կայսրութեան մէջ, որքան պակասը: Ինչ որ իրենց յաջողութեան նպաստեց, պօքօթի գրութիւնն էր զոր սքանչելապէս կազմակերպեցին ու վարեցին միանգամայն թէ Պոսէն և թէ Սելանիկէն, և որ Կայսրութեան գրեթէ բովանդակ տարածութեան վրայ կիրարկուեցաւ ամենամոտոգրմ կերպով: Ժէօն-Թիւրքերուն քարոզութիւնները այս մասին ա՛յն աստիճան խոր ազդեցութիւն մը գործեցին որ երբ պէտք եղաւ պօքօթը դադրեցնել, շատ տեղեր Իսլամ ժողովուրդը շարունակեց չգնել աւստրիական ապրանքները, հակառակ նոյն իսկ Կառավարութեան յայտարարութեանց թէ պօքօթը վերցած է (*): Անշուշտ պօքօթը վնասեց նաև Թուրքիոյ ժողովուրդներուն, բայց հայրենասիրական զեղումներու չրջան մըն էր զոր կ'անցնէր Թուրքիա. ժողովուրդը առանց դժգոհելու տարաւ այդ վնասը: Աւելի ետքը, Կրէտէի խնդրին վերարժարման վրայ, Ժէօն-Թիւրքերը նոյնքան կատաղի պօքօթի մը ենթարկեցին նաև հելլենական ապրանքներն ու շոգենաւերը. այս պօքօթը աւելի վնասակար եղաւ Թուրքիոյ ժողովուրդին քան Աւստրիոյ դէմ մղուածը, որովհետև Թուրքիոյ վաճառականութիւնը մեծ մասամբ կաշկանդուեցաւ յունական շոգենաւերու անգործութեան պատճառաւ: Վնասուեցաւ նաև եւրոպական վաճառականութիւնը, և տէրութեանց դեսպանները ստիպուեցան դիտողութիւն ընել Բ. Դրան: Թէ՛ անոնց միջամտութիւնը, և թէ՛ Յունաստանի նախարարապետութեան կոչումած Պ. Վէնիզէլոսի իմաստուն ու չրջահայեաց վարմունքը Թուրքիոյ հանդէպ, Օսմ. Կառավարութիւնը ստիպեցին վերջ տալու պօքօթին, որ սակայն, պաշտօնապէս վերցուելէն ետք տակաւին երկար ժամանակ տեւեց անպաշտօն կերպով: Օրինակի համար Սելանիկի բեռնակիրներուն պետ Քէրիմ աղան, որ «ականաւոր» անձնաւորութիւն մը դարձած էր, ոչ Կառավարութեան, ոչ նոյն իսկ Բօմիթէին թելադրութեանց ականջ կախեց, տեղի տալով բազմաթիւ միջադէպերու, որոնք Կառավարութիւնը յաճախ շատ ծանր դժուարութեանց մատնեցին. պէտք եղաւ զինքը ձերբակալել ու բանտարկել՝ խելքը գլուխը բերելու համար:

Բարեբախտ չեղան Ժէօն-Թիւրքերը իրենց չորս տարուան իշխանութեան ընթացքին. բարեբախտ չեղաւ մանաւանդ երկիրը. ամէն ցեղ մէյ

(*) Այս պօքօթը Աւստրիոյ արժեք աւելի քան 150 միլիոն Ֆրանքի կորուստ. սակայն գատ, Պօսնա-Հէրսէքի կցման համար, բացի Թուրքիոյ վճարած 54 միլիոնէն, 100 միլիոն ալ զօրահանութեան ծախք ըրաւ:

մէկ կերպով դժգոհ մնաց, և անհնարին դարձաւ ընդհանուր, համա-
դրական հայրենիքի մը գոյացումը որուն իւրաքանչիւր ցեղ բերէր իր ըն-
դունակութեանց ու արժանիքներուն նպաստը, համախուժը գործակցու-



Պուլկաշովին թնդանութեան գումարտակի մը

թեամբ մը կայսրութեան գլխէն վանելու համար վերահաս քայքայման
սպառնալիքը: Յայտնեցինք արդէն թէ 1908 Յուլիտի յեղափոխութիւնը
լոկ Համիտի բռնակալութեան դէմ չէր ուղղուած, այլ մանաւանդ կը ձգէր

տէր վերջ տալ օտարականներու հանդէպ անոր բռնած թոյլատու ընթացքին
որ քայլ առ քայլ կայսրութիւնը կ'անդամահատէր: Ազատական ըլլալէ աւելի՝
ազգայնական և օտարատեսաց շարժում մըն էր ուրեմն: Անդրամիկ խոր-
հրդարանական ընտրութիւնները եղան նաև անդրամիկ փաստերը իրենց
այդ ուղղութեան. հակառակ հաւասարութեան անունին որ քիչ մը ամէն
ժէժն-թիւրքի բերանն էր այդ օրերուն, ընտրութիւնները կատարուեցան
անանկ եղանակով մը որ բացի թուրք տարրէն՝ միւս բոլոր ցեղերը դժ-
գոհ մնացին: Երբ հրատարակուեցաւ ժէժն-թիւրք կազմակերպութեան
պլատֆորմը, տեսնուեցաւ որ բոլոր քաղաքացիներու հաւասարութիւնը
հռչակող նախադասութեանց առընթեր կը գտնուին նաև օրինակի հա-
մար երկրին զանազան ժողովուրդներուն դաստիարակութեան գործը իրենց
յետին մտքերուն յարմար կաղապարի մը մէջ թափելու ձգտող տրամա-
դրութիւններ, որոնք բնականաբար ցրտութիւն առաջ պիտի բերէին կայս-
րութեան բաղկացուցիչ տարրերուն միջև, պիտի յարուցանէին փոխա-
դարձ կասկածներ ու անսիրելութիւն, մէկ խօսքով՝ Օսմանցիութեան
գաղափարը պիտի քանդէին անդամամանցի կերպով: Քրիստոնեայ տար-
րերը մանաւանդ՝ մէկ կողմէ իրենց դրութեան մէջ զգալի փոփոխութիւն
մը չգտան և միւս կողմէ վտանգի մէջ տեսան այն մէկ քանի առանձ-
նաշնորհումները, որոնք քիչ շատ տանելի կեանքի պայմաններ կ'ապա-
հովէին իրենց. անոնցմէ իւրաքանչիւրը անշուշտ սիրով պիտի ուզէր հրա-
ժարիլ այդ առանձնաշնորհումներէն, եթէ երբեք երկրին մէջ արմատացած
բարեկարգ, արդար ու հաւասարակնոր Վարչութիւն մը նախապէս մի-
անգամ ընդ միշտ զիրենք ապահոված ըլլար ամէն տեսակ կամահաճու-
թեանց ու ապօրինութեանց դէմ: Իսկ ժէժն-թիւրքերը, որոնց գլխաւոր
սխալը եղաւ միշտ առաջին քայլը չառած երկրորդ քայլը առնելը, —
ինչպէս սրամտօրէն դիտել տուած է Պոլսոյ երբեմնի գերման դեսպանը՝
Պ. Մարշալ, — նախ կ'ուզէին առանձնաշնորհումները բառնալ և վերջէն
խօսքը ընել բարեկարգութեան: Չէին մտածեր թէ երկրին չըջափոխու-
թիւնը չէր լրացած տակաւին և թէ պայմանները կրնային փոխուիլ մէկ
օրէն միւսը, կամ վերադառնալ իրենց նախկին տխուր դրութեան, որուն
մէջ այդ առանձնաշնորհումները բռնաբար անհրաժեշտ պիտի դառնային
Քրիստոնեայ հասարակութեանց: Իրենց սապալման գնով միայն պիտի
ըմբռնէին այս ճշմարտութիւնը:

Ուրիշ պատճառ մը իրենց անյաջողութեան, ներքին կռիւները եղան:
Երկրին զանազան մասերուն և ժողովուրդներուն մէջ ընդհանուր հայրե-
նիքի գաղափարը արմատացնելու և ամուր ու զօրաւոր միութիւն մը
ստեղծելու շատ միջոցներ կային անշուշտ. իրենք ընտրեցին բացարձակ
կեղծոնացման դրութիւնը որ ոչ միայն անյարմար էր այդ նպատակին,
այլ նաև մեծ արգելք մըն էր անոր իրականացման դէմ: Տեղական պայ-
մաններու և սովորութեանց հիման վրայ աստիճանական ապակեղրոնա-
ցում մը տարակոյս չկայ որ շատ լաւ արդիւնքներ պիտի տար. կայսրու-
թեան բաղկացուցիչ տարրերը սիրաշահութեամբ խմբաւորելու, և անոնցմէ
բազմամաս բայց հոգուով միաձոյլ զանգուած մը գոյացնելու լաւագոյն

եղանակն էր ատիկա . մինչդեռ բացարձակ կեդրոնացման դրութեամբ մը անբնական տիրապետութիւն մը հաստատելու փորձը երբեք չպիտի յաջողէր , ինչպէս չյաջողեցաւ ալ , հակառակ այդ նպատակով կիրարկուած բռնական միջոցներուն : Տէրսիմի , Արաբիոյ , Հաւրանի , Ալպանիոյ արշաւանքները , որոնք կատարեալ պատերազմական գործողութիւններ եղան , չկրցան տալ իրենց մէջ սպասուած արդիւնքը , որովհետեւ իրօք չէին կրնար տալ արդէն . կեդրոնը չը յաջողեցաւ պարտադրել ո՛չ իր օրէնքները , ոչ ալ իր նկատումները . և տեղ տեղ , ինչպէս Արաբիոյ մէջ , նախապէս գոյութիւն ունեցածէն աւելի մեծ չափով ինքնավարութիւն ստեղծելու ըստիպուեցաւ , խաղաղութիւն կնքելու համար : Արշաւանքները վերջ գտան , բայց անոնց յարուցած քէնն ու ատե-



Թուրք կամաւորներ խրամի մը մէջ

լութիւնը ընդմիշտ պիտի մնային , բոլորովին քայքայելով հայրենիքի ու եղբայրացման գաղափարը : Ինչպէս մտնալ Ատանան , որ այլապէս ծանր ու անդարմանելի հարուած մը եղաւ նոր Բէթիմին համար : Ու դեռ պէտք է յիշել ներքին կուսակցական պայքարները , որոնց միջոցին յաճախ հայրենիքին աւագագոյն շահը ստորադասուեցաւ անձնական նկատումներէ և հաշիւներէ . պէտք է յիշել նաև այն տխուր դրութիւնը որոնց մէջ մնացին ու կը մնան Կայսրութեան դանազան մասերը , գլխաւորաբար Հայաստանն ու Կիլիկիան :

Ներքուստ անյաջող՝ Ժէօն-Թիւրքերը չկրցան յաջողիլ նաև արտաքին յարաբերութեանց մէջ . իրենց օտարատեսաց հակումները ծածկելու ջանք չըրին երբեք , և առաջին օրէն սկսեալ աշխատեցան ներգործական դեր մը խաղալու եւրոպական քաղաքականութեան մէջ , առանց տակաւին իրենց համար ամուր ու ապահով յենակներ ստեղծած ըլլալու : Այստեղ ալ միայն կասկած ու ցրտութիւն յարուցին , և ատիկա պատճառ եղաւ որ չկարենան խոր ու տեւական համաձայնութիւններ կնքել Թուրքիոյ հետ չահակից տէրութիւններէ և ոչ մէկուն հետ : Հակառակ անոր որ իրենց յայտնութեան միջոցին ընդհանուր Եւրոպայի համակրութեան առարկան էին դարձած , շատ չանցած մնացին մինակ , անօգնական , և իբր խաղալիք տարուբերուեցան այս կամ այն ուղղութեան ձեռքը , առանց երբեք հաստատ կռուան մը գտնելու : Բարեկամ չունեցան իսկապէս :

որովհետեւ չգիտցան ունենալ . երբեմն չափազանց կարեւորութիւն ընծայեցին յայտնօրէն շահախնդիր օժանդակութեանց , և երբեմն ալ չկրցան գնահատել ճշմարտապէս ուղղամիտ և անշահախնդիր խորհրդատուներ . իրենք ալ , Համիտի պէս , աւելի իրենց «բարեկամ»ներէն տուժեցին քան թշնամիներէն : Փոխանակ մեծ տէրութեանց իրարու հակոտնեայ յաւակնութիւնները հաւասար կշռի մը ենթարկելու . նախընտրեցին հաւատարիմ մնալ Գերմանիոյ , և առ հասարակ Երրեակ զինակցութեան : Իրերը սակայն անանկ բերին որ ամէնէն աւելի Երրեակ Զինակցութեան մաս կազմող տէրութիւնները վիրաւորեցին իրենց անձնասիրութիւնն ու ազգայնական զգացումները . — Աւստրիա՝ Պօսնա-Հէրսէքի կցմամբ , Իտալիա՝ Ափրիկեան Տրիպոլսոյ գրաւմամբ , և Գերմանիա՝ Բօցտամի մէջ Ռուսիոյ հետ կսքած համաձայնութեամբ , որ պարզապէս անհնարին կը դարձնէր Օսմ . Կայսրութեան արեւելեան նահանգներուն պաշտպանութիւնը՝ Ռուսիոյ հաւանական ոտնձգութեանց դէմ : Ծանօթ է արդէն թէ այս կորուստ հաւանական ոտնձգութեանց դէմ : Ծանօթ է արդէն թէ այս կորուստներէն մասնաւորաբար Ափրիկեան Տրիպոլիսը նոյն ինքն Քօմիթէին անկման պատճառ դարձաւ նախորդ տարի :

Մեր ծրագրէն դուրս կը մնայ Ժէօն-Թիւրքերու չորս տարուան գործունէութեան պատկերացումը : Կը գոհանանք այս մէկ քանի ընդհանուր նկատողութիւններով , ու կարելի եղածին չափ հակիրճ կերպով մը կը ներկայացնենք միայն Ալպանական խնդիրն ու Ալպանիոյ վերջին ապստամբութիւնները , որոնք անմիջական կերպով կապուած են ներկայ պատերազմին :



ԶՐԱՎԱՐ ՆԻՔԻՅՕՐՕՑ
Պատերազմական նախարար Պուլկարիոյ



ԳԼՈՒԽ ԺԳ.

Ա. Լ. ՊԱՆԱԿԱՆ ԽՆԳԻՐԸ

Թերևս միակը ըլլալով Եւրոպայի ժողովուրդներուն մէջ՝ Ալպանացիք պատմական դարաշրջաններէն անցած են առանց բնաւ փոփոխութեան ենթարկուելու։ Վաղընջուց Պեղասպեհաններու մէկ ճիւղն են, ինչպէս Յոյներն ալ անոնց մէկ ճիւղն են (հարաւարնակ մասը)։ Երբ տակաւին պատմութիւն չկար՝ Ալպանացիք միշտ իրենց այսօրուան սարերուն կատարն էին։ Արիլլու անոնցմէ էր ու նաև Մեծն Աղեքսանդր, որ թէև հէլլէն կրթութեամբ օժտուած և հէլլէնախօս, բայց բարկութեան նոպաներու մէջ կը նախընտրէր հայոյել մակեդոնական բարբառով, իր մայրենի լեզուով։ Արդի ալպաներէնը նոյն այդ մակեդոնական բարբառն է, սլաւ, թուրք, լատին և յոյն բառերու խառնուրդով մը։ Հետեւելով Աղեքսանդրի և անոր յաջորդներուն, Ալպանացիք կոխկրտած են ասիական Կայսրութիւնները։ Աւելի հաջող մաքառած են Հռոմէական Կայսրութեան դէմ, ու նաև հպատակած անոր։ Միջին Դարուն սլաւական արշաւը եկած բաղխած է մինչև ալպանական սարերուն, շրջապատած է զանոնք, կրցած է մխրձուիլ անոնց մէկ քանի մասերուն մէջ, սակայն չէ կրցած Ալպանացի ժողովուրդը ընկղուզել։ Միրահար իր անկախութեան, անիկա կրցած է յաղթականորէն դիմադրել և խորտակել Սլաւներուն յարձակումը։ Սլաւտարրէն վրէժ լուծելու համար անշուշտ, Ալպանացիք Քոսովայի ճակատամարտին մէջ օգնած են Ուլտավէնտիկեարի՝ Սերպերուն դէմ, բայց երբ Թուրքը ուզած է զիրենք իր օրէնքներուն ենթարկել, սկսած են կռուիլ իրեն դէմ, առաջնորդութեամբ համբաւաւոր Իսկէնաէր պէյլի (Ժօրթ Քասթրիօթի), որ մինչև մահը յաղթական մնացած է Թուրքերուն վրայ։ Իրմէ ետք, Թուրքերը վերջապէս հպատակեցուցած են Ալ-

պանացիները, առանց սակայն զանոնք կարենալ ընկճելու։ Անոնցմէ մաս մը, թրքական լուծէն փախչելով անցած է հարաւային Իտալիա և հաստատուած Սիկիլիոյ մէջ, ուր մինչև այսօր կը տեւէ իրենց սերունդը։ Իտալացի նշանաւոր պետական մարդը՝ Քրիսթի անոնցմէ էր։ Օսմ. Կառավարութիւնը, արտագաղթը արգիլելու համար չէր նեղած մնացածները, գոհացած էր անուանական հպտակութեամբ մը, պայմանաւ որ կամաւորներու խումբ մը հայթայթեն Կայսրութեան բանակին։ Եւ սակայն, անոնք մեծ մասամբ Իսլամութիւնը ընդունած էին առանց ճնշման, սոսկ իրենց հողային ստացուածքն ու աւատական իրաւունքները պահպանելու, և ռայաներուն հետ չչփոթուելու մտքով։ Կրօնքի փոփոխութիւնը քաղաքական գործողութիւն մըն էր իրենց համար, ոչ միայն բան մը չէր չըջէր իրենց ընկերային սովորութիւններէն ու աւանդութիւններէն, այլ ընդհակառակը անոնց անխաթար պահպանման համար կրուած գոհողութիւն մըն էր։ Իսլամութիւնը ընդունելով, Ալպանացին տէր կը մնար իր զէնքին, որ իր պատիւին և իր ազատութեան պահպանման միջոցն էր, և իրեն անհրաժեշտ էր յարգելու համար ցեղին ամէնէն նուիրական մէկ սովորութիւնը, — արիւնի վրէժը։ Ապրուստի պէտքէն բռնադատուած, անիկա վար կ'իջնէր իր անբեր սարերէն, կը ցրուէր քաղաքները, կը յարմարէր ամէն ծառայութեան և ամէն գործի, երբեմն մինչև Եպարքոսութեան կը բարձրանար, երբեմն ալ պարզ բեռնակիր կը դառնար, բայց Եպարքոս ըլլար թէ բեռնակիր, իր հոգին նոյնը կը մնար։ Իր քով շատ դժուար էր հաւատարմութեան զգացումը հանդէպ անոր որուն կը ծառայէր, և հանդէպ իր հայրենիքին զոր չէր կրնար մոռնալ ո՛ւր որ ալ գտնուէր և ինչ դիրքի ալ որ հասած ըլլար։ Նոյն անխախտ հաւատարմութեամբ կապուած էր նաև իր ցեղային աւանդութեանց ու սովորութիւններուն։ Կը գաղթէր Ամբիկա և ուրիշ տեղուանք, կը մնար տարիներով, կ'ընտելանար նոր բարքերու և գաղափարներու, բայց երբ հայրենիք կը դառնար՝ միեւնոյն Ալպանացին էր միշտ։ Իր քով տկար լոկ կրօնքի զգացումն էր, որովհետև կրօնքը միշտ միջոց մը եղած է իրեն համար, և ոչ թէ նպատակ մը։ Իր շահուն ու պարագաներուն համեմատ կը փոխէր զայն։ Քանի մը տարի առաջ՝ Միրտիթներու Լուրիա մեմատ կը փոխէր զայն։ Քանի մը տարի առաջ՝ Միրտիթներու Լուրիա գիւղին կաթոլիկ Ալպանացիները խմբովին իսլամացան, որովհետև կիրակի օր մը, քահանան, արդէն իսկ պատարագը աւարտած ըլլալով, չէր ուզած երկրորդ պատարագ մըն ալ ընել... ուչ եկողներուն համար։ Իրենց իսլամութիւնն ալ ուղղափառ չէ, այլ քրիստոնէութեան և մանմետակա նութեան խառնուրդ մը։ Իսլամ Ալպանացիներ կը յարգեն Ս. Գէորգի և Ս. Նիկողոսի յիշատակը, եթէ հօճան չկարենայ իր աղօթքով բուժել իրենց հիւանդը, իսկոյն քահանային կը դիմեն, յետոյ քրիստոնէական մականուններ ունին և խաչ կը պահեն իրենց վրայ։ Արդէն Իսլամ Ալպանացիք մեծ մասամբ Պէքթաշիներու հետեւորդներ են, և Պէքթաշիներու միաբանութիւնը իսլամութեան ամէնէն թուլատու, գրեթէ սկեպտիկ տարրն է։ Իրենց կրօնքը տեսակ մը մարդկայնական փրկաստիպութիւն է, որ աւելորդ կը դատէ արարողական պաշտամունքը և էական կը նկատէ։


(*) Կը հետեւինք Պ. Բինոնի

տէ միայն աստուածապաշտութեան ու մարդկային գթութեան դաւանանքը որ արդէն անխախտ հիմն է բոլոր բարձր կրօնքներուն:

Այլպանացիք անփոփոխ կը պահեն նաև իրենց տարազը. հակառակ անոր որ ֆիքսպարզ կը կոչուին, ընդունակ են իմացական զարգացման, և արեւմտեան մտքով նշանաւոր գրագէտներ ու հրապարակագիրներ ունեցած են: Իսմայիլ Քէմալ պէյ, Ալի Քէմալ պէյ (Իզսամի խմբագրապետը) Տէրվիշ Հիմա պէյ, երեքն ալ կարող հրապարակագիրներ՝ Այլպանացի են. Այլպանացի մը՝ Սամի պէյ՝ պատրաստած է լաւագոյն ֆրանսէթուրք բառարանը: Այլպանացւոց բարքերը՝ գրաւոր կանոններու և գիրքերու շնորհիւ չէ որ անխաթար կը մնան, այլ լոկ սովորութեամբ, և բերնուց կը փոխանցուին սերունդէ սերունդ. իրենց ընկերային կազմակերպութեան հիմը ընտանիքն է. իւրաքանչիւր մեծ ընտանիք կը կազմէ տոհմ մը, իրեն ենթակայ պզտիկ ընտանեկան խումբերով. հողը սովորաբար կը պատկանի տոհմիկ պէյերու, և մարապայի դրութեամբ կը մշակուի բանուոր ընտանիքներու կողմէ: Իւրաքանչիւր տոհմի վարիչն է ընտանեկան ժողով մը որ կը քննէ վէճերը և վճիռ կ'արձակէ վաղընջուց սովորութեանց համաձայն: Արիւնի վրիժառութեան համար սպանութիւն կատարողը միշտ մեծ պատուի արժանի կը նկատուի և իբր հերոս կ'ողջունուի, մինչև որ իր կարգին սպաննուի իր զօհին ընտանիքին կողմէ: Յաճախ երկու տոհմեր շէնք շնորք իրար բնաջինջ կ'ընեն փոխադարձ սպանութիւններով. քիչ անգամ հողերու յարգուած պետեր կը յաջողին երկու կողմին ալ պարտադրել պետան, և արիւնահեղութիւնը դադրեցնել: Այլպանիոյ բնակիչներուն 70% այդ սպանութեանց կը զոհուին սովորաբար: Շքօտրայի ֆրանսական հիւպատոսը Պ. Բինօնի ներկայացուցած է իր այլպանացի սպասուհին, հաղիւ երեսնամեայ բայց երեք անգամ այրիացած կին մը, որուն երեք ամուսիններն ալ յաջորդաբար արիւնի վրիժառութեան զոհուած են: Արիւնը միշտ արիւնով պէտք է մաքրուի: Անպատիւ կը նկատուի այն՝ որ արիւնի հաշիւ մը ունի կարգադրելիք, և տակաւին չէ սպաննած զոհուելիքը:

Այլպանացիք թէ՛ անստգիւտ զինուորականներ, թէ՛ շատ կարող պետական մարդիկ, և թէ՛ շատ ալ լուրջ հակառակորդներ տուած են Օսմ. կայսրութեան: Քէօրբիւլիներու եպարքոսական նշանաւոր ընտանիքը որ Թուրքիան անխուսափելի կործանումէ մը փրկեց ժէ. դարուն, այլպանացի էր: Թէքէտէլէնլի Ալի՝ Եանեայի արիւնարբու փաշան, ինչպէս նաև Շքօտրայի ոչնուազ համբաւաւոր Մահմուտ փաշան և անոր եղբորորդին՝ Մուսթաֆա փաշա՝ նոյնպէս Այլպանացի էին, և թանկագին աջակցութիւն մը մատուցին Օսմ. զահուն, զսպելով Յունական ապստամբութիւնը: Վերջէն՝ փորձեցին Յոյներուն երազած անկախութիւնը իրենք ձեռք բերել և ապստամբեցան Սուլթանին դէմ: Մուսթաֆա փաշա յաղթական յառաջխաղացութեամբ մը գրաւեց Սօֆիան ու Պոլսոյ վրայ կը քալէր, բայց Բէրլէրէի մէջ Բէշիտ փաշայէն պարտուեցաւ և կեանքովը տուժեց իր յանդգնութիւնը: Իրմով վերջացաւ նաև Շքօտրայի բնիկ, գրեթէ ժառանգական փաշայութիւնը որ տեսակ մը փոխարքայութիւն էր: Ալի փաշա՝ բա-

ւական ժամանակ դիմադրեց Սուլթանին, բայց իր ծառայութեան մէջ գտնուող ֆրանսացի թպալի մը մատնութեամբ Եանեա գրաւուեցաւ և ինք ալ կեանքովը տուժեց իր ապստամբութիւնը: Մէհմէտ-Ալի՝ Եգիպտոսի




Ինչպէս կ'ապրին սպանդանակաւ թղթակիցները

համբաւաւոր փոխարքան՝ քիչ մնաց որ Օսմաններու Գահը ձեռք անցընէ. Ռուսերը փրկեցին Սուլթանը: 1830ին՝ երբ Թանգիմաթը հրատարակուեցաւ, Այլպանացիք չուզեցին ընդունիլ հռչակուած բարենորոգումները և դիմեցին ապստամբութեան: Մէհմէտ Բէշիտ փաշա՝ անոնց պետերը

Մանասթըր կանչեց խորհրդակցութեան պատրուակով և ամէնքն ալ սուրէ անոնց: Հետեւանքը եղաւ պատմութեան աւելի ուժգին պոթկում մը, որ տեւեց մինչեւ Սրիմի պատերազմը: Համիտեան չըջանի եպարքոսներէն մէկ քանին դարձեալ ալպանացի էին. վերջինը Ֆէրիտ փաշան էր որ Սահմանադրութեան հռչակումէն ետք դարձեալ նախարարութեան բարձրացաւ: Համիտ, սովորաբար կասկածոտ ամէն ժողովուրդէ, ամէն մարդէ, նոյնիսկ իր ընտանիքէն, անպայման վստահութիւն ունէր Ալպանացուց վրայ, որոնց յանձնած էր իր անձին պահպանութիւնը:

Իրաւ ալ, հակառակ վերոյիշեալ միջադէպերուն, որոնցմէ իւրաքանչիւրը իր որոշ և արդարանալի պատճառները ունի, Ալպանացուց հաւատարմութիւնը հանդէպ Օսմ. Գահուն, գրեթէ երբեք չէր խախտած: Միայն Յունաստանի անկախութեան պատերազմին առթիւ օրթոտոքս Ալպանացիները աջակցած էին Յոյներուն, անոնց տալով թանկագին ու նշանաւոր հերոսներ, որոնց մեծագործութեանց շնորհիւ մանաւանդ յաջողած էր շարժումը: Ատկէ ասդին՝ Ալպանացի տարրը բնական ոստիկանի դեր մը կը խաղար Եւրոպական թուրքիոյ մէջ, գլուխ վերցնելու տրամադիր ժողովուրդները ընկճելով անագորոյն վայրենութեամբ: Իր հաւատարմութիւնը Օսմանեան Գահուն, միեւնոյն ատեն գրաւականն էր հայրենի սարերուն պահպանութեան: Ասոր մեծագոյն փաստը 1878ի տագնապն է, որու միջոցին այս ափ մը ժողովուրդը տակն ու վրայ ըրաւ բովանդակ Եւրոպան և ամբողջ երկու տարի միանգամայն թէ՛ տէրութեանց և թէ՛ Սուլթանին դիմադրելով, վերջ ի վերջոյ բռնադատեց եւրոպացի դիւանագէտները փոփոխելու իրենց ստորագրութեամբ հանդիսաւորապէս նուիրագործուած Պէրլինի Դաշնագիրը: Վեհաժողովը Բօտկորիցա քաղաքը, ինչպէս նաև Բլալայի ու Կուսինէի չըջանակները Գարատաղի թողած էր, հակառակ Օսմ. պատուիրակ Մէհմէտ Ալի փաշայի բողոքներուն. փաշան չէր ուզեր հաւանիլ այդ կարգադրութեան, առարկելով թէ Գարատաղի ձգուած հողամասերուն բնակիչները Ալպանացիներ են: Երբ տէրութիւնները պահանջեցին Սուլթանէն որ նոյն տեղերը յանձնէ Գարատաղի, Սուլթանին տեղ Ալպանացիք պատասխանեցին զէն ի ձեռին: Համիտի հաշուին կու գար այս դիմադրութիւնը, լոկ ձեռի համար Ալպանիա զրկեց մասնաւոր պատուիրակութիւն մը, իբր թէ ըմբոստ Ալպանացիները համոզելու համար, այս վերջինները սակայն՝ 1878 Սեպտեմբեր 6ին Տիաքովայի մէջ շարդեցին ամբողջ պատուիրակութիւնը, որուն գլուխը կը գտնուէր նոյն ինքն Մէհմէտ-Ալի փաշա, այն որ Վեհաժողովին մէջ իրենց իրաւունքին փաստաբանը դարձած էր: Դրան գաղանի դրդումներուն վրայ, Ալպանացիք անմիջապէս կազմեցին «Ալպանական Դաշնակցութիւնը», որուն կեդրոնական քօմիթէն գումարուեցաւ 1879 Յուլիս 1ին՝ Բրիդքէնտի մէջ, Դաշնակցութեան նպատակն էր պահպանել այն ալպանական հողամասերը որոնք հիւսիսի կողմէն Սերպիոյ ու Գարատաղի և հարաւի կողմէն ալ Յունաստանի պիտի թողուէին: Բրիդքէնտի, Շքօտրայի և Արկիրօքաթրօի մէջ հաստատուած երեք առանձին քօմիթէներ կը հսկէին վտանգուած սահմաններուն վրայ: Բ. Դուռը, միշտ ձեռ-

քի տակէ, զէնք, ռազմամթերք, պարէն ու դրամ զրկեց: Բայց շատ չանցած, ալպանական շարժումը կատարեալ վտանգ մը դարձաւ նաև իրեն համար: Դաշնակցութեան վարչութեան տակ ճշմարիտ անկախ Ալպանիա մը կազմակերպուած էր. Դաշնակցութիւնը ինք տուրք կը գան-



Սուրբ որ սարէս ոչխարներու Կօտեր կը ժամանեն բանակետը

ձէր և Սուլթանին կողմէ Եւրոպայի հանդէպ ստանձնուած յանձնառութիւնները ոչ մէկ կերպով կ'ուզէր յարգել: Եւրոպա սկսաւ տագնապիլ. տէրութիւնները հազիւ հազ համաձայնութեան մը եկած էին Վեհաժողովին մէջ, վախ կար որ այդ ղիւրարեկ համաձայնութիւնը քանդուի և նոր կնճռոտութիւններ ծագին: Այս վտանգը անհետացնելու համար Իտալիա առաջարկեց որ Գարատաղ փոխանակ վիճելի չըջանակներուն, Շքօտրայի

Քիւսիսային կողմէն հողամաս մը ստանայ: Տէրութիւնները հաւանեցան, այն յոյսով որ այդ հողամասին վրայ ընակող ալպանական ցեղերը (Հոթի, Կրուտի, Քլէմէնթի), Կաթողիկ ըլլալով, չպիտի ուզեն դիմադրել: Բայց ահա անոնք ալ զէնքի դիմեցին, և Իսլամ Ալպանացուց միանալով գացին գրաւեցին վտանգուած շրջանակը. ու երբ Գարատաղցիք ներկայացան անոր տիրանալու, հրացանի հարուածներով վանեցին զանոնք: Նոր զիջում ահրութեանց կողմէ. այս անգամ՝ Տուրքիոյ շրջանակը ուզեցին Գարատաղի թողուլ, համանուն նաւահանգիստով, բայց Գաշնակցութիւնը կը հսկէր. հազիւ լուրը տարածուած, Ալպանացիք այնտեղ իջան և գրաւեցին նաւահանգիստը: Տէրութիւնները ստիպուեցան նաւային խաղաղ ցոյց մը ընել. եւրոպական մարտանաւերը գացին խմբուեցան նաւահանգիստին մէջ, մինչդեռ Պոստոյ դեսպանները Գրան վրայ ճնշում կը բանեցնէին որպէս զի Տուրքիոն յանձնուի Գարատաղի: Անգլիա, աւելի անհամբեր, Սուլթանը ատոր բռնադատելու համար առաջարկեց Իզմիրը գրաւել: 1880 Հոկտեմբեր 9ին վերջապէս Համիտ տեղի տուաւ. Օսմ. զինուորական արշաւախումբ մը Ալպանացիները բռնի հանեց Տուրքիոնէն և քաղաքը յանձնեց Գարատաղցիներուն: Շարժումը մասնաւորաբար սա օգուտը ունեցաւ որ Ալպանացիք աւելի գիտակցօրէն զգացին իրենց ազգային միութեան անհրաժեշտութիւնը. կազմուած Գաշնակցութիւնը բաց էր ամէն ցեղի առջև, և քիչ մը ամէն ցեղ անոր միացաւ հետզհետէ:

Վերջէն, Մակեդոնիոյ ցեղային կռիւնները, որոնց միջոցին Յոյն, Պուլկար, Սերպ և Ռուսներ իրար կը սպաննէին անընդհատ, ծաւալման շարժառիթներ դարձան Ալպանացի տարրին համար: Կարծես ինք ալ իր ապագայի ակնկալութեանց գետին կը հարթէր իր հաշուին, ինչպէս կ'ընէին միւսները: Բաղդատամբ անոնց՝ շարժելու ամէն ազատութիւն ունէր ու կը վայելէր կարգ մը առանձնաշնորհումներ որոնք իրեն միջոց կու տային սկսուած պայքարը յաղթականօրէն առաջ տանելու: Բռնութիւնն ու սպանութիւնը լաւագոյն միջոցներն էին իրեն համար. անոնց շնորհիւ յաջողած էր մէկ քանի սերպիական ու պուլկարական շրջանակներ ամայացընել և սպանութեամբ կամ գաղթականութեամբ անհետացողներուն տեղ հաստատուել: Բ. Դուռը աչք կը գոցէր միշտ, որովհետև իր հաշիւներուն յարմար էր Ալպանացուց բրածը: Երբ Հիլմի փաշա Մակեդոնիոյ ընդհանուր քննիչ նշանակուեցաւ, Համիտ մասնաւոր կերպով յանձնարարեց որ բարենորոգումները չտարածեն նաև Ալպանիոյ շրջանակներուն մէջ: Իր եւրոպական ստացուածքներուն միջնաբերդը զերծ պահել կ'ուզէր տէրութեանց միջամտութեան փորձանքէն: Եւրոպացին սակայն, եթէ ոչ բարեկարգութեան անունով, գոնէ ուրիշ նպատակներով ոտքը անկէ դուրս չէր հաներ, հակառակ Համիտի բովանդակ ճիգերուն: Աւստրիա և Իտալիա յայտնաբար կը գործէին Ալպանիոյ մէջ, իրենց ազդեցութեան շրջանակներ ստեղծելով. — բուն բառով՝ ապագայ գրաւման ճամբան հարթելով: Վերջէն՝ անոնց միացած էր նաև Ռուսները, երբ Մակեդոնիոյ Ռուսները սկսած էին Յոյներուն հետ ընդհարիլ: Աբուսթօ Մարկարիթիլեանները բրտականաւոր յաջողած էր Ալպանացիները չահիլ Ուլահ դառնիլ:

և անոնց աջակցութեամբ շարունակել իր կատաղի պայքարը հէլլէն յաւակնութեանց ու չէթէներուն դէմ: «Աստուած ազգերը կրօնքէն առաջ ստեղծած է» և ըսէր Մարկարիթի, հաստատելու համար թէ Ուլահներն ու Ալպանացիք, հակառակ կրօնքի տարբերութեան, նոյն Պեղաագեաններու սերունդն են, մինչդեռ Յոյները եկուոր տարրեր՝ որոնք յափշտակել կ'ուզեն իրենց, — Ուլահներուն և Ալպանացուց, — օրինաւոր ժառանգութիւնը եղող հողերը: Ալպանացիք, այս դրդումներէն ազդուած, տակաւ առ տակաւ սկսան ատել Յոյն տարրը: Ռուսները կառավարութիւնը իր կողմէ ջանք չխնայեց ատոր համար. Ալպանական քօմիթէ մը կազմուեցաւ Պուքրէշի մէջ, ուր ալպանական վարժարաններ բացուեցան և ալպաններէն լրագիրներ սկսան հրատարակուիլ. Ռուսները կառավարութիւնը նիւթապէս կը նպաստէր այս բոլոր ձեռնարկներուն: Այսպէսով քիչ առ քիչ կազմուեցաւ մշակուած սերունդ մը, և մարմին առին անկախութեան յոյսեր, որոնք բոլորովին ահրայնուեցան երբ ծագմամբ Ալպանացի բայց վերջէն ռուսմանացած նշանաւոր ազնուական ընտանիքի մը Կիքաներու պետը, իշխան Ալպէր Կիքա, ինքզինքը թեկնածու հռչակեց ալպանական գահուն: Իշխանը իր յայտարարութիւնները կը ստորագրէր յանուն «Ալպանական խորհրդարանին և ալպանական վերածնութեան ազգային քօմիթէին»: Միակ թեկնածուն չէր սակայն ալպանական գահուն. Ապանիացի մը՝ Պ. Ալատրօ Բասթրիօթա, գինիի մեծահարուստ վաճառական, և Իտալացի մը՝ Ճիօլաննի Բասթրիօթա Սքանտէրպէկ, մարքիզ Ալլիօթայի, նոյնպէս Ալպանիոյ գահուն իրաւատէր կը հռչակէին ինքզինքնին, երկուքն ալ այն առարկութեամբ թէ նշանաւոր ալպանացի հերոս Իսքէնտէր պէյի (ժուժ Բասթրիօթի) սերունդէն են: Կը հաւաստեն նոյն իսկ թէ Հայ մըն ալ կար Ալպանիոյ գահուն թեկնածու:

Աւելի կամ նուազ խնդրական այս թեկնածուներուն դէմ Քրիստոնեայ Ալպանիան կրնար հանել իսկական բնիկ իշխան մը, Միրտիթներու պետ Բրինք փաշա Պիպ-Տօտան: Միրտիթները Վերին Ալպանիոյ լեռներուն վրայ բնակող զարհուրելի Կէկա ցեղին մէկ ճիւղն են, բովանդակ Ալպանիոյ ամէնէն աղքատ տարրը, և հաստատուած են Շքօտրայի հարաւարեւելեան նկարչագեղ հովիտներուն մէջ, իրենց կեդրոն ունենալով Սրօզի գիւղը, ուր կը նստի հոգեւոր պետերնին՝ «Թագակիր Աբրան», — ինչպէս կը կոչեն զայն: Անկախութեան պահանջը, վաղընջուց սովորութեանց հաւատարմութիւնը և հայրենի հողին սէրը իրենց քով աւելի զօրաւոր են քան Ալպանիոյ ուրիշ ո՛ր և է մէկ ցեղին մէջ: Ամէնքն ալ Կաթողիկ են (իրենց նախնիքը դարձած են Օրթոտօքսութիւնէ), և Պապութիւնն ու Իտալիա ամէն ճիգ կը թափեն զանոնք իրենց ազդեցութեան տակ պահելու համար: Բայց ո՛չ Վենետիկցի Ֆրանչիսկեանները որոնք անոնց մէջ կը քարոզեն, ոչ ալ Աւետարանին շնորհքը կրցած են զանոնք հրաժարեցնել «Լեռներու օրէնք»էն, զոր Իսկէնտէր պէյի հերոս ընկերը՝ Լէք Տուքատկին հաստատած է երբեմն, նախնի լեռնականներու սովորութեանց համաձայն: Կաթողիկութեան ձեւակերպութիւններն ու արարողութիւնները կը յարգեն թէև, բայց երբեք չեն ըմբռնած անոր բնագանցական արժէքն ու ընկե-

րային նշանակութիւնը : Աւելի խորապէս կը յարգեն իրենց հրացանն ու հնաւանդ սովորութիւնները . իրենց համար ալ արիւնի հաշիւը պէտք է անպատճառ արիւնով մաքրուի : Թագակիր Արքան կ'ընտրուի Պապէն և ինք կ'ընտրէ իր թեմերուն քահանաները . — գրեթէ միշտ նոյնքան տգէտ որքան հօտը : 130,000 կաթոլիկ Արլանացիներու մէջ (*) 15,000 հոգի են , բաժնուած հինգ պայրագներու . — Օրոզի , Արաքքի , Բիւմէնի , Տիպրի , Բարիտի , — որոնցմէ առաջին երեքը կը կազմեն բուն Միրաթիներու երկիրը .



ԴՍՄԱՅԻԼ ԲԷՄԱԼ ՊԷՑ

պատերազմի ժամանակ՝ Ալէսիօի հինգ պայրագները կը միանան Միրաթիներուն . Տիաքովայի շրջակաները բնակող 2000 լեւնականներ ալ կը հորատակին անոնց պետին : Հիւսիսի Օրթոտոքս և Արեւելքի Իսլամ զանգուածներուն մէջ գրեթէ կորսուած այդ սակաւաթիւ ժողովուրդը սակայն . միշտ խոշոր դեր խաղացած է "Պալքաններու մէջ" լոկ իր կաթոլիկութեան պատճառաւ . Եւրոպայի կաթոլիկ աէրութիւններէն Իտալիա , Աւստրիա և Ֆրանսա իրենց մասնաւոր հողածութեան ու պաշտպանութեան առարկան դարձուցած են այս ցեղը , և առաւելապէս այդ տէրութեանց հովանաւորութեան շնորհիւն է որ անիկա կրցած է գրեթէ բաձարձակ անկախութեան տէր մնալ :

Միրաթիները շատ մը տոհմերու բաժնուած են . գիւղերու ձերերը ընտրովի կ'անդամակցին Սորնուրդի մը որ «Լեռներու օրէնք»ին համեմատ կը կարգադրէ անհամաձայնութիւնները : Պայրագներու պետերը (Պայրագատարները) կը կազմեն վերին խորհուրդը , որուն կը նախագահէ գերագոյն պետը , ժառանգական իշխանը , որ Միրաթի տոհմերուն վրայ նահապետական հեղինակութիւն մը կը պահէ , և որուն ազդեցութիւնը տարածուած է նաև Հիւսիսային Արլանիոյ մեծագոյն մասին վրայ : Թուրքերը չէին ուզած իրենց տիրապետութիւնը արմատացնել այս ժողովուրդին մէջ , որ Գարատաղցիներուն պէս միայն հրազէնի և սուրի հարուածներ կրնար ընծայել իրենց , և ազատ թողած էին անոնց իշխանը . այս վերջինը կը պրտականէր Տօտա ցեղին և ուղղակի կը սերէր Միր-

(*) Արլանիոյ մէջ երբեք մարդահամար չէ կատարուած , բայց ընդհանրապէս ամբողջ Արլանացեաց թիւը կը նկատուի մօտաւորապէս մէկուկէս միլիոն : Կաթոլիկ Արլանացիները 115,000 են Շքօտրայի վիլայէթին մէջ , 12,000 Բօսովայի (Սիլիւ) վիլայէթին և 3000 Եանեսայի վիլայէթին մէջ . գրեթէ ամէնքն ալ պահած են Արեւելեան Եկեղեցիին յատուկ ծէսեր : Եպիսոսի մէջ Հէլլենականութեան հետ մշտակայ շփման մէջ դժուարեւոր բազմաթիւ Արլանացիներ Օրթոտոքսութեան կը հետեւին . Շար Տաղի հիւսիսային կողմն ալ կը դառնուին Օրթոտոքս Արլանացիներ , որոնք էապէս Սերպ են , և ալպանացած՝ լոկ Իսլամ Արլանացիներու բաժնութիւններէն ճողպարելու համար : Հայաստանի Բիւրտերուն մէջ ալ կար մաս մը որ Հայ էր և առ ահի քրդացած :

տիթներու համբաւաւոր օրէնսդիրէն՝ Լէք Տուքատկինէն . առաջին Տօտա Իշխանը եղաւ Մարքօ Կիօն , իսկ ամէնէն նշանաւորը՝ Լէք-Լի (Աղեքսանդր Սև) որ Շքօտրայի Մուսթաֆա փաշային հետ Յոյներուն դէմ կռուելով սպաննեց Յունական ապստամբութեան ամէնէն հերոսական մարտիկներէն մէկը՝ Մարքօ Պօցարիսը , Միսօլօնկիի պաշարման մէջ . վերջէն , նոյն Մուսթաֆա փաշային հետ ապստամբեցաւ , և երբ փաշան սպաննուեցաւ Բէրլէքէի մէջ , ինք Շքօտրան պաշտպանեց Թուրք բանակներուն դէմ : Արդի իշխանին հայրը՝ Պիպ-Տօտա , 2000 մարդոց մով Գարատաղցիները հանդարտ պահեց Սրիմի պատերազմին ժամանակ , և Թուրքերուն օժանդակող Ֆրանսական բանակին հրամանատար Մարաշախտ Բէլիսիէի առաջարկութեան վրայ . Սուլթանը փաշայութեան տիտղոսով վարձատրեց զայն : Երրոր մեռաւ , զաւակը հազիւ ինը տարեկան կար . իրեն կտակակատար կարգած էր Ֆրանսացի հիւպատոս մը , որուն միջամտութեամբ Կիքաներու գահուն խնամակալ եղաւ իր եղբորորդին՝ Տօնէն , որ սակայն դաւաճանեց իր հայրենիքին : Շքօտրայի կուսակալ Էսատ փաշա իրեն յոյս տուած էր իր խնամակալութիւնը մշտնջենաւորելու , պայմանաւ որ հրաժարի իշխանութեան տիտղոսէն և ընդունի Գայմազամի հանգամանքը , ինչ որ զայն օսմ . պարզ պաշտօնատարի մը աստիճանին կ'իջեցնէր : Տօնէի հաւանութեան վրայ , Թուրք զինուորներ գրաւած էին երկիրը և Բ . Գուռն ալ ջնջուած հռչակած էր Միրաթիներու դարաւոր առանձնաշնորհումները : Սակայն Ֆրանսական դեսպանին միջամտութեան վրայ շուտով Էսատ փաշա հրաման ստացած էր զինուորները ետ քաշելու և Միրաթի ժողովուրդը հանգիստ ձգելու : Այդ միջոցին՝ բուն գահակալը , Բրինք-Տօտա (արդի իշխանը) Պոլիս կ'ապրէր Յրանսայի նիւթական աջակցութեամբ : 1876ի տազնապին առթիւ միայն Շքօտրա անցաւ և անկէ ալ Պէրլին , ուր յաջողեցաւ նուիրագործել տալ իր երկիրն անկախութիւնը , պաշտպան տէրութեանց աջակցութեամբ : Միևնոյն ժամանակ նուիրագործուեցան նաև Յրանսայի և Աւստրիոյ պաշտպանութեան իրաւունքը Միրաթիներուն վրայ (*) :

1879ին՝ Միրաթիներն ալ մաս կազմեցին Արլանական Դաշնակցութեան , և իրենց մասնակցութիւնը ա՛յն աստիճան վրդովիչ դարձաւ որ Համիտ սկսաւ վախնալ թէ պատճառ կը դառնան Արլանիոյ անջատման : 1880 Դեկտեմբեր 13ին՝ Տէրվիլ փաշա , անշուշտ Պալատէն եկած հրամանի մը վրայ , տեսակցութեան պատրուակով Բրինք Պիպ-Տօտան իր մօտ կանչել տուաւ և ձերբակալելով աքսոր դրկեց Քասթէմունի . քիչ ետքը՝ իշխանը փոխադրուեցաւ Պոլիս , և Համիտ , իր սովորութեան համաձայն , մեծ պատիւներու առարկայ դարձուց զայն . 1888ին՝ Լիբանանի կուսակալ կարգեց , 1905ին ալ Ֆէրիզութեան բարձրացուց և իր թիկնապահներուն մէջ առաւ , բայց միշտ մերժեց զայն երկիրը վերադարձնել : Միրաթիները

(*) Այդ իրաւունքին վրայ հիմնուելով , Աւստրիա Արլանիա կը զրկէր խուճեկաւ միսիոնարներ որոնք կրօնքէ աւելի իր քաղաքական ազդեցութիւնը կը ծաւալէին : Բազմաթիւ ալպանացի տղաք , աւստրիական կառավարութեան ծախքով , կ'ուսանէին վիեննայի մէջ :

անընդհատ պահանջեցին իրենց իշխանը, և երբեք թող չտուին որ Դրան կողմէ նշանակուած գայմազամները իրենց երկիրը մտնեն: Այս պատճառաւ, մշտապէս ըմբոստ մնացին: Իրենց պետերը, հակառակ անոր որ ապստամբական վիճակի մէջ էին, անվախ կը շրջէին ամէն կողմ. յաճախ Շքօտրայի իշխանութիւնները անոնցմէ մէկ երկու հոգի ձերբակալելով կը բանտարկէին, բայց ահա բուխնդակ Միրտիթ ժողովուրդը ոտքի կ'ելլէր, կը բռնէր ճամբաները և կ'արգիլէր անցուղարձը. եթէ Դուռը զինուոր զրկէր, Ֆրանսական դեսպանատունը խտրոյն ետ կանչել կուտար արշաւախուճը. ճարահատ՝ կառավարութիւնը կը ստիպուէր արձակել բանտարկեալները: Բրինք Պլայ-Տօտա մինչև 1908ի յեղափոխութիւնը՝ իրր աքսորական ապրեցաւ Գասթէմունի. շատ նրբացած, գրասէր և գեղարուեստի սիրահար մարդ մըն է, խորապէս տեղեակ դասական և ժամանակակից ֆրանսական գրականութեանց: Աքսոր գտնուած միջոցին, իր եղբորորդիներէն մէկը՝ Դրան հետ համախորհուրդ՝ աշխատած է ձեռք անցընել իշխանական հեղինակութիւնը, բայց չէ յաջողած. ի բացակայութեան իշխանին՝ անոր տեղը բռնած էր միշտ հոգեւոր պետը՝ Օրօզի թագակիր Արբան, Գեր. Բրիմօ Տօքքին, ազատախոհ ու զարգուն եկեղեցական մը, որ բաւական ժամանակ ապրած է Ամերիկայի մէջ, երբ Համիտի կասկածները զինքը ստիպած էին հեռանալ իր ծննդավայրէն:

Երբ պայթեցաւ 1908ի յեղափոխութիւնը, արդէն իսկ ազգային շարժում մը սկսած էր Ալպանիոյ մէջ: Նոյն տարուան գարնան՝ Թօքքաներու շրջանակին մէջ՝ Արկիրօքասթրօի և Շիմարայի կողմերը երեւան ելած էին բազմաթիւ խուճեր, որոնք Լակէնտէր Պէյի պատկերը, ինչպէս նաև ալպանական զինանշանով (երկզխասնի արծիւով) կնքուած յայտարարութիւններ կը ցրուէին: Շարժման գլուխը կը գտնուէին Իսլամները, իրենց աջակից ունենալով Մակեդոնացի Ուլահներ: Ապստամբութեան նպատակ չկար ուղղակի թուրք կառավարութեան դէմ. կազմուած խուճերը առաւելապէս կը նեղէին Յոյն տարրը և զայն կը բռնադատէին «ալպանաւնալու»: Յոյները կը կասկածէին թէ այդ շարժումը աւստրիական կամ պուլկարական էնթրիկներու հետեւանքն է, հիմնուելով ալպանական Տրիքա թերթին վրայ, որ ալպանօ-սլաւ միւլութիւն մը կը քարոզէր, իսկ շարժումը վարողները կը յայտարարէին թէ պարզապէս ալպանացի տարրին թուական քանակութիւնը հասկնալ կ'ուզեն:

Իտալական և աւստրիական էնթրիկներ որոնք միշտ իրարու կը բաղխին, բրօքականտ կաթոլիկ կղերին և յոյն, սերպ ու պուլկար օրթոտօքս քահանաներուն, ամերիկացի աւետարանական միսիոնարներու գործունէութիւն, գահակալելու անհամբեր թեկնածուներու մեքենայութիւններ, ռուսական և պուլկարական խաղեր, ամէն ազգէ հրոսախուճեր մակեդոնական սահմաններուն վրայ, — ահա այս խառնակ դրութեան մէջ կը գտնուէր Ալպանիա՝ երբ 1908ի յեղափոխութիւնը ծագեցաւ: Գլխենք արդէն թէ ինչպէս ժէօն-Թիւրքերը յաջողեցան ջուրը ձգել Ֆէրիզովիքի ալպանական գումարումը որով Շէմսի փաշա կ'ուզէր խեղդել յեղափոխական շարժումը: Ալպանացիները հակառակ էին բարեկարգութեանց:

Ժէօն Թիւրքերը անոնց հայրենասիրութիւնը գրգռեցին՝ բացատրելով Բէք վալի տեսակցութիւնը, որուն հետեւանքը պիտի ըլլար օտար միջամտութիւն կայսրութեան գործերուն մէջ. ատով կրնային վտանգուիլ նաև այն առանձնաշնորհումները զորս Ալպանացիք կը վայելէին, և ոչ ոնցմէ չէին կրնար հրաժարիլ: Յայտնեցին նաև թէ լոկ Սահմանադրութիւնը կրնայ այդ վտանգը հեռացնել ու անխախտ պահել իրենց առանձնաշնորհումները: Այդ յոյսով է որ Ֆէրիզովիքի մէջ գումարուած Ալպանացիները ոյժ տուին յեղափոխութեան և անոր յաջողութիւնը դիւրացուցին, առանց մտքերնէն անցընելու թէ իրենց աջակցութեամբ հաստատուած Բէքիմէն պիտի ստանային ծանրագոյն հարուածը որ երբեք տրուած ըլլար իրենց: Բացի Միրտիթներէն որոնք վերապահ ընթացք մը բռնած էին, բովանդակ Ալպանիա աննկարագրելի խանդավառութեամբ ողջունեց Սահմանադրութիւնը. Վերին Ալպանիոյ մէջ՝ քսան օր անընդհատ հրացանի հարուածներ գոռացին ի պատիւ Նոր Բէքիմին, և ընդհանուր պիտայով մը կարգադրեցին բոլոր արիւնի հաշիւները:

Սակայն առաջին օրերէն իսկ յայտնի եղաւ թէ ժէօն-Թիւրքերն ու Ալպանացիք որքան տարբեր կ'ըմբռնեն այն միեւնոյն Սահմանադրութիւնը, որուն հաստատութեան համար մարտնչած էին ձեռք ձեռքի: Մինչդեռ ժէօն-Թիւրքերը, Պուլտոյ ու Սելանիկի մէջ կը քարոզէին թէ այլևս թուրք չկայ, Պուլկար չկայ, Հայ Յոյն կամ Ալպանացի, Քրիստոնեայ կամ Մահմետական չկայ. այլ միայն Օսմանցիներ կան, Սուլթանին և Սահմանադրութեան հաւատարիմ ու հաւասար անոնց առջև, անդին, Թիրանայի և Էյպասանի մէջ գումարուած ազգայնական Ալպանացիներ կը հռչակէին թէ ալպաներէնը պէտք է պաշտօնական լեզու դառնայ Ալպանիոյ մէջ, կը պահանջէին որ գուտ ալպանական վարժարաններ բացուին և Սօֆիա տպուած ալպաներէն բրօքականտի գիրքեր կը տարածէին: Նոյեմբերին, Սելանիկի Ալպանական Բիւլակին հրաւերով, Սելանիկի, Մանասթըրի, Բօսովայի և Եանեայի վիլայէթներուն խլամ ու քրիստոնեայ Ալպանացիները համաժողով մը գումարեցին Մանասթըրի մէջ, ալպանական այբուբենի մը քնտրութեան համար: Երկու կարծիք ունէին Համաժողովին անդամակցողները. մէկ մասը կը պահանջէր պահպանել արդէն իսկ գործածութեան մէջ եղող լատինական այբուբենը. իսկ միւս մասը կ'առաջարկէր ընդունիլ արաբականը: Յաղթանակը առաջիններուն մնաց, որովհետեւ արաբական այբուբենը չէր կրնար արտագրել կարգ մը հնչիւններ: Միտհադ պէյ, եղբորորդի ալպանացի նշանաւոր բառագիր Սամի պէյի, Համաժողովին որոշման վրայ սկսաւ լատինական տառերով ալպաներէն լրագիր մը հրատարակել: Օգոստոս 26ին, միջադէպ մը բուրովին սրեց այն կասկածները որոնք տակաւ մարմին կ'առնէին Նոր Բէքիմին նկատմամբ: Ժէօն-Թիւրք զինուորական մը, հարիւրապետ Քեազիմ պէյ, միթինկի մը մէջ յայտարարած ըլլալով թէ այլևս բոլոր Բայաները Օսմանցի են, ալպանացի ազգայնական հրապարակագիր Տէրվիչ Հիմապէյ ընդմիջեց անոր խօսքը, ըսելով. «Ալպանացիները լոկ Ալպանացիներ են. այն ատեն միայն ինքզինքնին գոհ պիտի նկատեն, երբ ազատ ըլլան ազատ»:

Ալպանիոյ մէջ, իբր մաս Սուլթանին գերիշխանութեան տակ անկախ հրոշակուած Պալքանեան Պետութեանց Դաշնակցութեան» : Յաջորդ օրը՝ Տէրվիշ Հիմա ձերբակալուելով տարուեցաւ Սելանիկ :



ՉՄԵՐՈՒԿԻ ՔԷՅՅԸ
Պուլկար սպաներ իրենց ծառաւը կը յազեցնեն

Բրինջ փաշայի աքսորէն դարձը՝ 1908 սեպտեմբերին, առժամապէս հանդարտեցուց մտքերը : Միրտիթներու իշխանը Սելանիկի մէջ երկարօրէն տեսակցած էր Ժէօն-Թիւրք Քոմիթէին պետերուն հետ և Ալպանիա կը դառնար նոր Բէթիմին ճանաչողութիւնը դիւրացնելու մտքով : Երբ հա-

րիւրապետ Քեազիմ պէյի և ուրիշ սպաներու հետ իր երկիրը մտաւ, ըստ լոր արու Միրտիթները անվերջ հրացանաձգութեամբ և խանդավառ աղաղակներով ողջունեցին իրենց իշխանը : Բրինջ փաշա մերժեց Քեազիմ պէյի կողմէ իրեն առաջարկուած գայմազամութեան տիտղոսը, հասկցնելու զգելով որ կը փափաքի անվթար պահել իր երկիրն անկախութիւնն ու իր իշխանի հանգամանքը : Բայց իրեն ընկերացող սպաներուն բաղձանքը գոհացուց, իր ժողովուրդին երդում ընել տալով Սահմանադրութեան վրայ : Միրտիթներն ալ պէսայով մը որոշեցին մոռնալ իրենց արիւնի հաշիւները մինչեւ յաջորդ տարուան Աւագ Ուրբաթ օրը : Կարճ ժամանակուան մէջ՝ իշխանին ազդեցութիւնը սկսաւ տարածուիլ բոլոր շրջակաները : ոչ միայն Կաթոլիկ Ալպանացիները, այլ Իսլամներն ալ, իրենց անհամաձայնութեանց կարգադրութեան համար կը նախընտրէին իրենց ղիմել քան Օսմ. իշխանութեանց : Կեդրոնը սկսաւ վախնալ որ Բրինջ փաշա Պիպ-Տոտա կը յաջողի իր իշխանութեան տակ համախմբել բովանդակ Վերին Ալպանիոյ ցեղերը : Նոյեմբերին, Պոլսոյ Համալպանական Քոմիթէն, Իթիֆիաթի դրդմամբ, ալպանացի ժողովուրդներուն կողմը ուղղեց երբեմնի Ալպանական Դաշնակցութիւնը վերակազմելու՝ Սերպիոյ և Փարատաղի խորտակներուն դէմ պայքարելու պատրուակով : 3000 Իսլամ Ալպանացիներ արձանագրուեցան իսկոյն, սակայն Կաթոլիկները ձեռնպահ մնացին : Դեկտեմբերի խորհրդարանական ընտրութիւնները ալ աւելի ցրտացուցին այս վերջինները : հակառակ անոր որ իրենք բաղմամբիւ էին իրենց շրջանակներուն մէջ, երկու Իսլամներ երեսփոխան ընտրուեցան : Անոնց դժգոհութիւնը բառնալու համար՝ Քոմիթէն դեկտեմբերի վերջերը պատուիրակներ ղրկեց Շքոտրա, Սահմանադրութիւնը ծանօթացնելու համար : ասոնցմէ հօճա մը, յայտարարած ըլլալով որ կառավարութիւնը կրօնական իրերու մէջ չէզոք պիտի մնայ և նոյն յարգանքին առարկայ պիտի դարձնէ Փուրանն ու Աւետարանը, սուլուեցաւ միանգամայն թէ՛ Իսլամներուն և թէ՛ Քրիստոնեաներուն կողմէ : Քիչ ետքը, Պէտրի փաշա որ Շքոտրայի կուսակալ կարգուած էր 1909 յունուարին, բաւական նպատակաշարժար ծրագիր մը մշակեց Ալպանիոյ համար, և ոճիրներու առաջը առնելու մտքով արգիլեց քաղաքներու մէջ զէնքով պտտիլը : իր ծրագիրը սակայն, թրքական այնքան աղուոր ծրագիրներու պէս, թուղթի վրայ մնաց :

Վրայ հասաւ Մարտ 31ի յետաշրջական շարժումը : Հօճաներ աշխատեցան արպանացի ժողովուրդը գրգռելու Ժէօն-Թիւրքերուն դէմ, բայց չյաջողեցան : լեռնցիները մնացին անտարբեր, նկատելով որ իրենց սովորութեանց և առանձնաշնորհումներուն դպչող չկար : Ժէօն-Թիւրք Կառավարութիւնը տակաւին խիստ միջոցներ ձեռք առած չէր Ալպանիոյ մէջ : Բրինջ փաշա նոյնպէս հաւատարիմ մնաց Սահմանադրութեան, և Շքոտրայի մէկ քանի յետաշրջական Իսլամ պէյերուն լուր ղրկեց որ եթէ տեղերնուն երերան, զիրենք «գորտերու պէս լիճին մէջ պիտի թափէ» : Բայց Համիտի գահընկեցութիւնը, ինչպէս նաև շարժումին մասնակցող ալպանացի զինուորներու կախաղան հանուիլը շատ սուր դժգոհութիւն մը ա-

ուջ բերին Ալպանիոյ մէջ: Համիտ միշտ իր շնորհներուն առարկայ դարձուցած էր լեռնականները, որոնց մօտ շատ մեծ ժողովրդականութիւն կը վայելէր: յետոյ, կախաղան հանուողներուն մէջ կը գտնուէր Քրանիացի Սալի պէյը, նոյնպէս ժողովրդական դէմք մը: Շքօտրա մանաւանդ որ յետաշրջութեան օճախն է, բողոքի շատ բուռն ցոյցեր ըրաւ, և այդ ցոյցերը աւելի ծանրակշիռ դարձան, երբ Պէտրի փաշա ցեղապետները կանչելով ծա-



ՄՈՒՍՍՈՒՅԱՅԱՍ ՓԱՇԱՅԻ ՄԻՋ

Առաջին քրիստոնեայ գերեզմանները աշխարհակալուած հողին վրայ

նոյց թէ մարդահամարի պիտի ձեռնարկուի: Քրիստոնեայ Ալպանացիները ականջ չկախեցին, իսկ Իսլամները, որոնք հասկցած էին թէ զինուորական պարտադիր ծառայութիւն ու նոր տուրքեր հաստատելու համար կ'ուզուի մարդահամար կատարել, իրենց կրօնակիցներուն անունով մերժեցին համակերպիլ: Փաշան յորդորեց զանոնք որ օրէնքին հնազանդին, յուսադրելով թէ իրենց հնազանդութեան վրայ թերևս կարելի ըլլայ թոյլատու բարեփոխումներ մտցնել անոր մէջ: Շքօտրա համախմբուած իսլամ պէյերէն մաս մը հնազանդելու կողմն էր, բայց միւս մասը, հօճաններու զրդումներէն զրգուած, յայտարարեց թէ հրացանի հարուածներով պիտի ընդունի մարդահամարի պաշտօնետաները: Այս անհաշտ հատուածը իսկոյն լուր զրկեց Բրինք փաշայի, խնդրելով որ զայ իրենց գլուխը անցնի Կառավարութեան դէմ մաքառելու համար, սակայն Միտրիթներու պետը, ինքնին խաղաղասէր մարդ, չուզեց չեղիլ իր հաւատար-

մութենէն: Հակառակ սակայն իր ձեռնպահութեան, շարժումը միշտ աւելի մեծ համեմատութիւններ կը ստանար: Պէտրի փաշա Շքօտրայի ամբողջ ներուն թնդանօթները դարձուց քաղաքին Իսլամ թաղերուն դէմ: հօճան մը և ազդեցիկ պէյ մը ձերբակալուեցան, ու միւսները դէնքը վար դրին: Միւսնոյն ատեն՝ Սքիալայի կաթոլիկ ցեղերը՝ իրենց հօգևոր պետին միջոցաւ ազերսագիր մը ներկայացնելով կը յայտնէին թէ իրենք պատրաստ են զինուորական ծառայութեան և տուրք ալ կը վճարեն, եթէ միւսնոյնը ընեն նաև Իսլամները, պայմանաւ սակայն որ նոր Բէթիմը լոկ անուն մը չըլլայ, այլ հիմնական բարեփոխումներ մտցնէ իրենց կեանքին մէջ: Իրենք կը պահանջէին Պէտրի փաշայի և Սերկիերսկներու զրութեան ջնջումը, երկու կրօնքներու անհաւասարութիւնը բառնալու համար, ու նաև իրաւունք իւրաքանչիւր ցեղի՝ իր դատաւորները ընտրելու: «Իսկ եթէ, կը յարէին, նոր անունի մը տակ դարձեալ Հին Բէթիմն է որ պիտի շարուակուի, կը նախընտրենք պահպանել մեր ստանձնաշնորհումները»:

Եպիրոսի մէջ ալ կացութիւնը լուսագոյն բան մը չէր: Սահմանադրութեան առաջին օրերու եղբայրութեան երդումներն ու ցոյցերը մոռցուած էին արդէն. Յոյները դարձեալ սկսած էին ատել Իսլամները, խորհրդարանական ընտրութիւնները պատճառ եղան որ բոլորովին չեչտուի իրենց անսիրելիութիւնը: Յոյները կը յուսային հինգ երեսփոխան ունենալ, բայց միայն երեք հատ յաջողեցան ընտրել (*) մինչդեռ Իսլամները սակաւաթիւ ըլլալով հանդերձ, ունեցան չորս երեսփոխան: Իսլամ Ալպանացիները շուտով պատասխանեցին Յոյներուն թշնամութեանց, և խռովութիւնները վերսկսան երբեմնի թափով. տեղ տեղ՝ յոյն չէթէներ կը յայտնուէին: Մարտ Յի դէպքերը և անոնց հետեւանքը եզոզ շփոթ վիճակը տարակոյս չկայ որ բոլորովին պիտի սաստկացնէին այս վէճերը: Իսմայիլ Քէմալ պէյ, Մահմուտ Շէվքէթ փաշայի Պոլիս մտնելէն վերջ փախած էր Քորֆու, և անկէ ալ անցած էր արեւմտեան Եւրոպա, ու կը շարունակէր հեռուէն զրգուածութեան մէջ պահել իր կուսակիցները: Աւելի ետքը պիտի դառնար Եանեա, ուր մեծ ազդեցութիւն կը վայելէ և ուրկէ պիտի վարէր Եպիրոսի ու Ալպանիոյ շարժումները: Մայիսին՝ գլուխ վերցնելու կարգը եկաւ Թօսքաներուն, որոնք Թէքէլէնի մէջ համաժողով մը գումարելով իրենց պահանջումները ներկայացուցին ժէճ-թիւրք կառավարութեան, որուն հետ այլեւս ընդմիշտ անհաշտ պիտի մնային: Մէկ կողմէ իրենց տարամերժութիւնը, և միւս կողմէ Յոյներու թշնամութիւնը՝ շատ մեծ դժուարութեանց մատնեցին թուրք պաշտօնատարները. ասոնք հազիւ թէ քաղաքներու մէջ քիչ շատ հեղինակութիւն կրնային պահել:

Մանասթըրի վիլայէթին մէջ նոյն բանը. լատին տառերու գործածութեան հարցը կը շարունակէր մտքերը յուղել. ժէճ-թիւրքերը հակառակ էին ատոր, բայց Իթիհատի Ալպանացի անդամները, Մանասթըրի

(*) Ասոնցմէ երկուքը Եանեայէն էին: Յոյն քուէներու շնորհիւ երեսփոխան ընտրուեցաւ նաև Իսմայիլ Քէմալ պէյ, որ կուսակից էր ալպանեայի համաձայնութեան մը: Ինչպէս յայտնի է, Իսմայիլ Քէմալ պէյ, իբր պետ Ահմար կուսակցութեան, կարեւոր դեր մը խաղաց Մարտ Յի շարժման մէջ:

համաժողովին որոշման հաւատարիմ մնալով, ամէն կարելի բոլորակաճ կը մղէին ինպատ խտրական տառերու ընդունելութեան: Գործակալներ կը շրջէին ամէն կողմ, կը դրդէին գիւղերու ժողովուրդը որ զուտ ալ-պանական վարժարաններ, ինչպէս նաև մղկիթներու մէջ ալպաներէնի կիրառումը պահանջեն: Այս բոլորականտին հետեւանքով, Գօրիցայի ժողովուրդը վաճառեց իր կառավարիչը առարկելով թէ Ալպանացի չէ. թէ Գօրիցայի և թէ Քասթորիայի մէջ կը պահանջէին որ դատավարութիւնները տեղի ունենան ալպաներէնով: Միւսնոյն ժամանակ սերտ մերձեցում մը կը գոյանար մէկ կողմէ Ալպանացիներուն և միւս կողմէ ալ Ուլան ու Պուլկար տարրերուն միջեւ, ընդդէմ Հէլլէնականութեան:


Իսկ Հիւսիսային Ալպանիոյ կողմը, Միթրովիցայի, Բրիգրէնտի ու Իրէքի մէջ, իրերը ալ աւելի խառնակ դրութեան մէջ էին: Այնտեղ շարժումը սկսած էր շատ կանուխ, Սահմանադրութեան հոչակումէն գրեթէ ամիս մը ետքը, և ունէր յետաշրջական բնոյթ: Ահալարը՝ Համիտի մարդոցմէն մէկն էր, համբաւուր իսա Պօլաթինը, որ արդէն Ֆէրիզովիքի գումարման մէջ աշխատած էր Ալպանացիները յեղափոխութեան դէմ դարձրնելու: Ժէօն - Թիւրքերը, իշխանութեան գլուխ անցնելուն պէս, որոշած էին «խելքի բերել» զինքը, թայց տակաւին իրենք բանի մը չձեռնարկած, հիւսիսի Ալպանացիներէն կազմուած պատուիրակութիւն մը Սելանիկ իջնելով պահանջեց անխաթար պահել իրենց առանձնաշնորհումները, եւրոպացի գործակալները հեռացնել (տակաւին չէին մեկնած), Սերպերուն ու ոչ-խալամներուն զէնք կրելը արգելել, կանանց դրութեան մէջ փոփոխութիւն չմտցնել, պետական նպաստով ալպանական վարժարաններ պահել, ու վերջապէս՝ վերադառնալ Շէրիաթի օրէնքներուն: Այս պահանջմանց ու ժէօն-Թիւրք ծրագրին միջև տարբերութիւնը շատ մեծ էր անշուշտ: Կեդրոնի կառավարութիւնը հրամայեց Միթրովիցայի զօրաբաժնին հրամանատար Ճավիտ փաշայի որ զինուորական ցոյց մը ընէ լեռներուն վրայ: Ճիշտ առիթն էր իսա Պօլաթինէն վրէժ լուծելու: Ժէօն-Թիւրքերը որոշեցին անկէ ետ առնել ազարակ մը զոր Համիտ շնորհած էր. ազգին ստացուածքն էր շնորհուածը և պէտք չէր որ մասնաւոր անհատ մը օգտուէր անկէ: Նոյեմբերին՝ Ճավիտ փաշա երկու թնդանօթով վաշտ մը գորք զրկեց, քանդեց անոր աշտարակը որ Միթրովիցայէն երկու ժամ հեռուն կը գտնուէր ու գրաւեց յիփրիկը: Իսա Պօլաթին, վիրաւորուելով, փախաւ Լուճայի կողմերը և այդ վայրենի լեռներուն վրայ սկսաւ արշաւախումբ մը կազմակերպել, Միթրովիցայի վրայ քաղելու համար: Սակայն Ճավիտ փաշա իրեն ժամանակ չթողուց և Մարտի վերջերը՝ չորս վաշտ գորք, երկու գումարտակ ձիաւոր ու 16 թնդանօթ հետը առնելով գնաց այրեց այն գիւղը ուր իսա Պօլաթին ապաստանած էր. յետոյ քանդեց շրջակաները գտնուող ուրիշ 98 աշտարակներ և հրամանագրով մը արգելեց կեռիքաւոր նոր աշտարակներու շինութիւնը: Իր արշաւախումբին նպատակը ո՛չ այնքան իսա Պօլաթինը պատժել էր, որքան ծանր հարուած մը տալ այն կողմերու աւատապետներուն և անոնց առանձնաշնորհումները սանձել: Նոյն տարուան ամառը Ճավիտ փաշա երրորդ ար-

շաւախումբ մը կազմակերպեց և իր բանակին գլուխը անցած շրջեցաւ Տիաքօվայի կողմերը ու Մալիսորներու (*) երկրին մէջ, պահանջելով թէ զինաթափութիւն և թէ, բացի տասանորդէն, զինուորական ու դպրոցական տուրք: Օգոստոս 17ին՝ Ֆէրիզովիքի մէջ տեղի ունեցած ալպանական գումարում մը որ նոր տուրքերուն դէմ պիտի բողոքէր, թնդանօթի հարուածներով ցրուեցաւ: Սեպտեմբերին Ճավիտ փաշա դարձեալ Լուճայի լեռները մխրձուեցաւ, առարկելով թէ այդ կողմերու ժողովուրդը կը մերժէ առանց զէնքի Բրիգրէնտի պազարը իջնել: Այս անգամ սակաւն լեռնականները որոշեցին զիմադրել. կիները, տղաքն ու անկարները Հասի դրկուեցան և բոլոր զէնք կրելու կարող մարդիկը, զէնք ձեռին զիրք բռնեցին իրենց ապստամբներուն ետին: Ճավիտ փաշա բուռն կոխ մը մղելէ և մէկ քանի գիւղեր ասպատակելէ վերջ՝ ելանակին ցրտութիւնը պատճառ բռնելով զինուորները Միթրովիցա քաշեց: Բայց այս արշաւանքներու միջոցին՝ Անատոյցի զինուորները կը գործէին ցատալի ծայրալեզու թիւններ. թալան, հրկիզում, լլկում, սուլորական զէպլեր էին. ատկէ խոր ատելութիւն մը որ շուտով արձագանգ գտաւ ալպանական սարերուն վրայ: Իրէքէն Տիպրա՝ ամէն մարդ իր զէնքին փարած էր, արեան ծարաւի և վրէժինդրութեան զգացմամբ զեղուն: Յայտնի էր որ փոթորիկը աւելի զօրութեամբ պիտի պայթէր երբ ձմեռը անցնէր:

1910ի գարունը այդ սպանալիքով սկսաւ. ապրիլ ամսուն՝ Տաճի և Տրէնիցայի կողմերէն 10,000 Ալպանացիներ հաւաքուած էին Բրիշլիկայի մէջ. վախ կար որ ընդհանուր ապստամբութիւն մը ծագի: Մահմուտ Շէվքէթ փաշա, կայութեան ծանրութիւնը զգալով, Ալպանիա գնաց, խորհրդակցեցաւ մէկ քանի պետերու հետ, և Պոլիս դարձին որոշեց ընդհանուր զինաթափութեան ձեռնարկել, ո՛չ միայն Ալպանիոյ, այլ նաև Մակեդոնիոյ մէջ: Անատոյցէն զինուորներ բերուեցան, և մեծ արշաւախումբ մը, աւելի քան 50,000 հոգի, մտաւ Ալպանիա՝ Շէվքէթ Թօրլուա փաշայի հրամանատարութեամբ: Զինահաւաքութեան գործը սկսաւ անազորոյն սաստկութեամբ ու բռնութիւններով: Իսլամ ու քրիստոնեայ Ալպանացիները, — վերջինները քիչ մը աւելի, — հաւասարապէս առարկայ դարձան այդ խստութեանց: Թորլուա փաշա որոշած էր կոխկրտել բոլոր վանդակ Ալպանիան, ամէն կողմ տարածելու համար թուրք զօրութեան սարսափը և վերջ տալու համար երկրին առանձնաշնորհեալ դրութեան: — Ինչ որ մեծագոյն սխալներէն մէկը եղաւ ժէօն-Թիւրք ընթացին: Վարչական դրութիւնը որուն կ'ուզէին նսթարկել Կայսրութեան այդ ըմբոստմասը, անշուշտ շատ ծափահարելի էր, բայց պէտք էին նկատի առնել նաև հոգեկան և ընկերային վիճակը ու զարգացման աստիճանը Ալպանացի ժողովուրդին. այդ բարեկարգ պայմաններուն հաստատութեան աշխատելէ առաջ պէտք կար տարբեր տեսակէ աշխատութեան մը, մասնաւորապէս զարգացման. այստեղ ալ առաջին քայլը չառած երկրորդ քայլը առին,

(*) Մալիսորները կաթոլիկ Ալպանացուց մէկ ճիւղն են, մօտաւորապէս 27000 հոգի, բոլորն ալ լաւ սպառազինուած:


լիսորներուն օժանդակութեամբ կազմեցին 3000 հողինաց խումբ մը և Մարտ 23ի գիշերը թրքական հողը մտնելով գրաւեցին սահմանագլխուն երկայնքը գտնուող բոլոր ամրութիւնները, թուղին, Բիքալան, Նար-



Շր ժամի Դանգրիտանի մասամբ մարտի 23

դան, Չանօրան և Վրանիան: Յաջորդ օրը, Միրտիթներու մէկ մասը՝ Շալայի, Կրուտայի, Գասթրաթիի, Հօթիի Ալպանացիները անոնց կը միա- նային, ամրացնելով Սալէ-Բլէմէնթին: Եթէ ամբողջ Միրտիթները ձեռք

ձեռքի տային Մալիսորներուն հետ, տարակոյս չկայ որ Օսմ. Գառազա- րութեան վիճակը կը ծանրանար: Բրինք փաշա նախասահմանուած պետն էր այս շարժման. իր վայելած ժողովրդականութեան շնորհիւ կրնար շատ մեծ ոյժեր համախմբել հրահրային Ալպանիոյ մէջ, թուրքերուն դէմ.



Ն Ա Ա Ն Ջ Ե Ի Բ Ո Պ Ո Ս Թ Ե Կ
Իսմէիլի Մուհամմեդի խնայումը Սիւրէֆի մէջ

արդէն ըմբոստ և ապստամբելու արամադիր բոլոր ցեղերը, որոնց միացած էին նաև իսլամ Ալպանացիներ, պատուիրակներ կը դրկէին իրեն որպէս զի ի- րենց դուխը անցնի: Իշխանը մերժեց, որովհետև Ալպանիան դեռ հասուն չէր նկատուած անկախութեան համար: Մաս մը Միրտիթներ անօացին իր խոր-

հուրդներուն և զէնքը վար դրին, բայց միւսները խմբովին ապստամբեցան Յունիս ամսուն, առաջնորդութեամբ Իտալիոյ հպատակ և հարաւային Իտալիոյ արպանական գաղութիւն (Սանթա-Քոզմայի) մէջ ծնած ալպանացիի մը՝ Թօրէնցիօ Թօքքիի: Օսմ. կառավարութիւնը, արդէն իսկ յոգնած Մալիտորներու դէմ մղուած պերսիստ պայքարէն որ թէ մարդու և թէ՛ դրամի շատ մեծ զոհողութիւններ արժած էր իրեն, առանց արդիւնք մը տալու, Միրտիթներու ապստամբութեան վրայ պիտի ստիպուէր ճշմարիտ բանակ մը շարժման մէջ դնել, երբ Աւստրիական կառավարութեան միջամտութիւնը զինքը բռնադատեց տեղի տալու: Անկէ քիչ առաջ, Գարատաղի բողոքներուն վրայ, Ռուս կառավարութիւնը չափազանց խիստ ծանուցագրով մը Դրան հասկցուցած էր թէ պէտք է կարելի եղածին չափ շուտով վերջ տայ Սև Լերան սահմանազիտուն շուրջը տեղի ունեցող այդ ընդհարումներուն, որոնք կրնային խաղաղութիւնը վրդովել՝ Գարատաղը պատերազմի գրգռելով: Ծանուցագիրը կը պահանջէր որ Բ. Դուռը «անյապաղ և ամենաբացարձակ կերպով յայտարարէ թէ Գարատաղի նկատմամբ թշնամական զգացումներ չի տածեր»: Դուռը խընդրին ամբողջ պատասխանատուութիւնը նետած էր Սև Լերան վրայ: Աւստրիա նոյնպէս, հիմնուելով Ալպանիոյ Քրիստոնեաներուն պաշտպանութեան իր իրաւունքէն, խորհուրդ տուաւ Դրան որ վերջ տայ ալպանական խնդրին: Իտալիա ալ կը պատրաստուէր միջամտելու նոյն հիման վրայ: Յունիս 12ին՝ Սուլթանը ընդհանուր ներում չնորհեց Ալպանացի ապստամբներուն և աքսորականներուն, պայմանաւ որ հանդարտին՝ ասկէ զատ, Ալպանացուց կուտար ազատութիւն զէնք կրելու և լատին այբուբենը գործածելու իրենց վարժարաններուն և վարչական գրութեանց մէջ, տուրքերը կը թեթեւցնէր ժողովուրդին նիւթական վիճակին համաձայն, ալպանացի կուսակալ և միւթէսարըֆիներ կ'անուանէր Շքօտրայի նահանգին մէջ, դարձեալ Ալպանացիներ կը կոչէր կարգ մը վարչական պաշտօններու, մասնաւորաբար հարկահաւաքութեան, 10,000 ռակի կը կուտար իր անձնական գանձէն՝ ապստամբութեան առթիւ կործանած եկեղեցիներու և շէնքերու վերաշինութեան համար, ու վերջապէս կարևոր գումար մըն ալ կը նուիրէր՝ որպէս զի արիւնի վրէժները դրամով կարգադրեն:

Ալպանացիք կառավարութեան զիջումները ընդունեցին Սուլթանին նկատմամբ հաւատարմական յայտարարութեամբ մը որ նոյն ատեն որոշ կերպով կը զգացնէր թէ միշտ անհաշտ կը մնան ժէճն-Թիւրք քօմիթէին հետ: Քանի մը օր վերջ, յունիս 15ին, Սուլթան Մէհմէտ Մակեդոնիսոյէն անցնելով կը հասնէր Քօսովայի համբաւաւոր դաշտը և ի ներկայութեան հարիւր հազարաւոր Ալպանացիներու՝ պատմական նախադր կ'ընէր Սիւտավէնտիկեար Սուլթան Մուրատի դամբարանին առջև: Հաշտութիւնը ուղղակի վնասպետին հետ էր. քօմիթէին ազդեցութեան տակ գտնուող դաշիճը կը մնար միշտ կասկածելի իրենց աչքին: Յաջորդ տարին, ապստամբութիւնը վերսկսաւ ու շարունակուեցաւ, այս անգամ շատ խոշոր համեմատութիւններով, տեղի տալով նոր ու նոյքան մեծածախս զինուորական

արշաւանքներու (*), որոնք անհունապէս աւելի ծանր դրութիւն մը պիտի ստեղծէին, ուղղակի պատճառ դառնալով Կայսրութեան քայքայման, զոր պատերազմը պիտի լրացնէր:

1912ին ապստամբութեան պատճառ դարձան նոյն տարուան երեսփոխանական ընտրութիւնները — աւելի ճիշդը անուանումները, — որոնցմով Իթիհատը սահագին մեծամասնութիւն մը ձեռք բերած էր: Ապրիլի վերջին օրերը խլամ Ալպանացիք վերսկսան թշնամութիւնները: Վուչթրինի մէջ սպաննեցին ոստիկաններ, արգիլեցին Շագօվայի ոստիկանական վարժարանին շինութիւնը և Շքօտրայի կողմերն ալ հեռազրաթեղերը կտրեցին: Շուտով Իբէքի և Բրիզոնտի շրջանակները կրակի մատնուեցան: Շարժումը վրդովիչ հանգամանք մը առաւ, երբ հոն զրկուած զինուորներէն մաս մը մերժեց զէնքի դիմել, և ուրիշ մաս մըն ալ անոնց կողմը անցաւ: Միմիայն Սկիւպի զօրաբաժնէն 400 զինուորներ, իրենց զէնքերով ու կազմածներով լեռ բարձրացան ապստամբներուն միանալու: Ալպանացուց ղեկավարն էր նախորդ օսմ. երեսփոխան Հասան պէյ, որ մեծ ժողովրդականութիւն կը վայելէր երկրին մէջ, և որ տակաւին խորհրդարանական ընտրութիւնները չկատարուած՝ յայտարարած էր թէ ապօրինութիւն գործուելու պարագային ոտքի պիտի հանէ Ալպանիոյ ժողովուրդը: Կաթոլիկ Ալպանացիները նոյնպէս կը պատրաստուէին զէնքի դիմելու, յայտարարելով որ հակառակ կրօնքի տարբերութեան, իրենք ու իսլամները հաւասարապէս Ալպանացի են: Կառավարութիւնը, այս դէպքերուն վրայ, որոշեց զինուոր զրկել, այս անգամ սակայն յոր դորելով սպանները որ ծայրայեղութիւններէ զգուշանան և կարելի եղածին չափ սիրաշահութեամբ վարուին: Կարգ մը տեղերու մէջ իսկոյն պատերազմական վիճակ յայտարարուեցաւ: Շարժումը սակայն չկասեցաւ այդ միջոցներուն հետեւանքով: Մայիսի առաջին եօթնեակին մէջ, Ալպանացիք Իբէքի մէկ գիւղը բանակած 200 զինուորներ գերի բռնեցին, և զէնքերնին, նոյն իսկ հագուստնին առնելով ճամբեցին: Միրտիթներն ալ սկսան խլրտիլ. Բրինք փաշա՝ որ կասկածելի դարձած էր իր չափաւորութեան ու խաղաղասիրութեան պատճառաւ, մեկուսացուելով հսկողութեան ենթարկուեցաւ իր իսկ ժողովուրդին կողմէ: Աւելի նշանակելի բան մը՝ Գօսովայի Սերպերուն և Ալպանացուց միացումն էր, — Հայկեքուրդ միութեան պէս բան մը, — ինչ որ առաջին անգամ ըլլալով տեղի կ'ունենար. հերոսան ջարդարարներն ու իրենց զոհերը ձեռք ձեռքի տրուած էին կառավարութեան դէմ:

Մինչդեռ այս ընդհարումները տեղի կ'ունենային, Հաճի Ատիլ պէյի նախագահութեան տակ գտնուող քննիչ յանձնաժողով մը յաջորդաբար կ'այցելէր Հիւսիսային Ալպանիոյ քաղաքները: Կառավարութիւնը պայմանաժամ տուած էր ապստամբներուն և խոստացած էր շարք մը թոյլ-

(*) Զօհրապ էֆէնտի, 1910 Նոյեմբեր 22ին Խորհրդարանին մէջ կը յայտարարէր թէ մի միայն նոյն տարուան արշաւանքը 5000 հոգիի կորուստ և 69 միլիոն ֆրանք արժած էր: Նուազ մեծածախս չէին նաև միւս արշաւանքները:

տութիւններ, յուսարով որ կը խաղաղին: Պայմանաժամը կ'աւարտէր Մայիս 4ին: Օր մը վերջ՝ լուր հասաւ Պոլիս թէ Իսմայիլ Քէմալ պէյ որ Գարատաղէն կը վարէր իր հայրենակիցները, մտած է Մալիսորներու երկիրը: Երևան կ'ելլէին նաև համբաւաւոր Իսա Պօլաթիին ու Ալպանացի նախկին Օսմ. երեսփոխան Պասրի պէյ, իւրաքանչիւրը զօրաւոր հրոսախուժներու գլուխը անցած: Տակաւ առ տակաւ զգալի կ'ըլլար թէ ապրտամբութեան բուն նպատակը Ալպանիոյ ինքնօրինութիւնն է: Մայիս



Անդրանիկ վերաւորը Գարատաղի մէջ

13ին Իսմայիլ Քէմալ պէյի ու միւս բոլոր Իսլամ և Քրիստոնեայ պետերուն կողմէ ստորագրուած պահանջմնագիր մը ալիս բնաւ կ'սակածի տեղի չէր թողուր այդ մասին: Ալպանացիք կը պահանջէին՝

1. Ալպանիոյ քաղաքական սահմանազուլները անջատել.
2. Ալպանիոյ դրօշը վերահաստատել.
3. Ալպանիոյ ընդհանուր կուսակալ կարգել ալպանացի վաղեմի ընտանիքներէն մէկուն պատկանող անձ մը.
4. Ալպանիայէն հեռացնել ուրիշ ազգի պատկանող բոլոր պաշտօնեաները և անոնց տեղ Ալպանացիներ կարգել.
5. Իբք պաշտօնական լեզու ընդունիլ լատինական տառերով գրուող ալպաներենը.
6. Այս պայմաններուն ընդունելութեան ու գործադրութեան մասին պէտք է երաշխաւորէին մեծ տէրութիւնները:

Կառավարութիւնը բնական է կարևորութիւն չընծայեց այս պահանջմնագրին. միայն՝ զինուորական վճռական գործողութեանց ձեռնարկելէ առաջ, չարաթ մըն ալ երկարեց Ալպանացւոց տրուած պայմանաժամը, ինչ որ դարձեալ ապարդիւն մնաց: Գօրովայի կուսակալ Մազհար պէյ, նոյն

չարթուն կը յայտարարէր թէ ապստամբները 2000 հոգի են. իրականութիւնը շատ աւելի մեծ էր. և ապստամբները պարտապ չէին կենար. ընդհարում, սպանութիւններ, առեւանգութիւններ, ու նաև զինուորական ըմբոստութիւններ իրօրու կը յաջորդէին զահանգական արագութեամբ: Ալպանիոյ գահուն թեկնածուներ կը պատրաստուէին երկիր մանել. նոյն նպատակը նաև Իտալիոյ Կարիպայտեաններուն մօտ: Արհիւրդարանական վերջին ընարութեանց արդիւնքէն դժգոհ Իթիլաֆականները և առ հասարակ բոլոր ընդդիմադիրները կը շահագործէին այս դէպքերը, Իթիհատի դէմ գրգռութիւնը աւելցնելու և օրուան Իթիհատական Գահինը տապալելու համար: Դժգոհութիւնը կը տարածուէր նաև բանակին մէջ. սպաններէն անոնք որ Իթիլաֆի յարած էին, չէին ծածկել իրենց զգացումները Իթիհատի նկատմամբ: Կառավարութեան դիրքը օր օրի քիչ մը աւելի կը խախտէր, և յայտնի կ'երևար որ Իթիհատն ալ անոր հետ կը սարսուէր: Մայիս 17ին՝ Հաճի Ատիլ պէյ առաջարկեց գործադրել հետևեալ միջոցները, որոնք կէս զիջումներ էին Ալպանացւոց.

1. Ետ կանչել Իփէքի միւթէսարըֆը, որուն դէմ մեծ դժգոհութիւն ունէին Ալպանացիք.
2. Յայտարարութեամբ մը պարզել Ալպանացի ժողովուրդին թէ ապստամբութեան պետերը հայրենիքին թշնամի են, և միշտ գաղտնի յարաբերութեան մէջ կը գտնուին օտար երկիրներու, մասնաւորաբար Գարատաղի հետ.
3. Առ այժմ դադարեցնել կառավարական շէնքերու, պահականոցներու, դարոցներու և երկաթուղիներու շինութիւնը.
4. Խոստանալ Ալպանացւոց թէ մօտ ատենէն իրենց ձրի հողեր պիտի բաշխուին, իւրաքանչիւր ընտանիքի պէտքին համեմատ.
5. Թուրքաբարատաղեան սահմանազուլի ընդհարումներն ու միջադէպերը դադարեցնելու համար ձեռք առնել զգուշական միջոցներ.
6. Իբէքի, Եագօվայի և Բրիշթինայի շրջանակներուն մէջ զինուորական ցոյց մը կատարել, կառավարութեան ոյժը ցոյց տալու համար:

Նոյն օրը Ալպանիոյ զօրաբանակին հրամանատար Իսմայիլ Յազլլ փաշա յայտարարութեամբ մը հրաւիրեց Ալպանացիները որ 48 ժամուան ընթացքին յանձնեն իրենց զէնքերը: Ալպանացիք պատասխանեցին յաջորդ օրն իսկ Իբէքի վրայ ընդհանուր յարձակմամբ մը կռիւր ամբողջ օր մը տևեց և ստացաւ կատարեալ ճակատամարտի հանգամանք. երկուստեք մեծ կորուստներ տուին: Վեց օր ետք՝ Հաճի Ատիլ պէյ որ Պոլիս վերադարձած էր, Երեսփ. Ժողովին մէջ երկար ճառով մը համարատուութիւնը ըրաւ իր ճամբորդութեան, բացատրելով թէ ինչ է Ալպանական ապստամբութիւնը: Ժողովը վստահութեամբ ընդունեց նախարարին յայտարարութիւնները, որոնք շարժումը կը վերադրէին զանազան պետերու և օտար երկիրներու դրդումներուն: Երբ այդ վստահութիւնը կը յայտնուէր Պոլսոյ մէջ՝ անդին ապստամբութիւնը կը ծաւալէր, հակառակ կառավարութեան սպառնալիքներուն և նոր զինուորներու առաքման. մի միայն Իսլամ ապստամբ Ալպանացիներու թիւը 13,000ը կ'անցնէր. Միրտիլիներէն ու Մալիսորներէն անոնք որոնք Իսլամներուն միացած էին, ապստամբներու ընդհանուր թիւը կը բարձրացնէին մօտաւորապէս 20,000ի:

Պոլսոյ կառավարական մամուլը թէև կը ջանար կացութեան ծանրութիւնը ծածկել, բայց Ալլախիայէն հասած լուրեր ամէն օր նոր փաստեր կը բերէին թէ ապստամբութիւնը դիւրաւ չպիտի դադրի: Զէնքի դիմող Ալլախանցիներ չէին ուզեր զինաթափութեան և հաշտութեան խօսք լսել: Վուչթրինի ազդեցիկ պետերէն մէկը, խաղաղութեան յորդոր տուած ըլլալուն համար, իր վրայ հրաւիրեց բուն ատելութիւն մը. ապստամբները այրեցին անոր պատկանող ընդարձակ անտառ մը: Յունիս 12ին (Հ. Տ.) կառավարութիւնը պաշտօնական յայտարարութեամբ մը խոստովանեցաւ թէ Մանասթըրի, Բէրլէքէի և Տիպրէի զօրաբաժիններուն պատկանող հարիւրապետ մը, ինը ենթասպայ և յիսուն զինուոր ապստամբներուն միացած ըլլալով կը հետապնդուին: Կ'երեւայ՝ իրականութիւնը աւելի վրդովիչ էր որ Յունիս 13ին նախարարաց խորհուրդը գումարուեցաւ «յատկապէս դասալիք սպաներու հարցով զբաղելու համար»:

Յաջորդ օրն իսկ վարագոյրը կը բացուէր: Ալլախական ապստամբութիւնն ու զինուորական ըմբոստութիւնները ստեղծած էին վիճակ մը ա՛յնքան ծանր, որքան չէր նոյնիսկ 1908 Յունիսի յեղափոխութիւնը: Խռովութեանց կեդրոն՝ Մանասթըրի նահանգն էր. Իթիհատին և իր հոս վանաւորած կառավարութեան դէմ ուղղուած շարժումը զարգացած էր ճիշտ հոն ուր երբեմն միեւնոյն Իթիհատը յեղափոխութեան դրօշը բարձրացուցած էր յաղթականօրէն: Ալլախացի երկու կանոնաւոր Վաշտեր միացած էին ապստամբներուն, Բէրլէքէի, Տիպրօվայի և Վէրի մէջ զինուորները ապստամբած էին. Կօրիցայի և Էքշի Սուլի մէջ բանակած զինուորներու գումարտակ մը՝ հարիւրապետ Թայեար պէյի հրամանատարութեամբ, նոյնպէս լեռ բարձրացած էր, հետը տանելով զինուորական իրեղէններ, հրացաններ, գնդաձիր մը և 1000 Օսմ. ոսկի: Թայեար պէյ, երբեմն ջերմ Իթիհատական, կը պատկանէր բանակին մէջ մարմին առած գաղտնի կուսակցութեան մը որ «Ազատարարներու (Խէլասքեարան) Միութիւն» կը կոչուէր, և որուն կը մասնակցէին բազմաթիւ սպաներ: Ապրստամբները կը պահանջէին որ Իթիհատը քաջուի իշխանութենէ, Սաիտ փաշայի դահլիճը հրաժարի, նախորդ Հագզը փաշայի դահլիճը դատաստանի ենթարկուելով պատժուի՝ Տրիպոլիսը անպաշտպան ձգած ըլլալուն համար, Երեսի. ժողովը լուծուի և նոր Խորհրդարան ընտրուի ժողովուրդին ազատ քուէով. ունէին նաև գահուն շուրջը դարձող յաւակնութիւններ: Բանակին մէջ ալ կուսակցական ատելութիւնները և վէճերը ստացած էին շատ ծանր հանգամանք, ու նոր ըմբոստութիւններէ և դասալքութիւններէ վախնալով, կառավարութիւնը չէր կրնար անհրաժեշտ խստութեամբ հետապնդել ապստամբները, որոնք ամէն կողմ միանգամայն կը կռուէին: Յունիս 16ին, պատերազմական նախարար Մանուէտ Շէվքէթ փաշա Խորհրդարանին ներկայացուց օրինադիժ մը՝ քաղաքական հաւաքումներու և ցոյցերու մասնակցող, ինչպէս նաև քաղաքական կուսակցութեանց պատկանող զինուորներու և սպաներու նկատմամբ: Յաջորդ օրը՝ Մանուէտ Շէվքէթ փաշա իր օրինադիժը պաշտպանեց ժողովին առջև, յայտնելով թէ ինք միշտ հակառակ գտնուած է սպաներու քա-

ղաքականութեամբ զբաղելուն և թէ խստօրէն պիտի գործադրէ նոր օրէնքը: Ժողովը ընդունեց զայն՝ ընդդիմադիրներու կողմէ յարուցուած բուն միջադէպերու մէջ. այս վերջինները կասկած կը յայտնէին թէ նոր օրէնքը լոկ հակաիթիհատական սպաները հայածելու պիտի գործածուի: Մանուէտ Շէվքէթ փաշա սակայն տրամադիր էր ներելու դասալիքներուն, եթէ զէնքերնին վար դնելով խոստանային այլևս քաղաքականութեամբ չզբաղիլ: Իսկ ըմբոստները սկսած էին իր ալ պաշտօնանկութիւնը պահանջել:

Բունմէլիի զօրքերուն վրայ անվստահ կառավարութիւնը որոշեց Փոքր Ասիոյ բանակէն մաս մը անցընել Ալլախիա: Այտրնի զինուորական հրամանատար Ապտուլլահ փաշա, — այն որ ներկայ պատերազմին սկիզբները Թրակիոյ բանակին կը հրամայէր, — մերժեց կռուիլ Ալլախացուց հետ: Գօնեայի հրամանատարը նոյնպէս: Ալլախիոյ դասալիք սպաներուն տեղ զրկուած նոր սպաներէն մաս մըն ալ չուզեց մասնակցիլ Ալլախացուց դէմ կատարուելիք զինուորական գործողութեանց: Ապստամբութեան պարագլուխները յիշատակագիր մը ուղղեցին մեծ տէրութեանց հիւպատոսներուն, որուն մէջ Օսմ. կառավարութիւնը կ'արաստանէին իբր հակասահմանադրական, մասնաւորաբար օրինակ ցոյց տալով վերջին խորհրդարանական ընտրութիւնները. ու կը յարէին թէ իրենց նպատակն է իսկական Սահմանադրութեան վերահաստատումը: Կառավարութիւնը հարկ տեսաւ Եւրոպայի իր դեսպաններուն միջոցաւ տէրութեանց ծանուցանել թէ Մանասթըրի խռովութիւնը տեղական դէպք մըն է և ծանր հանգամանք չունի: Միևնոյն ատեն՝ Մանասթըր զրկեց Գ. զօրաբանակի հրամանատար ձավիտ փաշան, այն որ ալլախական առաջին ապստամբութիւնները զրսպած էր: Այս կարգադրութիւնը բոլորովին աւելցուց Ալլախացուց սրտմտութիւնը. բանակին վրայ ալ շատ լաւ տպաւորութիւն չըրաւ. սպաները հետզհետէ աւելի կը պառակտէին, և իրենց օրինակին վրայ՝ զինուորները կը մերժէին Ալլախիա մեկնիլ: Ռօտսթօի և Կէլիպօլըի շրջանակներէն Ալլախիա զրկուելիք զօրքերը ճամբայ հանելու համար պէտք եղաւ ապահովցնել զանոնք թէ Մանասթըր չպիտի երթան, այլ Քրիստոնեայ Միտիթներուն դէմ, որոնք նոյնպէս ապստամբած էին: Միթրովիցայի մէջ տեղի ունեցած ծանր ընդհարում մը Իսա Պօլաթինի մարդոց և կառավարական զօրքերուն միջև, և շարք մը ուրիշ ոչ նուազ արիւնալի ընդհարումներ բոլորովին ծանրացուցին կացութիւնը: Հաճի Ատիլ պէյ, Ալլախացի երեսփոխաններու հարցապնդման վրայ, ապահովիչ բացատրութիւններ տուաւ Երեսի, ժողովին մէջ: Երկու օր վերջ սակայն Մանուէտ Շէվքէթ փաշա կը հրաժարէր պատերազմական նախարարութեան պաշտօնէն: Պոլսոյ ու նաև Եւրոպայի մէջ մեծ տպաւորութիւն գործեց այս հրաժարականը: Նախարարական տագնապ մը անխուսափելի կ'երեւար: Ընդդիմադիրները, Շէվքէթ փաշայի հրաժարականէն քաջալերուած, բոլորովին սաստկացուցած էին իրենց գործունէութիւնը: Սպաներու խոշոր բազմութիւն մը ձեռքի տակէ կը քաջալերէր իրենց ջանքերը, որոնց նպատակակէտը Իթիհատն էր: Սաիտ փաշա մեծ դժուարութիւն քաջեց

Մահմուտ Շէփքէթ փաշայի յաջորդ մը ճարելու համար: Հրաժարեցան նաև ընդհ. սպայակոյտի փոխ-նախագահ: Հատի և զինուորական պիտոյից ճիւղին պետ Իսմայիլ Հազըր փաշաները: Պատերազմական նախարարութեան պաշտօնը առաջարկուեցաւ Նազըմ փաշայի, որուն բանակին մէջ վայելած ժողովրդականութենէն ուղեցին օգտուելի սպաներու պառակտման վերջ տալու համար: Փաշան՝ առաջարկեց հետեւեալ պայմանները. — 1. Քաղաքական յանցաւորներու ընդհանուր ներում: 2. Պաշարման վիճակի բարձում: 3. Ապստամբներուն դէմ զինուորական գործողութեանց դադարեցում: 4. Յետակոչում Ալպանիա գտնուող զինուորներու: 5. Իսսալիքներու հանդէպ ներողամտութիւն: 6. Պոլսոյ գործարանակին հրա-



Հորահանութեան տեսարան մը Սօֆիայի մէջ

մանատարութեան միացումը պատերազմական նախարարութեան պաշտօնին: — Այս պայմանները չընդունուեցան: Ուրիշ զինուորականներ՝ որոնց յաջորդաբար առաջարկուեցաւ պատերազմական նախարարութեան պաշտօնը, մերժեցին ընդունիլ: Տագնապը կը տեւէր այսպէս Պոլսոյ մէջ, և անդին՝ Ալպանիոյ մէջ ալ, ընդհարումները, յաճախ նոյն իսկ կանոնաւոր ճակատամարտներ և քաղաքներու գրաւումներ, ինչպէս նաև դասալքութիւններն ու զինուորական ըմբոստութիւնը կը շարունակուէին անդու: Յուլիս 3ին՝ Երեւաի, ժողովին մէջ կարդացուեցաւ Ալպանիայէն զրկուած և Յուլիս 1 թուակիր հետեւեալ հեռագիրը որ մեծ ցնցում առաջ բերան: — «Երկու ամիսէ ի վեր շարունակուող ընդհարումները երկու օրէ ի վեր Իրիշթինայի կողմերն ալ տարածուեցան: Թնդանօթի և հրացանի միջև տեղի ունեցող այս սրտաճմլիկ տեսարանը կը լացնէ ամբողջ բնակչութիւնը: Եթէ ձեր նպատակը լոկ աթոռներ գրաւել չէ, ասոր դարմանին համար ձեր միջնորդութիւնը կը խնդրենք յուզման մէջ գտնուող 80,000 հոգիի անունով»: Հակառակ այս հեռագրին՝ դահլիճը վստահութեան քուէ ստացաւ Հախշախի մեծամասնութեամբ: Յաջորդ օրը սակալն կը հրաժարէր՝ չկարենալով սուկալ ընդդիմադիր զինուորականներու ճնշ-

ման, որուն ազդեցութեան տակ ինկած էր նաև Պարտար: Իթինաոյ՝ Ալբերկեան Տրիպուայ ձախողութիւն հետեւանքով ամէն ժողովրդականութիւն և ազդեցութիւն կորսնցուցած՝ չէր կրնար սուկալ իրեն դէմ մղուած բռնան պայքարին:

Ղազի Ահմէտ Մուխթար փաշայի դահլիճը որ պաշտօնի անցաւ Յուլիս 9ին, և որուն կ'անդամակցէին Նազըմ փաշայ՝ իբր պատերազմական նախարար ու Դարբիլէ Էֆ. Նորատունկեան իբր արտաքին գործոց նախարար, և որ աննկարագրելի խանդավառութեամբ մը ողջունուած էր, չկրցաւ արագօրէն վերջ տալ Ալպանիոյ արիւնահեղութեանցը⁽¹⁾: Ընդդիմադիր տարրերը, ժամաւորաբար «Խէլասքեարան»ները, առաջին յաղթանակ մը տարած էին Իթինաոյի դէմ, բայց այս վերջինը դեռ միջնաբերդ մը ունէր, — Երեւաի - ժողովը, — որուն մէջ ակէր կը մնար: Նոր նախարարութիւնը պաշտօնի անցած օրն իսկ Երեւաի - ժողովը ցրուելու ախտաբան պահանջ մը առջև գտաւ ինքզինքը: Կատարեալ անխելանութեան չըջան մը, որ բանակը քաղքայելով երկիրը կը տկարացնէր ու կը սրէր Պալատեան Պետութեանց ռազմասիրական միտումները: Դահլիճը փութով հեռադիմաց Ալպանիա որ դադարեցուն սպստամբներուն դէմ կատարուած հետապնդումները: Նոյն առևն Պոլսոյ մէջ կազմեց Յանձնաժողով մը որուն նախագահ նշանակուեցաւ ձերակուտական Բէշիա Արիֆ փաշայ, և որ Արաբոնիա պիտի մեկնէր ապստամբները խաղաղեցնելու պաշտօնով: Ժամանակն էր արդէն: Ալպանացիք Պոլիս հեռագիր կը զրկէին որ եթէ երբեք Երեւաի - ժողովը չլուծուի, պիտի իջնեն Ալբանիկ և անկէ ալ ժայռաքաղաքին վրայ պիտի քայլեն: Իրենք անձամբ Խորհրդարանը ցրուելու համար: Խէլասքեարանները, Պոլսէն անոնց պահանջման ոյժ տալու մտքով, Յուլիս 11ին Երեւաի - ժողովոյ նախագահին ուղղեցին սպառնալիք մը որ յաջորդ օրն իսկ կարգացուեցաւ ժողովին մէջ՝ Նազըմ փաշայի ներկայութեան⁽²⁾: Քիչ ետքը՝ մինչդեռ Ալպանացի ապստամբապետ և նախկին երեսփոխան Հասան պէյ Իրիշթինան կը գրաւէր, 60,000 սպստամբ Ալպանացիները Գոսուլայի դաշտին մէջ՝ Խիւտալէնտիկեարի դամբարանին առջև հասարակելով կը կրկնէին Ալպանացոց պահանջումները: Իսա Պոլսթին՝ 5000 սպստամբներով Նովի Բազարը գրաւելէ վերջ կը քայլէր Միթրովիցայի վրայ: Զինուորական հետապնդութեանց դադարելէն քաջալերուած, ապստամբները սարսափի դրութեան մը ենթարկած էին բուխարակ Ալպանիան և յաճախ շատ ցաւալի ծայրայեղութեանց կը մղուէին⁽³⁾: Իրենց ընդհա-

(1) Դահլիճին կը մասնակցէր նաև Ղազի Ահմէտ Մուխթար փաշայի զաւակը՝ Մահմուտ Մուխթար փաշայ, իբր ծովային նախարար իսկ Քեամիլ փաշայ կը կոչուէր Պետական Խորհրդոյ նախագահութեան պաշտօնին: Առանց ուղղակի անդամակցութեան, ինք պիտի ըլլար նախարարութիւնը վարող ուղին:

(2) Սելանիկի մէջ գումարուած համաժողովի մը մէջ «Խէլասքեարան»ներուն մեացած էին նաև «Հըֆզի Վաթան», «Իըշտիլէ» և «Օըտու վէ Վաթան» Գիւլաները, որոնք նոյնպէս սպաներէ կը բաղկանային Պահ մը ասոնց դէմ՝ ծառայաւ իթինաոյական սպաներէ կազմուած «Մահմանդրութեան պաշտպան» միութիւնը, բայց ապառիւն կերպով:

(3) Ապստամբները կախաղան հանեցին Իթինաոյական սպայ Սաֆուլայի թայլի պէյը:

նուր թիւը հասած էր 100,000ի. ուրիշ 10,000 Ալպանացիներ այ՛ Տիպ-
րէէն, Միրտիթիայէն և Լուժայէն ճամբայ ելած էին անոնց ոյժ տալու : Իսա
Պօլաթին՝ որուն խուճրը հասած էր 7000ի, նոյնպէս կ'աճապարէր միւս
ապստամբներուն միանալով Սկիւպի վրայ քաշելու : Կառավարական յանձ-
նաժողովը որ Ալպանիա հասած էր, չէր կրնար շարժումը զսպել :

Յուլիս 22ին վերջապէս ելաւ Երեսփ. ժողովոյ լուծումը հրամայող
Կայս. Իրատէն : Յաջորդ օրը՝ գերագոյն նիստէ մը վերջ որու միջոցին
Ճավիտ պէյ նշանաւոր ճառ մը արտասանեց, ժողովը ինք իրմէ «յետա-
ճրգեց» իր նիստերը, առանց Դահլիճին սպասելու : Ժողովին ցրուելէն
ետքը : Մեծ Եպարքոս փաշան երեք չորս երեսփոխանի առջեւ կարդաց
լուծման Իրատէն, և այսպէսով վերցաւ Իթիհատի հակառակորդ տարրե-
րուն ու Ալպանացիներուն դժգոհութեան գլխաւոր պատճառը :

Երեսփ. ժողովոյ լուծումն ալ սակայն փափաքուած անդորրութիւնը
չկրցաւ հաստատել Ալպանիոյ մէջ. ընդհակառակը, ապստամբութիւնը
սկսաւ ծաւալիլ հարաւային Ալպանիոյ քաղաքներուն մէջն ալ, որոնք,
բաղդատմամբ հիւսիսային Ալպանիոյ, գրեթէ խաղաղ էին մինչև այն
ատեն : Օգոստոս 7ին հեռագիր մը կը ծանուցանէր թէ Իրէքի Հաքիմը որ
փոխ-վառավարիչի պաշտօն կը վարէր, սպաննուեր է ապստամբներուն
կողմէ : Նոյն օրը աւելի ծանրակշիռ լուր մը կը հասնէր Պոլիս թէ ապրս-
տամբները խմբովին Սկիւպի վրայ կը քաշեն, և թէ իրենց յառաջապահ
խուճրը՝ մօտաւորապէս 200 հոգի, ամէնքն ալ լաւ զինուած արդէն իսկ
քաղաք խնկելով գրաւած են պաշտօնատունները : Մէկ քանի օր վերջ
2000 ապստամբներ անոնց կը միանային : Ալպանիոյ քննիչ յանձնաժողովը
մարդկօրէն ամէն կարելի ջանք կ'ընէր ապստամբութեան վերջ տալու
համար, որովհետև այդ ատենները կատարուած Քօչանայի Չարդին հետե-
ւանքով, Պուլկարիա շիտկէ շիտակ պատերազմի կը պատրաստուէր : Յու-
լիս 29ին՝ Յանձնաժողովին կողմէ Միւշի Իպրահիմ փաշա կառավարու-
թեան կը ծանուցանէր Ալպանացւոց տասնչորս պահանջները, որոնց հա-
մաճայն Ալպանացիք խաղաղութեան ժամանակ մինակ իրենց երկրին մէջ
պէտք էին զինուորական ծառայութիւն ընել. այլպաներէնը, յատինական
տառերով պէտք էր ուսուցուէր բոլոր ալպանական վարժարաններուն
մէջ. գրաւուած զէնքերը պէտք էին ետ տրուիլ և փճացածներուն համար
ալ հատուցում պէտք է ըլլար. հրկիզուած շէնքերը պէտք էր որ կառուց-
ուէին և Ալպանիոյ պաշտօնեաներն ալ ալպաներէնի հմուտ ըլլային : Ապրս-
տամբները կը պահանջէին նաև երկրագործական ու կրթական բարենոր-
ոգումներ, ճամբաներու շինութիւն, Ափրիկեան Տրիպոլսոյ ձախողուածին
հեղինակներուն համար պատիժ, ինչպէս նաև մասնաւոր հակակռող
մարմնի մը կազմութիւնը՝ իբր երաշխաւորութիւն վերոյիշեալ բարեկար-
գութեանց գործադրութեան :

Վարչական ապակեղրոնացման դրութիւնն է որ կը պահանջուէր
Ալպանիոյ համար, աւելի ճիշտը՝ Շքօտրայի, Գօսօվայի, Մանասթըրի և
Եանեայի վիլայէթներուն համար, որովհետև Ալպանացիք իրենց երկրին
մաս կը նկատէին այդ չորս նահանգները, և իրենց պահանջները կ'ուզէին

գործադրուած տեսնել չորս վիլայէթներու ամբողջութեան մէջ :

Ալպանացւոց այս պահանջումներն են որ իրականացուցին և փու-
թացուցին ներկայ պատերազմը : Շքօտրայի, Գօսօվայի, Մանասթըրի և
Եանեայի վիլայէթները որոնց մէջ կ'ուզէին ապակեղրոնացման հիման
վրայ հաստատուած տեսակ մը ինքնավարութիւն գոյացնել, ամբողջովին
Ալպանիոյ մաս չեն կազմեր : Բուն Ալպանիան այդ չորս վիլայէթներուն
միջուկն է. կեղեւը կը պատկանի պալքանեան միւս ժողովուրդներուն .
Շքօտրայի վիլայէթը մասամբ Ալպանիա է, բայց մասամբ ալ Սև Լեռան
յաւակնութեանց շրջանակին մէջ կ'իյնայ. Գօսօվայի նահանգը նոյնպէս
մասամբ Ալպանիա է, բայց մասամբ ալ Սերպ. Մանասթըրի վիլայէթը
դարձեալ մասամբ Ալպանիա է, բայց մասամբ ալ Պուլկար. Եանեայի վի-
լայէթն ալ մասամբ Ալպանիա է, բայց մասամբ ալ Յոյն. այս չորս վիլա-
յէթները միակ ալպանական ինքնավարութեան մը ենթարկելը կը նշանա-
կէր քանդել միանգամայն թէ՛ Պուլկարիոյ, թէ՛ Սերպիոյ, թէ՛ Գարատա-
ղի և թէ՛ Յունաստանի յաւակնութիւններն ու ակնկալութիւնները : Մեծ
վտանգ կար ուրեմն Պալքանեան Պետութեանց համար. այն հողամասերը
չորս Ալպանիա կը ջանար ընկուղել՝ ահաւոր զոհողութիւններ արժած
էին իրենց. երկար տարիներ անընդհատ իրար սպաննած էին, անոնց մէջ
իրենց ազդեցութեան շրջանակ ստեղծելու համար. անոնց իւրաքանչիւր
մէթը հողը իրենց արիւնով ոռոգած էին. և ահա հիմայ Ալպանացիք
կ'ուզէին այդ չարչարազին զոհողութեանց պտուղը կորզել : Ատոր համար
արդէն իրենց շարժումը բերած կեղրոնացուցած էին Սկիւպի մէջ, որ մի-
անգամայն թէ՛ Սերպերու և թէ՛ Պուլկարներու յաւակնութեանց առանցքն
էր, և անկէ օրէնք կը կարդային Բ. Դրան : Եւ եթէ Իթիհատի տապա-
լումը, ինչպէս նաև անոր վերջին միջնաբերդը եղող Երեսփ. ժողովին
լուծումը պահանջած ու իրականացուցած էին, պատճառը սա էր որ Ի-
թիհատը սկզբունքով իսկ հակառակ էր ապակեղրոնացման կամ ինքնա-
վարութեան :

Ալպանացւոց շարժումը եթէ Օսմ. կառավարութեան դէմ էր, նոյն-
քան դէմ էր նաև Պալքանեան Պետութեանց. այս վերջինները աւելի
վրդովուելու պատճառներ ունէին անկէ քան լուծ իսկ Թուրքիա. որով-
հետև, ինչպէս երկարօրէն բացատրած ենք արդէն, Թուրքին ձեռք աւանդ
կը նկատէին Եւրոպական Թուրքիոյ ստացուածքները, որոնք ճակատա-
գրականապէս իրենց բաժին պիտի մնային օր մը չէ օր մը : Օսմ. Կայս-
րութեան հետ սերտ, անքակտելի կապերով զօդուած ինքնավար Ալպանիա
մը՝ որ իր մէջ ընկուղէր վերոյիշեալ չորս նահանգները ամբողջովին,
քանդումն էր Պալքանեան Պետութեանց երազին, այն սիրական իտէպին,
որուն տարիներէ ի վեր կը դիմէին մեծամեծ զոհողութիւններով, անգոր-
ծելի յամառութեամբ ու անսպառ հաւատքով(*) : Չմոռնանք որ այդ մի-

(*) Այսօր ալ, Պալքանեան Պետութեանց աշխարհակալութիւններէն կարելի եղա-
ծին չափ բան կորզելու կ'աշխատին Աւստրիա և իր զինակիցները, իրենց պաշտպա-
նութեամբ անկախութիւն հռչակած Ալպանիոյ սահմանները ընդարձակելու աշխա-
տելով :

չոցին իրականացած էր նաև Պալքանեան Իաշնակցութիւնը. աօրկազաղտնիք չէր այլևս. Թուրքիա նոյնպէս տեղեակ էր ասոր, գիտէր մանաւանդ որ այդ Իաշնակցութիւնը լոկ իրեն դէմ ուղղուած է. և իր եւրոպական ստացուածքներուն յափշտակութեան կը միտի: Իրեն համար ուրեմն իմաստութիւնը երկու չարեաց փոքրագոյնը ընտրելն էր. և ճիշդ այդ բանը ըրաւ՝ ընդունելով Ալպանացուց պահանջումները: Կը մնար հաստատուն ձեւ մը տալ այդ փրկարար կարգադրութեան, և ասոր համար ալ ժամանակ պէտք էր: Բ. Իուռը թանկագին ժամանակ մը կորսնցուց: Կարգ մը բժականութիւններով որոնց առարկայ դարձուցած էր ապստամբներու 14 պահանջումներէն մէկ քանին, մասնաւորաբար Ալպանացի զինուորներուն խաղաղութեան ժամանակ Ալպանիա մնալուն հարցը. անվատահաւթեան մղեց ապստամբները: Ետտ դժուար եղաւ այդ վերջինները համոզել որ հեռանան Ալիւսէն, ուր ա՛նաւոր բաղնութեան մը հասած էր իրենց թիւը: Մաս մը պետեր դարձան իրենց տեղերը, բայց Իսա Պօլսթին և իրեն պէս անհաշտներ ոչ միայն յամառեցան մնալու, այլ նոյնիսկ կը մտածէին Սելանիկ իջնելով Համիտը առնել ու տանիլ Ալիւսէ գոր կը յուսակնէին ինքնառիար Ալպանիոյ մայրաքաղաքը դարձնել:

Երկու շաբաթներ անցան այսպէսով, և այդ միջոցին Բ. Իուռը ի դուր աշխատեցաւ քնայնելու Պալքանեան Իաշնակցութիւնը, Մակեդոնիան ալ ինքնառիար դարձնելու խոստումով: Ասէն գնով ժամանակ չահելու ճիշդ մըն էր ըրածը: Ալպանացուց կողմէ գործուած մէկ քանի անխորհուրդ ծայրայեղութիւններ սակայն, — ինչպէս Պէրանայի Աերպերուն շարդը, Եանեսայի Յոյներուն եղած ապառնայիքները ու Իարատաղի դէմ յարձակումներ որոնք Մալիսորներու նոր և ա՛նաւոր ապրտամբութիւն մը առաջ բերեն, — խանգարեցին Իրան հաշիւը: Պալքանեան զինակիցները վտանգը ըմբռնելով փութացուցին իրենց գործողութիւնը. քանի՛ արագ շարժէին, այնքան յաջողութեան յոյս կար իրենց համար:

Ալպանացուց պահանջումներուն հաղորդուելէն տանընկիւն օր ետքը պատերազմը այլ ևս անխուսափելի էր, և բովանդակ Արեւելեան Եւրոպա լեցուած էր դէնքի շաչիւններով. հարիւր հազարաւոր բանակներ շարժման մէջ կը դրուէին: Եարաթ մը վերջ, 1912 Սեպտեմբեր 12ին՝ Իարատաղի կողմէ Իրան սրուած վերջնագիրը կը բանար պատերազմական գործողութեանց թուականը:

ՎԵՐՋ Բ. ՀԱՏՈՐԻՆ

ՅԱՆԿ Բ. ՀԱՏՈՐԻՆ

ՊԼՈՒՆ Է. — Աճեցարին քաղաքագութիւնը

Թուրքերուն դերը եւրոպական Թուրքիոյ մէջ. — Ինչո՞ւ կը բաժնուէին Թրքական ստացուածքները. — Թուրքերը «անկարող» չէին բարեկարգելու, այլ բարեկարգութիւնը անհնարին» էր իրենց համար. — Հաւասարութեան, տիրող տարրի և կրօնքի հարցերը. — Հաւասարութեան գրութեան մը մէջ Ի՞նչ պիտի ըլլար Թուրք տարրը. — Միտհաթ փաշայի հարցը. — Կեղծիքի գրութիւն 195

ՊԼՈՒՆ Է. — Թուրքերը Պալքանեան քաղաքագութիւն մէջ

Անդրանիկ Թուրք ցեղերը Պալքանեան թերակղզին մէջ. — Հէլլենացած Թուրքեր. — Թուրք ծերակուտակոններ և հայ կոյսեր Քիւզանդիանի մէջ. — Թրքական անդրանիկ արշաւանքը 1834ին. — Մակեդոնիայ աշխարհակոտորութիւնը Պոլսոյ գրաւուումն 83 տարի առաջ. — Թուրքերը ինչո՞ւ կը յաջողէին տիրապետել. — Իրենց ընկերային-քաղաքական կողմնակերպութիւնը. — Մէվլանա ձէլալեօսին և իր «Մէսնէվին». — Համամարդկային գաղափարներ. — Քրիստոնեաներու մասնակցութիւնը Թուրք վարչութեան բարձր ձեւերուն և Սամ բանակին. — Պաթիհ և Քրիստոնեաները. — Ինչո՞ւ պահանջուեցան հպատակեցուած ազգերու ներքին վարչական կողմնակերպութիւնն ու կողբերը. — Հայ և Յոյն Պատրիարքութեանց կողմնակցութիւնը. — Հայ Պատրիարքներ փոխարքայական կրօնատուութեանց տէր. — «Իուրանը» և իր դերը. — Տարածքի վարչապետութիւններ. — Քրիստոնեայ պաշտօնատարներու նոր վիճակը. — Կրօնական Թալաուութեան շրջանէն վերջ կրօնական անկորոշութեան շրջան. — Բարեկարգութեան ու բռնութեան ուղղութիւնները. — Չարդերու քաղաքականութիւնը. — Բանակալութեան օժանդակ տարրեր. — Քիւրտերն ու Ալպանացիք. — Քիւրտ մայրը և Ալպանացի մայրը. — Վիտինի կուսակալին պատմութիւնը. — Ալպանացի դող «Շինչպէ» մրցեցաւ զերտ դողի մը հետ և փրկեց տէրութեան պատիւը. — Առանձնաշնորհալ ցեղեր և իրենց պատճառած վնասը. — Պետական պաշտօնատարներու յոռի վիճակը. — Հայ ստրաքները և երբեմնի կուսակալները. — «Ատուածամտիս» ամիսներու կեղծքումները. — Նոր գրութիւն, բայց վիճակը անփոփոխ. — «Ուտերու արուեստը». — Կառավարիչներ իրարու կը յաջորդեն, բայց կառավարութիւն չկայ. — Իսլամ բնակչութիւնը եւրոպական Թուրքիոյ մէջ. — Վաչկատուն կեանք. — Առհաւուութիւն. — Ինչո՞ւ Թուրքերը չէին բազմանար. — Թուրք հողատէր պէյերը. — Հողագործ դասակարգին տիւրը գրութիւնը. — Ինչպէս Հայաստանի մէջ. — «Տիշ քիրասին». — Հիւսէին աղա փաշա և Կէնճ աղա պէյը. — Ապօրէն տուրքեր եւրոպական Թուրքիոյ մէջ. — Ո՞ր իսլամ տարրերը պիտի մնան եւրոպա, — Ալպանացուց իսլամութիւնը. — Իսլամ և սակայն Պուլկար 205

ՊԼՈՒՆ Թ. — Ապստամբութեան օրջան

Պուլկար յեղափոխական կազմակերպութիւնները. — Պուլկար կառավարութիւնը ձեռնտու յեղափոխական շարժման. — Արտաքին և ներքին կազմակերպութիւնները. — Պօրիս Սարաֆօֆ. — Չափաւորները և Տայրայեղները. — Իաւադրական դարձուցութիւն. — 1902ի յեղափոխութիւնը. — Հրոսակները. — Յոյները դաշնակից Թուրք

Կառավարութեան հետ՝ ընդդէմ Պուլկարներուն. — Թուրքիոյ ձեռքերը ազատ. — 1897ի աւստրիական համաձայնութիւնը պատճառ հայկական ջարդերուն. — Ռուսիա չուզեր Ասիական Պուլկարի մը ունենալ Կովկասի կողքին. — Պ. Լօպանօֆ և իր տիտղոս քաղաքականութիւնը. — Հանօթօ. — Վիլհելմ Բ. և Հայկական ջարդերը. — Անգլիա և Ֆրանսա կ'որոշեն միջամտել Մակեդոնիոյ տագնապին. — Համիտ կը կանխէ զանոնք. — Հիւսէին Հիլի փաշայի պաշտօնն ու ստացած հրահանգները. — Բարե. նորոգման թրքական մէթոտը. — «Ո՞վ կը խղճայ թուրք տարրին վրայ . . .», կ'ըսէ Հիլի փաշա. — Ռուսիոյ ճնշումներուն վրայ Պուլկարի կը ստիպուի զինաթափ ընել հրոսախումբերը. — Ինչո՞ւ Ռուսիա ձեռնադրէ կը մնար Պալքաններու մէջ. — Ինչ է «թաթու ճուռ»ի քաղաքականութիւնը և ինչո՞ւ կը պահանջէին զայն. — 1903ի աւստրիական ծրագիրը. — Ալպանացոց ցատումը. — Սլաւոնութիւն Մանասթրի ուսական հիւսապտոսին. — Համիտի իրարանցումը. — Պուլկար յեղափոխականները կը վերակին իրենց գործունէութիւնը. — Անգլիոյ միջամտութիւնը. — Միւրձթէկի տեսակցութիւնն ու աւստրիական նոր ծրագիրը որ անգլիական պահանջումները կը նուիրագործէր. — Նոր ուղղութիւն. — Ռուս և աւստրիացի քաղաքային գործակալներ. — Ոստիկանութիւնը կը յանձնուի Եւրոպացոց. — Զօրավար Տէճիօրճիս կը դառնայ Տէճիօրճիս փաշա, և իր կազմակերպած եւրոպական ոստիկանութիւնն ալ կը վերածուի թրքական ոստիկանութեան. — Համիտի խողերը 236

ԳԼՈՒԽ Ժ. — ԳԻԼԿԻ ԲԷՎԱԿԻ ՏԵՍԱԿՑՈՒՄԻՆԸ

Միւրձթէկի ծրագիրը և իր փորձանաւոր Գ. յօգուածը. — Յեղային վէճեր. — Անգլիա դարձեալ կը միջամտէ. — Պ. Քոնսթանի հնարամտութիւնը. — Եւրոպական քննիչներու հարցը. — Նաւային ցոյց. — Միտիլի կը գրաւուի և Համիտ տեղի կուտայ. — Ապստամբական շարժումը կը տկարանայ. — Պօրիս Սարաֆօֆի մահը. — Համիտ ինչպէս զանազան ցեղերու հրոսախումբերը իրարու դէմ կը հանէր. — Բարենորոգմանց անյաջողութեան պատճառները. — Անգլիա պէտք կը տեսնէ եւրոպացի դատական քննիչներու. — Համիտի վրդովումը. — Շահադէտ դեսպաններ. — Պղտիկ պատաններով մեծ պատանները փրկելու քաղաքականութիւնը. — Հրոսախումբերու և թուրք զինուորներու ընդհարումները. — Զանազան ցեղերու հրոսախումբերուն իրերասպան գործունէութիւնը. — Աւստրիական Յիշատակագիրը. — Թուրք զինուորներու և քաղաքային պաշտօնեաներու տիտղոս վիճակը. — Գերմանիա խորհուրդ կուտայ թուրքիոյ՝ Հայաստանի զուլումը վերջացնելու, նոր Մակեդոնիա մըն ալ Ասիոյ մէջ չստեղծելու համար. — Դատական բարենորոգմանց Աւստրիական ծրագիրը. — Սէլիմ փաշա Մէլհամէի պաշտօնը. — Համիտ նոր խնդիր կը հանէ. — Սակարկութիւններ եւրոպական տէրութեանց հետ. — Դատական բարենորոգումները ջուրը կ'իյնան. 242

ԳԼՈՒԽ ԺԱ. — ՅՈՒՍԵՆԻ ԵՆՂԱՓՈԽՈՒՄԻՆԸ

Պ. տ'իլքէթալի ճառը 1908 Յունուար 27ին. — «Բան մը կը փոխուի եւրոպայի մէջ». — Աւստրիական համաձայնութեան քննումը. — Երկաթուղիներու քաղաքականութիւնը. — Դարձեալ «Մղուր դէպի Արեւելք». — Տնտեսական աշխարհակալութեան ծրագիր մը. — Դժգոհութիւնը Ռուսիոյ մէջ. — Ռուս քաղաքականութեան սխալը. — Երկաթուղիի քաղաքականութեան դէմ երկաթուղիի քաղաքականութիւն. — Սալէ Արշիպեղապոսի դէմ Դանուբ-Ադրիականը. — Պալքանեան Պետութիւնները և իրենց երկաթուղիի քաղաքականութիւնը. — Տնտեսական ծաւալման պատրուակին տակ քաղաքական ծաւալման նպատակ. — Ռուսիա կը փոխէ իր քաղաքականութիւնը. — Հեռավոր Արեւելքի դէպի Մերձաւոր Արեւելք. — Համիտ կը շահագործէ տէրութեանց մրցակցութիւնը. — Լոնտոնի Պալքանեան Բոմիթէն. — Դարձեալ բարեկարգութեան խնդիր. — 1908 մարտ 3ի անգլիական ծրագիրը. — Մակեդոնիոյ դատական բարենորոգմանց

վտանգը միանգամայն թէ՛ թուրքիոյ և թէ՛ Անգլիոյ համար. — Մերժում անգլիական ծրագրին. — Մարտ 26ի ռուսական ծրագիրը. — Սուլթանին գերիշխանութիւնը գոնէ երեւութապէս փրկելու ջանքեր. — Ափրիկեան Տրիպոլիոյ կնճիւղ. — Բէճէպ փաշա և իր դիմադրութիւնը. — Համիտ և աքսորականը. — Իտալիա շարժման մէջ կը դնէ իր նաւատորմը. — Համիտ կը ցնծայ և Գերմանիա կը փրկէ Տրիպոլիոյ. — Բէվալի տեսակցութիւնը և անկուռուս ծրագիրը. — Յուլիսեան յեղափոխութիւն. — Շարժման ոգին. — Թուրք ազգայնական-հայրենասիրական և օտարատեսաց յեղափոխութիւնը. — Ժէօնթիւրքերը ինչո՞ւ փոխացուցին զայն. — Համիտի փորձերը՝ յեղափոխութիւնը զսպելու համար. — Շէմի փաշա և Տէրիզովիքի Ալպանական գումարումը. — Ալպանացիք կ'աջակցին ժէօնթիւրքերուն. — Ալպանութիւն Շէմի փաշայի. — Իսա Պօլաթին մինակը կը մնայ Համիտի հաւատարիմ. — Համիտ և Նոր Բէվալի. — Ժէօնթիւրքերու իմաստուն վարմունքը բռնակալին նկատմամբ. — Ուր Համիտ ամէնէն աւելի սահմանադրական կ'երեւայ. 253

ԳԼՈՒԽ ԺԲ. — ՆՈՐ ԲԷՎԱԿԻ

Տէրութիւնները և Նոր Բէվալի. — Շահու ակնկալութիւններ. — Մակեդոնիոյ ցեղերը և Սահմանադրութիւնը. — Անօրինակ խանդավառութիւն. — Հրոսախումբերն ու յեղափոխական կազմակերպութիւնները զինաթափ. — Ժէօնթիւրքերը ճամբու կը դնեն Մակեդոնիոյ եւրոպացի գործակալները. — Մեծ սխալը. — Ռուսիոյ վերապահումները. — Պ. Կէշօֆի միջնորդութիւնը. — Պուլկարի կը գրաւէ Արեւելեան երկաթուղիներու պուլկարական գիծերը և թագաւորութիւն կը հռչակէ. — Տէրտիւնանտ Զարին յայտարարութիւնը. — Պօնա-Էրսէքի կցումը. — Ծանր տագնապ. — Սերալիա և Գարատաղ նոյնպէս կը բողոքեն. — Պօլքոթ Աւստրիոյ դէմ. — Դրամական փոխարինութիւն թէ՛ Աւստրիոյ և թէ՛ Պուլկարիոյ կողմէ. — Պօլքոթ Յունաստանի դէմ. — Քէրիմ աղա. — Նոր Բէվալի և ոչ-թուրք ցեղերը. — Ներքին և արտաքին անյաջողութիւն. — Պատճառները . . . 312

ԳԼՈՒԽ ԺԳ. — ԱԼՊԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Պատմական Ալպանիան. — Կրօնքը միջոց և ոչ նպատակ. — Պէթաշիները և Ալպանացիք. — Նշանաւոր Ալպանացիներ, միանգամայն թէ՛ զօրավիգ և թէ՛ թշնամի Օսմ. Կայսրութեան. — 1878ի տագնապը և «Ալպանական Դաշնակցութիւն»ը. — Ափ մը ժողովուրդ կը յողթէ եւրոպայի. — Ներքին կազմակերպութիւն. — Ալպանացիք և Պալքանեան ժողովուրդները. — Ռուսիոյ կապերը Ալպանիոյ հետ. — Ալպանիոյ գահուն թեկնածուներ. — Միրտիթները. — Բրինք Պիպ-Տօտա փաշա. — «Լեռներու օրէնք»ը. — Ալպանիոյ բնակչութիւնը. — 1908ի յեղափոխութիւնը և Ալպանացիք. — Ժէօնթիւրքերն ու Ալպանացիք ինչպէ՞ս կ'ըմբռնէին Սահմանադրութիւնը. — Լատինական այբուբենի հարցը. — Բրինք փաշայի դարձը աքսորէն — Մարտ 31. — Դժգոհութեան պատճառներ. — Յաջորդական ապստամբութիւնները. — Ճավիտ եւ Շէվքէթ թորդուտ փաշաներու արշաւանքները. — Ո՞վ էր Իսա Պօլաթին. — Օտար ճնշում Դրան վրայ. — Հաշտութեան փորձը. — Սուլթան Մէհմետ Ալպանիոյ մէջ. — Քօսովայի դաշտին պատմական «նամազ»ը. — Ինչ կ'որոշէին Ալպանիոյ արշաւախումբերը. — Զօհրապի հաշիւը. — 1912ի ապստամբութիւնը. — Զարդարար և ջարդուող կը միանան. — Մայիս 13ի պահանջումները. — Ընդդիմադիրները կը շահագործեն ալպանական ապստամբութիւնը՝ իթիհատը տապալելու համար. — Հաճի Ատիլ պէյի առաջարկները. — Իբէքի յարձակումը. — Դատաւորութիւնը Օսմ. բանակին մէջ. — Մանասթրի ծանրակշիռ դէպքերը. — Զինուորներ և սպաներ կը միանան ապստամբներուն. — Թայեար պէյ լեռ կ'իլէ. — «Խէլաքեարան»ը. — Մահու Շէվքէթ փաշայի օրինադիրը սպաները քաղաքականութեան հետ ու պահելու համար. — Ալպանաւորներու պահանջումները. — Օսմ. հրամանատարները կը մերժեն ապստամբներ

բուն դէմ քայել. — Դիմում մեծ տէրութեանց. — Կոր խլրտումների ազաներու մէջ.
 — Հրատարում Մահմուտ Շէվքէթ փաշայի. — Կախարարական տաղանդ. — Կաղնմ
 փաշայի առաջարկները. — Անկում Սահա փաշայի. — Ղազի Ահմէտ Մուխթար փա-
 շայի դահլիճը. — Ալպանիոյ քննիչ Յանձնատողը. — Պահանջ Երեսի. Ժողովը լու-
 ծեղու. — Ազատամբներուն թիւը 100,000ը կ'անցնի. — Լուծում Երեսի. Ժողովոյ. —
 Ալպանիա նորէն չի հանդարտիր. — Սկիւպի գրաւումը ազատամբներէն. — Տամաքչոյ
 պահանջումները. — Ինչո՞ւ փութացուեցաւ պատերազմը. — Պալքանեան տէրու-
 թեանց վրդովումը. — Բ. Դունը կ'ընտրէ երկու չարեաց փոքրագոյնը. — Թանկադին
 ժամանակի մը կորուստը. — Ալպանացոց անխորհուրդ Ծայրայեղութիւնները. — Պո-
 տերազմը 333

Յ Օ Ր Տ Է Ս Ն Ե Ր

16. Դերման արշաւը դէպի Արեւելք	227
17. Փորձանաւոր սահմանները	280
18. Դանուք - Աղբիականը	289
19. Պալքանեան երկաթագլինները	292
20. Թրակիոյ վիճելի վայրերը	325
21. Ալպանիա	350
22. Ինչ հաշուով ճամբայ ելան դաշնակիցները (Յաւելում)	

Յ Ս Ի Ն Ե 1, Ա Ի Ս, Տ Ն Ե Ր

- 3. Սթորա Զակորայի բանակետղին մէջ
- 4. Ինչ հաշուով ճամբայ ելան դաշնակիցները (ըստտէս)



6103

6104

6105

6106

6107

2013

